ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

ԵՐԵՎԱՆ
1960

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт литературы имени М. Абегяна

ОВАННЕС ТЫЛКУРАНЦИ

СТИХИ

Научно-критический текст,
исследование и коментарии
ЭМ. ПИВАЗЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

Ереван **1960**

1055

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

ՏԱՂԵՐ

Աշխատասիրությամբ՝
ԷՄ. ՊԻՎԱԶՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան **1960**

Խմբագիր՝ Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Գիրքը բովանդակում է միջնադարյան հայ աշխարհիկ պոեզիայի նշանավոր ներկայացուցիչ, XV դարի տաղերգու Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործությունների քննական բնագրերը, որոնք պատրաստված են Հայկական ՍՍՌ Մատենադարանում պահպանվող բազմաթիվ ձեռագրերի հիման վրա։ Աշխատության առաջին՝ «Ուսումնասիրություն» մասում քննարկվում են Թլկուրանցու ապրած ժամանակաշրջանի և նրա ստեղծագործության հետ կապված հարցերը, գրականագիտական ու բանասիրական վերլուծման են ենթարկվում նրա երկերը, պարզաբանվում տաղերգուի տեղն ու դերը միջնադարյան հայ գրականության զարգացման մեջ։

Գրքի վերջում զետեղված է «Ծանոթագրություններ և բանասիրական դիտողություններ» բաժինը, ուր տեղեկություններ են տրվում յուրաքանչյուր տաղի մասին և լուսաբանվում նրանց հետ կապված բանասիրական զանազան հարցեր։

Աշխատությունը նախատեսված է հայ գրականության պատմության հարցերով զբաղվողների համար։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

Միջնադարում քրիստոնեությունը իր ճգնավորական պահանջներով խեղդում էր աշխարհիկ ոգին. գրականությունը ամբողջովին գտնվում էր կրոնավորության ձեռքը. սառն ու անկենդան շարականներով երգվում էին ու փառաբանվում կրոնական տոնական օրերն ու սրբերի հիշատակները, հարասվում էր ու մեկնաբանվում ս. գիրքը. ժողովրդական երգը տեղ չէր գտնում գրականության մեջ: Բանաստեղծական ոչ մի արտադրանք չենք գտնում այդ շրջանում, որ զերծ լիներ կրոնական մռայլից ու աշխարհիկ բնույթ ունենար. միակ բացառությունը Դավթակի ողբն է Ջիվանշիրի մահվան մասին, ուր քերթողը երգում է հերոսի հռչակը, փառքը, ողբում նրա մահը:

Միայն քաղաքային կյանքի զարգացման, ֆեոդալիզմի սկիզբը առնող քայքայման շրջանում, դասակարգային շերտավորման խորացման ու պայքարի սրման նոր պայմաններն են, որ հող են պատրաստում բանաստեղծության մեջ աշխարհիկ ոգու ներմուտքին, որի սկիզբը նկատում ենք արդեն 10-րդ դարում:

Բագրատունիների և Արծրունիների ժամանակ երկրի քաղաքական ինքնուրույնության վերականգնումով ու համեմատաբար խաղաղ, հարձակումներից զերծ կյանքի առկայության պայմաններում հնարավորություններ են ստեղծվում տնտեսական բարգավաճման ու վերելքի համար: Զարգանում են երկրագործությունն ու անասնապահությունը, արհեստները, խորանում է աշխատանքի հասարակական բաժանումը. առև-

տուրն ու արհեստները կենտրոնանում են քաղաքներում, Հայաստանը լայն չափերով մասնակցում է միջազգային տարանցիկ առևտրին՝ իր իսկ սեփական արդյունագործության արտադրանքներով. զարգանում են առևտուրն ու առևտրական կապիտալը։ Տնտեսական կյանքի զարգացումը սելջուկյան արշավանքների շրջանի ընդմիջումից հետո շարունակվում է նաև հետագայում՝ Զաքարյանների ժամանակ և Կիլիկյան հայկական պետության մեջ։

Տնտեսական կյանքի վերելքը չթեթևացրեց ժողովրդի ներքին խավերի դրությունը, ընդհակառակը՝ սաստկացրեց շահագործումը, իսկ սա սրեց դասակարգային պայքարը, որը հանդես է գալիս արդեն սոցիալական լայն շարժումների և գյուղացիական ապստամբությունների ձևով։ Բարձրանում է ժողովրդի՝ իշխվող դասերի ու դասակարգերի դերն ու կշիռը։

Հասարակական ու տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները փոփոխություններ են առաջ բերում նաև գաղափարախոսության մեջ, հեղաշրջում են մտցնում հայացքների մեջ, աշխարհըմբռնման ու աշխարհայացքի մեջ. աշխարհականացող կյանքը իր հետ բերում է նաև մտածողության ու գաղափարախոսության աշխարհականացում, մշակույթի աշխարհականացում։ Աշխարհիկ բնույթ են սկսում ստանալ արվեստները, գրականությունն ու գիտությունը։ Գաղափարախոսական այդ ձևերից գրականության մեջ փոփոխությունը արտահայտվում է նախ և առաջ գրականության թեմատիկայի ու բովանդակության փոփոխությամբ, ժողովրդական մասսաների հասարակական դերի բարձրացման պայմաններում՝ ժողովրդական ոգու և մտածողության ներմուծքով գրականության մեջ։ Առաջ են քաշվում նոր հայացքներ բնության ու հասարակական կյանքի նկատմամբ, արտացոլվում են նոր երևույթներ։ Երևան են գալիս նոր գրական տեսակներ, ստեղծագործության նյութ են դառնում կյանքն ու աշխարհը, մարդը՝ իր ապրումներով ու զգացումներով։ Գրական նոր ձևեր էին, արդեն, Գրիգոր Նարեկացու (10-րդ դ.) «Մատեան ողբերգութեան»-ը, տաղերը. վերջին-

ներիս մեջ առաջին անգամ տրվում է բնության բանաստեղծական զգացումը, բնությունը դառնում է բանաստեղծության նյութ, երգվում է գարունը, կանացի գեղեցկությունները։ Հովհաննես Սարկավագի (12-րդ դ.) «Բան իմաստութեան...»-ը արվեստի տեսությանը նվիրված մի ստեղծագործություն է, ուր հեղինակը արվեստը կապում է բնության նմանողության հետ, ըստ էության մերժելով աստվածային հայտնությունը որպես արվեստի ելակետ—մի հայացք, արվեստի մի տեսություն, որ ամբողջովին նորություն էր՝ ուղղված միջնադարականության դեմ, արվեստի նկատմամբ կրոնական հայացքի դեմ։ Բնությունը, իրականությունը արժեքավորելը, որ սկիզբ է առնում Նարեկացուց, իր նոր, ավելի լիակատար արտահայտությունն է գտնում Սարկավագի մոտ։ Այս նոր բովանդակությունը այստեղ դրված է նոր ձևի մեջ։ Նշանակալից ստեղծագործություն է Ներսես Շնորհալու (12-րդ դ.) «Ողբ Եդեսիոյ»-ն՝ հայրենասիրական բովանդակությամբ։

Այսպիսով մեր գրականության մեջ նշանավորվում է Վերածնության շրջանը։ Առաջ են գալիս բժշկական գրականություն, աշխարհիկ իրավաբանական գրականություն, որի հիմնադիրը Մխիթար Գոշն է (12-րդ դ.) և որը արտահայտություն էր հասարակական կյանքում տեղի ունեցած իրավական փոփոխությունների օրենսդրական հիմնավորման պահանջի։

Այս շրջանում գրականության մեջ հետաքրքրության առարկա են դառնում սոցիալական հարցերը, նրանց տրվում է նոր, եկեղեցական մտածողությունից ու պատկերացումներից անկախ, հաճախ նրանց հակառակ բացատրություն։ Եկեղեցականի իսկ ստեղծած գրականության մեջ մուտք են գործում ժողովրդական գրական տեսակներ, որոնցից առաջիններից մեկը առակն է։ Ինչպես հայ առաջին առակագրի, Մխիթար Գոշի, այնպես էլ առհասարակ միջնադարյան առակների մեջ բարձրացվում են սոցիալական հարցեր, տարբեր դասակարգերի փոխհարաբերության, նրանց պայքարի և այլ խնդիրներ։

Այս ժամանակ է հենց, 12-րդ դարում, որ ստեղծվում է գեղարվեստական արձակ. մինչ այդ գեղարվեստական արձակը համադրված է եղել պատմագրության հետ և պատմագրության մեջ, ըստ որում պատմիչների նպատակը չի եղել ստեղծել գրական-գեղարվեստական երկեր. Նրանք գրել են որոշ ժամանակաշրջանի պատմություն, որը և կերտելիս, նայած հեղինակի ստեղծագործական կարողություններին, այս կամ այն չափով իրենց երկերը օժտել են գեղարվեստական ստեղծագործության հատուկ տարրերով, և կամ օգտագործել են ժողովրդական բանահյուսությունը, որ գեղարվեստական երանգ է տվել նրանց երկերին:

Սոցիալական հարցերն իրենց բարձրագույն արտահայտությունն են գտնում Ֆրիկի (13-րդ դ.) ստեղծագործության մեջ. Նա հանդես է գալիս իբրև սոցիալական անարդարության ու բողոքի երգիչ՝ դեմոկրատական աշխարհայեցողությամբ:

Վերածնության շրջանում գրականությունը արդեն դադարում է եկեղեցու մենաշնորհը լինելուց, երկփեղկվում է՝ մի կողմից կրոնավորները շարունակում են շարականներ ու մեղեդիներ կցմցել, իսկ մյուս կողմից՝ երկինքի ու նրա արքայության, միստիկական սիրո, հանդերձյալ կյանքի փոխարեն բանաստեղծության նյութ են դառնում երկիրը իր գեղեցկություններով, այսրաշխարհային կյանքը, սոխակն ու վարդը, հաճույքն ու զվարճությունները, կինն ու սերը: Այս թեմաներն են երգում միջնադարյան բանաստեղծության նշանավոր ներկայացուցիչները՝ Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին, Գրիգորիս Աղթամարցին, Նաղաշ Հովնաթանը և ուրիշները:

Խորն են միջնադարյան հայ բանաստեղծության ակունքները: Այդ բանաստեղծությունը զարգացել է հեթանոսական շրջանից եկող ժողովրդական բանահյուսության հիմքի վրա, ուր, ինչպես ցույց են տալիս մեզ հասած փշրանքները, երգվում էին քաջությունը, սերն ու ուրախությունը: Եթե շարականների հեղինակների մոտ բանաստեղծությունը «ոչ թե

նպատակ էր, այլ միջոց», իսկ «Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու և տեղ-տեղ նաև ուրիշների մոտ հանդիպում են առանձին տներ ու ամբողջ բանաստեղծություններ, որոնց մեջ բանաստեղծը ազատորեն զեղում է իր զգացումը», ապա հիշված բանաստեղծների ստեղծագործությամբ ստեղծվում է հայ քնարերգությունը, որի մասին Վ. Բրյուսովը գրում է. «Միջնադարյան հայ քնարերգությունը հայ ժողովրդի բարձրագույն և առավել ինքնուրույն կերտվածքն է պոետական ստեղծագործության բնագավառում: Հայկական միջնադարյան քնարերգությունը համարյա ոչ մի կախում չունի եվրոպական պոեզիայից: Եվ ի՞նչ կարող էր տալ քնարական ստեղծագործությանը 13—14-րդ դարերում եվրոպական պոեզիան, որ դեռ նոր էր սաղմնավորվում բոլոր երկրներում, չբացառելով նաև առաջավոր Իտալիան»: «Միջնադարյան հայ քնարերգությունը հայկական ոգու իսկական հաղթանակն է համաշխարհային պատմության մեջ»[1]:

Բրյուսովի կողմից այսպես գնահատված միջնադարյան հայ քնարերգության նշանավոր ներկայացուցիչներից է Հովհաննես Թլկուրանցին, որի ստեղծագործությունը իր էական մասով անմիջական շարունակությունը և հետագա ծավալումն ու խորացումն է 10-րդ դարում սկզբնավորված Վերածնության ոգու ու արվեստի:

Եթե Կոստանդին Երզնկացին և նրա նախորդները իրենց ստեղծագործությանը տալիս էին այլաբանական բնույթ, ցանկանում էին, որ իրենց հասկանային կրոնական այլաբանությամբ, ապա Հովհաննես Թլկուրանցու մոտ աշխարհիկ քնարերգությունը վերջնականապես ազատվում է կրոնական շղարշից, լիահունչ ու անկաշկանդ երգվում սերն ու կինը, գարունը, բնությունը: Նրա արվեստը, արտահայտչական ձևերը կապված են ժողովրդական ստեղծագործության արվեստի, արտահայտչական ձևերի հետ: Նա առաջինն է, որ ստեղծում է վիպական տաղեր՝ մշակելով բուն ժողովրդական բանա-

[1] *В. Брюсов*, Поэзия Армении, Москва, 1916, *էջ 47, 48:*

հյուսությունից քաղված թեմաներ: Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործությամբ մի ամբողջ քայլ առաջ է գնում միջնադարյան հայ բանաստեղծությունը:

* * *

Թլկուրանցու մասին կենսագրական տեղեկություններ բացակայում են. հայտնի չէ անգամ նրա ով լինելը, ծննդավայրը, ապրած ժամանակը և այլն: Մինչև վերջերս, նույնիսկ, նա թյուրիմացաբար համարվել է 15—16-րդ դարերի բանաստեղծ, նույնացվել է Սսի կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցու հետ (1489—1525) և համարվել է հայ առաջին այն տաղերգուն, որի ստեղծագործությունները տպագրվել են իր կենդանության օրոք:

Հովհաննես Թլկուրանցու մասին առաջին անգամ տեղեկություն է տալիս Մ. Չամչյանը: Նա հաղորդում է.

«Յայն աւուրս էր և Յովհաննէս վարդապետ Թուլկուրանցի, որ եղև կաթողիկոս Սսոյ ի թուին հայոց ՋԼԸ (938+551=1489). սա արար գիրս ոտանաւորաց բազմոտնեան՝ միջակ և ստորին ոճով՝ իբրև մեկնութիւն գրոց ծննդոց, քաղեալ ի բանից մեծին Վարդանայ վարդապետի»[1]:

Չամչյանի հաղորդած այս տեղեկությունն է հիմք հանդիսացել հետագայի բանասերների համար, երբ նրանք խոսել են Թլկուրանցու մասին՝ տաղասաց Թլկուրանցուն նույնացնելով կաթողիկոս Թլկուրանցու հետ: Այսպես, Ղ. Ալիշանը «Յուշիկք հայրենեաց հայոց»-ի երկրորդ հատորում միջնադարյան երգիչների մասին խոսելիս, գրում է. «Այլ ամենէն աւելի բանաստեղծ և տաքսիրտ Հովհաննես Թլկուրանցի, որ ատեն մը սիրո և գովասանաց երգեր երգած է, ատեն մ'այլ Սսո կաթուղիկոս է եղած»[2]: Նույն գրքի մեջ, Լիպարիտ սպարապետի մասին խոսելիս, բերում է Թլկուրանցու

[1] Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, Գ, էջ 508:

[2] Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. II, Վենետիկ, 1870, էջ 125: Նույն կարծիքը տես նաև Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 226 և 535, ծան., ինչպես նաև «Հայապատում»-ում:

«Տաղ քաջի Լիպարտին»-ի առաջին մասը (հետագայում Անանուն քերթողի վերագրված) հետևյալ ծանոթագրությամբ. «Երգույս հեղինակն է աշխույժ երգիչն Հովհաննես Թլկուրանցի, որ և Սսա կաթուղիկոս եղավ ԺԶ դարուն վերջերը (1489—1525)»[1]:

Ա. Տևկանցը «Հայերգի» Նախերգում «այս ու այն անտիպ գրչանց ու երգարաններեն» հավաքած՝ միջնադարյան քնարերգուների անունների թվում հիշում է «Հովհաննես կաթուղիկոս Սըսո, Թուլկուրանցի»[2]:

Կ. Կոստանյանցը, որ 1892 թ. հրատարակել է Թլկուրանցու տաղերի ժողովածուն, կցելով նրան համառոտ ուսումնասիրություն-առաջաբան տաղերգուի մասին, դարձյալ նույնացնում է Հովհաննես Թլկուրանցի տաղասացին և նույնանուն կաթողիկոսին՝ հենվելով Չամչյանի, Ալիշանի և Տևկանցի վերևում բերված հաղորդումների վրա[3]:

Սակայն բանասերները չէին կարող չնկատել, որ սիրո և բնության՝ խանդով լի, կրակոտ տաղերը անհարիր էին կաթողիկոսական գահին նստած մեկի համար: Ուստի և Կոստանյանցը իրավացիորեն նկատելով, որ տաղերգուի «երգերի մի մասի մեջ երևում է երիտասարդական խանդ, մեծ ոգևորություն աշխարհիս վայելքների վերա: Երգերի միւս մասի մեջ երևում է ծեր, նստած մարդու խրատող բնավորություն»[4], բացատրում է. «Երիտասարդական կյանքի հիշատակները պատկերացած են նորա առաջին երգերում, որոնք երևի հենց աշխարհական վիճակի մեջ է հորինել: Այնինչ նորա երգերի երկրորդ խումբը ծնունդ է նորա մենավոր կյանքի, երբ զղջումն ու ապաշավանքը մի կողմից, եկեղեցական կոչման ծանր պարտիքը միւս կողմից հառաջ են բերել նո-

[1] Ղ. Ալիշան, Յուշիկք, հտ. II, էջ 510:

[2] Ա. վ. Տևկանց, Հայերգ, Թիֆլիս, 1892, էջ Ժ:

[3] Տե՛ս Կ. Կոստանյանց, Հովհաննես Թլկուրանցի և յուր տաղերը, Թիֆլիս, 1892, էջ 6, ծանոթ.:

[4] Նույն տեղում, էջ 7:

րա մեջ ձգտումն խրատելու ուրիշներին և զգուշացնելու մեղքի վտանգներից»[1]:

Կոստանդյանցի ուսումնասիրությունից հետո ևս, երկար ժամանակ, Թլկուրանցու մասին խոսող բոլոր բանասերները տաղերգուին համարում են 15—16-րդ դարերի բանաստեղծ՝ նույնացնելով Սսի կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցու հետ:

Ավելին՝ Լեոն «Հայկական տպագրություն» գրքում խոսելով 1513 թվականին Հակոբ Մեղապարտի տպագրած հայ առաջին Տաղարանի մասին, որտեղ կան Հովհաննես Թլկուրանցու մի շարք տաղերը, գրում է. «Թլկուրանցին վախճանվել է 1525 թվականին: Եվ որովհետև նրա երգերը հրատարակվեցին 1513-ին, ուստի նա հանդիսանում է առաջին հայ հեղինակը, որի գրվածքները տպագրվում էին նրա կենդանության ժամանակ»[2]:

Լեոի այս կարծիքը տարածում գտավ բանասիրության մեջ: Մ. Օրմանյանը, օրինակ, «Ազգապատում»-ում գրում է. «Տպագրյալ տաղարանը (1513 թ. Տաղարանը—Էմ. Պ.) կը պարունակե բավական թվով Հովհաննես Թլկուրանցիի երգերը, բայց չենք գիտեր, թե ինչ չափ գործակցություն ունեցավ Թլկուրանցին յուր կաթողիկոսության 24-րդ տարին լույս ընծայած գիրքին համար, բայց միշտ բախտավոր եղած է յուր կենդանության իսկ յուր երգերը տպագրված տեսնելով»[3]:

Զարգացնելով Լեոի այդ դիտողությունը, Վ. Զարդարյանը «Հիշատակարանի» 6-րդ պրակում այն միտքն է հայտնում, թե Թլկուրանցին իր գրած տաղերը հավաքել և տպագրել է

[1] Ըստ էության նույն բացատրությունն էր տալիս նաև Ալիշանը, գրելով. «... ատեն մը սիրո և գովասանաց երգեր երգած է, ատեն մ'այլ Սսո կաթուղիկոս է եղած»: Նույն կարծիքը տե՛ս և Լեո, Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1904, էջ 22, Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1914, էջ 2211:

[2] Լեո, նշվ. աշխատ., էջ 22:

[3] Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, էջ 2213—2214:

տվել իր բարեկամ Հակոբին[1]: Զարդարյանը նույնիսկ Տաղարանում տպագրված «Յորժամ կամէր հայրըն գթած» սկսվածքով տաղի՝

«Ես Յովանէս Թուրկուրանցի
Կարճ համառօտ ասցի զայս բան.
Տէրն տայ ձեզ խաղաղութիւն,
Պահէ անփորձ և անսասան»

հեղինակի հիշատակարանը համարում է նրա «բարեկամ» Հակոբի՝ հրատարակչի գրածը:

Առաջին անգամ Հովհաննես Թլկուրանցի տաղասացի և Սսի Հովհաննես Թլկուրանցի կաթողիկոսի տարբեր անձնավորություններ լինելու մասին խոսել է Տաղասերը (=Ն. Ակինյան) «Արեգ»-ի 1924 թ. № 8-ում տպագրված իր հոդվածում: Այստեղ հոդվածի հեղինակը նախ քննության է առնում Հովհաննես Թլկուրանցի կաթողիկոսի գահակալության ժամանակի հարցը: Ըստ Չամչյանի նա կաթողիկոսական գահի վրա եղել է 1489—1525 թվականներին: Ըստ Տաղասերի այդ ժամանակագրությունը կարոտ է քննության, քանի որ «Հովհաննէս կաթողիկոս Թլկուրանցի, որդի Ղուկասի 1515—1533 թթ. եղել է Երուսաղեմում պատրիարքական աթոռի գործերով զբաղված, բայց պահելով «կաթողիկոս» տիտղոսը: 1533 թվին հրաժարած է երևում Երուսաղեմի պատրիարքությունից, որից հետո վերադառնում է Վահկա բերդը, ուր և վախճանվում է 1535 թ.»: «Այս Թլկուրանցի կաթողիկոսը,—շարունակում է հեղինակը,—գրագետ անձ չի ներկայանում, և դժվար թե նա պարապած լինի բանաստեղծություններով»: Տաղասերի ասելով, «բանաստեղծը ապրել է կաթողիկոսից գոնե մի դար առաջ»: Ապա և փորձում է պարզել տաղասաց Թլկուրանցու ապրած որոշակի ժամանակը: «Հովհաննես Թուրգուրանցուն,— գրում է Տաղասերը,— հանդիպում

[1] Ձեռքի տակ չունենալով Զարդարյանի գործը, տեղեկությունը քաղում ենք Գ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատությունից, Երևան, 1946, էջ 54—55:

ենք մենք արդեն 1371, 1394, 1469 թվերին գրված ձեռագիրներում, թե երբև գանձասացի և թե որպես տաղասացի: Ապա հարկավոր է ընդունել, որ նա ապրում էր 1371 թվից առաջ»:

Նրա կարծիքով՝ բանաստեղծի «մի տաղը՝ Քաջ Լիպարիտի երգը... գրված այնքան կենդանի և այնքան համապատասխան ժամանակի ոգուն, հիմք կտա մտածելու, որ նրա հեղինակը պետք է որ ապրած լինի 1369-ի (Եգիպտոսի մամլուքների դեմ Լիպարիտի մղած վերջին կռվի և նրա մահվան տարին—Էմ. Պ.) մոտերը և անձամբ ծանոթացած Լիպարիտի քաջություններին»: Ուստի և՝ «ընդունելով թե նա կենդանի էր 1369 թվին, և նկատելով, թե մի տեղ բանաստեղծը իրան ներկայացնում է 70 տարեկան, կարող ենք ասել, թե նա ծնած է մոտ 1300 թվին և վախճանված 1380 թվին»:

Բանասերը նկատի ունի Թլկուրանցու «Է՜ մահ, քանի դքեզ յիշեմ» սկզբնատողով տաղի վերջին քառատող հիշատակարանը, որտեղ ասված է.

«Յովհաննէս Թուրկուրանցի,
Ջուր կասես, գալլ ոք խըրատես,
Եօթանասուն ամ լըցեր,
Ի՛ր մահուն դուռըն հասեալ ես»:

Սակայն Տաղասերի տված ժամանակագրությունը խախտ է և անընդունելի: Առանց իմանալու, թե երբ է գրված այդ տաղը՝ անհնար է որևէ ժամանակագրություն կազմել[1]:

---

[1] Հիրավի, եթե անգամ ենթադրենք, որ նշված տաղը Թլկուրանցին գրել է Լիպարիտի տաղից 20 տարի հետո, ապա հեղինակը 1369+20=1389 թվականին կենդանի եղած պետք է լինի, իսկ եթե 40 տարի հետո գրած լինի, ուրեմն 1369+40=1409 թվականին նա 70 տարեկան էր և կենդանի, ուստի և 1380 թ. չէր կարող մահացած լինել:

Այժմ ենթադրենք, թե նշված տաղը գրված է Լիպարիտի տաղից 20 տարի կամ 40 տարի առաջ. այդ դեպքում հեղինակը 1369 թ. արդեն 70+20=90 տարեկան էր, 1380 թ. 70+20+11=101 տարեկան, և կամ՝ այդ նույն 1369 թ. 70+40=110 տարեկան էր, իսկ 1380 թ. 70+

Զննած Տաղասերի անընդունելի ժամանակագրությանը և թյուրիմացության տեղի տվող հաղորդումներին, որոնց մասին խոսք կլինի ստորև, այնուամենայնիվ նա առաջինն էր, որ խախտեց բանասիրության մեջ ընդունված ու արմատացած կարծիքը Թլկուրանցի-տաղասացի և Թլկուրանցի-կաթողիկոսի նույն անձը լինելու մասին:

Սակայն «Արեգ»-ում տպագրված Տաղասերի հոդվածը գրեթե աննկատ մնաց, և ավանդությունն ու նախապաշարումը ավելի զորեղ դուրս եկան. գրականության պատմությանը նվիրված և այլ կարգի ուսումնասիրություններում ու դասագրքերում մեր տաղերգուն ավանդաբար շարունակվում էր համարվել Սսի կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցին:

Այսպես. 1928 թ. «Սիոնի» համարներում տպագրած «Կիլիկիո կաթողիկոսները, Ե. Հովհաննես Թլկուրանցի» հոդվածում Բ. Կյուլեսերյանը դեռևս ծանոթ չէր Ակինյանի հոդվածին և երկու հայրենակից Հովհաննեսներին նույնացնում է. միայն 1939 թ. հրատարակված «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո» գրքում է, որ հայտնում է, թե ծանոթացել է «Արեգ»-ի հոդվածին, բայց և Թլկուրանցու մասին շարադրանքը չի փոխում:

Մ. Աբեղյանը ևս իր «Հայոց գրականության պատմության» 2-րդ գրքում նույնացնում է տաղերգու և կաթողիկոս Թլկուրանցիներին և համարում է միևնույն անձը:

1940 թվականին «Գրական թերթ»-ում «Երբ է ապրել և ստեղծագործել Հովհաննես Թլկուրանցին» վերնագիրը կրող մի փոքրիկ հոդվածով հանդես է գալիս բանասեր Աս. Մնացականյանը[1]: Նա նույնատիպ փաստերով, ինչ որ Տաղասերը

40+11=121 տարեկան: Բռնաձիգ կլինի կարծել, թե մեր հեղինակը 90 կամ 110 տարեկան հասակում տաղեր էր գրում և ապրել է 101 կամ 121 տարի: Այս բոլորը դեռ այն դեպքում, եթե Լիպարիտի տաղը գրված համարենք տեղի ունեցած դեպքերի տարին՝ 1369 թվականին. իսկ եթե այն գրված լինի ավելի ուշ, որ անհավանական չէ, Տաղասերի տված ժամանակագրությունը շատ ավելի անհարիր է դառնում:

[1] «Գրական թերթ», 1940, № 23:

1055

(Ն. Ակինյանը)[1], աշխատում է ցույց տալ, որ բանաստեղծ Թլկուրանցին և Սսի կաթողիկոսը տարբեր անձնավորություններ են: Աս. Մնացականյանի համար ևս իբրև հիմնական փաստարկ ծառայել է այն, որ Թլկուրանցու անունով գանձեր կան ՊԾԷ (857+551=1408) և ՊՁ (880+551=1431) թվականներին գրված ձեռագրերում (տե՛ս Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռ. №№ 3540 և 3551, որտեղ մեզ զբաղեցնող գանձերը կրում են «Գանձ Թըլգուրանցի ի սբ հոգ», «Սբ խաչին գանձ Թըլգուրանցի» և «Գանձ սրբոյ խաչին ի Թլգուրանցոյ ասացեալ է» խորագրերը):

Այսպիսով՝ տաղերգուին կաթողիկոսից տարբերելու խնդրում թե՛ Ակինյանի և թե՛ Մնացականյանի համար հիմնական փաստ է ծառայում այն հանգամանքը, որ Հովհաննես Թլկուրանցու անունով գանձեր կան 14-րդ դարի ձեռագրերում: Սակայն այդքանը բավարար կռվան չի կարող ծառայել հարցի լուծման համար:

Ամբողջ խնդիրն այն է, որ կարելի է կարծել, թե գանձասաց Թլկուրանցին (14-րդ դ.) տարբեր է տաղասացից, և տաղերը կաթողիկոս Թլկուրանցունն են: Այլ բան կլիներ, և հարցը իրոք սպառված կարելի էր համարել, եթե 14-րդ դ. (կամ 15-րդ դ. սկզբի) ձեռագրերում գտնվեր Թլկուրանցու տաղերից գոնե մեկը:

Ի դեպ նշենք, որ Տաղասերի՝ «Հովհաննես Թուլգուրանցուն հանդիպում ենք մենք արդեն 1371, 1394, 1469 թվերին գրված ձեռագիրներում, թե իբրև գանձասացի և թե որպես տաղասացի» հաղորդումից չպետք է եզրակացնել, թե 14-րդ դարի ձեռագրերում կան Թլկուրանցու տաղերից. Նրա տաղերը այս ժամանակների ձեռագրերով մեզ չեն հասել: Որ այդ այդպես է, երևում է նույն բանասերի 1933 թ.

[1] Տվյալ հարցի մասին Տաղասերի հոդվածը Աս. Մնացականյանին մատնացույց է անում Գ. Լևոնյանը նույն «Գրական թերթ»-ում տպած «Դարձյալ Հովհաննես Թլկուրանցու մասին» հոդվածում (1940, № 26):

տպագրած մի այլ հոդվածի հետևյալ տողերից. «...տաղիս (Լիպարիտի տաղի—Էմ. Պ.) հեղինակը չէ Սսո Հովհաննես կաթուղիկոսը (1489—1535), այլ համանուն ավելի հնագույն մը, թերևս Հովհաննես Թլկուրանցի գանձասացը, որուն գանձերը կը տեսնվին արդեն 1370-ին և հաջորդ տարիներուն գրված գանձարաններու մեջ: Այս գանձասաց Թլկուրանցվո պետք է վերագրել ոչ միայն Լիպարիտի գեղեցիկ երգը, այլև հանուն Հովհ. Թլկուրանցվո հասած տաղերու ընտիր շարքերը»[1] (ընդգծումները մերն են—Էմ. Պ.):

Ինչպես երևում է ընդգծված տողերից, Ակինյանը 14-րդ դարի ձեռագրերում «հանդիպած չէ» Թլկուրանցու անունով տաղերի, այլ միայն գանձերի՝ մի կողմից, մյուս կողմից՝ նա այժմ միայն սոսկ ենթադրում է, թե գանձասացը պետք է լինի տաղերի հեղինակը:

Ակինյանը և Մնացականյանը կողմնակի ապացույցներ էլ են աշխատում գտնել կաթողիկոս Թլկուրանցուն տաղերի հեղինակ չհամարելու համար: Նրանց փաստարկներից մեկը այն ենթադրությունն է, ըստ որի «Տաղ քաջի Լիպարտին»-ի հեղինակը «շատ հավանական է», որ դեպքերին ժամանակակից է: «Նա (Թլկուրանցին—Էմ. Պ.) իր «Տաղ քաջի Լիպարտին»-ը գրել է որպես դեպքի ժամանակակից (դեպքը կատարվել է 1370 թվին), նրա ուժեղ ազդեցության տակ»,—գրում է Մնացականյանը: Սակայն այս մտքի համար նրա բացատրություն-ապացույցը տրամաբանական հիմք չունի. «Հակառակ դեպքում,— ասում է նա,— կարիք կլիներ պարզաբանելու այն հանգամանքը, թե ինչու հենց այդ դեպքն է նկարագրել նա, մի՞թե պատմական ուրիշ խոշոր դեպքեր ծանոթ չէի՞ն նրան անցյալից կամ 15-րդ դարից, մանավանդ որ այդ երգն իր թեմայով միակն է Թլկուրանցու մոտ»:

Աս. Մնացականյանի ապացույցներից մեկն էլ այն է, որ «Նրա տաղերի և՛ վերնագրերում, և՛ վերջին տողերում ոչ մի

[1] Ն. Ակինյան, Քաջն Լիպարիտ պատմության, տաղերու և գրույցներու մեջ, «Հանդես ամսօրյա», 1933, էջ 135:

հոգևորական կոչում չի տրվում այնքան հաճախակի շեշտված «Յովհաննէս» անվանը և Թլգուրանցի մականվանը»: Այս հիման վրա Մնացականյանը կարծում է, որ «Հովհաննես Թըլկուրանցին ոչ միայն կաթողիկոս չի եղել, այլև ընդհանրապես հոգևորականի որևէ այլ կոչում ու պաշտոն չի ունեցել»: Տաղերի վերնագրերում և վերջին տան մեջ հոգևորական կոչման վերաբերյալ նշման բացակայության հանգամանքը թեև ուրիշ շատ թե քիչ համոզիչ փաստարկների ընդհանուր շարքում ունենար նշանակություն, բայց այստեղ դրանից նման կտրուկ եզրակացության հանգել չի կարելի:

Այսպես, ուրեմն, միանգամայն բնական ու օրինական է կարծել, որ գանձասաց Հովհաննես Թլկուրանցին և տաղասացը տարբեր անձնավորություններ են, և որ տաղերը կարող են պատկանել կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցու գրչին: Բանասիրական հիմնավոր փաստեր են անհրաժեշտ ապացուցելու համար, որ կաթողիկոսը չէ տաղերի հեղինակը: Այդպիսի փաստեր իրոք առկա են: Ահա դրանք:

1. 1513 թվականին տպագրված հայերեն անդրանիկ Տաղարանում տեղ են գտել Թլկուրանցու տաղերից 16-ը: Բնագրական խորազնին քննությունից պարզվում է, որ մինչև տպագրվելը այդ տաղերը մեկից ավելի անգամ ընդօրինակվել են և ենթարկվել զգալի փոփոխությունների ու աղավաղումների: Նշենք այդպիսի փոփոխություններից մի քանիսը:

«Աղէկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես» սկզբնատողով տաղի 19-րդ տողը Տաղարանում այսպես է.

«Ծապուկ, ճոխ ու ճերմակ, երբ որ դու քայլես»:

Այստեղ անիմաստ է ճերմակ բառը, անհասկանալի ճերմակ քայլել, ճերմակ քայլք: Ձեռագրերից 4-ը տալիս են ճարտար փխ ճերմակ, որը և ճիշտն է. բացի Տաղարանից ճերմակ աղավաղումն ունեն ևս 5 ձեռագիր, որոնք չեն արտագրված Տաղարանից (այդ երևում է նրանց և Տաղարանի՝ սույն տաղի տեքստերի համեմատությունից. հմմտ. մեր կազմած բնագրի ներքևի լուսանցքներում դրված այլընթերցումները): Նշանակում է՝ ճարտար-ի փոխարեն դրված ճերմակ բառը Տա-

ղարանում պատահական չէ, տպագրության ընթացքում կատարված փոփոխություն չէ, այլ գալիս է այն ձեռագրից, որից կատարվել է տպագրությունը, այսինքն՝ մինչև տպագրվելը տաղը այս տողում (ինչպես և ուրիշ տողերում) արդե՛ն ենթարկվել էր փոփոխության:

«Ահա եղև պայծառ գարուն» սկսվածքով տաղը գրված է 8 վանկանի տողերով: Տաղարանում նրա 13-րդ տողը 7 վանկանի է.

«Այն վարդին գէմ չկայ գին»:

Պարզ է, որ ինչ-որ բան փոփոխված է: Եվ իսկապես՝ համեմատական բնագիրը կազմելու համար մեր օգտագործած ութ աղբյուրներից երկուսը վարդիճ բառի փոխարեն ունեն վարդենուճ եռավանկ բառը, որով տողը դառնում է 8 վանկանի: Ուրեմն՝ Տաղարանը և մնացած 5 ձեռագրերը պահել են 13-րդ տողի խաթարված ձևը: Չի կարելի ասել, թե 5 ձեռագրերի մայրը եղել է Տաղարանը. սրանց տարընթերցվածները չեն համընկնում: Ուստի և քննության առարկա տողում վարդենուճ բառաձևը արդեն վարդիճ ձևով էր այն ձեռագրում, որից քաղել է այս տաղը Տաղարանի հրատարակիչը:

Տաղերից մեկի առաջին տողերն են.

«Քանի՛ դատիս ի հետ մեղաց,
Է՛ անզգամ մարդ կատաղած»:

Կատաղած բառի փոխարեն Տաղարանը և 6 ձեռագիր ունեն կատարած, միայն «Մանանայ»-ում տպագրված օրինակն է, որ ունի ճիշտ և հասկանալի կատաղած ձևը: Եթե նկատի ունենանք, որ 6 ձեռագրերի մայրը Տաղարանը չէ, ինչպես երևում է տարընթերցվածների խմբավորումներից (հմմտ. մեր կազմած տեքստի տարընթերցումները), մեզ համար պարզ կլինի, որ մինչև տաղի 1513 թվականին տպագրվելը այն արդեն ընդօրինակությունների միջոցով ենթարկվել էր փոփոխությունների:

Հետաքրքիր է նաև սիրային տաղերից «Հազար ուսուֆ է քեզ ծառայ» սկզբնատողով տաղի 18-րդ տողում կատարված աղավաղումը: Դիմելով իր սիրո առարկային՝ կնոջը, Թլկուրանցին ասում է.

«Հաբեղանուն ես որոգայթ,
Քահանայից ակնատ ու կարթ,
Զմիակեցին խելքըն տանիս,
Թէ կացեր է զօրն անապատ»:

Սույն քառատողի երկրորդ տողը Տաղարանում և բոլոր ձեռագրերում, բացի մեկից, աղավաղված է ու անհասկանալի: Ակնատ ու կարթ բառերի փոխարեն 5 ձեռագիր ունեն՝ ակնաթ ու զարդ, 2 ձեռագիր և Տաղարանը ակնակ ու զարդ, իսկ «Մանանա»-ն՝ ակնակուռ զարդ (սրանց միջև եղած մանր տարբերությունները զանց ենք առնում): Հասկանալի է, որ կարթ բառի կ-ն ընդօրինակողը կարդացել (կամ սխալվել գրել) է զ՝ դարձնելով ակնաթ ու զարթ, սա էլ հետագա ընդօրինակություններում դարձել է ակնակ ու զարդ, իսկ «Մանանա»-ում տպագրված օրինակի հիմք հանդիսացած ձեռագրի գրիչը, և կամ հենց ինքը՝ հրատարակիչը, «իմաստավորելու» համար ակնակ ու զարդ դարձրել է՝ ակնակուռ զարդ՝ ավելացնելով մի ռ:

Այստեղ մեզ հետաքրքրում է այն հանգամանքը, որ Տաղարանում առկա է այդ աղավաղումը, ըստ որում այն պատկանում է աղավաղման մեր ցույց տված ընթացքի երկրորդ փուլին: Ուստի և անվերապահորեն կարելի է ասել, որ 1513 թ. Տաղարանում տպագրվելուց առաջ տաղը գոյություն ուներ ավելի վաղ գրված ձեռագրերում, ուր և փոփոխությունների ենթարկվել էր, իսկ առանձին տողեր աղավաղվել էին, ուրիշ խոսքով՝ գրվել է շատ ավելի վաղ, քան 1513 թվականը:

Այժմ մի երկու այլ բնույթի ապացույցներ:

Մեր հեղինակի մականունը ձեռագրերում հանդիպում ենք տարբեր ձևերով՝ Թլկուրանցի, Թուլկուրանցի, Թլգօրընցի, Թուլգուրանցի, Թուրկուրանցի, Թուրգուրանցի և այլն: Ենթա-

դրում ենք, որ հեղինակը միայն մեկ ձևն է գրել և տարբերությունները հետագա գրիչների կատարած փոփոխություններն են: Տաղարանում տպագրված տաղերից 11-ը վերջին տան մեջ ունեն հեղինակի մականունը Թուրկուրանցի ձևով, և միայն մեկում՝ «Քանի դատիս ի հետ մեղաց» սկզբնատողով տաղի վերջին տուն-հիշատակարանում Թուլկուրանցի ձևով է (մյուսները չունեն): Ուշադրության արժանի է, որ այս տաղի վերջին տունը տառացի նույնն է դարձյալ Տաղարանում տպագրված «Հազար ուսուֆ է քեզ ծառայ» տաղի վերջին տան հետ, միայն այն տարբերությամբ, որ մեկում մականունը գրված է Թուլկուրանցի, մյուսում՝ Թուրկուրանցի:

Կարծում ենք, որ այս փոփոխությունը ևս կատարվել է մինչև 1513 թվականը՝ ձեռագրերի ընդօրինակությունների միջոցով:

Եվ վերջապես՝ Տաղարանում չափազանց աղավաղված ձևով է տպագրված «Տաղ գարնան» խորագիրը կրող քերթվածը. Տաղարանում այն ունի ընդամենը 72 տող, մի այլ ձեռագրով մեզ հասած 104-ի փոխարեն (իրականում եղել է շատ ավելի), տներն ու տողերը հաճախ ետև-առաջ են, այնպես որ տեղ-տեղ անհասկանալի են դառնում: Չունի վերջին տները, որտեղ հիշված է եղել հեղինակի անունը և այլն (մանրամասնությունները տես տաղիս ծանոթագրության մեջ):

Տաղի Տաղարանի տարբերակում եղած տողերի ետևառաջությունը, պակասները, աղավաղումները գալիս են, անշուշտ, տպագրության հիմք հանդիսացած ձեռագրից և ցույց են տալիս, որ ձեռագրերում այն երկար կյանք է ունեցել մինչև տպագրվելը:

Այսպիսով, միանգամայն պարզ է, որ 1513 թվականի տպագրված Տաղարանում մտած Հովհաննես Թլկուրանցու տաղերը գրված են շատ ավելի վաղ, քան այդ թվականը:

Արդ՝ նույն Տաղարանում տպագրված է նաև հայերենների չափով գրված այն տաղը, որի մեջ հեղինակը նշում ունի իր տարիքի մասին.

«Տէր Յովանէս Թուրկուրանցի,
Զուր կաս զայլ ոք կու խըրատես.
Զեաւթանասուն տարին լըցեր,
Ի՛ ի մահուն դուռըն հասեալ ես»[1]:

Ինչպես Տաղարանում տեղ գտած մյուս տաղերը, այնպես էլ այս տաղը մինչև տպագրվելը ենթարկվել է փոփոխությունների (օրինակ՝ հենց բերված տան մեջ խախտված է հայերենների չափը, դարձված է 8 վանկանի տողերով տուն), այսինքն՝ գրված է 1513 թվականից առաջ և անցել է մեկից ավելի ընդօրինակություններ: Եթե նույնիսկ ընդունենք, որ գրված է մի 20 տարի առաջ, ուրեմն 1493 թվականին Թլկուրանցին արդեն 70 տարեկան էր:

Ըստ Չամչյանի Սսի կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցին կաթողիկոսական աթոռի վրա է եղել 1489—1525 թվականներին, իսկ ըստ Ն. Ակինյանի՝ 1489—1533 թթ. և մահացել է 1535 թ.: Եթե համանուն տաղասացը և կաթողիկոսը նույն անձնավորությունն են, ապա դուրս կգա, որ 1493 թ. 70 տարեկան Թլկուրանցին ապրել է ևս 32 տարի, այսինքն ոչ միայն ապրել է 102 տարի, այլև եղել է կաթողիկոսական գահի վրա, մի բան, որ հավանական չէ: Առավել ևս անհեթեթ կլինի երկու Թլկուրանցիներին նույնացնելը, եթե ճիշտ է Ակինյանի տեղեկությունը կաթողիկոսի գահակալության և մահվան թվականների մասին: Այս դեպքում դուրս կգա, որ նա 110 տարեկան հասակում կաթողիկոսական գահին բազմած էր և ապրել է 112 տարի: Թվերը ավելի մեծ անհեթեթություն կարտացոլեն, եթե ընդունենք, որ վերոհիշյալ տաղը գրվել է ոչ թե 1493 թ., այլ ավելի վաղ:

Տվյալները ստիպում են ընդունել, որ նույնանուն տաղասացն ու կաթողիկոսը տարբեր անձնավորություններ են:

2. Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 559 ձեռագիրը, գրված 1469 թ., ինչպես հաղորդում է Մ. Պոտուրյանը, Հովհաննես Թլկուրանցու անունով երկու տաղ է պա-

[1] Բերում ենք այնպես, ինչպես Տաղարանում է:

րունակում, որոնցից մեկը «Այսօր եղև պայծառ գարուն» սկսվածքով Կոստանդին Երզնկացու քերթվածն է (մյուս տաղի մասին Պոտուրյանը ոչինչ չի հաղորդում): Ինչպես մանրամասն բացատրում ենք Թլկուրանցու՝ այս գրքում տպագրված «Ահա եղև պայծառ գարուն» տաղի ծանոթագրության մեջ, Կ. Երզնկացու տաղը Թլկուրանցուն վերագրելու պատճառը կարող է լինել կամ երկու հեղինակների նշված տաղերի սկսվածքների գրեթե նույնությունը՝ «Այսօր եղև պայծառ գարուն» (Երզնկացի) և «Ահա եղև պայծառ գարուն» (Թլկուրանցի), և կամ Թլկուրանցին եղել է Երզնկացու տաղի երգիչներից մեկը, և 1469 թ. կամ սրա նախամայր ձեռագրում այն ընդօրինակվել է Թլկուրանցու բերանից (մանրամասնությունները տես «Ահա եղև պայծառ գարուն» տաղի ծանոթագրության մեջ):

Այստեղ մեզ հետաքրքրողը, սակայն, այլ բան է: Եթե հավաստի համարենք, որ 1469 թ. գրված ձեռագրի գրիչն է Երզնկացու տաղը վերագրել Թլկուրանցուն, պետք է ընդունենք, որ վերջինիս «Ահա եղև պայծառ գարուն» տաղը շատ տարածված էր և Կոստանդինի քերթվածի սկսվածքը ձեռագրի գրչին հիշեցրել է Թլկուրանցու տաղն ու Թլկուրանցուն, այսինքն՝ Թլկուրանցին 1469 թվականին արդեն ճանաչված ու տարածված բանաստեղծ էր, ուստի և մոտ 40 տարեկան, ծնված 1429 թ.: Անհնար է կարծել, թե 1429 թ. ծնված մարդը ապրել է մինչև 1535 թվականը, այն էլ 100-ից ավելի տարիքում եղել է կաթողիկոսական գահին բազմած:

Նույն եզրակացությանն ենք հանգելու, եթե ընդունենք, որ Կոստանդինի տաղը 1469 թ. Թլկուրանցուն է վերագրվել, որովհետև նրա բերանից է գրի առնվել իբրև երգչի:

Տեղին է ասում Մ. Պոտուրյանը, թե «Զարմանալի է, թե ինչպես Հովհ. Թլկուրանցվույն ժամանակակից այդ օրինակողը (1469 թ. գրված ձեռագրի գրիչը—Էմ. Պ.) Կոստանդինի քերթվածը Թլկուրանցվույն կընծայե»[1]:

[1] «Բազմավեպ», 1905, էջ 365:

Այս զարմանքը կվերանա, եթե ընդունենք, որ Թլկուրանցին այդ թվականին արդեն կենդանի չէր, ուրեմն և ժամանակակից չէր ընդօրինակողին:

3. Տաղարանում տպագրված՝ Թլկուրանցու 16 ստեղծագործություններից միայն երկուսը կրոնական բովանդակություն ունեն, 9-ը սիրո երգեր են, և այնպիսի երգեր, որոնց մեջ հեղինակը, ինչպես արտահայտվել են, «վառված էր մի աննման կնապաշտությամբ»[1]:

Արդ՝ հնարավո՞ր է, որ կաթողիկոսական աթոռը վարող մեկի կրքոտ սիրային երգերը միջին դարերում տպագրությամբ հրապարակ հանեին նրա իսկ կենդանության օրոք: Մխիթարյան հայրերից Ղ. Հովնանյանը, ըստ ավանդության կարծելով, թե տաղերի հեղինակը կաթողիկոսն է, 20-րդ դարում նկատում է. «Բայց կարծենք թե առանց յուր բանաստեղծական աշխուժին վնաս հասցնելու՝ ավելի պատիվ կը բերեր վարած եկեղեցական բարձր պաշտոնին, եթե հիրս ինչ ավելի չափավորեր յուր երևակայության սլացքն»[2]:

Մի՞թե այս միևնույնը չէին հասկանում 16-րդ դարի սկզբին Տաղարանի հրատարակիչները, եթե անգամ իսկապես կաթողիկոսը գրած լիներ այդ երգերը, թեկուզ մինչև կաթողիկոսանալը:

4. Վերևում մենք բերեցինք 1513 թվականի Տաղարանում տպագրված այն տաղի վերջին տունը, որտեղ հեղինակը հիշատակություն ունի իր տարիքի մասին: Տաղի մեր ձեռքի տակ եղած 20-ից ավելի ձեռագրերից 4-ը և Տաղարանը այդ տան առաջին տողում հեղինակի անունից առաջ դնում են Տէր բառը.

Տէր Յովանէս Թուրկուրանցի:

Ղ. Հովնանյանի «Միջնադարյան ազգային տաղաչափություն» գրքում հրատարակված օրինակում Տէր բառի փոխա-

[1] Լեո, Հայոց պատմություն, հտ. III, Երևան, 1946, էջ 403:

[2] Ղ. Հովնանյան, Միջնադարյան ազգային տաղաչափություն, Վիեննա, 1911, էջ 28:

րեն դրված է՝ Խև[1]: Տողը ճիշտ է այն ձեռագրերում, որոնց մեջ բացակայում են այդ բառերը, հակառակ դեպքում խախտվում է վանկերի քանակը: Ներկա դեպքում մեզ չի հետաքրքրում, թե ինչպես և ինչու են ավելացվել այդ բառերը. մեզ հետաքրքրողը այն է, որ կաթողիկոսի կենդանության օրոք՝ նրա վերաբերյալ չէին ավելացվի Տէր, ինչպես Տաղարանում է, կամ Խև բառերը:

Ուրեմն՝ 1513 թ. Տաղարանի հրատարակիչը իմացել է, որ այդ տաղը (ինչպես և մյուսները) իրեն ժամանակակից Սսի կաթողիկոսինը չէ, իսկ սրա անձնավորությանը անծանոթ լինել չէր կարող հրատարակիչը:

Այսքանից հետո անհասկանալի է մնում, թե ինչպես առանց խորամուխ քննության, դյուրագայթ մոտեցմամբ Սսի կաթողիկոսին համարել են «առաջին հայ հեղինակը, որի գրվածքները տպագրվում էին նրա կենդանության ժամանակ», և նույնիսկ՝ Տաղարանի հրատարակիչ Հակոբ Մեղապարտի բարեկամը:

Այս չորս նկատառումները լի ու լի բավական են ապացուցված համարելու տաղերգու Հովհաննես Թլկուրանցու և համանուն Սսի կաթողիկոսի տարբեր անձնավորություններ լինելը:

Միջնադարյան աշխարհիկ բանաստեղծության մեջ հատկապես աչքի ընկնող մի խումբ գողտրիկ տաղերի հեղինակ Հովհաննես Թլկուրանցին ապրել ու ստեղծագործել է ավելի վաղ, քան 1489—1525 (կամ 1489—1533) թթ. կաթողիկոսական աթոռին նստած Հովհաննես Թլկուրանցին: Սակայն, արդյո՞ք տաղերգու Թլկուրանցին նույն ինքը նույնանուն գանձասաց Թլկուրանցին չէ, որի գանձերը գտնվում են 1371, 1394, 1280—1408 թվականներին գրված ձեռագրերում:

[1] Հովնանյանը տաղի տեքստը կազմել է Վիեննայի Մատենադարանի № 263 ձեռագրից «համեմատյալ այլ երեք օրինակաց հետ»: № 263-ը չունի «Խև» բառը (տես Տաշյան, Ցուցակ, էջ 677): Մեզ անհայտ է՝ դա ձեռագրական տվյալ է, թե՞ Հովնանյանի ավելացրածը:

Հակված լինելով կարծելու, որ, թերևս, նրանք տարբեր անձնավորություններ են, առայժմ բանասիրական ոչ մի կռվան չունենք մեր կարծիքը հաստատելու համար, ինչպես և որևէ փաստ չկա, որը գեթ նվազագույնս հաստատի նրանց միևնույն անձն լինելը[1]:

Բանասիրական խնդիրների անքննադատ ու դյուրին լուծումը հասցնում է սխալների, որոնք դառնում են նախապաշարմունք և խանգարում դրանց հետագա քննությանը. ուստի և տվյալ հարցի մասին մենք ձեռնպահ ենք մնում որևէ բան ասելուց, մինչև նոր, կոնկրետ փաստերի բացահայտումը:

Իր ստեղծագործության բնույթով, ինչպես կտեսնենք սույն ներածության հաջորդ հատվածում, Հովհաննես Թլկուրանցին Կոստանդին Երզնկացու անմիջական հետնորդն է, և ամենայն հավանականությամբ՝ նրա հետնորդը նաև ժամանակով:

Սսի կաթողիկոս և տաղասաց Թլկուրանցիների տարբեր անձավորություններ լինելու հարցը քննելիս միաժամանակ պարզվեց, որ տաղասացը ապրել է կաթողիկոսից առաջ, և ավելի վաղ, քան 1470 և 1469 թվականները, քանի որ 1470 թվականի մի ձեռագիր պարունակում է մեր հեղինակի «օրհնեալ անուն անմահ բանին» տողով սկսվող տաղը («Ի վերայ անզգամ կանանց» խորագրով)[2], որը հեղինակային ինքնագիրը չէ, ենթարկված է փոփոխությունների՝ արտագրությունների հետևանքով, ուստի և գրված է ավելի շուտ, իսկ 1469 թվականին գրված ձեռագրում Կոստանդին Երզնկացու տաղը

[1] Հարցի լուծման համար անհրաժեշտ կլինի պարզել, թե ե՞րբ է ապրել գանձասաց Թլկուրանցին (վերևում բերված թվերը նրա գանձերը գրելու թվականները չեն), մի բան, որը գուցե հնարավոր լինի գանձարանների ուսումնասիրությամբ, որ մինչև այժմ չի կատարված: Առայժմ այսքանը կարող ենք ասել, որ այդ գանձերի և Թլկուրանցու նույնիսկ կրոնական տաղերի միջև շոշափման կետեր չկան լեզվի և այլ տեսակետներից:

[2] Տե՛ս «Բազմավեպ», 1954, թիվ 1—2, էջ 30:

վերագրվել է Թլկուրանցուն անշուշտ ոչ նրա կենդանության օրոք:

Նշված հանգամանքները հիմք են տալիս մակաբերելու, որ մեր բանաստեղծը ապրել ու ստեղծագործել է 14-րդ դարի երկրորդ և 15-րդ դարի 1-ին կեսերին, այսինքն՝ ժամանակով հեռու չէ Կոստանդին Երզնկացուց:

Ստեղծագործություններում եղած մի քանի հիշատակություններից հնարավոր է լինում կենսագրական որոշ տեղեկություններ քաղել նրա մասին:

Տաղերի հեղինակը իրեն կոչում է Թուրկուրանցի կամ Թլկուրանցի (գրչագրերում հանդիպում ենք նաև՝ Թուրգուրանցի, Թուլկուրանցի, Թըլգուրանցի և այլ ձևերի): Նա տողատել, չափածոյի է վերածել Վարդան վարդապետի Արաբածոց մեկնությունը. այստեղ սկզբում իր մասին տեղեկացնում է.

«Ես Յովանէս նուաստ ոգի,
Որ եմ երկրաւ Թըլգուրանցի»[1]:

Ուրիշ տարբերակում՝

«Ես Յովանէս նուաստ ոգի,
Որ մականուն Թուլկուրանցի»[2]:

Նույն ստեղծագործության վերջում դրված հիշատակարանում կարդում ենք.

«Եւ զանարժան և զեղկելիս
Թափառական զԹըլգուրանցիս
Եւ զաւանցիս միշտ յիշեցէք...»[3]:

Թլկուրան ավանը գտնվել է Միջագետքում՝ Ամիդից հարավ-արևմուտք, Հռոմկլայից հյուսիս-արևելք: Սա մի բազ-

[1] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 5622, էջ 54բ:

[2] Նույն տեղում, ձեռ. № 1661, էջ 570:

[3] Նույն տեղում, ձեռ. № 5623, էջ 255բ: Ուրիշ օրինակներ չունեն «Եւ զաւանցիս» բառերը, իսկ Թափառական-ի փխ ունեն՝ Թափառնական:

մամարդ ավան էր, ուներ վանք, որտեղ գրվել են մի շարք հայերեն ձեռագրեր։

Բերված քաղվածքներից պարզ է, որ բանաստեղծի հայրենիքը Թլկուրան ավանն է եղել։

Ամենայն հավանականությամբ նա իր ժամանակի կրթված ու զարգացած մարդկանցից մեկն է եղել։ Այդ է ցույց տալիս նույն Արարածոց մեկնության ձեռագրերից մի քանիսի վերնագրերում եղող հետևյալ արտահայտությունը. «Պատմութիւն արարածոց, զոր արարեալ է քաջ իմաստնոյն Թլկուրանցոյ. ի չափ ոտանաւորի, վասն օգտի ուսումնասիրաց»[1]։

Եթե անգամ այս վերնագիրը կազմված լինի հետագայում, ուշ շրջանում (ձեռագրերը 17-րդ դարի են), այնուամենայնիվ կարող ենք ասել, որ միջնադարում նա որպես այդպիսին է ճանաչվել։

Ոմանք այն կարծիքն են հայտնել, որ բանաստեղծը որևէ հոգևորական կոչում չի ունեցել և եղել է աշխարհական[2]։ Սակայն, համաձայն Ն. Ակինյանի հաղորդման, «Վենետիկի Մխիթարյան մատենադարանի մի գանձարանում նա անվանվում է «Վարդապետ»[3]։

Դժվարանում ենք ասել՝ սա վերաբերում է մեր Տաղերգուին, թե՞ ուրիշ Հովհաննես Թլկուրանցու, այնուամենայնիվ, տաղերից մեկի հետևյալ արտահայտությունից՝

«Մոռցա զուսումըն զոր ունի,
Մնացեր եմ լոկ աշխարհական»,

[1] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 5120, էջ 36բ. նույնը նաև՝ ձեռ. № 1171, էջ 179ա։

[2] Տե՛ս Աս. Մնացականյանի նշված հոդվածը։ Ա. Երեմյանը գրում է, թե «Վիեննայի Մխիթարյան գիտնական բանասերներից Հ. Ներսես Ակինյանը առաջինն էր, որ Թլկուրանցուն պատկերել է որպես աշխարհական»։ Սա իրականության չի համապատասխանում. Ակինյանը նման կարծիք չի հայտնել։

[3] «Արեգ», 1924, էջ 471։

կարելի է եզրակացնել, որ նա ունեցել է եթե ոչ պաշտոն, համենայն դեպս՝ հոգևորական կոչում։

Կարծիք է հայտնվել նաև, թե Թլկուրանցին եղել է աշուղ[1]։

Մեր կարծիքով, Թլկուրանցին չի եղել ո՛չ աշուղ և ո՛չ էլ գուսան։ Աշուղական արվեստը, աշուղությունը մեզ մոտ սկիզբ է առնում 16—17-րդ դարերում միայն, իսկ դրանից առաջ եղած երգիչները աշուղներ չեն հենց ստեղծագործական հատկանիշներով, իսկ գուսանները եղել են, ինչպես միանգամայն ճիշտ նկատում է Մ. Աբեղյանը, «ժողովի», խրնջույքի բանաստեղծներ, երգում էին «առանձնապես գինարբություն և սիրու հեշտանք»[2], որպիսիք չի երգում Թլկուրանցին։ Ընդհակառակը՝ նա իրեն սահմանազատում է գուսաններից։ Խրատական-բարոյախոսական տաղերից մեկում, որը սկսվում է «Գերի՛, քանի կենաս ի յերբերուն...» տողով, հեղինակը «մանկանց»—երիտասարդներին զգուշացնում է գինարբեցությունից ու գուսաններից.

«Զերթաս ընկնիս ի հետ գինոյն,
Կանուշանաս հետ հարիֆնուն,
Ցէն քաղցրաձայն գաւսանուն
Զմիտքդ տանին հետ լկտանուն»[3]։

Մեր բանաստեղծը եղել է երգիչ-երգող, որ նշանակել է բանաստեղծ-երաժիշտ, որպիսին էր Ներսես Շնորհալին[4]։ Թլկուրանցին իր տաղերից մի քանիսի վերջում իրեն կոչում է ասող.

«Եվ Յովհաննէս Թուրկուրանցի,
Զօրն ի բուն ընդ այլ կասես...»։

[1] Կ. Կոստանեյանց, Հովհ. Թլկուրանցին և յուր տաղերը, էջ 8—9։

[2] Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 12։

[3] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 2676, էջ 210ա։

[4] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 80։

«Թէ չէր մահուն օրն ու դժոխն
Ու կամ սարսափ դատաստանին՝
Նայ այս աղէկ էր զինչ ասաց
Խև Յովհաննէս Թուրկուրանցին»։

«Յովհաննէս Թուրկուրանցի,
Ջուր կասես, զայլ ոք խըրատես...»։

«Խէվ Յովանէս Թուլկուրանցին
Կարճ և ողորմ ասաց զայս բան»[1]։

«Ասել» այստեղ նշանակում է և հորինել, բայց և միաժամանակ՝ «արտասանել բարձր ձայնով»։ Այդ հաստատվում է «Աչերդ է թուխ ու պէտ...» սկզբնատողով սկսվող տաղի վերջին տողերով.

«Սուրբ Կարապետ, շատ կու խնդրեմ ըզքեզ՝
Ջասողքս ու գըրսողքս ի չարէն փրկես»։

«Ասողք»-ի տակ այստեղ պետք է հասկանալ ոչ միայն իրեն՝ հեղինակին, այլև բոլոր նրանց, ովքեր կարտասանեն ու կերգեն տաղը։

Երկլեզվյան մի տաղի վերջում էլ իրեն անվանում է երգող.

«Ի յայսմ աշխարհիս միջին,
Սէնսիկ շեհրի Զին ու մէջին.
Երգողիս Յովանիսին
Ըռահմ էյլէ պաշընկ իչուն»։

Այդպիսի երգող են եղել նաև Հակոբ Արծկեցին, որ երգել—ասել է Կոստանդին Երզնկացու «Այսօր եղև պայծառ գարուն» տաղը[2], Գրիգոր Աբեղան, որ երգել է «Ի վայրի հաւիկ մը բռնած ու դրած..»[3] տաղը։

---

[1] Տե՛ս սույն գրքի էջ էջ 127, 140, 177 և 204։
[2] Տե՛ս սույն գրքի, էջ 241։
[3] Տե՛ս Բազմավեպ, 1939, էջ 198—199։

«Երգող» արտահայտությունը իմաստավորվում է, երբ նկատի ենք առնում, որ Թլկուրանցու տաղերից շատերը ունեցել են եղանակներ ու երգվել են։ Հովասափ Սեբաստացու «Յայն առաջին ժամանակին» սկսվածքով տաղը մի ձեռագրում ունի հետևյալ վերնագիրը. «Ով եղբայր Անտրեաս. ասկօ սիրու բանս վասն սրտի քո գրեցի. ուրախութ. Խև Յովանէս Թլկուր. գոյն Արեկ, արեկ»[1], այսինքն՝ այդ երգը պետք է երգվեր Թլկուրանցու «Արե՛կ, արե՛կ»-ի եղանակով։

Ինչպես երևում է, Թլկուրանցին իր տաղերի եղանակները ինքն էլ հորինել է. Արարածոց մեկնության սկզբում գրված հեղինակի հիշատակարանում ձեռագրերից մեկի մեջ կարդում ենք.

«Քաղցր ձայնիւ յօրինեցի,
Ինձ յիշատակ շարադրեցի»[2]։

Ըստ այսմ, ուրեմն, Թլկուրանցին թե՛ շարադրել է և թե՛ շարադրածի եղանակը ստեղծել («ձայնիւ յօրինել»)։ Որ իսկապես այս «Մեկնությունը» երգվել է, երևում է հետևյալից։ Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 3119 ձեռագրում սույն Արարածոց մեկնության հիշատակարանից առաջ կարդում ենք. «Ձայնն փոխէ այլ եղանակ, ով վարպետ»։

Այսպես ուրեմն, Հովհաննես Թլկուրանցին եղել է ոչ թե աշուղ կամ գուսան, այլ երգող-երգիչ, երաժիշտ-եղանակահան ինչպիսին եղել են Ներսես Շնորհալին և ուրիշները։

Այժմ տեսնենք, թե ինչ է երգել և ինչպես է երգել մեր բանաստեղծը։

---

[1] Գ. Հովսեփյան. Հովասափ Սեբաստացի, Արարատ, 1918, էջ 274, ծանոթ.։
[2] Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 5622, էջ 54բ։

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործությունը ընդգրկած թեմաների և բովանդակության տեսակետից բազմազան է: Նրա քերթվածները կարելի է բաժանել 4 խմբի՝ սիրո և բնության տաղեր, խրատական-բարոյախոսական տաղեր, վիպական տաղեր և կրոնական ճորինվածքներ:

ՍԻՐՈ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՏԱՂԵՐ

Մեր գրականության մեջ առաջին անգամ, դեռևս 10-րդ դարում, միջնադարի հանճարեղ բանաստեղծը՝ Գրիգոր Նարեկացին իր տաղերի մեջ, ի տարբերություն հոգևոր երգի՝ շարականների, նոր ու թարմ պատկերներով երգում է բնությունը, նրա գեղեցկությունները, և սրանց մեջ՝ «լուսեղեն պատկեր» կնոջը իր արտաքին բարեմասնություններով:

Սակայն, թե՛ սերը և թե՛ բնությունը Նարեկացու «Ծնընդեան», «Աստուածածնի», «Մեղեդի ծննդի», «Յարութեան» խորագրերը կրող և այլ տաղերում երգված են այլաբանորեն. կինը նրա մոտ աննյութական էակ է, ս. Կույսը, իսկ բնությունը, բնության զարթոնքը, գարունը՝ Քրիստոսի ծննդյան այլաբանությունն է: Ուրիշ խոսքով՝ Նարեկացին երգի նյութ է դարձնում բնությունը, խոսեցնում է բնությանը՝ կրոնական նպատակներով: Բայց ինքնըստինքյան արդեն նորություն էր մեր գրականության մեջ բնության ու սիրո երգն ու գովքը հենց թեկուզ կրոնական այլաբանության նպատակներով օգտագործելը[1], առավել ևս մեծ բանաստեղծի օգտագործմամբ, որի ստեղծագործության մեջ սերն ու բնությունը հեռանում են այլաբանությունից, անկախանում և նպատակից անկախ, ինքնակա արժեք են ստանում: Եվ Նարեկացին իր մի շարք տաղերում հանդես է գալիս որպես բնության սիրահար մի բանաստեղծ. այնտեղ գտնում ենք բնության անդրապատկերումը վառ երևակայությամբ և բարձր ու վեհ արվեստով, բնությունը իր շքեղությամբ, իր շարժման մեջ, ամբողջական պատկերներով, և այս բնության մեջ՝ սիրո առարկայի, գեղեցիկ կնոջը:

Այսպիսով՝ թեև սերն ու բնությունը Նարեկացու մոտ կրում են կրոնական շղարշ, բայց այդ շղարշի տակից երևում է բնության ու սիրո աշխարհիկ ընկալումը, մի ընկալում, որը մեր միջնադարյան բանաստեղծության զարգացման հետագա փուլում պետք է հանդես գար առանց այդ շղարշի:

Եվ իսկապես՝ Կոստանդին Երզնկացու մոտ արդեն գըտնում ենք վարդի ու բլբուլի այլաբանական սիրավեպը, որի մեջ «այլաբանության տակից պարզ ցոլանում է զգայարանական հեշտավետ սերը»[1]: Նկատի ունենք Կոստանդին Երզընկացու «Այսօր եղև պայծառ գարուն» տողով սկսվող տաղը, որը «թեև այլաբանությամբ, բայց այնպես գունեղ ու վճիտ է հորինված, և այնպես պատշաճ է հարմարեցված իրական կյանքին, որ պարզապես հասկացվում է աշխարհիկ բովանդակությամբ»[2]:

Ըստ էության Կոստանդինի այս տաղը աշխարհիկ սիրո մի գեղեցիկ գովք է: Բլբուլի բերանին հետևյալ խոսքերն է դրել սիրավեղուն բանաստեղծը.

«...Սէր է ծառն ու սէր ծաղիկն,
ու սէր հաւուն ձայնն ի ծառին.
Սէր է վարդն ու սէր բլբուլն,
սիրով նըստել ի վերայ վարդին.

[1] Հմմտ. Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք I, Երևան, 1944, էջ 561—569, Գրիգոր Նարեկացի գլխի Վերածընության շունչը հատվածը:

[1] Մ. Աբեղյան, հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 321:

[2] Նույն տեղում, էջ 327:

Սիրով են գոյն ու գոյն
ու գեղեցիկ այն ծաղկընին,
Վասըն սիրոյ փոքրիկ հաւերն
ի ծաղկընուն վերայ նըստին»[1]:

Քերթվածը ունի «Բանքս վարդի օրինակաւ զՔրիստոս պատմէ» վերնագիրը. այսինքն՝ հեղինակի մտահղացմամբ վարդի օրինակով պետք է այլաբանորեն ներկայացվեր Քրիստոսը: Սակայն այլաբանությունն այնքան անընկալելի է, որ Երզընկացին ստիպված գրել է «Մեկնութիւն վարդին համառօտ: Վասն անգիտաց շինեցի. զի կարծէին եթէ մարմնաւորաց էր բանք վարդիս: Ես վասն այն գրեցի»[2] խորագրով մի լրացուցիչ բանք, ուր բացատրում է այլաբանությունը: Ինչպես երևում է մեկնության՝ մեջ բերված խորագրից, Կոստանդինի քննարկվող քերթվածը հենց իր ժամանակ իսկ ընկալվել է աշխարհիկ բովանդակությամբ և ոչ այլաբանորեն:

Կոստանդին Երզնկացուց մեզ են հասել սիրո և բնության այլ քերթվածներ ևս, որոնք արդեն երգված են «յայտնի ձայնով» և այլաբանական ոչինչ չունեն իրենց մեջ: Սակայն դեռևս կաշկանդված է բանաստեղծը, նա չգիտե, թե ինչպես կընդունվեն իր աշխարհիկ երգերը, ուստի և արդարացնում է «աշխարհի բան»-եր գրելու իր քայլը.

«Եղբարք մի կան հետ մեզ սիրով,
Աշխարհի բան ուզեն գըրով.
Նայ ես վասն այն յայտնի ձայնով՝
Սիրու բաներս ասցի յոլով»[3]:

Եթե Գրիգոր Նարեկացու մոտ կրոնական-այլաբանական շղարշի տակից ենք նկատում բնության ու սիրո նրա աշխարհիկ ընկալումը, իսկ Կոստանդին Երզնկացու այդ ընկա-

[1] Մ. Պոտուրյան, Կոստանդին Երզնկացի և յուր քերթվածները, Վենետիկ, 1905, էջ 115:

[2] Նույն տեղում, էջ 119:

[3] Նույն տեղում, էջ 171:

լումը իրապես աշխարհիկ է, բայց նա ջանում է այդ ծածկել այլաբանությամբ, և դեռևս անվստահությամբ է սիրո ու բնության գովքն անում, ապա Հովհաննես Թլկուրանցու մոտ ո՛չ այլաբանություն կա, և ո՛չ էլ անվստահություն: Նա երգում է սերն ու բնությունը առանց որևէ այլաբանության, բացահայտ ու վստահ: Ավելին՝ նրա կարծիքով աստված կնոջը ստեղծել է սիրո համար: «Գէնա՛յ բահար, այլ ւ՛ի բահա՛ր» տաղում հեղինակը դիմելով աստծուն, ասում է.

«Դու ստեղծեր զկինն ի կողէն,
Վասն Ադամայ սիրոյն համար՝
Թէ աճեցէք և բազմացէք
Եւ շրջեցէք լերունք ւ՛ի քար» (ԺԴ, 77—80)[1]:

Ուրեմն՝ սերը աստվածատուր է, կյանքի հիմքը: Սերը հատուկ է նույնիսկ աստծուն, գեղեցիկ կնոջը սիրում է և՛ մարդը, և՛ աստված.

«Դու օրինակ ես աղէկնուն,
Զքեզ սիրէ աստուած և մարդ» (Դ, 15—16):

Ճիշտ են նկատել, որ սա միջնադարում սիրո քնարերգության իրավունքի հիմնավորումն ու պաշտպանությունն էր[2], մարմնի իրավունքի պաշտպանությունը ընդդեմ քրիստոնեական վարդապետության:

Այսպիսի հիմնավորումից հետո բնական է, որ մենք Թլկուրանցու մոտ գտնենք կնոջ ու սիրո ազատ ու անկաշկանդ գովքը: Մեր բանաստեղծի համար սերը ամենաուժեղ զգացմունքն է և գոյություն ունի դեռևս արարչագործության ժամանակվանից. այն ընդհանրական մի զգացում է, նրա ազդեցությանը ենթարկվել է դեռևս առաջին մարդը՝ Ադամը.

[1] Այս և հետագա մի քանի էջերում քաղվածքները բերում ենք Սիրո և բնության ու Խրատական-բարոյախոսական բաժինների տաղերից, կողքերին նշանակելով տաղերի և տողերի հերթական համարները:

[2] Տե՛ս Վ. Նալբանդյան, Միջնադարի հայ տաղերգուները, Երևան, 1958, էջ 31:

«Սէրն զԱդամ դրախտէն եհան» (ԺԴ, 53):

«Սիրուն չդիմանայ նախահայրն Ադամ,
Վանց սիրոյ ելաւ յեդեմ դրախտէն համ»
(ԺԳ, 12—13):

Սէրը ամենահաղթ ու ամենազոր մի ուժ է.

«Մարդ որ սիրու կու հանդիպի,
Նա՛յ քան ըղկրակ կու լինի վառ,
Այլ ոչ աղօթք միտքըն կու գայ,
Ոչ յայսմաւուր կարդալ և ճառ» (ԺԴ, 45—48):

«Սէրն հանէ զմարդն ի խելաց,
Որ այլ խակի չըկայ խաբար» (ԺԴ, 65—66):

Այդ սիրո մարմնացումն է կինը, մի զորություն, որ «Հրով այրէ զերկիր ամէն» (ԺԱ, 8), «Ի յետ դարձնէ զելած հոգին» (Ա, 14), որ վիմերն է խորտակում, «զլերունքն ի հալ հանում» (Գ, 5—6), «ի գիլ» հանում «վէմք ու քարունք» (Թ, 16), «սիրով քակում բարձր բերթեր» (Թ, 15):

Կնոջ և սիրո ազդեցությունից զերծ չեն մնում անգամ հոգևորականները՝ վարդապետները, աբեղաները, քահանաները և նույնիսկ մենակյացները: Հարյուր տարեկան աբեղան գեղեցիկ կնոջը «ուզէ առջև խաչին» (Զ, 8). Նա մենակեցի խելքն է տանում (Դ, 20), իսկ վարդապետը գեղուհիներին տեսնելիս «Մոռնայ զուսումն ու շատ գրունք» (Թ, 9—10): Ահա և սիրո ազդեցությունը.

«Սէրն կու տանի զամօթն յերեսէն՝
Ի հաբեղայէն ու՛ի վարդապետէն,
Երէց սարկաւագ կու ձգէ ի կարգէն,
Տանի զխելքն ի գլխուն, զամօթն յերեսէն,
Շինէ մալամաթ, հանէ յարևէն» (ԺԳ, 18—22):

Այս զորությունը, կինը, հուր ու բոցով է լցնում, վառում «զօրն ի լման» (Բ, 9—10), «Անանց կրակով զանձնիկն այրում» (Գ, 8), նրա առաջին հայացքն իսկ բանաստեղծի շունչը քաղում է, խելքը առնում (Ե, 4, Ժ, 20), բարկ կրակով սրտիկն այրում, խև է դարձնում (Է, 7—8), «Զարխի դեղած նետով» սիրտը խոցում է, թալկացնում վայր է ձգում (ԺԱ, 3), հոգին մարմնից քակում է (ԺԱ, 10), վառում «զէտ մոմեղէն», գեղեցկուհու սերը նրան մոմ է դարձնում (ԺԲ, 14), «Անմահ ու անգրող» հոգին հանում է (ԺԲ, 18), «Անթուր ւ'անդանակ» արյունը հեղում (ԺԲ, 19), միտքը տանում է (ԺԲ, 20), այրում ու մոխիր դարձնում (ԺԳ, 41), նրա տեսքը երգչի անձը սարսափեցնում ու դողացնում է (ԺԳ, 43), նետով խոցում (ԺԴ, 21), աչքերի քունը կտրում, բայց և «անուշ հոտով արբեցնում» (ԺԲ, 6):

Այսպես հուր ու բոց է լցնում, «զօրն ի լման» այրում ու խորտակում բանաստեղծին իր սիրո առարկան, բայց նա մի առանձին հույզով, կարոտով ու խանդաղատանքով է ձգտում դեպի նա, կանչում նրան.

«Ար՛ե՛կ արև գարնանային,
Ար՛ե՛կ աշնան պայծառ լուսին,
Նիստ որ հայիմ յերեսդ ի վեր,
Տեսըդ հերիք է ինձ բաժին» (Ա, 5—8):

Որովհետև՝

«Վաղվընէն ում որ հանդիպիս՝
Ի ծար ելնէ զօրն ի բարին,
Ով որ սուրաթըդ համբուրէ՝
Խնդմով անցնէ զբոլոր տարին» (Ա, 17—20):

«Ով կուռ միջացըդ գիրկ ածէ՝
Կանանչ մընայ քան գնշդարին» (Ա, 23—24):

Երգչին հափշտակողը գեղեցիկ կինն է, նրա սիրո առարկան, սիրելին այնքան գեղեցիկ է, որ «Ով որ տեսնու չի մնայ արդար» (Ե, 12), այդ պատճառով էլ նրան չպետք է մեղադրել՝ «Ինձ մեղադիր չէ՞ր կու լինիք» (Ե, 11): Բանաստեղծը գույներ չի խնայում ցուցադրելու իր գեղեցկուհու նկարեն պատկերը:

Նրա գեղուհին ցող է գարնանային «ւ՛ անուշ կու» ցողա (Ժ, 33), «արև գարնանային», «աշնան պայծառ լուսին» է (Ա, 5—6), «Զէտ արեգակն» է, «որ նոր կելնու» (Բ, 2), «բդրի[1] լուսին, զէտ արեգակն» է (ԺԲ, 8), «Դրախտ է ու պաղչայ, ծաղկի նըման» է (Ժ, 4), «Զինչ պաղչայ մի՝ որ կայ ի ներս վարդ ու շուշան, պայծառ ծաղկունք» (Թ, 3—4), անուշահոտ վարդ է, շուշան ծաղիկ (Ժ, 30), «Շուշան, ըռէհան ու մանուշակ ու նօնօֆար» է (Դ, 9—10), «Նշտարենի ծառ է ծաղկեալ» (ԺԴ, 25), սիրամարգ է, «հաւու նման» (Ժ, 35), զմրուխտ, տպազիոն ակն ու ճուհար է (Ե, 1—2), «Քաղաք Խութան, Չին ու մաչին» (Զ, 2)։ Նա «թուխ ու պէտ», «ծով-ծով աչեր» ունի, որ «Արևնըման շողշող կըտան», «քանի սիրով զաչերն ածէ» (Գ, 2), ունքեր ունի «քան զթուխ ամպեր», «ունքն է կեռեր քան զկամար» (Թ, 6, ԺԱ, 5), ճակատը ճերմակ է, «լոյս ու լոյս կու տայ» (Բ, 5, ԺԴ, 6), երեսը՝ լույս է (Զ, 1), շրթունքը՝ լար (Թ, 7), շող լուսեղեն (ԺԴ, 49), բերանը՝ ճոխ (Բ, 5), «շաքրով ի լի» (Ժ, 2), շաքարբերան (ԺԲ, 30), «թութակ լեզու» (Ժ, 2), «ատամունքը մարգարիտ» (ԺԲ, 30), «մարգարտէշար» (Թ, 8), այտերը՝ կակաչ (ԺԳ, 9), վիզը՝ ճոճան (Գ, 14), շողկտան (ԺԳ, 9), «Շողայր կաթէր լոյսն ի վզէն» (ԺԱ, 4), ծոցն է «դըրախտ, մըրգաց անդաստան» (ԺԳ, 3), «դրախտ անմահութեան, անմահական պտղով դրախտ» (Դ, 13—14), «Ծոցն է լըցած սպիտակ վարդով» (Բ, 7), «մատունքն է լուսեղէն» (ԺԴ, 15), «Մազն է դեղձան ոսկի թելէն» (ԺԱ, 6), «Մէջքն ու թիկունքն քան զուռ ճոճան» (Բ, 8), «ճապուկ[2], ճոխ ու ճարտար» է, երբ որ քայլում է, «ճոխագնաց, մանրաքայլող» (ԺԱ, 9), քայլելիս ճոճում է «զէտ զուռի ճեղ» (ԺԱ, 7), ձայնը «կաքւոյ» է։

Այսպիսի պատկերներով, համեմատություններով ու զուգադրություններով է ներկայացնում սիրազեղուն երգիչը իր

[1] Լի, լիալուսին։

[2] Աշխույժ, ժիր։

սիրո առարկային։ Նրա բոլոր սիրո տաղերում տեսնում ենք գեղուհու պատկերը՝ իր արտաքին նկարագրով։ Այստեղ քաղենք այդ նկարագիրը պատկերող տողերը «Դու ես գարնանային վարդ ու բուրաստան» սկսվածքով տաղից։

Դու ես գարնանային վարդ ու բուրաստան,
Աչերդ է ծովեր, խումար ու մէստան.
Քո ծոցդ է դըրախտ, մըրգաց անդաստան (1—3)։
Է՞ վիզ շողկտան, է՞ այտեր կակաչ (9)։
Է՞ շահրի սիփաթ և աշխարհի զարդ,
Յովսէփ գեղեցիկ ւ՛անօրինակ մարդ (24—25)։
Է՞ մեղր ու կարագ և կեղևած նուշ (30)։
Է՞ սալվի չինար և ըսպիտակ թուշ,
Է՞ կամար ունէր և աղեղան կուշ (32—33)։
Է՞ աղվոր քաղաք, բարձր ու ամուր բերդ,
Է՞ փունճ մանուշակ, կարմիր վարդի թերթ (35—36)։
Երեսդ է արև, ճակատդ է զօհրան,
Կըլափդ է խնծոր, ծըծերդ է շամամ,
Զինչ յեդեմ դըրախտի՝ ի քո ծոցդ կան (50—52)։

Այդպիսի մի ամբողջական նկարագիր են ներկայացնում և ԺԲ տաղի առաջին 10 տողերը։

Կ. Կոստանյանցը և Մ. Աբեղյանը դիտել են, որ կնոջ արտաքինի նկարագիրը, այդ նկարագրության ձևերը՝ համեմատությունները, պատկերները և այլն, հիմնականում նույնն են՝ ինչ որ նրանից առաջ Գրիգոր Նարեկացու ու Կոստանդին Երզնկացու և նրան՝ Թլկուրանցուն հաջորդող միջնադարյան բանաստեղծների մոտ, ինչպես և ժողովրդական երգերի մեջ, որտեղից էլ հենց անցել է տաղերգուներին[1]։ Աբեղյանը նշում է, որ «Թլկուրանցին առաջինն է, որի երգերի մեջ մեծ տեղ է բռնում արտաքինը», բայց այդ արտաքինի նկարագրության մեջ «շատ բան ընդհանուր տեղիք է,

[1] Տես Կ. Կոստանեանց, Հովհ. Թլկուրանցի և յուր տաղերը, էջ 12—13։

թեպետև առանձնահատուկ ուժով արտահայտված»[1]: Տաղերգուների էական տարբերիչ գիծը այն տրամադրությունն է, որ նրանք դնում են այդ նկարագրության մեջ:

Տեսնենք այդ տրամադրությունը Թլկուրանցու մոտ, հիմնական գծերով:

Այդօրինակ նկարագիր ունեցող կինը «անուշ հոտով» «արբեցնում» է, հոգին մարմնից քաղում: Բայց այդ տեղի է ունենում միայն գեղուհու արտաքին տեսքից. կնոջ ներքինի նկարագիր, նրա հոգեբանության դրսևորում Թլկուրանցու սիրո տաղերում չենք գտնում: Կինը բանաստեղծի համար սիրո աղբյուր է գերազանցապես միայն իր արտաքինով, ֆիզիկական գեղեցկությամբ, բայց ոչ հոգեբանությամբ: Այդպես էր միջնադարում մեր գրեթե բոլոր տաղերգուների մոտ: Այլ կերպ էլ չէր կարող լինել՝ միջին դարերում երգիչը կնոջ մեջ չէր կարող տեսնել իր մտերիմին, հոգու ընկերակցին: Չնայած դրան՝ ցանկական հույզը չէ, որ երգում է Թլկուրանցին. նա երգում է սերը, որը համակում է նրա էությունը, կախարդում նրան, նա սրտով է սիրում, թեկուզ այդ սերը անպատասխան լինի.

«Թէ սէր յիշես ու թէ չյիշես,
Ես կու սիրեմ սրտովս զքեզ» (Գ, 3—4):

Բայց և պահանջում է փոխադարձ սեր.

«Շուտով հասնիս սիրուս՝ թէ դու անսուտ ես,
Որպէս սիրես դու զիս՝ սիրեմ ես զքեզ»
(Ժ, 23—24):

Նա սիրուհուն ասում է.

[1] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 406:

Հմմտ. նաև Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 122: Նմանությունների համար հմմտ. Նարեկացու «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ» սկսվածքով տաղը և Կոստ. Երզնկացու սիրո երկու տաղերը:

«Սիրով սիրտըս լցուաւ՝ ինձ մեղ չի դընես»
(Ժ, 29):

Այսպիսի սերը ցանկականի արտահայտությունը չէ. սա սրտալի սերն է՝ երգված մեծ ոգևորությամբ ու սիրուց խանդավառված: Ընդհակառակը՝ Թլկուրանցու մոտ, մարմինը երգելիս, դեռևս չկա այն ազատությունը, որպիսին տեսնում ենք հայերեններում, ինչպես, օրինակ, հետևյալում.

«Այ իմ փոքրիկ շամամ, քո ծոցուդ, ա՛մ, ե՞րբ տիրանամ.
Քո ծոցդ է ի ծով նըման, ծովըն դեղ կասեն ի ջերման.
Փոքրիկ մրտեհնիկ լինամ ու մտնում ի ծոցդ ու լողամ,
Ծովերուդ ալ դուրս ելնում՝ ուներուդ շուքըն քընանամ»[1]:

Եվ կամ՝

«Քո ծոցդ է ճերմակ տաճար, քո ծըծերդ է կանթեղ ի վառ.
Երթամ ես ժամկոչ ըլլամ, գամ լինիմ տաճրիդ լուսարար:
—Գընա՛, ծօ՜ տըղայ տխմար, չի վայլես տաճրիս լուսարար,
Երթաս դուն խաղով լինաս ու թողուս տաճարս ի խավար»[2]:

Սերը մեր տաղերգուի համար ուրախության աղբյուր է. սիրո առաջացրած քաղցրությունն է երգում նա, հրճվանքը, այն սերը, որը մարդուն ծաղկեցնում է «քան զծառըն խնկենին», կանաչ է պահում «քան զնշդարին», կինը նրա համար դեղ է ուրախության, դրա համար էլ բացականչում է.

«Զարծանք ու վա՜շ քո ծընօղին,
Փառք ու պատիւ քո արարչին» (Զ, 15—16):

Այս տեսակետից բնորոշ է և կնոջ մասին ասված հետևյալ քառատողը.

«Կարմունջ կապած ես ապիկի,
Եւ գետ՝ գինի ուրախարար,

[1] Ա. Չոպանյան, Հայերեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 236:

[2] Նույն տեղում, էջ 214:

Ով որ խըմէ ի քեզանէ՝
Ուրախանայ սըրտով յոժար» (ԺԴ, 33—36)։

Սակայն սիրո առաջացրած դառնությունն էլ անսովոր չէ երգչին։ Այդ մենք տեսնում ենք նրա չորս տաղերում (Ժ, ԺԲ, ԺԳ, ԺԴ)։ Նա սիրո հիվանդ է, սիրուց խոցված.

«Հանցեղ նետով գիս խոցեցիր,
Որ այլ չունիմ բժշկարար» (ԺԴ, 21—22)։

Սիրուց վառված կանչում է.

«Քո սէրդ ի յիս դիպաւ սատոյգ կայրիմ ես» (ԺԲ, 11)։

Նրան միայն իր սիրելին կարող է դեղ անել.

«Ար՛եկ ինձ դեղ արայ, իմ ճարըն դու ես» (ԺԲ, 12)։

Մի այլ տաղի մեջ.

«Հիւանդ եմ՝ ողջանամ, երբ ինձ նըստիս յաջ» (ԺԳ, 8)։

Այստեղ նա ամեն 4 կամ 5 տող գեղուհու գովքից հետո բացականչում է.

«Սիրով մի՛ սպանաներ, ճէլլատ էֆենտի»։

Իր ցավն է ուզում պատմել սիրելիին.

«Երկինք ու՛երկիր վըկայ, որ կու սիրեմ զքեզ,
Զարթիր, զականջդ բաց, որ գանգատիմ քեզ» (Ժ, 5—6)։

Խնդրում է, որ իրեն չխոցի, այլև պահանջում, որ փոխադարձաբար սիրի իրեն.

«Ծառայ եմ քեզ անձամբս, որ գիս չի խոցես.
Կամե՛ց դու ինձ հոգի, ու՛ես կու կամիմ քեզ,
«Հոգի» ասա դու ինձ, ու՛ես կու ասեմ քեզ» (Ժ, 14—16)։

Սիրո տառապանքն է երգված նաև «Խև Յովանէս»-ի անունով մեզ հասած «Տաղ Յովանէսի վասն սիրոյ» խորագրով քերթվածում, որ դրված է սույն գրքի «Հավելված» բաժնում։

Բավականանանք այս տաղի մասին Մ. Աբեղյանի և Վ. Բրյուսովի կարծիքները բերելով։

Հակառակ մյուս սիրո տաղերի, այստեղ հեղինակը գեղուհու արտաքին նկարագիրը չի տալիս և սիրո խորտակող «ազդեցությունն է վեր հանում իր բոլոր կողմերով։ Այսպես վարվում է նա, որովհետև այստեղ ոչ թե իր հրճվանքը, բախտավոր սերն է երգում, այլ սիրո ցավը»։ Այստեղից էլ տաղի «մեծ ուժն ու խորությունը»[1]։

«...Հովհաննեսը,— գրում է Վ. Բրյուսովը,— ամբողջովին պոռթկում է, տենչանք, հուր։ Հովհաննեսի տաղը բաց է անում զգացման այնպիսի խորքեր, որոնք պոեզիային լայնորեն հասանելի դարձան միայն մեր դարում։ Համարձակ կարելի է ասել, որ այդ, քչերին ծանոթ, Հովհաննեսը... իր զգացմունքի արտահայտության մեջ շատ բանով կանխել է իրեն ժամանակակից ողջ պոեզիան 2 կամ 3 դարով։ Իսկական զգացմունքի այդպիսի ճիչեր չկան ո՛չ Պետրարքայի սոնետներում, որը ապրել է մի դար առաջ, ո՛չ էլ Ռոնսարի սիրային երգերում, որ գրել է, հավանաբար, մի դար հետո։ Հովհաննեսի տաղը... վերջանում է հաշտվողական ակորդով։ Բայց դա չէ կարևորը. կարևորը այն է, որ բանաստեղծը գտել է այնպիսի խոստովանություններ («Զսիրտս երեցիր ու սրկեցիր...» և այլն), որոնք լիովին հասկանալի դարձան միայն մեր օրերում, այն բանից հետո, երբ իրենց հայտնագործությունները արեցին և՛ Ալֆրեդ դը Մյուսեն, և՛ Հայնեն, և՛ Բոդլերը...»[2]։

Ինչպես տեսանք, սերը ուրախության աղբյուր է տաղերգուի համար, սերն ու գեղեցկությունը հիացնում են նրան, և նա դրանց մեջ է տեսնում աշխարհի ու կյանքի վայելքը.

«Ով զքեզ սիրէ ո՞նց մեռանի,
Կամ երեսվին դառնա դեղին» (Չ, 13—14)։

---

[1] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, էջ 410։ Աբեղյանի կարծիքով այդ տաղն անպայման Թլկուրանցունն է, ոչ միայն «Խև Յովանէս» անվան համար, այլ մանավանդ իր ոգով և տրամադրությամբ» (Նույն տեղում)։

[2] *В. Брюсов*, Поэзия Армении, էջ 53—54։

Սիրելիի «սուրաթը» համբուրող մարդը «խնդմով անցնէ զբոլոր տարին» (Ա, 20),

«Ոչ մեռանի, ոչ ծերանայ,
Ոչ երեսվին դառնա դեղին» (Ա, 15—16)։

Նույնպիսի ուրախական զգացում է առաջացնում բանաստեղծի մեջ նաև բնությունը։ Նա ցանկանում է սերը վայելել բնության գրկում.

«Այլ դու դեղ ես ուրախութեան,
Որ զքեզ տանին ի պաղչանին՝
Զծամդ ու զվարսերդ ի վայր թողուս,
Զծոցդ բանաս ի մէջ պաղչին» (Զ, 9—12)։

Թլկուրանցին երգում է բնության զարթոնքը, գարունը։ Գարնան գալը նրա մեջ սեր է առաջացնում, և նա ուրախ կանչում է.

«Գէնայ բահա՞ր, այլ ւ՚ի բահա՞ր,
Այլ ւ՚ի կուտան սիրո խաբար» (ԺԴ, 1—2)։

Բերված տողերով սկսվող այս ընդարձակ տաղը գարնան և սիրո տաղ է. այստեղ բնությունն ու գարունը, կարծես, գեղեցիկ սպասարկուներն են սիրո վայելքի և ուրախության։

Գարնան գեղեցկությունները, նրանց՝ մարդու հոգում առաջացրած հրճվանքն է երգում Ը՝ «Այսօր եղև պայծառ գարուն» բանաստեղծության մեջ։ Նրա նկարած գարունն ու բնությունը այնքան գեղեցիկ են, որ հրապուրում են մարդուն, նրա մեջ առաջացնում բուռն ցանկություն ուրախանալու ու վայելելու բնության հրաշալիքները։ Երգչի համար բացված գարունն ու բնությունը ավելի հաճելի են ու գեղեցիկ, քան առաջին մարդու համար աստծու ստեղծած «դրախտն անմահութեան» (հմմտ. Ը, 15—16)։

Առանձին դիրք է գրավում Թլկուրանցու սիրո և բնության տաղերի շարքում ԺԵ քերթվածը, որ ձեռագրերում ունի «Տաղ գարնան» խորագիրը։ Միջնադարյան բանաստեղծության մեջ աննախընթաց ու յուրօրինակ լավատեսությամբ,

Թլկուրանցին այստեղ կենդանի ու տեսանելի, խաղացկուն պատկերներով երգում է բնությունը՝ գարունը, ամառը, աշունը, թռչուններին, ծաղիկները, ծառերը, մրգերը, այլև մարդկանց, այսինքն՝ բնությունն իր ամբողջության, իր շարժման, լինելիության ու մահացման մեջ։ Բացվում է գարունը, կյանք է առնում բնությունը, ամեն ինչ՝ ծառերը, մրգերը, ծաղիկները, աղբյուրները, ծովերը, գետերը, կենդանիները, թռչունները, մարդիկ, աղջիկները, երեխաները ցնծում են ու շարժման մեջ ընկնում։ Ամառը ամեն ինչ հասունանում է։ Ուրախության մի պոռթկում են առաջացնում բանաստեղծի մոտ գարունն ու ամառը։ Բայց «Հուսկ երեկ աւուրք աշնան, Որ է անցուծն ամէն սերման». դաշտերը դատարկվում են բույսերից, ծաղիկները անցնում են և այլևս չեն երևում, ծառերը տերևաթափ են լինում.

«Հաւերն երամ կապեն ու լան՝
Թէ այլ ո՞վ լինի գարնան արժան»։

Աշունը, որ «Նըման է ծերութեան, Ծերք մեռանեն ւ՚անցնին գնան», դարձյալ հոռետեսություն չի առաջացնում հեղինակի մեջ։ Կյանքի ու ապրելու տենչն է արտահայտում նա, գրելով.

«Թէ շատ ուտեն, թէ շատ խմեն,
Նա՛յ ցանկանան աւուր գարնան»։

Այս աշխարհում էլ կա դրախտ, և այն մարդկանց առաջ բաց են անում խաղողն ու գինին.

«Զփակեալ դուռըն դրախտին
Կրկին խաղողն եբաց մարդկան»։

Թլկուրանցու քննարկվող ստեղծագործությունը իր տեսակի մեջ լավագույններից մեկն է ողջ հայ գրականության մեջ։ Ծաղկող բնությունը իր բազմազանություններով, նրա զարթոնքը, փթթումը, հրաշալիքները, շոշափելի պատկերներ, շարժում, շունչ առած տեսարաններ, թռչունների գեղգեղանք, երգ ու ուրախություն,— ահա ինչ ենք գտնում

այս տաղում: Բերենք Թռչուններին վերաբերող հատվածը.

«Հաւերտ ամէն ուրախացան
Եւ ի իւրեանց դաղարքն եկան.
Ծիծռունքն եկին և բուն դրին,
Սաղմոս ասցին զտունն ի լրման:
Ոհանահաւն ու ըռըղնան,
Ղումրին ունին լոյժ քաղցր ձայն,
Գիտեն քարոզ, գանձեր և տաղ,
Մեղեդիք ու շատ շարական:
Արագիլն ու սագն ու բաթն
Եւ շնորօրն ուրախացան,
Բլբուլքն եկին փափագանօք,
Ի վարդենին Թաւալեցան»:

Քերթվածում գտնում ենք նաև կենցաղային որոշ պատկերներ (տես տող 9—16):

Հավանաբար Թլկուրանցու այս բանաստեղծության ներգործությամբ և ազդեցությամբ են հորինված Դավիթ Սալաձորեցու «Գովասանք ծաղկանց»-ը և Հովհաննես եպիսկոպոսի անվամբ հայտնի «Վասն Թռչնոց»-ը:

Այսպիսով, Հովհաննես Թլկուրանցին երգում է քրիստոնեական աշխարհայեցողության կողմից մերժված սեր, գեղեցիկ կին, բնություն, գարուն, ուրախություն, և այս բոլորը՝ մի անսպառ կենսասիրությամբ: Այդ նշանակում է, որ կրոնական ոգին տեղի էր տալիս աշխարհիկ ոգու առաջ, հաղթանակում ու տիրապետող էր դառնում աշխարհիկ ոգին, բնությունն ու սերը դարձել էր լավատեսական աշխարհայացքի աղբյուր, իսկական կյանքի խորհրդանիշը, որի հետ Թլկուրանցին կապում է իր լավագույն ձգտումները: Նա աշխարհը ընկալում է լավատեսական և կենսասեր հայացքով:

Սակայն միջնադարի մարդը չէր կարող զերծ լինել քրիստոնեական աշխարհայացքից և բացարձակորեն հակադրվել ու մերժել այն. ժամանակը այդ չէր թելադրում: Այստեղից էլ այն հակասականությունը, որ առկա է միջնադարյան գրեթե

բոլոր նշանավոր բանաստեղծների մոտ, հակասականություն,
որ դրսևորումն ու արտացոլումն էր կյանքի և ժամանակի
հակասականության, սոցիալական կյանքում տեղի ունեցած
փոփոխությունների, նոր առաջացած հասարակական երև-
վույթների, որոնք, սակայն դեռևս միակ տիրապետողը չէին:
Խոսքը Վերածնության շրջանին հատուկ հասարակական և
դրանցով պայմանավորված՝ գաղափարախոսական հակասու-
թյան մասին է: Գաղափարախոսական այդ հակասությունը
ամենից ավելի ցայտուն արտահայտվել է հոգու և մարմնի
փոխհարաբերության՝ մարմնի՞ն, թե հոգուն առաջնություն
տալու հարցում: Մի կողմից՝ քրիստոնեական վարդապետու-
թյան քարոզած հանդերձյալ կյանքի, մեղքերի քավության,
ապաշխարանքի, կնոջ ու սիրո մեղանչական լինելու գաղա-
փարները, մյուս կողմից՝ աշխարհի ու բնության գեղեցկու-
թյունները, կյանքը վայելելու, սիրելու և սիրվելու ձգտում-
ները՝ փոփոխված իրադրության մեջ մեր տաղերգուների մոտ
առաջացնում են երկվություն, երկընտրանք:

«Հոգիս է խիստ յօժար բանից իմաստընոց լըսել.
Մարմինս է հեշտասէր զի յաշխարհէս է ինք ծընել»[1]:

Նկատենք, որ այս երկվությունը, տատանումն իսկ նո-
րություն էր, գրականության աշխարհականացման նշան և
ցուցիչ Վերածննդի շրջանին հատուկ գաղափարախոսության:
Երկվությունը ապրում են միջնադարյան աշխարհիկ մեր բո-
լոր բանաստեղծները՝ Ֆրիկը, Կոստանդին Երզնկացին, Գրի-
գորիս Աղթամարցին և մյուսները: Այն առկա է նաև Թլկու-
րանցու մոտ: Նրա սիրո և բնության կենսախինդ երգերը սո-
վորաբար վերջանում են ավելի կամ պակաս զղջում արտա-
հայտող տողերով, ինչպես.

«Ես Յովհաննէս Թուրկուրանցի,
Յրւէ գխորհուրդըդ դիւական,

[1] Կոստ. Երզնկացի և յուր քերթվածները, էջ 107:

93—4

Հան ի սըրտէդ սէր աշխարհիս,
Օրհնէ զանեղ բան էականն» (Բ, 29—32)։

Այս զղջումը հանդերձյալ կյանքի և մահվան նկատմամբ ունեցած վախի արտահայտություն է, որ իբրև հավելված կցվում է սիրո տաղերին, օրգանապես չկապվելով նրանց հետ։ Ինքը, սիրո երգիչն էլ նկատում է իր երգածի և այս զղջման հակասական լինելը.

«Խև Յովհաննէս Թուրկուրանցի,
Զօրն ի բուն ընդ այլ կասես,
Զմարդն ի կրակըն կու ձգես,
Դառնաս լնուս ջուր ւ'անցընես» (Գ, 21—24)։

ԽՐԱՏԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՂԵՐ

Վերևում նշված հակասությունը առավել ակնառու է զգացվում, երբ համեմատում ենք Հովհաննես Թլկուրանցու, մի կողմից, սիրո և բնության տաղերը և, մյուս կողմից, խրատական-բարոյախոսական ստեղծագործությունները։ Այս վերջին քերթվածներից հատկապես հետաքրքրական են մահվան պրոբլեմին նվիրվածները, մի պրոբլեմ, որ շատ է հուզել ու զբաղեցրել միջնադարյան բանաստեղծներից շատերին, այդ թվում և մեր տաղերգուին, և որին նա անդրադարձել է նաև առաջին խմբի՝ սիրո և բնության տաղերում։ Մահը խանգարում է մարդուն վայելել այս աշխարհը, կյանքը, սերը։ Թլկուրանցին իր սիրո տաղերից մեկը այսպես է սկսում.

«Թէ մահն չէր ու կամ մեռնիլ,
Ես ունի շատ բան հոգալու.
Չիշխեմ ըներ զիս պիղծ գործոյ,
Վախեմ չդադարի աչս ի լալու» (Է, 1—4)։

Աշխարհը, բնությունը գեղեցիկ են, «աղէկ», խնդալից ու հրճվալից, բայց մահվան ու հանդերձյալ կյանքի սարսափները դառնացնում են բանաստեղծին. Նա այսպես է ավարտում բնության տաղերից մեկը.

«Թէ չէր մահուն օրն ու դժոխն
Ու կամ սարսափ դատաստանին,
Նայ այս աղէկ էր զինչ ասաց
Խև Յովհաննէս Թուրկուրանցին» (Ը, 17—20)։

Գովերգում է սիրելիին, ձգտում վայելել սերը հանապազ, բայց և տատանվում է, զի «մահու մեղաց ներքև» է, և «ճարակ» չգտնելով, ողորմ ու դառն ասում իր գեղեցկուհուն.

«Հայիմ ի քեզ, հայիմ ի նայ,
Որ ի հողոյ ստեղծեր է զքեզ» (Գ, 19—20)։

Աստված ստեղծել է գեղեցկությունն ու կնոջը մարդու վայելքի համար, բայց և հորինել է մեղքն ու մահը, որ խանգարում են այդ վայելքին։

Ամբողջովին մահվան պրոբլեմին են նվիրված Թլկուրանցու ստեղծագործություններից մի քանիսը։ Սրանց մեջ ևս հեղինակի աշխարհընկալումը զգալիորեն տարբերվում է ժամանակի պաշտոնական-քրիստոնեական վարդապետության քարոզած սկզբունքներից՝ հանդերձյալ աշխարհի, հոգու փրկության վերաբերյալ։ Նա չի մխիթարվում և մխիթարում հանդերձյալ կյանքով։ Նրա համար մահը լեղի է, «ամենայն լեղւոյ լեղի», նրանից ավելի դառն բան չկա. հենց միայն մահվան հիշողությունը սարսափեցնում է նրան.

«Է՜ մահ, քանի զքեզ յիշեմ,
Կու դողամ ու սարսափիմ ես» (ԺԶ, 1—2)։

Մահը ամենազորն ու ամենաուժեղն է, ամենակարող, որ ոչ ոքի և ոչինչ չի խնայում.

«Ի յԱդամայ մինչև ի քեզ
Շունչ կենդանի զոք չէ թողած» (ԺԷ, 5—6)։
«Եւ յԱդամայ մինչև ի քեզ զինչ որ ծընէր՝ ամէն մեռեր» (ԺԸ, 37—38)։

Ոչ ոքից և ոչնչից չի վախենում, խորտակում է ամենքին և ամեն ինչ.

«Թէ հագեր է վեց գրեհ,
Նետ նետես ս՛ի թափն անցընես» (ԺԶ, 37—38):

Գաղան «սասընցուցող հզոր մանկրտնին» «Նա՛յ չունին ճանճի մի ուժ, ոչ առուտուր ս՛ոչ ալ խօսիլ»: Հզոր մահը հաղթում է բոլորին անխտիր՝ Մովսես մարգարեին, Դավթին, Իսահակին, Տրդատին, Կոստանդինին, բոլորին՝ բանտ է ածում և «դէմ դըրան քար մի» ձգում: Այսպես է ներկայացնում ամենազոր մահը.

«Արծիւ ես, երագ թըռչիս,
Լայնաձիգ գթևըդ տարածես,
Զինչ աշխարհս հըզօր մանուկ,
Ի թևիդ ծայրն ծրարես» (ԺԶ, 41—44):

Մահը ամեն ինչ ապականում է, ոչնչացնում գեղեցկությունն էլ.

«Աղէկ սուրաթն երբ մեռանի,
Յամքի գնայ գունն երեսէն» (ԺԱ, 19—20):

Մահը ապականացնող ու ատելի է. գեղեցիկ կանայք անգամ

«Ի մահուն օրն են ատելի,
Գէշ ու գազիր են տեսողաց» (ԺԷ, 27—28):

Հեղինակին սարսափեցնողը այս աշխարհից զրկվելն է: Ի հակադրություն միջնադարյան տիրապետող աշխարհայեցողության, Թլկուրանցին չի քարոզում մարմինը մեռցնելու գաղափարը. ընդհակառակը, բնութագրելով մահը որպես ամեն ինչ ապականացնող ու ոչնչացնող, նա կսկիծ է ապրում, ալեկոծվում, տագնապում է մահվան առջև հենց նրա համար, որ այն ամեն ինչ ոչնչացնում է և այս աշխարհից զրկում մարդուն, մի բան որ բխում է նրա կենսասիրությունից ու հումանիստական աշխարհայեցողությունից: Կյանքի անցողիկության գաղափարը խորապես վշտացնում է բանաստեղծին, բայց նա աշխարհի ունայնության հատուկ քարոզ չի կար-

դում: Սրանով էլ նա տարբերվում է մեր միջնադարյան մյուս տաղերգուներից, որոնց, առավել կամ պակաս, ճնշում, խեղդում է ունայնության գաղափարը: Նրան տագնապեցնողը կյանքի վաղանցիկությունն է, որը, ինչպես տեսանք վերևում, խանգարում է երգչին վայելելու այս աշխարհը, կյանքը, սերը: Այնուամենայնիվ Թլկուրանցին իր ժամանակի մարդն ու մտածողն էր և չէր կարող մերժել ու ժխտել ապաշխարանքն ու ահեղ դատաստանը: Այստեղ էլ արտահայտվում է Թլկուրանցու՝ նախորդ էջերում քննարկված հակասականությունը՝ մի կողմից կենսասիրություն ու զգվանք մահի նկատմամբ, մյուս կողմից՝ վախ ահեղ դատաստանից ու ապաշխարանքի անհրաժեշտության ընդունում:

Հակասականությունը ավելի ցայտուն ու խորն է երևում, երբ նկատի ենք առնում Թլկուրանցու մի բանաստեղծությունը (Ի) կանանց մասին: Սիրո «տաքսիրտ» (Ալիշան) երգիչը այստեղ ամենաբացասական գծերով է ցուցադրում կանանց. կինը «ուղիղ» չունի «որ խելք բերէ», «սատանին ընկեր է» «Զով որ սիրէ՝ հաւատն այն է», եղբայրներին խառնակում, վեճ ու կռիվ է գցում նրանց մեջ, ինքը խոսում է՝ ուրիշներին չի լսում, շպարվում է՝ «զաչք ու զունքն դեղէ», «Զոր հայ ազգիս սկի պարտ չէ», «եկեղեցի գնալիս աւետարան մտիկ չընէ», այսօր ապաշխարում է՝ «վաղը քանց դևու ալլ գէշ է», «Աչքն արտասուէ, սիրտն արատ է» և այլն:

Իսկապես այս բանաստեղծությունը իր բովանդակությամբ այնպիսին է, որ դժվար է համատեղել Թլկուրանցու՝ կնոջը նվիրված մյուս տաղերի հետ: Այդ է պատճառը, որ ասողներ են եղել, թե թերևս այն Թլկուրանցունը չէ: Լեոն գրում է. «Թլկուրանցին, ինչպես տեսանք, մինչև խորին ծերություն վառված էր մի աննման կնապաշտությամբ, և նա հազիվ թե պարսավ գրեր նույն այն կնոջ վրա, որի պատկերը նա տեսնում էր նույնիսկ պատարագի ժամանակ, սեղանի վրա»[1]:

---

[1] Լեո, Հայոց պատմություն, հտ. III, էջ 403:

Բանաստեղծության Թլկուրանցուն լինելը, իհարկե, անառարկելի է, և խնդիրը սոսկ այն հակասական վերաբերմունքի մեջ է, որ հեղինակը ունի կանանց նկատմամբ: Այստեղ Թլկուրանցին հանդես է բերել միջնադարյան հայացք կնոջ նկատմամբ, որը և տարօրինակ չէ, եթե նկատի առնենք, որ նա ապրում ու ստեղծագործում էր 14—15-րդ դարերում: Բանաստեղծը իր այդ հակասական վերաբերմունքը կնոջ նկատմամբ հանդես է բերել հենց սիրային տաղերից մեկում էլ. «Գենայ բահա՛ր, այլ ւ՚ի բահա՛ր» տողով սկսվող ընդարձակ տաղի առաջին 52 տողում նա իր գեղեցկուհու պատկերն է ներկայացնում մեզ արդեն ծանոթ գույներով, նրա գովքը անում, իսկ 14-րդ տնից սկսած պարսավում է կնոջը, օրինակ, այսպիսի խոսքերով.

«Կինն քաղցրիկ գլրուց ունի,
Քան զօձ քայլէ ւ՚առնու գալար,
Զթունքն թափէ յանկարծակի,
Որպէս զակնատ բռնէ անճար:

Զունքըն քաղէ, զաչքն դեղէ,
Զինք զարդարէ զէտ նշի ծառ,
Մէջքն ու պռկունքն ծրմռէ,
Զմարդիկ ձգէ ի սար ւ՚ի քար» (ԺԴ, 69—76):

Այստեղ արտահայտված է սոսկ միջնադարյան աշխարհըմբռնմանը հատուկ, ավետարանական վերաբերմունք կնոջ նկատմամբ, որպիսին ցուցաբերվում էր միջնադարում ընդհանրապես: Այդպիսի մի մոտեցման արտահայտություն է նաև Խաչատուր Կեչառեցու «Կանանց ազգ լացէք զձեզ» բանաստեղծությունը, որի մեջ չի կարելի տեսնել «անշուշտ մի արձագանք... թերևս նաև անձնական հիասթափությունների»[1]: Անձնական հիասթափությունների հետևանք չէ նաև Թլկուրանցու բանաստեղծությունը. այնտեղ խոսում է ժամանակի հայացքներով սնված, ժամանակի ընդհանրական ու տիրապետող հասկացողությունների տեր մարդը: Սակայն Թլկուրանցին վեր է բարձրանում այդ հասկացողություններից իր սիրո տաղերում, որոնց մեջ կնոջ ու սիրո նկատմամբ ունեցած հայացքն է հակասության մեջ գտնվում այդ տիրապետող, իր համար ևս բնորոշ, հասկացողությունների ու հայացքների հետ: Դիտենք նաև, որ Թլկուրանցին իր տաղում նման հայացք ցուցաբերում է ոչ առհասարակ «կանանց ազգ»-ի վերաբերմամբ. բանաստեղծության վերջում նա գրում է.

«Կինն որ գթած է և բարի,
Ի սուրբ կուսանքըն նմանի,
Ապա թէ չար և անդարձ է,
Դիւաց լինի ինքն տեղի» (Ի, 49—53):

Թլկուրանցու խրատական-բարոյախոսական տաղերից մեկը (ԺԹ) նվիրված է արբեցությանն ու նրա վատ հետևանքներին: Նրա կարծիքով «գինին է մայր ամէն մեղաց», «սողոմական ախտն շարժէ», «սպանումն գրգռէ»: Նկարագրելով հարբածի գռեհիկ, զզվանք առաջացնող վիճակը, Թլկուրանցին խրատում է հեռու կենալ արբեցությունից, գինին գործածել միայն չափավոր.

«Քան զգինին լաւն հացին
Երկու ւ՚իրեքն՝ այլն շահ չէ» (ԺԹ, 35—36):

Հետաքրքրական են Թլկուրանցու երկու բանաստեղծությունները ևս: Դրանցից մեկում հոռետեսական տրամադրությամբ խոսում է մարդկային փոխհարաբերությունների մասին: Բանաստեղծը հիասթափված է իր շրջապատից, մարդկանցից, սիրելիներից, ընկերներից.

«Իմ սիրտ լսէ ւ՚ականջ արա՛,
Որ սիրելի իսկի չկայ՝
Ոչ դրացին և ոչ եղբայր,
Ոչ միակեց, ոչ քահանայ» (ԻԱ, 1—4):

[1] Մ. Ավդալբեգյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958, էջ 108:

Մարդիկ կեղծավոր են, անձնապաշտ. «Շատ մարդ յերեստ է քաղցրախօս, ի սիրտն հուր կու բորբոքայ», շատերը սեղանի սիրելի, սեղանի ընկեր են, իսկ «ի փորձութեան ժամն»՝ մոռանում են, ուրանում, և դա վրդովեցնում ու զայրացնում է տաղերգուին: Այս հանգամանքները պայմանավորված են ժամանակի հարաբերություններով, ժամանակի արդյունք են, նա ուղղակի ասում է.

«Այս ժամանակս հանց եբեր—
Ով որ չգիտէ թող գիտենայ—
Զով որ գիտես խիստ սիրելի՝
Հուրն ի բերնէն ի դուրս կու գայ» (ԻԱ, 5—8):

Ուրեմն, նրա հոռետեսությունն անձնական չէ, այլ ընդհանրական, հասարակական բովանդակություն ունի և պայմանավորված է կոնկրետ հասարակական-մարդկային փոխհարաբերություններով, որոնք միջնադարի սոցիալական պայմանների և սոցիալական միջավայրի սերունդ են:

Երկրորդ բանաստեղծության մեջ, որ ձեռագրում կրում է «Վասն քահանայից և առաջնորդաց ասացեալ» խորագիրը, հեղինակը ծաղրում է հոգևոր առաջնորդներին, որոնք քարոզում են «մի՛ սպանաներ, մի՛ գողանար և մի՛ շնար», բայց հենց իրենք գողանան, շնանան և սպանեն (ԻԲ, 13—15). Նրանց խոսքի և գործի մեջ համապատասխանություն չկա, ընդհակառակը՝ նրանք «խաբող են ու՛անառակ», խրատում են, բայց իրենք «ի յամէն խրատէ ի դուրս» են, «ամէն մարդոյ խախք ու կատակ»: Իրենց «ոչխարաց հովիվ» ճառող հոգևոր հայրերի ու առաջնորդների մասին զայրույթով ու զարմանքով գրում է.

«Իսկի լինի՞ հանց խրատու,
որ խրատէ զաշխարհս երեակ,
Ինքն ի յամէն խրատէ ՝ի դուրս,
ամէն մարդոյ խախք ու կատակ» (ԻԲ, 9—12):

Այս բանաստեղծության մեջ Թլկուրանցին ներկայացնում է ժամանակի հոգևորականության մի մասի բարոյական դեմքից զուրկ կերպարանքը, խաբեբա, անպատկառ լինելը, ըստ ամենայնի՝ բացասական կերպարը:

Այս հարցերին անդրադառնալը սոցիալական երանգ ու բովանդակություն է տալիս բանաստեղծությանը: Իսկ առաջին անգամ հրատարակվող սույն (ինչպես և նախորդ՝ ԻԱ) բանաստեղծության գոյությունը ցույց է տալիս, որ Հովհաննես Թլկուրանցին իր ստեղծագործության մեջ սոցիալական խնդիրներ էլ է բարձրացրել, և միայն սիրո երգիչ չէ, որպիսին նա հայտնի էր միջնադարյան գրականության պատմության մեջ:

Պետք է կարծել, որ այդ բանաստեղծությունը նրա ստեղծագործության մեջ միակը չի եղել նշված բովանդակությամբ. ամենայն հավանականությամբ նա ունեցել է սոցիալական խնդիրներին նվիրված ուրիշ բանաստեղծություններ ևս, որոնք մեզ չեն հասել: Այս եզրակացությունը ամրապնդվում է նրա ստեղծագործության երրորդ խմբի՝ վիպական տաղերի գոյությամբ նույնպես:

ՎԻՊԱԿԱՆ ՏԱՂԵՐ

Վիպական երգերը կամ վիպական տաղերը այն ստեղծագործություններն են, որոնք կերտված են պատմական այս կամ այն կոնկրետ եղելությունների հենքի վրա և, սովորաբար, նրանց թարմ տպավորության տակ: Վիպական երգերը ժողովրդական բանահյուսության մի տեսակն են: Իբրև ինքնուրույն առանձին ստեղծագործություններ նրանցից շատ քիչ բան է մեզ հասել. ժամանակի ընթացքում կամ մոռացվել են և կամ միահյուսվել այլ սյուժեների ու մոտիվների հետ, կորցրել են չափական բնույթը և վերածվել պատմվածքների ու զրույցների:

Միջնադարյան ժողովրդական վիպական երգերից հայտնի են «Լևոնի երգը», «Մոկաց Միրզան», «Կարոս խաչը», «Նարե-

կացին» և «Ասլան աղան»։ Դրանցից առաջինը, «Լեռնի երգը», որ ստեղծվել է, հավանաբար, 13-րդ դարի վերջերին, գրի է առնվել դեռևս միջնադարում. սա բուն ժողովրդականից գրի առնված առաջին վիպական երգն է։

Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր հեղինակը միջնադարյան առաջին և միակ տաղերգուն է, որ մշակել է ժողովրդական վիպական երգեր. Թլկուրանցու ստեղծագործության մեջ դրանք են՝ «Տաղ քաջի Լիպարտին», Նարեկացու վերաբերյալ տաղը, որոշ իմաստով նաև Ալեքսիանոսի վարքը, որ կրոնական բովանդակություն ունի։

«Տաղ քաջի Լիպարտին».— Այս վիպական տաղի հիմքում ընկած է հետևյալ պատմական իրողությունը։ 1368 թ. Տարոնի ամիրա Մանչակ (կամ Միչաք) Շահարօղլին հարձակվում է Սսի վրա։ Սպարապետ Լիպարիտը ջարդում է Մանչակի զորքերին և սպանում նրա «գոված տղայն»։ Երկու տարի հետո՝ 1370 թ. Մանչակը նորից է հարձակվում Սսի վրա 60.000 զորքով։ Կոստանդին 5-րդ թագավորը ցուցաբերում է բացարձակ անկարողություն։ Թշնամու դեմ դարձյալ դուրս է գալիս Լիպարիտը, որ մոտ 20 տարի հաջողությամբ պատերազմել էր Եգիպտոսի մամլուքների դեմ։ Բայց այս անգամ Լիպարիտը չի կարողանում դիմադրել, սպանվում է Սսի կամուրջի վրա։ Թուրքերը գրավում են Սիսը և ավերում։

Պատմական այս իրադարձություններն են Հովհ. Թլկուրանցու վիպական տաղի նյութը։ Պատմական աղբյուրները շատ քիչ բան են հաղորդում Լիպարիտի մասին։ Դրավոր պատմական աղբյուրների թերին լրացնում են Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտին»-ը և ժողովրդական զրույցները, որ ստեղծվել են վերոհիշյալ իրադարձությունների և Լիպարիտի մասին։

Թլկուրանցու տաղի առաջին մասը Լիպարիտի քնարական գովքն է, իսկ շարունակության մեջ պատմվում են իրադար-

ձությունները։ Թուրքերը անընդհատ հարձակվում են Սսի վրա.

«Պատերազմին չըկայր խափան,
Ամէն տարի տասն և քըսան»։

Ամեն անգամ նրանց ջարդում ու վանում է Լիպարիտը.

«Յորժամ հեծնուր զիւր ձին վազան,
Ի ձեռն առնոյր զըրում ճօճան,
Սասանէր ազգըն Թուրքմանաց,
Դողայր ամէն Թուրքմանստան»։

Սակայն մի անգամ «Մանչակ անուն չարեաց մասան» ամիրան, երբ 60.000 զորքով հարձակվում է Սսի վրա, թուլամորթ թագավորը դիմում է Լիպարիտին.

«Քաջ Լիպարիտ, մեծ զօրական,
Հեծելս քեզ համար եկան...»։

Լիպարիտը պատասխանում է. «Ես՝ քաղքիս չարին փոխան», և խնդրում է թագավորին, որ նա «հաստատ ՚ամուր պահէ զկարմունճն»՝ հայոց զորքերի նահանջի ճանապարհը։ Լիպարիտը մտնում է թշնամու զորքերի մեջ և մեծ կոտորած անում.

«Կոտրեց ՚անցաւ առիւծնման,
Զհեծելն արար փախըստական,
Ի՛ր հետ եղիր ընծանման։
Լաշկարն արար գիզան-դիզան,
Հանց որ արիւն գետեր եղան»։

Բայց

«Նա՛ թագաւորն չարացաւ,
Զհեծելն առաւ ու ետ դարձաւ»։

Թուրքերի զորքերը գրավում են կամուրջը, և երբ Լիպարիտը վերադառնում է, հարձակվում են նրա վրա, սպանում, կտրում են գլուխը ու տանում իրենց հետ, մարմինը թողնելով

այնտեղ։ Դրանից հետո թշնամիները նորից են հարձակվում Սաի վրա ու «աւէր ածում» քաղաքը։

Հետաքրքիր է, սակայն, այստեղ մի հանգամանք։

Պատմագիտական գրականության մեջ ընդունված է այն կարծիքը, ըստ որի «թագավորը չի կարողանում պահել կամուրջը, որ անցնում է թշնամու ձեռքը» (Լեո, Հայոց պատմություն, III, էջ 214)։ Այլ կերպ է մեկնաբանվում թագավորի արարքը Թլկուրանցու վիպական տաղի մեջ.

«Նա թագաւորն չարացաւ,
Ջհեծելն առաւ ու ետ դարձաւ»։

Այսինքն՝ նա կամուրջը թողնում է դավադրաբար։ Ըստ երևույթին, սա համապատասխանում է պատմական իրականությանը։ Հայտնի է, որ թուլամորթ ու վախկոտ Կոստանդին 5-րդը, որ կիպրացի էր և թագավոր էր ընտրվել, որովհետև շատ հարուստ էր՝ «առ փարթամութեան» (Դարդել) համաձայնություն է գալիս Եգիպտոսի սուլթանի հետ, խոստանալով հանձնել նրան իր թագավորությունն ու երկիրը, միայն թե ապահովվի իր կյանքն ու հարստությունը։ Անհավանական չէ, որ նա դավադրաբար սպանել տար սպարապետ Լիպարիտին՝ թուրքերի դեմ պայքարը կազմակերպող քաջ զորավարին, խափաներ ժողովրդի ինքնապաշտպանությունը՝ անձը և գույքը փրկելու իր նպատակները իրագործելու համար։

Թլկուրանցու տաղում Լիպարիտը ներկայացված է որպես բազմաթիվ հաղթանակներ տարած անպարտելի մի դյուցազն զորավար, որից թշնամիները «զինչ գուռ դողան»։ Նա իսկական ժողովրդական հերոս է։ Հաստատ իմանալով, որ օրհասական կռվի է գնում, որտեղ գտնելու է իր մահը, նա չի վարանում և իր անձը դնում է «քաղքի չարի փոխան».

«Բայց չէ պատեհ զըրուց առնել,
Թէպէտ հասաւ ինձ օր մահուան»։

Նա «արեգական նման պայծառ էր», «երեսը լույս էր կամար», նրա «բարքը բարի» էր, «խօսքը շաքար», «բնութեամբ

բարի դէմ աղքատաց»։ Վիպական տաղում ժողովրդական դրական հերոսը օժտված է ներքին ու արտաքին բարեմասնություններով։

Լիպարիտի կորուստը մեծ վիշտ է պատճառում ժողովրդին։ Բնությունն էլ սգում է նրա մահը.

«Սայ երկրին պաղչա ու ծառ,
Գոյն ի գունաց ծաղկունք որ կայր՝
Հառաչանօք առին զիրար»։

Սրտառուչ է մարտի գնալուց առաջ իր հարազատներից նրա բաժանման նկարագրությունը.

«Հառչեաց, զորդեակըն համբուրեաց,
Հանց որ զհեծելն ի լաց եհան.
Ասաց. «Որդեա՛կ իմ Յովհաննէս,
Վասի՜լ եղբայր իմ սիրական,
Փառօք տիկին դու Մանանայ,
Իշխանուհի արևնըման,
Հայեա՛ց պատկերս ի մանկութեան,
Որ տի մտնում ի հող տապան»։

Վիպական երգերին հատուկ բոլոր բնորոշ գծերը առկա են «Տաղ քաջի Լիպարտին»-ի մեջ։ Այն իսկական քնարական-վիպական ստեղծագործություն է, ըստ որում տաղի առաջին մասը ամբողջապես հերոսի քնարական գովքն է, որտեղ քնարականությունը, հույզը սաստկացվում է «Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ» կրկնակով, որ դրված է յուրաքանչյուր քառատող տան վերջում։ Ժողովրդական վիպական երգերին հատուկ արվեստով է կերտված թե՛ Լիպարիտի կերպարը և թե՛ առհասարակ ողջ վիպերգը։

Սակայն ժողովրդական ստեղծագործության սոսկ ազդեցությամբ հորինված ստեղծագործություն չէ քննարկվող տաղը։

Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտին»-ը պատմական տաղ-վիպերգ լինելով հանդերձ, մեր կարծիքով, հո-

րինված է ժողովրդի մոտ արդեն ստեղծված զրույցների օգտագործում-մշակումով:

Քաջ ու հայրենասեր զորավարի կյանքն ու գործը դարձել է ժողովրդական զրույցների ու պատմությունների նյութ: Դրանցից երկուսը պահպանված են Հայկական ՍՍՌ Մատենադարանի գրչագրերում[1]:

Առաջինը գտնվում է № 3569 գրչագրում (էջ 25ա—28բ), որ 16—17-րդ դարի ձեռագիր է, և կրում է «Պատմութիւն քաջ Լիպարիտին» վերնագիրը. դրված է իբրև ինքնուրույն ստեղծագործություն՝ «Պատմութիւնք ի հարանց վարուց»-ից հետո:

Սրա մի այլ օրինակը ծանոթ է եղել Ն. Ակինյանին, որը և հրատարակել է «Հանդէս ամսօրյա»-ում, նախկին Լազարյան ճեմարանի, այժմ մեր Մատենադարանին պատկանող № 6951 ձեռագրից: Այստեղ զրույցը կրում է «Պատմութիւն քաջ Լիպարտին է ասացեալ. գլ. ԼԲ» վերնագիրը: Ձեռագիրը Մովսես Ջուղայեցու «Յաղագս մտառութեան և տեսողութեան բանասիրաց» գործի ընդօրինակությունն է՝ կատարված 1762 թ. Հովհաննես քահանայի ձեռքով, ուր իբրև վերջին՝ ԼԲ գլուխ մուծված է Լիպարիտի զրույցը: Ակինյանը գրում է. «Որչափ նկատած եմ պատմվածքս կը պակսի Մ. Ջուղայեցվո ուրիշ՝ ավելի հնագույն օրինակներու մեջ. և արդեն նյութն ալ անհարմար էր այն ժողովածույքին նկարագրին: Հավանորեն ուրիշի մը, թերևս Հովհաննես քահանայի (ձեռագրի գրչի—Էմ. Պ.) գրչեն մուծված է հատվածս ժողովածույքին մեջ իբրև ԼԲ գլուխ»:

Բանասերը իրավացի է: Այդ հաստատվում է զրույց-պատմվածքի ավելի հին (№ 3569) ձեռագրում առանձին գտնվելով:

Զրույցի առաջին մասում պատմվում է Լիպարիտի պատմությունը մոտավորապես այնպես, ինչպես Թլկուրանցու տա-

---

[1] Զրույցների բնագրերը տես «Տաղ քաջի Լիպարտին»-ի ծանոթագրության վերջում:

ղում, իսկ երկրորդ մասում՝ զրույցը Լիպարիտի քրոջ մասին է: Պատմությունը տարվում է բավական մանրամասներով և առանց, այսպես ասած՝ գրական մշակման: Որոշ մանրամասներ իրենց զուգահեռներն ունեն մեր բանահյուսական հանրածանոթ ստեղծագործություններում: Այսպես, այստեղ Լիպարիտի մասին ասվում է. «Այլև բազում անգամ հետևակ մտնէր ի կռիւ ի մէջ ձիանց, և միայն քարաձգութեամբ դարձուցանէր զթշնամիսն»: Սա հիշեցնում է, թերևս, Անգեղյան Տորքի՝ վիմաձգությամբ թշնամիների նավերը խորտակելն ու հեռացնելը, ինչպես պատմվում է Խորենացու մոտ (տե՛ս Խորենացի, գիրք II, գլ. Ը):

Երբ Լիպարիտի գլուխը տանում են Մարա Սուլթանին, սա «յոյժ ապաշաւեցաւ, եթէ ընդէ՞ր ոչ բերիք զնա կենդանի առ իս, զի կին տային նմա, որ աճէր, և թագաւոր անէի, ընդդէմ թշնամեաց իմոց կացուցանէի զնա որպէս պարիսպ»: Նույն նպատակով «Սասնա ծռեր»-ում Մարա Մելիքը Մեծ Մհերին կենակցել է տալիս իր կնոջ հետ, որպեսզի «իդոր ջընսեն» իրենց «ազկի մեչ ընգնի» (տե՛ս, օրինակ, Սասնա ծռեր, հատ. Բ, մաս առաջին, Երևան, 1944, Մանուկ Թոբոյանի պատումը, էջ 269):

Թերևս «Սասնա ծռեր» վեպից որոշ մանրամասներ ու մոտիվներ միահյուսվել են Լիպարիտի պատմությանը: Նշանակալից չէ՞ արդյոք, թե «Քաջ Լիպարիտ էր ի Սասնոյ գաւառէն»:

Լիպարիտի մասին այս արձակ զրույցի գաղափարական բովանդակության և Լիպարիտի կերպարի էության բնորոշման տեսակետից ուշադրության արժանի է հետևյալը. երբ Մարա 50.000-անոց զորքը բանակում է Սսի դիմաց, հայոց թագավորը ասում է Լիպարիտին. «Քեզի համար եկեր է հեծելո»: Լիպարիտը պատասխանում է նրան՝ «Իմ ջանս վասն եկեղեցեաց է և քրիստոնէից (իմա ժողովրդի—Էմ. Պ.) և ոչ վասն թագաւորութեան (իմա թագավորի—Էմ. Պ.)»:

Բնորոշ է նաև, որ զրույցի երկրորդ մասում պարոնը խաբում է Լիպարիտի քրոջը և Մարա ըմբիշին հաղթելուց

հետո, խոստացած պարգևի՝ բամբակի մեջ 40 լիտրանոց քար է դնում։

Բազմաթիվ, հաճախ բառացի, նմանություններ կան Թլկուրանցու Լիպարիտի տաղի և ժողովրդական զրույցի առաջին մասի միջև։ Վերոբերյալներից բացի, նշենք նաև, որ Լիպարիտի տաղում Թագավորի՝ Լիպարիտին ասած «հեծելս քեզ համար եկան» արտահայտությունը գրեթե բառացի գտնում ենք ժողովրդական զրույցի մեջ՝ «Քեզի համար եկեր է հեծելս»։

Պատմության շարադրանքն էլ Թլկուրանցու մոտ տարվում է այնպես, ինչպես զրույցում, իր բոլոր մանրամասներով։

Այս բոլորը ապացուցում են, որ Թլկուրանցին մշակել և չափածոյի է վերածել Լիպարիտի մասին ժողովրդական զրույցի հենց այնպիսի մի տարբերակ-պատում, որպիսին մեզ է հասել № 3569 ձեռագրով։

Սակայն, եթե զրույցում կերտված է դյուցազնի կերպար, ինչ որ բնորոշ է ժողովրդական ստեղծագործությանը, Թլկուրանցու վիպերգում դրա հետ միասին Լիպարիտի կերպարը ավելի պատմական գույն ունի։

Զրույցում միանգամայն պարզ ասված է, որ Լիպարիտը սպանվում է Թագավորի դավադրության պատճառով, այն՝ ինչ որ կռահել միայն կարելի է Թլկուրանցու տաղից։ Զրույցի մեջ Լիպարիտը, դիմելով յուրայիններին, ասում է. «Բարով կացէք, զի թշնամեաց ոչ վախենամ, ապա յիմոցս թըշնամութեամբ խորհուրդ խորհէին ինձ, բայց ես միամտութեամբ դնեմ զանձն իմ ի վերայ քրիստոնէից»։ Այսպես ուրեմն, թեև Լիպարիտը գիտե, որ հայոց Թագավորը մտածում է իրեն ոչնչացնել, բայց գնում է թշնամու դեմ՝ հանուն իր ժողովրդի։ Զրույցի մեջ ուղղակի էլ ասված է, թե «Թագաւորն հայոց երկեաւ ի քաջ Լիպարիտէն, զի մի գուցցէ և զինքն ըսպանանէ և Թագաւորէ». ասացողը ավելացնում է՝ «Այլ քաջն հոգով և մարմնով Լիպարիտ ոչ ունէր այնպէս վատ խորհուրդ»։

Երկրորդ զրույցը գտնվում է № 515 ձեռագրում (էջ 26բ—28բ) և բովանդակությամբ առնչվում է առաջին զրույցի երկրորդ մասի հետ, որտեղ պատմվում է Լիպարիտի քրոջ մասին։ Այստեղ ըմբշամարտողը յոթ քաջերի քույրն է, որոնց ոչնչացնում է (թունավորում) Թագավորը—նույն ինքը՝ Լիպարիտի քույրը։

Այստեղ էլ կռիվը տեղի է ունենում Ճիհան (Ջիհան—Արևելյան Կիլիկիայի գետը) գետի ափին, իսկ ըմբշամարտության ժամանակի մասին գրիչը գրում է՝ «Այս եղև թվին ՊԼԶ» (836+551=1387), այսինքն՝ Լիպարիտի՝ Տարսոնի Մանչակ ամիրայի դեմ կռվում ընկնելուց 17 տարի հետո։

Բնորոշ է նաև, որ № 515 ձեռագրում զրույցը գտնվում է Լիպարիտի տաղի հատվածից հետո և նրանից չի անջատվում բաժանման որևէ նշանով։

Քննության առարկա զրույցները ցույց են տալիս, որ, թերևս, գոյություն է ունեցել մի ամբողջական վեպ, որի կենտրոնական հերոսը Լիպարիտն է, բայց այդ վեպից մեզ միայն հատվածներ են հասել։ Գուցե ի հայտ գան այլ հատվածներ ևս, որով վերջնականապես կհաստատվի մեր ենթադրությունը։

Երկու զրույցներն էլ պատմվում են այնպես, որ թվում է, թե գրիչը (կամ նախամայր ձեռագրերի գրիչը՝ դա երկրորդական հանգամանք է) ասացողից է անմիջականորեն գրի առել և կամ ինքն է հիշել ու գրել։ Մի բան համենայն դեպս պարզ է, զրույցները գրական մշակման չեն ենթարկված։

Նարեկացու տաղը.—Միջնադարում Գրիգոր Նարեկացու մասին հորինվել են մի շարք զրույցներ, որոնցից մեկը մշակել է Հովհաննես Թլկուրանցին։ Այդ զրույցներից մեկին հանդիպում ենք Այսմավուրքում, որտեղ կարդում ենք.

«Եւ զի ջան և փոյթ էր սրբոյն (Գրիգորի—Էմ. Պ.) վասն միաբանութեան եկեղեցւոյ, զի զեղծեալ և անփոյթ արարեալ կարգս եկեղեցւոյ սրբոյ ի ծուլից և ի մարմնասէր առաջնորդաց կամէր հաստատել և վերստին նորոգել. վասն որոյ ալպանէին զնա բիրտ և սոպա մարդիկ և համբաւէին զնա

ծայլթ: Եւ ժողովեալ ի մի վայր եպիսկոպոսունք և իշխանք՝ ազատանօք և տանուտերօք: Եւ յղեալ կոչեցին զնա առ ի դատել և յանդիմանել հրապարակաւ և աքսորել զնա պատուհասիւ որպէս զհերձուածող: Եւ եկեալ առ սուրբն հրաւիրակքն զի տարցեն զնա»: Իմանալով նրանց դիտավորությունը, Նարեկացին հրավիրում է հաց ուտել և հետո գնալ. Նրանց առաջն է դնում խորոված աղավնիներ: Հրավիրակները նկատում են, որ օրը ուրբաթ է, պահս է. Նարեկացին մոռացկոտության համար ներում է հայցում նրանցից, խնդրելով, որ աղավնիներին թռչելու հրաման տան. Նրանք զարմանում են. Նարեկացին ինքն է հրաման տալիս, և աղավնիները թևառած թռչում են[1]:

Որ այս գրույցը ժողովրդական է և ժողովրդից է անցել Այսմավուրքի մեջ, երևում է հենց բովանդակությունից: Պաշտոնական եկեղեցին մահկանացու մարդուն հրաշքներ գործել չի տալիս. ըստ նրա մահկանացուն կարող է հրաշքների ենթակա լինել, բայց ինքը այդպիսիք կատարել չի կարող: Այդ հնարավոր է միայն ժողովրդական ստեղծագործության մեջ, որտեղից և նման բովանդակությամբ գրույցները անցել են եկեղեցական գրականությանը: Նշված նկատառումով չի կարելի ենթադրել, թե այս, ինչպես և մյուս գրույցները ստեղծված են պաշտոնական կրոնական-եկեղեցական միջավայրում և անցել են ժողովրդին ու նույնությամբ պահպանվել նրա մոտ:

Ճիշտ է նկատում Մ. Աբեղյանը, թե Նարեկացու մասին «երգված գրույցները նույնպես անպայման գալիս են հին ժամանակներից և ժողովրդական են դարձած, կամ թերևս հին կրոնական գրույցները ժողովրդական երգիչների կողմից երգ ու ոտանավորի են վերածված[2]»: Այս դեպքում, անշուշտ, այդ գրույցները զգալի չափով փոխել են իրենց բնույթը և

[1] Տե՛ս Գիրք որ կոչի Այսմաւուրք, 1730, էջ 394:

[2] Մ. Աբեղյան, Վիպական երգեր, ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի տեղեկագիր, № 4—5, 1940, էջ 63:

գաղափարախոսական նոր երանգով ու բնավորությամբ անցել բուն եկեղեցական գրականությանը:

Նարեկացու մասին գրույցները ժողովրդի մեջ պահպանվել են երկար ժամանակ և դրանցից երկուսը գրի են առնվել 19-րդ դարի վերջերին[1]: Ժողովրդական միջավայրում գրույցների հերոսի՝ Գրիգոր Նարեկացու կերպարը աշխատավորական բնույթ ու երանգ է ստացել: Ըստ այդ գրույցներից մեկի, գրի առնված Գ. Հովսեփյանի կողմից, Նարեկացին նախ մշակների հաց ու ջուր տանողն է, ապա գնում է Ղազիդու կապանը, որտեղ յոթ տարի հովվություն է անում մեռած հովվի փոխարեն և իր ստացած «հախով»—վարձով «շախում»—պահում է հովվի «հեթիմներին»—որբերին: Այստեղից նա գնում է Մշու երկիրը և մտնում «նոքարութին»—ծառայության մի պարտքատեր մարդու մոտ և հրաշագործությամբ նրան ազատում պարտքերից:

Այս բոլորի հետ միասին Նարեկացու կերպարը այստեղ զգալի չափով կրոնական բնույթ ունի. նա մի շարք հրաշագործություններ է անում՝ «քակուռը» (անասունի չոր աղբը) հաց է դարձնում, գառներին ու գայլերին միասին արածեցնում է, մեռած նորափեսային վերակենդանացնում է, նրա հրամանով մորթած աղավնիները թև են առնում ու թռչում:

Մյուս գրույցում, որը պետք է դիտել իբրև նույն գրույցի ավելի նախնական տարբերակը, Նարեկացու կերպարի կրոնական կողմը ավելի մեծ տեղ է բռնում. թեև այստեղ էլ նա «մշակներաց» հաց ու ջուր տանողն է, հովիվ է, բայց ավելի շեշտված են նրա՝ սրբին հատուկ հրաշագործությունները:

Նարեկացու մասին Թլկուրանցու վիպական տաղը բովանդակությամբ ավելի մոտ է և համընկնում է այս երկրորդ՝ «Լումա»-ում տպագրված գրույցին:

Թլկուրանցու վիպական տաղում Նարեկացին հրաշագործ վարդապետ է: Նարեկ գյուղի տանուտեր Գորգիկը «Ապրեր

[1] Երկուսն էլ բերել ենք Նարեկացու մասին վիպական տաղի ծանոթագրության մեջ:

էր հարիւր տարի, չէր եկեր ի ժամատեղին». վարդապետի հարցումին, թե «Յէ՞ր չես գար ի ժամատեղին», Գորգիկը պատասխանում է՝ «Շատ մշակ ունիմ չըբանին»: Վարդապետը նրան անիծում է. «Զի հանգչի՛ մարմինդ ի հողին»: Մեռնում է Գորգիկը, հողը չի ընդունում նրա մարմինը: Գորգիկի ազգականները խնդրում են Նարեկացի վարդապետին, սա խոսում է մեռած Գորգիկի հետ, Գորգիկը թողություն է խնդրում և Նարեկացին հրամայում է՝ «Գո՛րգ, հանգիր ի մէջն ի հողին». հողը ընդունում է մեռելին: Համբավը հասնում է Սիս: Երեք սոցի վարդապետներ գալիս են «վարդապետն ի տես» և նրան հանդիպում սարի վրա ոչխար արածացնելիս: Նարեկացին իմանում է «զխորհուրդն ի սրտին» և սարին նստած ոչխարին ալաս անող գայլերին կանչում է «ու հովիւ եղիր ոչխարին», իսկ իրենք գնում են Նարեկացու խուցը: Նարեկացին երեք աղավնի է բռնում, մորթում ու խորովում և հյուրասիրում սոցի վարդապետներին: Սրանք նկատում են, որ օրը պահս է. Նարեկացին հյուրերին առաջարկում է կամ ուտել և կամ հրաման տալ, որ թռչեն: Վարդապետները զարմանում են, և Նարեկացին է հրաման տալիս, աղավնիները կենդանանում են ու թռչում հասնում իրենց երամին: Վարդապետները լուր են տանում Սսի կաթողիկոսին Նարեկացու մասին, թե «Ճըշմարիտ և ըղորդ կասեն, որ կուտայ հոգի մեռածին»:

Այս ամբողջը նույնությամբ կա նաև Նարեկացու մասին «Լումա»-ում տպված ժողովրդական նույնպես չափածո զրույցի մեջ. վերջինս բացի դրանից ունի մի երկու դրվագ ևս:

Թե՛ զրույցների և թե՛ Թլկուրանցու տաղի սյուժեն կազմված են առանձին դրվագների (զրույցների) միահյուսմամբ, հարակցությամբ, ինչ որ հատուկ է ընդհանրապես ժողովրդական վիպական երգերին՝ պայմանավորված նրանց ծագման ու առաջացման հանգամանքներով: Առանձին զրույցներ են Գորգիկի, աղավնիների վերաբերյալ դրվագները, Նարեկացու հովիվ լինելու և գայլերին ոչխարների վերակացու կարգելու պատմությունը, որ ավելի զարգացած ու քիչ այլ կերպ է

պատմվում Գ. Հովսեփյանի գրի առած վիպական երգի մեջ, որտեղ Նարեկացին գնում հովվություն է անում մեռած հովվի փոխարեն և ստացած վարձով պահում հովվի որբերին: Այսպիսի տարբերություն միշտ էլ կարող է լինել նույն զրույցի տարբեր պատումների միջև և բնորոշ է առհասարակ ժողովրդական ստեղծագործությանը:

Զրույցների միմյանց և Թլկուրանցու տաղի նկատմամբ ունեցած տարբերությունները ցույց են տալիս, որ Նարեկացու մասին զրույցը կամ զրույցները ժողովրդի մեջ ապրել են երկար ժամանակ և շատ տարածված են եղել:

Նարեկացու մասին վիպական երգերում և վիպական տաղում հանդես են գալիս հասարակության ներքին խավի ներկայացուցիչները՝ մշակները: Վիպերգի ժողովրդական տարբերակներում մշակները, որոնց հաց ու ջուր տանողն է Նարեկացին, Թլկուրանցու տաղի նույն այն մշակներն են, որոնք աշխատում են տանուտեր Գորգիկի (Գորգի) համար և որոնց մասին Գորգիկը ասում է. «Շատ մշակ ունիմ՝ չըբանին». Գորգիկը «ժամատեղի» չի գնում՝ զբաղված իր մշակներին բանեցնելու գործով: Այս առիթով է, որ Նարեկացին անիծում է նրան՝ «Զի հանգչի՛ մարմինդ ի հողին»:

Բացասական գծերով է ներկայացված գյուղական համայնքի վերնախավի ներկայացուցիչ Գորգիկը, որ Նարեկ գյուղի տանուտերն է (ռեսը), բանեցնում է շատ մշակներ և չի հաճախում եկեղեցի:

Ժողովրդական այդ վիպական երգերի, ինչպես և Թլկուրանցու տաղի մեջ «պատմականը Նարեկացին է, մեկ էլ այն, որ ժողովուրդը դարեր շարունակ հավատացել է նրա հրաշագործությանը»[1]: Իրական-պատմական անձնավորության

---

[1] Մ. Աբեղյան, Վիպական երգեր, նույն տեղում, էջ 63: Աբեղյանին հայտնի է եղել միայն Գ. Հովսեփյանի գրի առած վիպական երգը, նա անծանոթ է եղել «Լումա»-ում տպված չափածո զրույցին և Թլկուրանցու տաղին:

կերպավորում է, ամենայն հավանականությամբ, նաև Գորգիկը[1]:

Վիպական տաղի հերոսը՝ Նարեկացին, ինչպես զրույցների մեջ, այստեղ էլ ներկայացված է իբրև գրական կերպար: Ժողովուրդը իր սիրած պատմական անձնավորությանը օժտել է գրական գծերով և հրաշագործություններ է անել տալիս: Եվ էական ու կարևոր է այստեղ մի հանգամանք. եթե այդ հրաշագործություններից խորոված աղավնիներին կենդանացնելն ու թռցնելը շատ հնից է գալիս և լոկ կրոնական է, ապա Գորգիկին անիծելը, մեռած Գորգիկի հետ խոսելը և հրամանը՝ որ հողը նրան ընդունի՝ սոսկ կրոնական բովանդակություն ունեցող հրաշագործություն չէ: Այդ հրաշագործության միջոցով պատժվում է չարը, որ այստեղ հանդես է գալիս շատ կոնկրետ կերպով՝ իշխող դասի ներկայացուցչի՝ տանուտերի դեմքով: Դրանով հրաշագործությունը տվյալ դեպքում ստանում է սոցիալական բովանդակություն:

Այսպիսով՝ չնայած Նարեկացու մասին ժողովրդական վիպական երգ-զրույցի մշակում հանդիսացող՝ Թլկուրանցու տաղում պատմվում են սրբացրած Նարեկացու հրաշագործությունները, բայց էականը դրանք չեն, այլ դրանց միջոցով արտահայտված, ինչպես և ամբողջ տաղում զգացվող սոցիալական բովանդակությունը՝ տաղի հեղինակի ժողովրդական-աշխատավորական գաղափարախոսությամբ:

Ինչպես վիպական երգերին ընդհանրապես, այնպես էլ Թլկուրանցու վիպական տաղերին հատուկ է քնարականությունը: Նարեկացու տաղը ևս զերծ չէ դրանից. քնարական շունչը զգալի է պատմելակերպի մեջ, թեև տաղը չունի կրկնակ, որով ընդհանրապես արտահայտվում է վիպական երգերի քնարականությունը: Կրկնակների մնացորդները առկա

---

[1] 14—15-րդ դդ. ձեռագրերի հիշատակարաններում շատ են հանդիպում Գորգ կամ Գորգիկ անունները, որոնցից մի երկուսը տանուտերեր. տես Լ. Խաչիկյանի «Ձեռագրերի հիշատակարանների» անվանացանկերը:

են ժողովրդից գրի առնված երկու պատումների մեջ էլ. «Լումա»-ում տպագրված պատումում երգիչը ամեն մի դեպք պատմելուց հետո բացականչում է. «Ծառա կելնեմ Նարեկացուն», մի տեղ էլ՝ «Ծառա կելնիմ էն խովուվուն», իսկ Գ. Հովսեփյանի գրի առած պատումում քնարականությունը արտահայտված է «Հեթմ շախող Նարեկեծի», «Պարտքնտեր պարտքից ազատող Նարեկեծին», «Մեռել հարուցող Նարեկեծին», «Սրբի զանեզան, սրբի Նարեկեծին» կրկնակ-բացականչություններով, որ դարձյալ արվում են ամեն մի դեպք պատմելուց հետո:

Հնում հավանաբար Նարեկացու մասին վիպական երգը ունեցել է կրկնակ, բայց Թլկուրանցին այն դուրս է թողել իր մշակման մեջ:

Մինչդեռ սույն երգի ժողովրդական պատումները անհանգ են ու ազատ ոտանավորով, Թլկուրանցու տաղը գրված է միջնադարում շատ սիրված հայերենների չափով: Այստեղից կարելի է այն հետևությունը անել, որ միջնադարում տաղի ժողովրդականները ևս ստեղծված են եղել նույն հայերենների չափով, որպիսի չափով ստեղծված է նաև դեռևս իր ժամանակ բուն ժողովրդականից գրի առնված «Լևոնի երգը»:

Միջնադարյան գրականության մեջ Թլկուրանցուց առաջ վիպական տաղերի չենք հանդիպում. Հովհաննես Թլկուրանցին առաջինն է միջնադարյան տաղերգուների մեջ, որ մշակել է բուն ժողովրդական զրույցներ—վիպական երգեր՝ ժողովրդական, դեմոկրատական իսկ գաղափարախոսությամբ:

Թլկուրանցուց հետո կան պատմական բովանդակությամբ ստեղծագործություններ՝ պատմական տաղ-պոեմներ, բայց դրանք վիպական չեն, հորինված չեն ժողովրդական վիպական երգերի հենքի վրա, չեն հանդիսանում վերջիններիս մշակումը: Այսպիսով՝ Հովհաննես Թլկուրանցին միջնադարյան տաղերգուների մեջ վիպական տաղերի ոչ միայն առաջին, այլև առայժմ մեզ հայտնի միակ հեղինակն է:

Հովհ. Թլկուրանցին իր տաղերի համար գործածել է համապատասխան բանաստեղծական չափեր: Նրա տաղերի ճընշող մեծամասնությունը (Ժողովածուում գրված 24-ից 19-ը) գրված են յամբական երկանդամ 8 վանկանի տողերով: Այս չափը, «որ շատ սիրված է եղել ժողովրդական երգերի մեջ» և «ռիթմիկ երաժշտականության կողմից... մեր չափերի մեջ լավագույններից է»[1], ամենից ավելի հարմարն է եղել Թլկուրանցու համար, եթե նկատի ունենանք նրա տաղերի աշխարհիկ թրթռուն բովանդակությունը և այն հանգամանքը, որ այդ տաղերը եղանակավոր են եղել, «գույն»—եղանակ են ունեցել, գրվել են երգվելու համար, իսկ այդ տաղաչափությամբ հորինված երգերը արտասանվում են հորդոր ու հեշտ եղանակավորվում են:

Մի շարք տաղեր գրված են 11 վանկանի (6+5) տողերով, իսկ մի քանիսը՝ հայերենների չափով, որ Թլկուրանցուց առաջ գործածել են Նարեկացին, Շնորհալին, Կեչառեցին և Ֆրիկը: Բնորոշ է, որ, ինչպես տեսանք, ժողովրդական երգերին հատուկ այս հայերենների չափով է գրված Նարեկացու մասին վիպերգը, որի թեման քաղված է ժողովրդական բանահյուսությունից: Նույն այդ չափով է գրված նաև Արարածոց մեկնությունը՝ շուրջ 1600 տող:

Հանգավորման տեսակետից բավական բազմազան են Թլկուրանցու տաղերը: Սրանցից մի քանիսը միահանգ են, ինչպես Ժ, ԺԲ, ԺԷ տաղերը, սակայն միահանգությունը դրանցում տաղտուկ չի հարուցում՝ նրանց բովանդակության և օգտագործված բազմազան համեմատությունների շնորհիվ: Մի քանի տաղեր հորինված են միահանգ, բայց որոշ տողերի ազատ հանգերով, ինչպես Ը տաղը, որի ազատ հանգերով տողերն են 1, 3, 15, 17, 19: Այդպես էլ ԺԸ տաղը:

ԺԳ գողտրիկ տաղի յուրաքանչյուր տուն գրված է մի հանգով, 5-րդ տողի կրկնակով:

Շատ են այն տաղերը, որոնց մեջ հանգավորվում են տան 2 և 4 տողերը. ինչպես.

[1] Մ. Աբեղյան, Տաղաչափություն, Երևան, 1933, էջ 199 և 206:

«Ես զքեզ տեսայ նման լուսոյ,
Ջէտ զարեգակն որ նոր կելնու,
Սիրտս այրեցաւ բարկ կրակով,
Ես մնացի խև կապելու» (Է, 5—8):

Եվ կամ միահանգ են 1, 2, 4 տողերը, իսկ 3-ը ազատ է.

«Ջրկայ ի քեզ մազ մի զալատ,
Անձամբըդ սուրբ և անարատ,
Ես կու գրեմ զիս քեզ մատաղ,
Ու քեզ ծառայ ու քեզ զաքաթ» (Դ, 5—8):

Երբեմն ազատ է թողնում առաջին տողը (Գ, 1—4, ԺԱ, 1—4 և այլն) և կամ հանգակցում է 1 և 3, 2 և 4 տողերը.

«Թէ վարդապետն զձեզ տեսնու,
Մոռնայ զուսումն ու շատ գրունք,
Ամէն անձամբն ի դող ելնու,
Անցընէ զամառըն ձմերունք» (Թ, 9—12, այսպես նաև Բ, 13—16, Գ, 17—20 և այլն):

Հանգակցում է նաև բոլոր չորս տողերը միևնույն հանգով.

«Դու ըզվիմերըն խորտակէս,
Դու ըզլերունքն ի հալ հանես,
Ջով դու սիրով նատար անես,
Անանց կրակով զանձնիկն այրես» (Գ, 5—8, այսպես նաև Զ, 5—8, 12—16 և այլուր):

Մեծ մասը կազմում են այն տաղերը, որոնց մեջ հեղինակը գործ է ածում հանգակցության նշված բոլոր ձևերն էլ միասին:

«Հանգերի գործածությունը, թեպետ և հին է մեր աշխարհիկ բերանացի բանաստեղծության մեջ, մեր գրավոր բանաստեղծության մեջ, սակայն, մտած ենք գտնում 11-րդ դարի սկզբից»[1]: Գ. Նարեկացու, Գ. Մագիստրոսի, Ն. Շնորհալու

[1] Մ. Աբեղյան, Տաղաչափություն, էջ 415:

մոտ հանգի մասնակի գործածության ենք հանդիպում, այն էլ նրանք մեծ մասամբ միահանգ քերթվածներ են հորինում: Տաղաչափական ձևերը, հանգավորումը բազմազան են դառնում հետագա բանաստեղծների[1] մոտ՝ իբրև դրսևորումն ժողովրդական ստեղծագործության ձևական կողմի հաստատուն ներմուծքի գրավոր բանաստեղծության մեջ, մի հանգամանք, որը ամենից ավելի լիակատար արտահայտված է Թլկուրանցու մոտ:

Այսպիսով՝ Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործությունը ցույց է տալիս, որ միջնադարյան քնարերգության մեջ հաղթանակում է ոչ միայն նոր բովանդակությունը, այլև նոր ձևը: Եվ այդ լեզվի տեսակետից ևս:

Հին հայերենը՝ գրաբարը, չէր կարող բավարարել նոր, աշխարհիկ բովանդակությամբ գեղարվեստական գրականության, մանավանդ՝ բանաստեղծության լեզվա-արտահայտչական միջոցների պահանջները: Եւ ահա, մինչդեռ Գրիգոր Նարեկացին գրում էր գրաբարով, միայն տաղերում առանձին դեպքերում գործելով ժողովրդական բառեր ու արտահայտություններ, Կոստանդին Երզնկացուց սկսած մեր բանաստեղծության լեզուն դառնում է միջին հայերենը, որը է ժամանակի համընդհանուր կենդանի խոսակցական լեզուն՝ գրականի աստիճանի բարձրացած, թեև քերականորեն ոչ միատարր և միասնական:

Հատկանշական է, որ միջնադարյան բանաստեղծները միջին հայերենով գրում են միայն աշխարհիկ բովանդակությամբ ստեղծագործությունները, իսկ կրոնական քերթվածների ու հորինվածքների համար գործածում են գրաբարը: Այսպես. Կոստանդին Երզնկացին միջին հայերենով է գրել իր սիրո բանքերը, իսկ «Օրհնեալ է հայրն անըսկիզբն՝ անեղական և

[1] Հետաքրքիր է, որ Կոստանդին Երզնկացին ու Ֆրիկը դեռևս մեծ մասամբ միևնույն հանգով վերջացող քերթվածներ են գրել, մինչդեռ հանգերի բազմազանությունը ավելի արտահայտված է Խաչատուր Կեչառեցու, Հովհաննես Երզնկացու, ապա և՝ Մկրտիչ Նաղաշի ստեղծագործություններում:

անսահման» սկսվածքով կրոնական քերթվածը և նմանները գրել է գրաբարով: Այդպես են վարվում նաև Խաչատուր Կեչառեցին, Ֆրիկը և ուրիշները: Նույնը տեսնում ենք նաև Հովհաննես Թլկուրանցու մոտ: Նա միջին հայերենով է գրել իր սիրո, բարոյախոսական-խրատական և վիպական տաղերը, իսկ կրոնական հորինվածքները՝ գրաբարով: Սակայն ինչպես մյուս տաղերգուների, այնպես էլ Թլկուրանցու գործածած գրաբարը խրթին չէ, պարզ է ու դյուրըմբռնելի: բերենք մի հատված նրա Արարածոց մեկնությունից.

Երկիր էր աներևույթ,
Չև էր լոյս և չև էր տեսական,
Եւ ջուրըն ծածկէր զաշխարհս,
Չև էր մարդ ստեղծեալ յերևան:

Եւ որ անպատրաստ ասէ՝
Չև էր զարդ, չև էր բուսական,
Ո՛չ ծառք, ո՛չ լիրինք, ո՛չ դաշտք,
Ո՛չ գետունք և ոչ լողականք[1]:

Արտաքնապես միայն գրաբար է Թլկուրանցու կրոնական բովանդակություն ունեցող ստեղծագործություններից մեկի՝ «Տաղ Ալեքսիանոս ճգնաւորին»-ի լեզուն. սրա թեման, հավանաբար, քաղված է ժողովրդական վիպական երգ-զրույցներից, որով էլ բացատրվում է Թլկուրանցու հորինվածքի ժողովրդական ոճն ու պատմելակերպը: Այստեղ հանդիպում ենք միջին հայերենին հատուկ բառեր ու բառաձևեր և ժողովրդական լեզվին հատուկ արտահայտություններ, ինչպես, օրինակ. աչվին (աչուին), գանգատնին, մեծցաւ, հախն ու տալիքն (այլ ձեռագրում՝ տուրն ու տալիքն=օժի՞տ, «զհախն ու զտալիքն կտրեցին»=օժիտը որոշեցին. թերևս՝ համաձայնեցին, համաձայնության եկան), անկից(=այնտեղից), հանց, վանց, Երիցանի և այլն. կամ՝

Ի ծայր հանել բանին (=ավարտել,
ավարտի հասցնել)

[1] Հայկ. ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 1661, էջ 571—572:

Էառ թանաք և թուխտն յափին,
Գրեց իւր անձն յանցանելին:

Քանզի քո խոցդ է ահագին,
Այնչափ հազար է Մարգարտին[1]:

Եվ շատ ուրիշները:

Հովհ. Թլկուրանցու աշխարհիկ տաղերի լեզուն ու ոճը շատ կենդանի են, ինքնաբուխ, պարզ ու անկաշկանդ, առանց որևէ արվեստականության[2]:

Ինչպես նշեցինք վերևում, միջին հայերենը ժամանակի կենդանի խոսակցական լեզուն էր՝ գրականի աստիճանի բարձրացած, որ սակայն, քերականորեն միասնական ու միատարր չէր. միջին հայերենում քերականական միևնույն կարգին վերաբերող տարբեր իրակություններ գործ են ածվում համատեղ և հավասար իրավունքներով. Նույն իրավունքներով գործ են ածվում թե՛ հին լեզվի և թե՛ բարբառային ձևեր, և այդ ոչ միայն տարբեր հեղինակների, այլ հենց միևնույն հեղինակի մոտ: Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Թլկուրանցու աշխարհիկ տաղերի լեզուն, այնտեղ կարելի է գտնել միջին հայերենին հատուկ քերականական ձևերի բազմազան հատկանիշներ: Այսպես. նա գործ է ածում հոգնակին մի քանի մասնիկներով՝ եր (հաւեր, ջրեր, ձագեր բերդեր, աչեր, ծովեր, վիմեր, հիւրեր և այլն), ք (որդիք, բուսականք, զգայականք, բլբուլք, դաշտք, ծառք և այլն), ունք (ամպումք, սարկավագունք, մրգունք, ոստունք, ազգունք և այլն), նի (խնձորնի, ձիանի (ձիանուն ձևով), էրէցկնի, դարպասնի, պաղչանի և այլն), վի (Երեւվի, աչւի և այլն): Նկատելի է ոյ հոլովական վերջավորության ու-ի անցումը, ինչպես՝ հողոյ, գործոյ, հանելու, տալու, բաներու և այլն: Միևնույն

---

[1] Հայկ. ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 7714, էջ 78ա—85ա:

[2] Ելնելով մեր սույն աշխատության բնույթից, բավարարվում ենք Թլկուրանցու լեզվի մասին մի երկու դիտողությամբ, միջնադարյան բանաստեղծների լեզվի մանրամասն ուսումնասիրությունը թողնելով մի այլ անգամի:

բայը գործ է ածում -ենա- ածանցով և առանց ածանցի՝ լինի, լինիմ, լինենայ: Սահմանականի ներկան կազմված ենք գտնում և՛ կու (կ) մասնիկով, և՛ առանց մասնիկի, այն էլ իրար հաջորդող տողերում.

«Գունդքըն ծաղկին ու հետ կապին,
Անուշանայ հովն ու քամին.
Ձագերն ձայն ածեն յայգին,
Քաղցր կու գայ ձայն պլպուլին.
Կու թանձրանայ շուքն ծառին,
Յորդոր գնայ ջուրն ի յառվին» (Ը, 5—10):

Նկատենք, որ այս տարբեր ձևերը գրիչների ձեռքով կատարված հետագա վերանորոգումներ չեն. տեղին են ոտանավորի ոտքի տեսակետից և ձեռագրական այլընթերցումներ չունեն:

Մ. Աբեղյանը նկատում է, որ «...միջին հայերենով հորինող քնարերգուները... կրում են գրաբարի անմիջական ազդեցությունը, միջին լեզվի մեջ խառնելով հին լեզվական ձևերը»[1]: Եթե Աբեղյանի այս դիտողությունը ճիշտ է Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու և Գրիգորիս Աղթամարցու վերաբերյալ, որոնցից նա քաղում է իր կարծիքը հաստատող համոզիչ օրինակներ[2], ապա այդ նույնը չի կարելի ասել Թլկուրանցու մասին: Մեր կարծիքով Թլկուրանցու մոտ եղած հին լեզվի ձևերը ոչ թե գրաբարի անմիջական ազդեցություն են, այլ կենդանի լեզվից դեռևս դուրս չմղված ձևեր. գրքային լեզվի արտահայտություններ գրեթե չկան նրա լեզվում:

Հետաքրքիր է նշել նաև, որ թեև Թլկուրանցին ունի երկլեզվյան ու երեքլեզվյան ոտանավորներ, բայց իր հայերեն տաղերի մեջ ավելի քիչ է գործածում օտար բառեր, քան մյուս տաղերգուները, ասենք՝ Կոստանդին Երզնկացին, առավել ևս՝ Գրիգոր Աղթամարցին: Թլկուրանցու գործածած օտար

---

[1] Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական երգեր, էջ 61:

[2] Նույն տեղում:

բառերը (արաբերեն, պարսկերեն և մի երկու՝ թուրքերեն) հայերենի մեջ մտած և իր ժամանակին, իսկ մի մասը մինչև այժմ էլ, ընդհանուր գործածություն ունեցող բառեր են. ինչպես՝ ամպար, ասպար, կիւլ(գիւլ), ճախշ ու ճիգար, միշ-միշ, Զօճրայ, ֆճտուխ, ղալատ, ղումաշ, խապար և մի քանի ուրիշները։

Հովհաննես Թլկուրանցին առատորեն օգտագործել է ժողովրդական լեզվին ու բանահյուսությանը հատուկ բազմաթիվ պատկերավոր արտահայտություններ ու ոճեր, որոնք հյութեղ, բազմերանգ ու գունագեղ են դարձրել տաղերի լեզուն։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ. ՏՊԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ. ՏԱՂԵՐԻ ԲՆԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Գրական ժառանգությունը. — Հովհաննես Թլկուրանցուց մեզ են հասել ավելի քան չորս տասնյակ ստեղծագործություններ, բոլորն էլ չափածո։

Բացի սույն գրքում հրատարակվող 24 ստեղծագործություններից (չհաշված հավելվածում եղածները, որոնց մեր հեղինակին լինելը թեական է), մեզ են հասել նաև հետևյալները.

1. Արարածոց մեկնություն.

Սկիզբը.

«Ես Յովանէս նուաստ ոգի,
Որ մանկանուն Թուլկուրանցի,
Կամօ իմով ի հոգ մտի՝
Բանս ժողովել ինձ յիշելի։
Աստ կարճաբան հօաքեցի
Արարածոցն Մովսէսի,
Մեկնեալ Վարդան վարդապետի,
Քաղեալ ի հարցն հոգելի»։

Վերջը.

«Ըզանարժան և զեղկելիս
Թափառնական ըզԹուրկուրանցիս
Միշտ յիշեցէք, հարք պատուական»
(ըստ № 1661 ձեռագրի)։

Որոշ ձեռագրերում վերոբերյալ սկիզբը բացակայում է և սկսվում է հաջորդ տողով՝ «Ըսկսօղն է սկիզբն ի սկըզբան»:

Սա Վարդանի Արարածոց մեկնությունն է՝ տողատված, վերածված չափածոյի (մոտ 1600 տող):

Սույն մեկնությունը հրատարակել է Հ. Գյուրջյանը «Բազմավեպի» 1938 թ. համարներից մեկում (էջ 188—198)՝ իր ունեցած և Նոր Ջուղայի № 158 ձեռագրի համեմատությամբ:

Հրատարակված է նաև 1714 թ.:

Ձեռագրերում շատ տարածված է. Հայկական ՍՍՌ Մատենադարանի 28 ձեռագրեր ունեն այս չափածո մեկնության ընդօրինակությունները:

2. «Տաղ Ալէքսիանոս ճգնաւորին, Ի Թուլկուրանցոյ ասացեալ»:

Սկիզբը.

«Աստուած գթած և մարդասէր
Երեակ լսէր իւր ծառային»:

Վերջը.

«Հայր Յովաննէս Թուլկուրանցի[ն]
Զվարքն ասաց ճգնաւորին,
Զի սայ է դուռն արքայութեան՝
Որք հաւատով աստուած դիմին»

(ըստ № 7714 ձեռագրի):

Ձեռագրերի մեծ մասը ունեն «Խև», մեկը՝ «Տէր» փխ «Հայր»: Ծանոթ է եղել նաև Կոստանյանցին, տե՛ս Նոր ժողովածու, Գ պրակ, էջ Թ:

3. «Տաղ Թլկուրանցի ասացեալ է»:

Սկիզբը.

«Գերի՛, քանի կենաս ի յերերուն»:

Վերջը.

«Խև Յովանէս Թլկուրանցի
Լալով ասաց իւր հրեշտակին» և այլն:

Խրատական բովանդակությամբ տաղ է: Պահպանված է միայն № 2676 ձեռագրում (էջ 210ա—210բ—188ա, էջերը խառնված ձեռագրի վերակազմման ժամանակ) բավական աղճատված ձևով:

4. «Նորին բան Յովանիսի. Խրատ պիտանի ասացեալ է»:

Սկիզբը.

«Անձն իմ ընդէ՞ր եղեր շնոց,
Զայնդ կու գայ ամեն փողոց»:

Վերջը.

«Խև Յովանէս լցեալ մեղաւք,
Թէ ասելոցս ես լսելոց,
Երդ ի լերինն բնակէ
Կամ հետևիր դու սուրբ գրոց»:

Նույնպիսի խրատական բովանդակությամբ տաղ է: Պահպանված է նույն № 2676 ձեռագրում (էջ 189բ—190ա):

5. «Տաղ Յովաննէս Թլկուրանցոյ ասացեալ է»:

Սկիզբը.

«Արարիչ արարածոց դասուց,
Անթիւ ես անհամար.
Է յերի կեօկի եարտան
Երիլէ կեօկ սէնի օկէր»:

Վերջը.

«Դարձար ըզմեզ ըստեղծեցիր,
Ցափ մի հողէ և ընկալար,
Սէն քէրիմ ռահիմ
Բի երիկեօկ սանա պագար»:

Երկլեզվյան (հայերեն և թուրքերեն) տաղ է աշխարհի ստեղծման մասին. ընդամենը 9 տուն (36 տող)։ Պահպանված է միայն № 7717 ձեռագրում (էջ 228ա—228բ)։

6. «Մաղթանք ի սուրբ աստուածածին է» (կամ անվերնագիր)։

Սկիզբը.

«Աստուածածին Մարիամ,
Շողուաթը ոգօղիամ
Մուշտախ սաղայ դասուզամ»։

Վերջը.

«Ես Յովաննէս քեզ ծառայ,
Ռահման ուաւան քոն մարա,
Նատար խլ թար սուլ արա»։

Երեքլեզվյան տաղ է նվիրված Մարիամին։ Պահպանված է Հայկական ՍՍՌ Մատենադարանի 6 ձեռագրերում և 1513 թ. տպագիր Տաղարանում, որտեղ ունի հետևյալ խորագիրը. «Գովք երեք ազգ լեզվէ վասն տիրամաւրն աստուածածնին» (էջ 59բ—61ա)։

7. «Տաղ ի վերայ հոգոյ Յովաննէսի ասաց[եալ]։

Սկիզբը.

«Աչեր ինչ ես անցեր յետև
Եւ անդադար ծուռ կու նայիս»։

Վերջը.

«Խև Յովաննէս Թլկուրանցի
Մի տար զքեզ փորձ [այս] չարիս
Որ երեսօվըդ չամաչես,
Հոգով ի հուրն երթաս վառիս»։

8. «Ի Յովանիսէն Թլգուրանցու ասացեալ է»։

Սկիզբը.

«Խրատ մի տամ սիրով քեզ,
Թէ միտ դնէս ու լըսես,

Սիրէ զընկերն ասեմ քեզ,
Որ զքեզ առնէ պարզերես»։

Վերջը տարբեր է ձեռագրերում։ Իբրև խորագիր մի քանի ձեռագրեր ունեն. «Խրատ խաղաղութեան մարդկան»։

9. «Նորին Յովանիսի ասացեալ է. Վասն սուրբ Յովանու գլխատման»։

Սկիզբը.

«Յորժամ կամէր հայրըն գթած»։

Վերջը.

«Ես Յովանէս Թուրկուրանցի,
Կարճ համառօտ ասցի զայս բան.
Տէրն տայ ձեզ խաղաղութիւն,
Պահէ անփորձ և անսասան»։

Պահպանված է Հայկական ՍՍՌ Մատենադարանի մի շարք ձեռագրերում և 1513 թ. տպագիր Տաղարանում (էջ 72ա—76բ)։

10. «Նորին Յովանիսի ողբ»։

Սկիզբը.

«Զքեզ ունիմ յոյս ապաւէն»։

Վերջը.

«Թէ ասելոցդ լինիս լսիչ»։

Պահպանված է № 2079 ձեռագրում (էջ 398բ—399ա)։

11. «Յովանէս Թուլգուրանցոյ ասացեալ, բան աղօթական»։

Սկիզբը.

«Առ քեզ աստուած խոստովանիմ»։

Հրատարակված է «Սիոն»-ում, 1952 թ., էջ 314—315, Երուսաղեմի № 1900 ձեռագրից։

12. Նույնպիսի բովանդակությամբ «Բան աղօթից» է մի այլ տաղ, որ պահպանված է № 569 ձեռագրի 269ա էջում (կազմին փակցրած թերթի վրա)։

Սկիզբը.

«Հայր մեղայ ասեմ յերկինս»։

Վերջը.

«Եւ Յովաննէս Թլկուրանցի
Արքայութեանդ կու ցանկամ» և այլն։

Հրատարակված է «Հայերգում» (էջ 172—173), որից և քաղել է Կ. Կոստանյանցը։

13. «Տաղ Քրիստոսի ասացեալ այլազգի լեզուաւ»։

Սկիզբը.

«Քիմսէ պէնի պիլմէզենտի»։

Վերջը.

«Ճանըմ, գհոգիս ի բանտէն»։

Թուրքերեն տաղ է, Քրիստոսի վերաբերյալ. ընդամենը 40 տող[1]։

Ձեռագրերում Հովհաննես Թլկուրանցու անունով պահպանված են նաև հետևյալ գանձերը.

1. «Գանձ սուրբ խաչին Յովանէս Թլկուրանցոյ»։

---

[1] Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագիր Ցուցակում Թլկուրանցու անվան տակ է գրված այբուբենը ներկայացնող սկզբնատառերով կազմված՝ «Տաղ գեղեցիկ վարդի է» կամ «Տաղ Ադամայ» խորագրով մի տաղ. ինչ հիման վրա է Թլկուրանցունը համարվում՝ մեզ հայտնի չէ։

Սկիզբը.

«Աստուած անեղ, անպարագիծ և անըղննայ»։

Վերջը.

«Քո յարութեանդ երկրպագեմք միշտ յարակայ»։

Սկիզբը.

«Յայն եդեմական դրախտին փափկութեան»։

Ձեռագրերի մի մասում վերջանում է մի չափածո հիշատակարանով, որտեղ ասվում է.

«Սուրբ հայրապետին
Եւ քաջ արքային
Հայոց՝ օգնութիւն,
Համայն հասակին,
Մեր ժողովրդին՝
Մեղաց թողութիւն»։
(Ըստ № 474 ձեռագրի, գրված 1474 թ.)

Պահպանված է մի շարք ձեռագրերում, որոնցից № 3540-ը գրված է 1280—1408 թթ., իսկ № 7177-ը՝ 1424—1460 թթ.։

Հիշատակարանի վերոբերյալ հատվածը ցույց է տալիս, որ գանձը գրված է 1393 թվականից ոչ ուշ։

2. «Յով(հաննէս) Թլկուրանցոյ առ տէրն ամենից»։

Սկիզբը.

«Թագաւորիդ միշտ անվախճան»։

Պահպանված է № 3595 ձեռագրում (էջ 88բ), գրված 15—16-րդ դարում։

3. «Կանոն վեցերորդ աւուրն Յովս Թլգրցի է»։

Սկիզբը.

«Յանեղական լուսոյն խոնարհեալ»։

Գանձը պարունակող ձեռագրերից № 8188-ը (էջ 64բ) գրված է 1420—1460 թթ., իսկ № 425-ը 1466 թ.։

4. «Գանձ չորրորդ աւուրն» կամ՝ «Գանձ. Թըլգուրանցի»։

Սկիզբը.

«Յաւէտ իսկապէս ընդ հօր միապէս և աստուածապէս»։

Ընդօրինակություններից մեկը գտնվում է 1280—1408 թթ. գրված № 3540 (էջ 201ա) ձեռագրում։

1928 թ. «Սիոնի» համարներում տպագրած իր «Կիլիկիո կաթողիկոսները, Ե. Հովհաննես Թլկուրանցի» հոդվածում[1] Բ(աբգեն) Ե(պիսկոպոս)-ը (Կյուլեսերյան) խոսում է նաև Թլկուրանցու գրական ժառանգության մասին և բերում է նրա հրատարակված և չհրատարակված ստեղծագործությունների ցանկը։ Ըստ նրա՝ հրատարակված են Թլկուրանցու 31 տաղեր (հաշված նաև 1513 թ. տպագրված տաղարանում եղածները)։ Հրատարակվածների մեջ նա դնում է «Սարերն ամեն ձիւն իջեր» և «Ահա հոտըն գայր գարնան» սկզբնատողերով տաղերը, հրատարակված «Մանանա»-ում (էջ 272—274 և 277—279), անելով հետևյալ վերապահումը՝ «Այս վերջին երկու տաղերը հայտնի չէ, թե իրոք Թլկուրանցվույնն են»։

Դրանցից առաջինը «Զկեթխայն ի ձեռս առ և զհայրենս ասա» խորագրով հրատարակվեց բանասեր Աս. Մնացականյանի «Միջնադարյան ժողովրդական երգեր» գրքում (էջ 262—264)։ Այստեղ հրատարակությունը կատարված է «Մանանայի» և Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 5668 ձեռագրում եղած ընդօրինակության հիման վրա. երկու օրինակներում էլ տաղը չունի հեղինակի անուն։ Այս հանգամանքը և Խարբերդի բնակիչներից գրի առնված մի երգի սկզբի տողերի նույնությունը այդ տաղի առաջին տողերի հետ, Մնացականյանին հիմք է տվել տաղս ժողովրդական համարելու։

Մեր կարծիքով այն իր ստեղծագործական հատկանիշներով ժողովրդական չէ։ Միաժամանակ Թլկուրանցունն էլ չէ, որովհետև թե՛ լեզվով, թե՛ բնույթով ու այլ հատկանիշներով շատ տարբեր է մեր հեղինակի ստեղծագործություններից։

Երկրորդ՝ «Ահա հոտըն գայր գարնան» սկզբնատողով տաղը ևս ձեռագրերում հեղինակի անուն չունի։ Հ. Մ. Պոտուրյանը այն հրատարակել է իբրև Կոստանդին Երզնկացու քերթված (տե՛ս «Կոստանդին Երզնկացի և յուր քերթվածները», Վենետիկ, 1905, էջ 173—178)։ Պոտուրյանը գրում է.

[1] Հետագայում հրատարակվեց նրա «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո» գրքում, Անթիլիաս, 1939։

«Այժմ դառնամ ԻԶ քերթվածին, զորս գտա ԻԹ Տաղարանին մեջ «Այսօր եղև պայծառ գարուն»-են վերջ օրինակված, «Տաղ գարնան և ուրախութեան» խորագրով, ու «Ահա հոտըն գար գարնան» սկզբնավորությամբ։ Այս քերթվածին մեջ թեև Կոստանդինի անունը չի հայտնվիր, բայց զայս ընթերցողը՝ եթե կարդացած է Կ. Երզնկացվո նախորդ քերթվածները՝ անտարակույս պիտի չերկբայի զայն Կոստանդինի վերագրելու, ենթադրելով միշտ՝ թե այս ևս շատ փոփոխված պետք է ըլլա հեղինակին բնագրեն, ինչ փոփոխություն որ կգտնենք «Այսօր եղև պայծառ գարուն»-ի Ա և Գ օրինակներուն մեջ» (Նույն տեղում, էջ 186)։

Նախ նկատենք, որ այս տաղի և Կ. Երզնկացու քերթվածների միջև նմանությունը այնքան է, որքան դրանք առկա են միջնադարյան բոլոր տաղերգուների ստեղծագործությունների միջև։ Բավական է ասել, որ Բ. Ե-ն (Կյուլեսերյանը), որ անշուշտ «կարդացած է Կ. Երզնկացվույն նախորդ քերթվածները», ենթադրում է, որ տաղը Թլկուրանցունն է։

«Իմ պատճառները,— գրում է Պոտուրյանը,— որոնցմով այդ «Ահա հոտն գար գարնան» ԻԶ քերթվածը Կոստանդինի կը վերագրեմ՝ հիմնված են այդ տաղին ոճին և լեզվին վրա» (Նույն տեղում, էջ 187)։

Պոտուրյանի բերած նմանության օրինակները համոզիչ չեն. դրանք կարելի է գտնել միջնադարյան մեկից ավելի հեղինակների ստեղծագործությունների մեջ և նույն հաջողությամբ «ապացուցել», որ սույն տաղը մեկ ուրիշի է։ Որևէ հիմնավոր «պատճառ» չկա այն Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունը համարելու համար։ Այդպես էլ բոլորովին հիմքեր չկան Թլկուրանցուն վերագրելու։ Առայժմ քննարկվող երկու տաղերն էլ պետք է դիտվեն իբրև անանուն հեղինակների ստեղծագործություններ, մինչև ձեռագրական նոր տվյալների հանդես գալը, որոնցով հնարավոր լինի որոշել դրանց հեղինակային պատկանելությունը։

Հովհաննես Թլկուրանցու հրատարակված ստեղծագործությունների իր կազմած ցանկում Կյուլեսերյանը Թլկուրանցուն

է համարում նաև «Վասն թռչնոց» խորագրով, «Տէր Յովհաննէս հոգւով սկար, Եպիսկոպոս յերկիր օտար» սկզբնավորությամբ տաղը: «Ինձ կթվի, թե այս տաղն ալ Թլկուրանցվույն է»:

«Թվալը», իհարկե հիմնավոր ապացույց չէ, որևէ ստեղծագործություն այս կամ այն հեղինակին համարելու համար:

Սակայն բանն այն է, որ Բ. Ե-ն իր հոդվածում Թլկուրանցի-տաղասացին նույնացնում է Թլկուրանցի-կաթողիկոսի հետ, ինչպես ասվեց, ծանոթ չլինելով «Արեգ»-ում տպված հոդվածին, և ենթադրում է, որ նա կաթողիկոսությունից առաջ եղել է եպիսկոպոս: Մեզ համար միանգամայն պարզ է, որ Թլկուրանցին ոչ եպիսկոպոս է եղել, ոչ էլ կաթողիկոս. ուստի և «Վասն թռչնոց»-ի հեղինակ Հովհաննես եպիսկոպոսը Թլկուրանցուց տարբեր է:

Միաժամանակ նկատենք, որ թռչունների գովասանությանը առաջին անգամ մեր բանաստեղծության մեջ հանդիպում ենք Թլկուրանցու մոտ, նրա «Տաղ գարնան» խորագրով, «Աստուած անըսկիզբն և անսահման» սկզբնատողով քերթվածի մեջ, որի մի թերի տարբերակը տպագրված է 1513 թ. Տաղարանում, ուր բացակայում է վերջին՝ հեղինակի անունը պարունակող տունը, որի պատճառով էլ Բ. Ե-ն չի իմացել, որ այն Թլկուրանցունն է: Տաղի հեղինակը հայտնի դարձավ բանասեր Աս. Մնացականյանի ջանքերով, որը մեր Մատենադարանի ձեռագրերից մեկում հայտնաբերեց և հրատարակեց տաղի ընդարձակ փոփոխակը (տե՛ս այդ տաղի ծանոթագրությունը):

Կյուլեսերյանի նշված ցանկում «Այս ինչ կրակ էր գիս այրեց» սկզբնատողով տաղը ևս դրված է իբրև Թլկուրանցու ստեղծագործություն. «Այս տաղին մեջ «Խև Յովաննէսն» է որ կը շեշտվի»,—գրում է նա:

Կյուլեսերյանի այս կարծիքը հավանական պետք է համարել: Տաղը պահպանված է մեր Մատենադարանի 4 ձեռագրերում, որոնցից մեկում խորագիրն է՝ «Տաղ Երզնկացի Յովանիսէ ասացեալ», մյուսում՝ «Տաղ ասացեալ Խև Յովանիսէ ի վերայ Աշային», երրորդում՝ «Տաղ ազնիւ ի Յովանիսէ», չորրորդում անխորագիր է[1]: Առաջին ձեռագրի հիման վրա[2] Կ. Կոստանյանցը հրատարակել է այն Հովհաննես Երզնկացու անունով («Նոր ժողովածու», Դ պրակ, էջ 11—15):

Սակայն հենց սկզբից էլ բանասիրության մեջ տաղի Հովհաննես Երզնկացուն պատկանելը կասկածանքի տակ է առնվել: Այսպես. դեռևս 1906 թ. Պոտուրյանը գրում է. «Այս քերթվածի ոճն ու լեզուն կապահովցնեն ընթերցողը՝ որ այս Հովհաննես կատակաբանը Պլուզը չէ, այլ անոր հայրենակիցը, որ ապահովապես ԺԵ դարեն վերջը կապրեր» («Բազմավեպ», 1906, էջ 350):

Միանգամայն ճիշտ է նկատել Պոտուրյանը, որ այս պոեմի լեզուն ու ոճը տարբեր է Հովհաննես Երզնկացու ստեղծագործությունների լեզվից ու ոճից, այլև Երզնկացու գրական ժառանգության բնավորությանն էլ անհարիր է այս քերթվածը: Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Սրապյանը իր «Հովհաննես Երզնկացի» աշխատության մեջ ձգտում է ապացուցել, որ այն Երզնկացունն է և կարծում է, որ «տաղի հիմնական գաղափարը չի արգելում այն Երզնկացունը համարելու: Երզնկացին իր ուրիշ երկերում ևս ատելություն չի սերմանում դեպի օտար ազգերը և կրոնները: Կարելի է շատ ճշմարիտ գիտելիքներ ձեռք բերել նաև ուրիշ ազգերի գրքերից և գիտնականներից.

---

[1] Տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 183 և 513, Արմ. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 87 և 271—272:

[2] Ա. Սրապյանը ենթադրում է «երկու այլ ձեռագրերի գոյություն ևս, որոնք Երզնկացու անունն են հիշատակում և որոնցից օգտվել են Կ. Կոստանյանն ու Ե. Թորոսյանը» (նշվ. աշխատ., էջ 87, ծանոթ.): Կ. Կոստանյանցը այլ ձեռագիր չի ունեցել. նրա օգտագործած ձեռագիրը մեր Մատենադարանի № 7717-ն է, գրված 1695 թ., որից նա բազմաթիվ տաղեր է հրատարակել, իսկ Ե. Թորոսյանի ձեռքի տակ եղել է № 7715 ձեռագիրը:

Մի՛ յայլասեռից ազգաց գարշիր խնդրողդ ուսման,
Մի՛ յաղքատաց մեծամրտիր որպէս իշխան,
Այլ առ ի քեզ որպէս ի փշոյ վարդ հոտեան,
Թէ զոք անօթ շնորհաց տեսցես և պատուական.

Կամ՝

Ի յամենայն ուսմունս գտցես ինչ ուղղական,
Եթէ յստակ զմիտդ ունիցիս տեսողական»[1]:

Նկատենք, որ բերված օրինակները ոչ մի կապ չունեն պոեմի հիմնական գաղափարի հետ, չեն էլ առնչվում: Մյուս կողմից դրանք, ինչպես և Երզնկացու ողջ ստեղծագործության բնույթը, ստեղծագործական հատկանիշները, լեզուն ու ոճը պարզ ի պարզո ցույց են տալիս, որ մենք գործ ունենք երկու տարբեր հեղինակների հետ: Որքան էլ որոշ տարբերություն լինի (և ոչ խիստ բազմազան, ինչպես պնդում է Ա. Սրապյանը) Երզնկացու տարբեր ստեղծագործությունների լեզվի ու ոճի մեջ, այնուամենայնիվ ոչ մի նմանություն չկա պոեմի լեզվի և Երզնկացու ստեղծագործությունների լեզվի միջև. այդ երկուսի միջև ձևաբանական-քերականական շատ մեծ տարբերություններ կան, որոնք միևնույն մարդու մոտ լինել չեն կարող:

Այնուամենայնիվ Ա. Սրապյանը գտնում է, որ «Հնարավոր է նաև, որ տաղը Երզնկացունը չէ, այլ ուրիշ Հովհաննեսի», բայց դա դեռևս պետք է ապացուցել: Սրա հետ պետք է համաձայնել:

Այլ մոտեցում է ցուցաբերել պոեմի հեղինակային պատկանելության նկատմամբ բանասիրական գիտությունների թեկնածու Աս. Մնացականյանը: Նրա կարծիքով տաղը ժողովրդական սիրավեպ է: Իբրև իր տեսակետի ապացույց Մնացականյանը բերում է ժողովրդական երգերի մեջ պահպանված հատվածներ, որոնք առնչվում են պոեմի հետ: Սկզբում եղել է անհեղինակ, հետագայում՝ տաղի մեջ հիշված Հովհաննեսի անունից ելնելով՝ գրիչները կազմել են խորագիրը և վերագրել Հովհաննեսի, ավելի ուշ՝ Հովհաննես Երզնկացուն (տե՛ս Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 518): Այս կարծիքի դեմ հիմնավոր առարկություններ է բերում Ա. Սրապյանը իր վերոհիշյալ աշխատության մեջ (էջ 89), որով և ժխտվում է այդ ենթադրությունը: Մենք ևս կարծում ենք, որ տաղը անհատական ստեղծագործություն է, որ «սիրվել ու տարածվել է ժողովրդի մեջ, անցել բերնե բերան, փոփոխվել, շատ հատվածներ ու անուններ կորցրել և մեզ է հասել Վանի ժողովրդական երգերում պահպանված մի քանի հատ ու կտորների ձևով միայն» (նույն տեղում): Հնարավոր է նաև, որ պոեմը գրված է «ժողովրդական գրույցի հիմքի վրա... հմուտ և գաղափարական հաստատուն սկզբունքներով առաջնորդվող մի բանաստեղծի ձեռքով» (նույն տեղում): Միայն թե պոեմի գաղափարական բովանդակությունը անհարիր է Երզնկացու գաղափարական հաստատուն սկզբունքներին, և ձայնակցում է գրեթե բոլոր տաղերում իրեն «խև» անվանող Հովհաննեսի ստեղծագործության բովանդակությանը: Ուստի և մենք հակված ենք կարծելու, որ № 9271 ձեռագրում «Տաղ ասացեալ խև Յովանիսի ի վերայ Աշային» խորագրի մեջ «Խև Յովանիսի» հիշատակությունը պատահական չէ:

Այսուամենայնիվ նույն տաղը չենք դնում Թլկուրանցու ստեղծագործությունների շարքում, այլ դետեղում ենք «Հավելված»-ում, որովհետև հարցը վերջնականապես պարզ չէ:

Կյուլեսերյանի կազմած ցանկում հիշված է նաև «Ցամենայն մեղաց ի զատ, ասէ, դու կացիր»-ը, որ Թլկուրանցունը չէ, այլ Երզնկացունը (տե՛ս նույն գրքի էջ 95—96):

Բ. Կյուլեսերյանը Թլկուրանցու անտիպ տաղերի շարքում դնում է տասնմեկ ստեղծագործություն: Դրանցից «Դու ես գարնանային վարդ ու բուրաստան» սկսվածքով տաղը հրատարակված է եղել «Արեգ»-ում, որին ծանոթ չէ Կյուլեսերյանը: հինգը մեզ արդեն ծանոթ տաղերն են՝ «Քիմաէ պէնի...», «Անձն իմ, ընդէ՞ր եղեր շնոց», «Արարիչն արարածոց դասուց», Ալեքսիանոսի վարքը և Արարածոց մեկնությունը:

[1] Արմ. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, 1958, էջ 89—90:

Մնացած հինգից չորսը Կյուլեսերյանը ենթադրաբար է Թլկուրանցունը համարում. բայց դրա համար որևէ հիմք չկա: Դրանք են.

1. Տաղ սիրոյ խորագրով.

«Ֆիլանէ պաշլատում պիւլպիւլէր կիպի,
Վարդն է նստէր ի բարձր որպէս թագուհի»:

Սրա մասին նա գրում է. «Թերևս Թլկուրանցիին ըլլա այս տաղն ալ»:

2. «Այ իմ խորոտիկ եարուկ...»:

3. «Դու ծառ ես նառընձենի»:

4. Այլ տաղ սիրոյ խորագրով.

«Առաւօտուն պարզա հովին,
Զող սէլամ տարէք իմ եարուն»:

հինգերորդի՝ «Յովանէս Թլկուրանցոյ է» խորագրով, «Խոստովանիմք և դաւանիմք»-ի մասին Կյուլեսերյանը գրում է. «Դավանաբանական գովանք մըն է գրաբար. հարազատ չի թվիր ինձ»:

Դավանաբանական այս գովքը 1924 թ. հրատարակել է Ա. Ղազանչյանը «Անահիտ»-ում (էջ 47). նույնը տես նաև «Սիոն», 1956, էջ 79—80:

«Սիոն» ամսագրում հրատարակած Թլկուրանցու ստեղծագործությունների շարքում Ն. եպ. Ծովականը «Խրատ պիտանի» ընդհանուր վերնագրի տակ տպագրել է հինգ տաղ, քաղելով ս. Հակոբյա վանքի № 1900 ձեռագրից: Սրանցից մեկը՝ «Թէ ըսկի չըկայ սուրբ վարդապետ» սկսվածքով, տեղավորել ենք սույն ժողովածուում: Մնացած չորսը կրոնական բնույթի սակավարժեք ստեղծագործություններ են:

1. Սկիզբը.

«Աչէն հայի զգործն աստուծոյ, նա մոաց աչաւքն է ի կոր»:

Վերջը.

«Յովանէս լցեալ մեղաւք, բանըդ խըրատ է հոգևոր,
Թէ լսես գործ է կատար, պահես ի միտ զաւրն ահաւոր»:

2. Սկիզբը.

«Է՛ ամբարիշտ թշուառական, է՛ թշնամի արդարութեան»:

Վերջը.

«Այսիւ զերծիս ի տանջանաց, գտանես սակաւ տեղ հանգըստեան,
Հայ Յովանէս Թլգուրանցի, թէ քո խրատուտ կենաս հասուն»:

3. Սկիզբը.

«Է՛ ամբարիշտ, է՛ մարդ աչար, դէմ սուրբ գրոց ես կոյր և լոյլ»

Վերջը.

«Ու Յովանէս Թլգուրանցի, ղումրի թութաք ես և բլպուլ,
Մարմնաւորի ես փոյթ ի գործ, հոգևորի ես շիլ և գուլ»:

4. Սկիզբը.

«Մի մնար տարակոյս եղբայր սիրելի,
Թէ բանի չեմ հմուտ, նայ գիրս է բարի»:

Վերջը.

«Յովանէս խև անդարձ, զիմըս ծանուցի,
Ըզչարիքս իմ ծածուկ ի յայտ կացուցի»:

Տպագրերը.—Հովհաննես Թլկուրանցին միջնադարյան տաղերգուներից առաջին անգամ տպագրության արժանացած հեղինակներից է: 1513 թվականին տպագրված անդրանիկ Տաղարանում կան մեր հեղինակի 16 ստեղծագործությունները: Դրանք են.

1. «Է՛ մահ, քանի գքեզ յիշեմ
Կու դողամ ու կու սարսափիմ»[1], էջ 6բ—8ա[2]:

(Խորագիր՝ Յովանիսի է ասացեալ, վերևի լուսանցքներում՝ Տաղ—Յովանիսի):

---

[1] Առաջին տողերը նշում ենք այնպես, ինչպես ե՛ն Տաղարանում:

[2] Էջերը Հայկական ՍՍՌ Մատենադարանի սեփականությունը հանդիսացող օրինակինն են, որ էջակալված է Մատենադարանի կողմից:

2. «Աստուած անըսկիզբն և անսահման,
Անտանելի և անթարքման», էջ 18բ—21ա[1]:

(Խորագիր՝ Տաղ գարնան, վերևի լուսանցքներում՝ Տաղ-գարնան):

3. «Քանի դատիս ի հետ մեղաց,
Է՜ անզգամ մարդ կատարած», էջ 21ա—22ա:

(Խորագիր՝ Յովանիսի է ասացեալ, վերևի լուսանցքներում՝ Տաղ—Յովանիսի):

4. «Քեզ հոգևոր խըրատ մի տամ», էջ 36բ—38ա:

(Խորագիր՝ Յովանիսի է ասացեալ, վերևի լուսանցքներում՝ Տաղ—Յովանիսի):

5. «Աստուածածին Մարիամ,
Շողուաթը ոգի զիամ», էջ 59բ—61ա:

(Խորագիր՝ Գովք երեք ազգ լեզվէ. վասն տիրամաւրն աստուածածնին):

6. «Ար եկ, արեկ, իմ խուլ սուրաթ», էջ 61ա—62ա:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի ասացեալ է. վասն սիրոյ, վերևի լուսանցքներում՝ տաղ Յովանիսի):

7. «Տեսայ պատկերք մի գեղեցիկ», էջ 62բ—63բ:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

8. «Արև նըման շողշող կտան», էջ 63բ—64բ:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի է, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

9. «Հազար ուսուֆ է քեզ ծառայ», էջ 64բ—65բ:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

10. «Հանցկուն այլ ով տեսել զմրութ», էջ 65բ—66բ:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

11. «Լոյս երեսացդ է քո փափաք», էջ 66բ—67ա:

[1] Միայն վերջերս է ապացուցվել այս տաղի Թլկուրանցուն լինելը, այդ պատճառով էլ Նյուլեսերյանի ցուցակում մյուս տասնհինգ տաղերն են նշված:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

12. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ», էջ 67բ—68ա:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

13. «Ահայ եղև պայծառ գարուն», էջ 68բ—69ա:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

14. «Ես ձեզ տեսայ սիրով նստած», էջ 69ա—70ա:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

15. «Աղէկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես», էջ 70ա—71բ:

(Խորագիր՝ Այլ բանք. Յովանիսի, վերևի լուսանցքներում՝ Սիրոյ—Յովանիսի):

16. «Յորժամ կամէր հայրըն գթած», էջ 72ա—76բ:

(Խորագիր՝ Նորին Յովանիսի ասացեալ է. վասն սուրբ Յովանու գլխատման, վերևի լուսանցքներում՝ սուրբ Յովանէս):

Տաղարանում եղած այս 16 ստեղծագործություններից կրոնական բնույթ ունեն միայն երկուսը, մնացած բոլորը աշխարհիկ տաղեր են:

Այս տաղարանում Թլկուրանցու 12 ստեղծագործությունները դրված են իրար ետևից, որից կարելի է եզրակացնել, որ գոյություն է ունեցել Թլկուրանցու տաղերի մի ձեռագիր ժողովածու, որից արտատպել են հրատարակիչները: Այդ հաստատվում է նաև ձեռագրական տվյալներով:

1513 թ. տպագիր Տաղարանը մեր հեղինակի ստեղծագործությունների ամենահին աղբյուրն է, եթե չհաշվենք 1470 թ. գրված մի ձեռագիր, որ ունի «Օրհնեալ անուն անմահ բանին» տաղը (հրատարակել է բանասեր Ա. Երեմյանը «Բազմավեպ»-ում, 1954, էջ 70—77): Այս իսկ նկատառումով տաղերի բնագիրը կազմելիս և ծանոթագրությունների մեջ սույն Տաղարանին մենք տվել ենք ձեռագրական արժեք և նրա մասին խոսում ենք ոչ իբրև տպագիր աղբյուրի:

XVIII դարի երկու տաղարաններում[1] տպագրվել են Թլկուրանցու երեք ստեղծագործությունները.

1. «Քիմաէ պէնի պիլմէզ իտի» (տաղ Յովաննիսի ասացեալ ի վերա Քրիստոսի մարդեղութեան խորագրով, I տաղարան՝ էջ 300—302, II տաղարան՝ էջ 271—272):

2. «Այսօր էի խիստ տրտում» (Տաղ սիրոյ խորագրով, I տաղարան՝ էջ 344—346, II տաղարան՝ էջ 302—303):

3. «Է՜ մահ, քանի գքեզ կիշեմ» (Տաղ Յօհաննէսի ասացեալ վասն հոգոյ վերնագրով, I տաղարան՝ էջ 373—375, II տաղարան՝ էջ 316—318):

Նոր ժամանակներում՝ 19-րդ դարում, Թլկուրանցու ստեղծագործություններից առաջին անգամ «Է՜ մահ, քանի գքեզ յիշեմ» սկսվածքով տաղը տպագրվել է 1859 թ. «Բազմավեպ»-ում (էջ 375), ապա «Տաղ քաջի Լիպարտին»-ը՝ նույն ամսագրի 1862 թ. համարներից մեկում, միայն առաջին մասը՝ նախերգանքը: Հետագայում տաղիս հրատարակիչը՝ Ղ. Ալիշանը, այն արտատպում է «Հուշիկք հայրենեաց հայոց»-ում (հատ. Բ, էջ 510—512), ապա սրա մի այլ տարբերակը և շարունակությունը տպագրում է «Սիսուան»-ում (1885, էջ 226), առաջինը իբրև անծանոթ «ռամկաբան քերդողի» տաղ, իսկ շարունակությունը իբրև Թլկուրանցու քերթված: Ալիշանը դրանք հրատարակել է նաև «Հայապատում»-ում (1901, էջ 539—541):

60—70-ական թվականներից առանձին հետաքրքրություն է սկսվում հայ բանահյուսության, ժողովրդական երգերի, այդ թվում նաև միջնադարյան տաղերգության նկատմամբ: Հրապարակ են գալիս մի շարք բանահյուսական ժողովածուներ, որոնց մեջ զետեղվում են նաև միջնադարյան տաղերգուների աշխարհիկ ստեղծագործությունները: 1876 թ.

---

[1] Այդ տաղարանների մեր օգտագործած օրինակների առաջին թերթերը ընկած են, այդ պատճառով էլ տպագրության թվերը մեզ անհայտ են. դրանցից մեկը պետք է լինի 1788 թ. Կ. Պոլսում հրատարակվածը:

Պոլսում լույս տեսած՝ նշանավոր բանահավաք Գ. Սրվանձտյանի «Մանանա» ժողովածուում տպագրվում են Թլկուրանցու 4 տաղերը: Դրանք են՝

1. «Քանի դատիս ի հետ մեղաց» (էջ 266—267),
2. «Արևնըման շողշող կը տաս» (էջ 268—269),
3. «Գէնալ բահար, այլ չ'ի բահար» (էջ 269—272),
4. «Աչերդ է թուխ ու պէտ» (էջ 276—277):

Այս և նման տաղերի կապակցությամբ Սրվանձտյանը գրում է.

«Այստեղ կհարենք քանի մը երգեր, որոնք թեպետ գրական են, բայց ժողովրդական ոճ կը կրեն, և ինչպես կերևի, ավելի հին ավուրց հորինվածք չեն» (էջ 246):

Թլկուրանցու թվով շատ ավելի տաղեր են հրատարակվում 1882 թ. Թիֆլիսում լույս տեսած Արիստակես վարդ. Տևկանցի «Հայերգ»-ում, որը միջնադարյան տաղեր պարունակող մի ժողովածու է: Այստեղ տպագրվել են մեր հեղինակի հետևյալ քերթվածները.

1. «Լույս երեսացդ է խիստ փափուկ» (էջ 45—46),
2. «Ահա եղև պայծառ գարուն» (էջ 46—47),
3. «Ես գքեզ տեսայ սիրով նստած» (էջ 47—48),
4. «Արևնըման շողշողեն ես» (էջ 59—61),
5. «Հանցկուն այլ ով տեսել զմրուխտ» (էջ 61—63),
6. «Աչերդ թուխ ու պէտ, դու խօրօտիկ ես» (էջ 73—74),
7. «Ով մահ, քանի գքեզ յիշեմ» (էջ 135—137),
8. «Հայը մեղաց ասեմ յերկինս» (էջ 172),
9. «Քեզ հոգևոր խրատ մի տամ» (էջ 191—192):

1892 թ. Թիֆլիսում Կարապետ Կոստանյանցը լույս է ընծայում Հովհաննես Թլկուրանցու տաղերի ժողովածուն՝ «Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը» վերնագրով, ընդարձակ ուսումնասիրությամբ հանդերձ: Ժողովածուում տեղ են գտել 16 ստեղծագործություններ, սակայն դրանցից «Խրատք պիտանիք» խորագրով, «Յամենայն մեղաց ի զատ, ասէ, դու կացիր» սկզբնատողով տաղը Հովհաննես Երզնկացունն է, սխալմամբ Կոստանյանցի կողմից վերագրված է

Թլկուրանցուն[1]։ «Ասի սիրէ գլխ, ծով աչեր» սկզբնավորությամբ տաղը ինքնուրույն տաղ չէ, այլ կազմված է «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» տաղի երեք և «Հազար ուսուֆ է քեզ ծառայ»-ի վերջին տներից (տե՛ս այդ և «Արևնըման շողշող կրտաս» տաղերի ծանոթագրությունները)։

Մնացած 14 տաղերից երկուսը («Դու գարնանային վարդ ու բուրաստան»՝ «Սիրով մի սպանաներ» խորագրով, և «Իմ սիրտ լսէ ու ականջ արա»՝ «Վասն սուտ սիրելեաց» խորագրով) Կոստանյանցը հրատարակում է առաջին անգամ՝ քաղելով ձեռագրերից։ Մյուսների տպագրությունը կատարված է «Մանանայի», «Հայերգի», «Բազմավեպի» և «Սիսուանի» հիման վրա, կամ դրանց և նոր ձեռագիր տաղարանների ընդօրինակությունների համեմատությամբ։

1896 թվականին Կ. Կոստանյանցը «Նոր ժողովածու»-ի Գ պրակում հրատարակում է նաև Թլկուրանցու «Օրհնեալ անուն անմահ բանին» սկզբնատողով տաղը և տեղեկություններ է տալիս ևս երկու տաղերի մասին («Աստուած գթած և մարդասէր»՝ «Տաղ Ալեքսիանոս ճգնաւորին ի Յովհաննէս Թլկուրանցւոյ» խորագրով, և «Յորժամ կամէր հայրն գթած»՝ «Յովհաննու գլխատմանն ի Յովհաննէս Թլկուրանցւոյ» խորագրով), որոնք չի հրատարակել։

[1] Տե՛ս «Բազմավէպ», 1905, Հ. Մ. Պոտուրյանի հոդվածը, ուր հեղինակը գրում է. «Մեր կարծիքով ժե տաղը, որ երկանդամյա է այսպիսի սկզբնավորությամբ. Յամենայն մեղաց ի զատ, ասէ, դու կացիր... Թլկուրանցիեն երգված չէ։ Կոստանյանցը որևէ հիմնավոր պատճառ մը չի հայտներ իր հրատարակության մեջ՝ զայն Թլկուրանցվույն համարելուն (թերևս վասն զի տուներուն սկզբնատառերը Յոհաննեսի վարդ [ապետի] կը հոգեն)։ Մեր Մատենադարանի ոչ մի տաղարանը զայդ Թլկուրանցվույն չընծայեր, մանավանդ մին Հովհաննես Երզնկացվույն կուտայ. և մենք թե՛ լեզվեն և թե՛ տաղաչափութենեն դատելով, կը հավանինք մեր Դ տաղարանին» (1905, էջ 451)։

Տես նաև Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 81—82։ Այստեղ հրատարակված է տաղի տեքստը բազմաթիվ աղբյուրների համեմատությամբ (էջ 200—207)։

Թե՛ Հ. Պոտուրյանը 1905 թ. «Բազմավեպ»-ում տպագրած իր հոդվածում և թե՛ ուրիշները նկատում են, որ Կոստանյանցի հրատարակությունը պակասավոր է։ Ա. Չոպանյանը, օրինակ, 1912 թ. «Հայ էջեր»-ի ներածության մեջ գրում է. Կոստանյանցի հրատարակության «մեջ ամփոփված կտորները հեռու են արդեն Թլկուրանցվո ամբողջ գործը ներկայացնելե և ուրիշ վարիանթներու հետ բաղդատվելով իրենց սխալներեն ու աղավաղումներեն մաքրվելու պետք ունին. Գ. Կոստանյան մեծ արժանիք ունեցեր է առաջին անգամ հատորի մեջ ամփոփելու Թլկուրանցվո երգերուն մեկ մասը, ինչպես և Գրիգոր Աղթամարցվո, Մկրտիչ Նաղաշի և այլ միջնադարյան ռամկաբարբառ բանաստեղծներու գործերը. բայց անհրաժեշտ է, որ այժմ ուրիշներ, կամ ինքն իսկ, երկրորդ, ավելի ամբողջական և ավելի խնամյալ և ուրիշ հրատարակությամբ մը՝ տան մեզի Թլկուրանցվո գործը, ինչպես և մյուս բանաստեղծներունը» (էջ ԺԹ—Ի)։

Թլկուրանցու ժողովածուի հրատարակությունից հետո, ձեռագրերից հայտնաբերվում ու հրատարակվում են նրա մի երկու նոր տաղերը և կամ վերահրատարակվում են արդեն հրատարակված տաղերը՝ նոր ձեռագիր օրինակների հիման վրա—«Անահիտ»-ում, «Արեգ»-ում, «Բազմավեպ»-ում և այլն (այս մասին տեղեկություններ տես յուրաքանչյուր տաղի ծանոթագրության մեջ)։

1954 թ. սկսած «Սիոն» ամսագրի համարներում Ն. եպ. Ծովականի կողմից տպագրվում են Թլկուրանցու և նրան վերագրվող բոլոր տաղերը՝ հրատարակությամբ արդեն հայտնի օրինակների և Երուսաղեմի մի երկու ձեռագրերում եղած ընդօրինակությունների համեմատությամբ։

«Սիոն»-ում հրատարակված են ընդամենը 32 տաղ իբրև հաստատապես Թլկուրանցունը և յոթը տաղ հավելվածում, որպես թեական։ Այստեղ առաջին անգամ հրատարակված են հինգ տաղ «Խրատ պիտանի» ընդհանուր վերնագրի տակ, որոնց մասին արդեն ասվեց։

Ձեռագրերը. — Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործությունները պարունակող բազմաթիվ ձեռագրեր են մեզ հասել. միայն Հայկական ՍՍՌ Մատենադարանում կա այդպիսի ավելի քան ութ տասնյակ ձեռագիր: Սակայն մեր հեղինակի քերթվածների ընդօրինակությունները ունեցող ձեռագրերի ճնշող մեծամասնությունը 17-րդ դարի է, միայն սակավաթիվ ձեռագրեր կան, որոնք 14—15-րդ դարերի են, բայց որում դրանք էլ պահպանել են նրա անունով եղած գանձերը[1], իսկ տաղերի ընդօրինակություններին հանդիպում ենք 16-րդ և հետագա դարերի ձեռագրերում: Բացառություն է կազմում Ա. Երեմյանի օգտագործած 1470 թ. մի ձեռագիր, որ ունի «Օրհնեալ անուն անմահ բանին» սկզբնատողով աշխարհիկ բնույթի տաղը. Թլկուրանցու այդ բնույթի տաղերի 15-րդ կամ ավելի հին ձեռագիր հայտնի չէ:

Հայկական ՍՍՌ Մատենադարանում կա 14—16-րդ դարերում գրված 12 ձեռագիր, որոնք ունեն Թլկուրանցու ստեղծագործությունները: Դրանցից.

№ 3540-ը գրված է 1280—1408 թվականներին և ունի

1. «Յաւէտ խնկապէս...», «Գանձ Թըլգուրանցի ի սբ հոգ» խորագրով (էջ 201ա):

2. «Յայն եղեմական դրախտին փափկութեան», «սբ խաչին գանձ Թըլգուրանցի» խորագրով (էջ 230բ):

Նույն գանձերն ունի նաև № 3555 ձեռագիրը, որ գրված է 1431 թ.: Այստեղ առաջինի խորագիրն է «Գանձ. Յովհաննէս Թլգուրանցոյ ասացեալ է այս» (էջ 194բ), իսկ երկրորդինը՝ «Գանձ սրբոյ խաչին. ի Թլգուրանցոյ ասացեալ է» (էջ 224ա):

№ 8188 ձեռագիրը գրված է 1424—1460 թվականներին. ունի

[1] Ինչպես տեսանք, իրականության չի համապատասխանում Ն. Ակինյանի հայտնած այն տեղեկությունը, թե Թլկուրանցուն իբրև տաղասացի հանդիպում ենք «1371, 1394 և 1469 թվերին գրված ձեռագրերում». ինչպես պարզվեց այդ ձեռագրերը ունեն միայն Թլկուրանցու անունով գանձեր:

1. «Յանեղական լուսոյն խոնարհեալ», «Կանոն վեցերորդ աւուրն Յովս Թլգրցի է» խորագրով (էջ 64բ):

2. «Յայն եղեմական դրախտին փափկութեան», «Գանձ սբ խաչին ի Յովանէս Թլգուր... (անընթ.)» խորագրով (էջ 335բ):

№ 425, ժամանակ՝ 1466 թ., պարունակում է նույն գանձերը (էջ էջ 176 և 605): Երկրորդ՝ «Յայն եղեմական դրախտին փափկութեան» տողով սկսվող գանձի հիշատակարանում կարդում ենք հետևյալը, որ բացակայում է մյուս ձեռագրերում՝ «...Գանձիս ասողին, տէր Յովանիսին, ի Թըլգուրանին...»:

№ 474-ը, գրված 1474 թ., ունի միայն «Յայն եղեմական դրախտին փափկութեան» սկսվածքով գանձը (էջ 271բ), «Գանձ սբ խաչին Թլգուրանցոյն ասացեալ» խորագրով:

№ 8961, ժամանակ՝ ԺԵ դ., դարձյալ նույն գանձը ունի «Գանձ սբ խաչին Յովանէս Թլկուրանցոյ» խորագրով (էջ 103բ):

№ 8956, ժամանակ՝ ԺԵ դ., ունի «Յայն եղեմական...» և «Յաւէտ խնկապէս...» գանձերը (№ № ՂԵ և ՀՁ):

Հնագույն ձեռագրերից են նաև № 3995-ը, որ 15—16-րդ դդ. գրչություն է, ունի «Աստուածածին Մարիամ» սկզբնատողով երեքլեզվյան տաղը (էջ 111բ) և «Թագաւորիդ միշտ անվախճան» սկսվածքով գանձը (էջ 88բ):

№ 8968 ձեռագիրը գրված է 1556 թ. և ունի Թլկուրանցու հետևյալ տաղերի ընդօրինակությունները.

1. «Դու ես գարնանային վարդ ու բուրաստան» (էջ 99բ),
2. «Քիմաէ պէնի...» (էջ 166բ),
3. «Աստուածածին Մարիամ» (էջ 257բ),
4. «Արևնըման շողշող կըտան» (էջ 259բ),
5. «Գեղ մի կայր՝ Նարեկ ասեն» (էջ 265ա),
6. «Քեզ հոգևոր խրատ մի տամ» (էջ 275բ):

№№ 1096, 1661 և 7725 ձեռագրերը ևս 16-րդ դարի են, գրված համապատասխանաբար՝ 1569, 1594 և 1595 թթ. առաջինում գտնում ենք Արարածոց մեկնությունը (էջ 83ա) և

«Քիմսէ պէնի...»-ն (195բ), երկրորդում՝ «Առ քեզ աստուած խոստովանիմ» սկսվածքով գանձը (էջ 153բ) և երրորդում՝ Արարածոց մեկնությունը (էջ 35ա)։

Ներքևում բերում ենք Հայկական ՍՍՌ Մատենադարանի՝ Թլկուրանցու ստեղծագործությունները պարունակող մյուս ձեռագրերի ցուցակը ըստ ձեռագրերի համարների հերթականության, նշելով նրանց ընդգրկած տաղերը և առաջին էջերը։

№ 33, ժամանակ՝ ԺԷ դար.
«Օրհնեալ անուն անմահ բանին» (էջ 166բ)։
№ 79, ժամանակ՝ 1630 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 326ա)։
№ 423, ժամանակ՝ 1742 թ.
1. «Յանեղական լուսոյն խոնարհեալ» (էջ 73ա),
2. «Յաւէտ խսկապէս...» (էջ 188բ),
3. «Յայն եդեմական դրախտին փափկութեան» (էջ 227)։
№ 424, ժամանակ՝ ԺԷ դար.
1. «Յաւէտ խսկապէս...» (էջ 150բ),
2. «Յայն եդեմական դրախտին փափկութեան» (էջ 256բ)։
№ 569, ժամանակ՝ 1618 թ.
«Հայր մեղաց սեւեմ յերկինս»։
№ 695, ժամանակ՝ 1664 թ.
«Քիմսէ պէնի...» (էջ 241)։
№ 702, ժամանակ՝ 1660 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 148բ)։
№ 1171, ժամանակ՝ 1628 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 178բ)։
№ 1390, ժամանակ՝ 1666 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 329բ)։
№ 1430, ժամանակ՝ 1658 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 2ա)։
№ 1557, ժամանակ՝ 1629 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 243ա)։
№ 1735, ժամանակ՝ 1669 թ.

Արարածոց մեկնությունը (էջ 327բ)։
№ 1990, ժամանակ ԺԹ դ.
1. «Յորժամ կամէր հայրըն գթած» (էջ 19ա),
2. «Է՜ մահ, քանի գքեզ յիշեմ» (էջ 25բ),
3. «Ար՛եկ, ար՛եկ իմ խուպ սուրաթ» (էջ 44բ),
4. «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» (էջ 44բ),
5. «Արևնըման շողշող կըտան» (էջ 45ա),
6. «Աղէկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես» (էջ 45բ),
7. «Գէնայ բահա՞ր, այլ՛ւի բահա՞ր» (էջ 46ա),
8. «Յանկարծակի մէկ մի տեսայ» (էջ 47բ),
9. «Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրութ» (էջ 48բ),
10. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ» (էջ 49ա),
11. «Լոյս երեսացդ եմ քո փափաք» (էջ 49ա),
12. «Ես ձեզ տեսայ սիրով նստած» (էջ 49բ),
13. Տաղ զարնան՝ «Աստուած անսկիզբ և անսահման» (էջ 50ա)։
№ 2002, ժամանակ՝ 1698 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 149ա)։
№ 2004, ժամանակ՝ 1623 թ.
«Աչեր ինչ ես անցեր եաւ» (էջ 174ա)։
№ 2079, ժամանակ ԺԷ դ.
1. Արարածոց մեկնությունը (էջ 767),
2. «Առ քեզ աստուած խոստովանիմ» (էջ 789),
3. «Քեզ հոգևոր խրատ մի տամ» (էջ 797),
4. «Զքեզ ունիմ յոյս ՚ապաւէն» (էջ 798),
5. «Յորժամ կամէր հայրըն գթած» (էջ 799),
6. «Է՜ մահ, քանի գքեզ յիշեմ» (էջ 814)։
№ 2236 ժամանակ՝ ԺԷ—ԺԸ դդ.
1. «Խրատ մի տամ սիրով քեզ» (էջ 440ա),
2. «Է՜ մահ, քանի գքեզ յիշեմ» (էջ 452ա)։
№ 2249, ժամանակ՝ 1695 թ.
Արարածոց մեկնությունը (էջ 222ա)։
№ 2256, ժամանակ՝ ԺԷ դ.
Արարածոց մեկնությունը (էջ 159ա)։

№ 2270, ժամանակ՝ ԺԷ դ.
«Գեղ մի կայր՝ Նարեկ ասեն» (էջ 115ա)։
№ 2394, ժամանակ՝ ԺԷ դ.
1. «Օրհնեալ անուն անմահ բանին» (էջ 25ա),
2. Տաղ Ալեքսիանոս ճգնաւորին (էջ 91բ),
3. «Գեղ մի կայր՝ Նարեկ ասեն» (էջ 140բ)։
№ 2398, ժամանակ՝ 1613 թ.
1. «Ար՛եկ, ար՛եկ իմ խուպ սուրաթ» (էջ 139ա),
2. «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» (էջ 140ա),
3. «Արևնըման շողշող կըտան» (էջ 141ա),
4. «Հազար ուսուֆ է քեզ ծառայ» (էջ 142ա),
5. «Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրութ» (էջ 143ա),
6. «Լոյս երեսացդ եմ քո փափաք» (էջ 144ա),
7. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ» (էջ 144բ),
8. «Ահա եղև պայծառ գարուն» (էջ 145ա),
9. «Ես ձեզ տեսայ սիրով նստած» (էջ 146ա),
10. «Աղէկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես» (էջ 147ա)։
№ 2566, ժամանակ՝ ԺԷ դ.
1. «Ար՛եկ, ար՛եկ իմ խուպ սուրաթ» (էջ 230բ),
2. «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» (էջ 231ա),
3. «Արևնըման շողշող կըտան» (էջ 232ա),
4. «Հազար ուսուֆ է քեզ ծառայ» (էջ 232բ),
5. «Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրութ» (էջ 233ա),
6. «Լոյս երեսացդ եմ քո փափաք» (էջ 233բ),
7. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ» (էջ 234ա),
8. «Ահա եղև պայծառ գարուն» (էջ 234բ),
9. «Ես ձեզ տեսայ սիրով նստած» (էջ 235բ)։
№ 2672, ժամանակ՝ 1607 թ.
1. «Յորժամ կամէր հայրըն գթած» (էջ 44բ),
2. «Յայն եդեմական դրախտին փափկութեան» (էջ 274)
3. Տաղ Ալեքսիանոս ճգնաւորին (էջ 384ա),
4. «Է՛ մահ, քանի զքեզ յիշեմ» (էջ 391բ)։
№ 2676, ժամանակ՝ ԺԸ դ.
1. «Է՛ մահ, քանի զքեզ յիշեմ» (էջ 178ա),

2. «Աչեր ինչ ես անցեր եաւ» (էջ 188ա),
3. «Առ քեզ աստուած խոստովանիմ» (էջ 188բ),
4. «Հիմիկ ճարտար բժշկես» (էջ 189ա),
5. «Անձն իմ, ընդէ՞ր եղեր շնոց» (էջ 189բ),
6. «Խրատ մի տամ սիրով քեզ» (էջ 194բ),
7. «Գերի, քանի կենաս ի յերերուն...» (էջ 210ա),
8. Արարածոց մեկնութիւնը (էջ 211ա)։
№ 3050, ժամանակ՝ ԺԷ դ.
«Յորժամ կամէր հայրըն գթած» (էջ 269բ)։
№ 3081, ժամանակ՝ 1617 թ.
1. «Յորժամ կամէր հայրըն գթած» (էջ 56ա),
2. «Օրհնեալ անուն անմահ բանին» (էջ 81բ),
3. «Խրատ մի տամ սիրով քեզ» (էջ 83ա),
4. Տաղ Ալեքսիանոս ճգնաւորին (էջ 94ա),
5. «Քեզ հոգևոր խրատ մի տամ» (էջ 143ա)։
№ 3119, ժամանակ՝ 1650 թ.
Արարածոց մեկնութիւնը (էջ 226ա)։
№ 3189, ժամանակ 1627—1631 թթ.
1. «Յուէտ իսկապէս...» (էջ 3բ),
2. «Քիմսէ պէնի...» (էջ 14ա)։
№ 3228, ժամանակ՝ ԺԹ դ.
«Է՛ մահ, քանի զքեզ յիշեմ» (էջ 13ա)։
№ 3411, ժամանակ՝ ԺԷ դ.
«Խրատ մի տամ սիրով քեզ» (էջ 139բ)։
№ 3498, ժամանակ՝ 1625 թ.
1. «Աչեր ինչ ես անցեր եաւ» (էջ 282ա),
2. Տաղ զարնան՝ «Աստուած անսկիզբ և անսահման» (էջ 315ա),
6 Ypp_1p_2 *ժամատեղի*

Վարդապետն ի վեր ելաւ
Ու խնդիր յորորկեաց Գորգին.
Թէ Գորգ, տանուտէր ես դու,
Ցե՞ր չես գար ի ժամատեղին:
Նայ հանց պատասխան երետ.
Շատ մշակ ունիմ՝ չըրանին:
Վարդապետն անէծք էած՝
Չի հանգչի մարմինդ ի հողին:
Երեկ բոլորեց տարին,
Գորգ մեռաւ ի մէջ գիշերին.
Զորս մարդ ի յուսին առին
Ու տարան եզերն ի հողին.
Եւթըն գերեզման բացին,
Հողըն մուտ չերետ Գորգիկին.
Երկաթէ օղեր արին,
Իւր ոտից կոճերն անցուցին,

7—10 Z չիք
7—12 p_2 չիք
7—9-ի փոխարեն Y Վարդապետ խընդիր ըրկեաց pp_1 Վարդապետն (p_1 վարդապետ) խընդիրք խրկեց (p ըրկեց)
10 pp_1 Է՞ր
10 pC գալ
10 Ypp_1 ժամայտեղի
11 C դարձաւ պատասխան ետուր
12 ZC չի բանին p_1 չի բանիր
13—14 C չիք
13 p_2 վարդապետն յանէծք խըրկէց
14 ZCp_2 մարմինտ
14 YCp_1p_2 ի հողի
15 p_2 Գ (երեք) բոլորիս տարի
15 C ու անցաւ փխ բոլորեց
16 Z Գորդ C Գորգն p_2 Գորքիք
16 p_2 գիշերի
17 Ypp_1 դըրին փխ առին
18 ZC ի յեզեր ի հողին p ի յեզեր հողին p_2 ի եզերն հողին
19 p եաւթըն
20 C չէ տուր p_2 չարաւ փխ չերետ
20 pC այն Գորգին z Գորգիքին p_2 Գորքիքին
21 C Երկաթի ըընջիլ բերին
21 p Երկաթի Zp_1 Երկըթէ
21 Z ողեր p_2 յուղեր փխ օղեր
22 p Իւր յոտից Z Իւր ոտիցն C Ի յոտաց p_2 Իր յոտիցն
22 Z ի կոճն
22 p_2 յանցուցին

Երեք օր երեք գիշեր
Կախեցին ի պատն արեգին:
Անայ հոտեցաւ մարմին,
Գորգ անկաւ ի մէջ փողոցին.
Ոչ շուն իւր մսէն ուտէր,
Ոչ թռչունք վերօքն անցնէին:
Շատ մարդ, շատ ազգունք ունէր,
Նոքա այլ թէպտիր արարին,
Ելան միաբան գնացին,
Յոտն անկան սուրբ վարդապետին:
Վարդապետն յառաջ եկաւ
Ու յիշեց դատուած կենդանին,
Ի դաւազանին անկաւ
Ու հարցումն ետուր մեռելին,

23 Z ււ՛ իրեք p_2 և երեք C ու չորս p_1 իրեք (գիշեր)
24 C կախեցաւ
24 YCZ արեկին (ի պատ Նարեկին ?) p_2 արևին
25 Z հոտեցաւ մեռելն p հոտեցօ մարմինն C կտրեցաւ ըընջիլն
26 Z Գորքն C Գորդն
26 p_2 Ընկաւ Գորքիքն
26 Zp_2 ընկաւ
26 Y փողոցին
27 pC յիւր
27 p_1 միսէն
27 p_2 յուտէր
28 p հաւք փխ թռչունք
28 p իւր վէրօքն Z վերաւք
28 YZ անցընէր Cp_1p_2 անցանէր
28-րդ տողից հետո p ունի
Այն քո ծանր ու մեծ խաւճայն էր պառկած ի մէջ ժահահոտին:
29 p Շատ մի ազգականք ունէր C Նայ շատ ազգական ունէր
30 p ժողովեցան և թապտիր արին C Այն աւրն իւրըն թադբիր արին
30 Z թապիրմ p_1p_2 թըպտիր
31—32 p_2 չիք
31—34 Z չիք
31 p Նոքա ճանապարհ ելան C Ելան ճանապարհ մտան
32 p_1 Ոտն
32 p անկնիլ C եկին
32 C այն փխ սուրբ
33 p_1 յառաջ երեկ p_2 առաջ բերին
34—35 p չիք
34 C զտէր փխ դատուած ատուած
35 Z Ի՛ վերայ
35 Yp_1p_2Z Ի վրայ դաւազանին կանգնաւ (Z չիք կանգնաւ)
36 p Ու հարցուկս արօ Z Անգ հարցումն երետ p_1p_2 Ու հարցումն երետ C Ու հարցուկ եգև

Թէ՝ ոնց ժըմնեցար ով Գորգ,
Որ եկիր ի յեզեր հողին։
Գորգ ըզգլուխն ի վեր վերուց,
Յոտն անկաւ սուրբ վարդապետին.
Տէ՛ր, ինձ թողութիւն արայ,
Ջիս մոլար ճանփով կու տանին։
Նայ զաջն ի վեր եհան՝
Գո՛րգ, հանգի՛ր ի մէջն ի հողին.
Ջաւրէնս քեզ համարով տայ,
Որ դատիս ի յաւր կիրակին։
Համբաւն այլ ի Սիս հասաւ
Սքանչելիք սուրբ վարդապետին.

37 p Դու ոնց զըպտեցար այ Գորգ C Թէ այտ ինչ աջէպ բան էր
37 p զըպտեցար Z ճշլեցար p_2 ննջեցիր փխ ժըմնեցար
37 p այն փխ ով
37 Z Գորք p_2 Գորքիք
38 Zp_2 Ու եկիր p_1 Որ յեկիր
38 p_2 յեզր փխ ի յեզեր
39 p Նայ զըլուխն ի վեր եկաւ C Զգլուխն այլ ի վեր եկեալ
39 Z Գորգն p_1 Գորգիկ p_2 Որքիքն
39 p_2 գլուխն
39 Z չիք վեր
40 Z Յոտքն ընկաւ p_1 Ոտն անկաւ p_2 Յոտն յընկաւ
40 C ի փխ սուրբ
41 pC Իմ տէր փխ Տէ՛ր, ինձ
42 p_2 մոլոր
42 p ճանփաք Z ճանփայ C ճանպհով p_2 ճանպայ
42 Z չիք տանին
43—44 p Վարդապետն յառաջ եկօ
Եւ յիշեց ըզտէր կենդանին,
Սուրբ ձեռօք խաչակընքեց՝
Գորգ, հանգչիս դու ի մէջ
հողին։
43 Z Ջաջն ալ C Ջսուրբ աջն p_1 Նա զաչն p_2 Նա զաչն այլ
43 Z ի վերև p_1 ի վերայ
44 C Գորգն հանգեաւ
44 p_2 Գորքիկ դու հանգիր ի մէջ ի հողի
44 Zp_1 ի մէջ
44—45-ի փոխարեն C ունի
Ասաց թէ հանգիստ կացիր,
Մինչ որ գայ դատողն ամէնի,
Երբ զա դատաստան առնէ,
Պատասխան խնդրէ յատենին,
Ջուապ դու նորա տացես
Որ բանիր ի յօր կիրակին։
45 Zp_1 հրաման ով տայ p_2 հրաման տայի
46 p_2 ի լուր փխ ի յաւր
47 Z Հանբալն ալ
47 C Նորա ձայնն ի Սիս գընաց
47 p_2 ի Սիրս
47 p գնաց փխ հասաւ
48 p սքանչելեաց C սքանչելի

Նարեկ վարդապետ մի կայ,
Որ կուտայ հոգի մեռածին։
Երեք վարդապետ սըսցի,
Երեքեան ի Սիս քաղաքին,
Ելան ճանապարհ անկան,
Վարդապետն ի տես կու գային։
Եկին դէմ լիրար առին՝
Կարածէր զոչխարն ի սարին.
Քիչ մի գիշատես էր նա,
Մէկ մէկի հային ծիծաղին։
Հոգով սուրբ էր Նարեկացին,
Իմացաւ զխորհուրդն ի սրտին.
Իմ տէ՛ր, թողութիւն արէք,
Աշակերտ եմ վարդապետին։

49 Y Ի Նարեկ
49 p կասեն փխ կայ p_2 կայր
50 YpZp_1p_2 Որ կու տայ (p_2 կու տայր) մեռածի (pZp_1p_2 մեռածին) հոգի (p հոգին)
50 C Որ հոգի կու տայ մեռելին
51 p_2 Յերեք
51 Z սեսցի C կային p_2 սիրսցի փխ սըսցի
52—55 p Ըզնարեկ ի տես գնացին,
Փորձել կամէն զնա,
Սքանչելեացն ոչ հաւատային
52 Z Երեքն ալ C կու կենին փխ երեքեան p_2 Յերէքն ալ
52 p_2 Սիրս
52 Zp_1 քաղաքէն
53 Zp_1 Ելան յաշխարհէն իւրեանց
53 Z Ի ճանփայ մտան p_2 ճանապարհք անկան
54 Zp_2 գու գային C գնացին
55 p Եկին մէկ մէկի դիպան
55 Z դէմ իրար C ու զիրար
56 p Արածէր p_2 Կարածին
56 Zp_1 ոչխարն
57 Z քիշատես C գիշայտեա
58 Yp Մէկ ի մէկ p Մեկ մեկի
58 pC նային
59 C Իսկ հոգովըն սուրբ էր նայ
59 $p$$p_2$ Հոգովն
59 p Նարեկն փխ Նարեկացին
59 p_2 չիք էր
60 p Ըզխորհուրդ Zp_2 խորհուրդն
60 pC նոցին փխ սրտին
61—62 p չիք տողերը
61 C Ասաց փխ Իմ տէ՛ր
61 p_2 Տէր ինձ
61 Z չիք արէք $p$$p_2$ արարէք
62 p_1 Աշակերտն եմ վարդապետին p_2 Աշակերտիմ վարդապետի

Եւթն գայլ սարին նստէր
Ու ալաս կենին ոչխարին։
Նայ զգայլերն ի վայր ձենեց
Ու հովիւ եղիր ոչխարին.
Ձերեքուց գաւազան էառ,
Դէմ յիւրէն խուցըն գնացին։
Երեք աղաւնի բռնեց—
Օրըն պաք էր՝ չորեքշաբթին—
Խորդեց ու խորվեց աղւոր
Եւ եդիր յառջև հիւրերին։
Հրամեցէք բարի հիւրեր,
Ճաշակիմք ի յայս սեղանին։

63 p Երեք փխ եւթն p_2 եօթն
63 p_2 գալ
63 YC նստին p նստած
64 p Ու հալառ կամին p_1 Ու այլազգ էին p_2 Ու սուլվալ կանէր փխ Ու ալաս կենին C Ու ալաս անին
65 p_2 գայլերն
65 Z ի վար
65 p Նարեկ զգայլերն ձենեց C Ձերեք գայլն ի վայր ձայնեաց
66 C պահապան փխ հովիւ
67—68 p Երեք վարդապետն ի հետ Նարեկա վանքն գնացին
67 Z Երիցունց C Յերեքի p_2 Իրիցուն
67 Z գաւազանն p_2 գաւազանին
67 p_2 չիք էառ Z առին
68 ZC Դէպ
68 Z իւրեանց C ի յիւր pp_1 իւրեն p_2 յիրանց
68 p_2 խուրցն գնային
69 p Երկու p_1 Եւ իրեք
69 p_2 աղաւնիք
69 pÇ մորթեց փխ բռնեց p_2 բեռնեց
70 Z Օրն էր պաք C Աւրն էր պահք p_2 Օրս պաք էր
70 p_2 յուրբաթի փխ չորեքշաբթի
71 p Գեղեցիկ խորվեց զնոսա C Եփեց ու խորուեց զաղաւնին p Յերեց ու խորվեց աղվոր
71 Z Խորվեց ու զորդեց
71 p_1 Ի աղւոր
72 C Ու եդիր p_1 Եւ եդիր p_2 Որ եդիր
72 p ի մէջ սեղանին YZp_1 արջև (p_1 առջև) հիւրերուն p_2 առչև հաւրերուն
72 C յառջև
73 Z Հրամայեցէք p_2 Կամ կերէք փխ Հրամեցէք C հրամաեցէք
73 Z հօրեր փխ հիւրեր p_2 հուրեր
74 p Ճաշակեմք C Եւ կերէք p_2 Ճաշակինք
74 p մեք այս p_1p_2 ի այս
74 Y սեղանոյն Zp_1p_2 սեղանոյս

Նոքայ ձեռք յիրար զարկին,
Դրին զմատն ի վերայ պռկին.
Ասեն. Տէ՛ր, զայս ինչ արիր,
Օրս պաք է չորեքշաբթին։
Կամ կերէք, բարի հիւրեր,
Կամ հրաման տըւէք որ թռչին։
Երեք վարդապետ սըսցի
Այն խօսիցն ի վայր մնացին։
Իմ տէ՛ր, ամ ոնց տամք հրաման,
Է խորված դըրած սեղանին։
Վարդապետն յառաջ եկաւ
Ու յիշեց ըզտէր կենդանին.

75—76 p
Երեք վարդապետ սըսցի
Այն խօսիցն ի վայր մնացին
75 p_1 Նոքա մէկ ի մէկ հայէին
75 p_2 իրար
76 p_1 Եւ մատըն դըրին պըռըռնկին p_2 Ու դրին մատն բերանին Z Դըրին մատն ի բեր... (անընթ.) C Ու դըրին զմատերն ի պռկին
76 C չիք վերայ
77 p Իմ տէ՛ր, դուն այ ինչ կասես Z Ասին. Այս ինչ արարեր C Մեր տէր դու այս ինչ արիր p_1 Իմ տէր թողութիւն արայ p_2 Ասեն. Տէ՛ր, ինչ արարեր
78 p պահք է Zp_2 պաք էր C է պահք
78 p_2 յուրբաթ փխ չորեքշաբթին C չորեքշաբաթին p_1 չորեքշաբթին
79-ից առաջ p ունի
Ձերկուս ափն այ վեր. իկալ
Եւ եդիր զմատն ի բերանին
79 C Ասաց. կերէք իմ բարի հիւրեր
79 Zp_2 հուրեր
80 Zp_1 հրամանք
80 p տվէք C տուէք Y տովէք
81—82 Z անընթ.
81 p_1 իրեք p_2 յերէք
81 C վարդապետք
81 p_2 սիրացի C Սըսին
82 p Մէկ ի մէկ նային ծիծաղին
82 pp_2 Այդ խօսացն C Յայն խօսացն
82 p ի վար
83—84 YZp_1p_2C չունեն
85 pZp_2 Նարեկ վարդապետն եկաւ
85 p Սուրբ Գրիգորն փխ վարդապետն
85 p_1 երեկ
86 p Եւ յիշեաց ըզհայր և զորդին
86 p_1p_2 զաստուած փխ `զտէր

Նայ գաչն ի վեր եհան,
Թևաթափ եսուր թեփուրին.
Թև առին եւթնապատիկ
Վերայ գլուխ սուրբ վարդապետին.
Վարդապետն օրհնեց գնայ,
Ու թըռան հասան երամին:
Երեք վարդապետ սըսցի
Յոտն անկան սուրբ վարդապետին.
Ասեն. Կաժենաս դու տէր,
Որ հազարք ըղքեզ գովէին:
Երթամք ու խապար տանիմք
Առ Սըսայ Կաթուղիկոսին՝

87 C չիք Նայ
87 Y գաչն pp_1 խաչն Z գաջն ալ p_2 գաչն այլ C ըղխաչն
87 p_1 ի վայ[ր]
88 p թափ ըղթաբ տըւին թև առին Zp_2 թևաթև երետ (p_2 յերետ) C թափ ու թափ տուին
88 p_2 յերետ
88 Zp_2 թեպուրին C փետուրին
89—90 p
Գոյն հազար փետուր առին
Եւ բոլոր եկին սեղանին
89—91 C Աղաւնիք կենդանացան
Եաւթըն ման եկին սեղանին,
Գլուխ դըրին վարդապետին
p_2 Թև առին թռչունքս ելան,
Որ եկան բոլոր սեղանոյն,
Ի վերայ սուրբ վարդապետին
89 Z Ի՛ թվաուին
90—91 Z Ու եկան բոլոր սեղանին, Ի վերայ վարդապետին
91—96 p չունի
92 Z յերամին p_2 երէնց երամին
93 C վարդապետք
93 Z սիսցի C սըսին p_2 սիըսցի
94 Z Ոտքն ընկան p_2 Յոտն ընկան
94 C ի վարդապետն փխ սուրբ վարդապետն
95 C Իմ տէ՛ր, արժանի ես դու Z անընթ.
95 Yp_2 Ի՛ ասեն
95 p_2 Կամենաս փխ Կաժենաս C արժանի ես
96 C Թէ փխ Որ p_1 Որք
96 Zp_2C հազար
97 p Մենք ելնունք խապար տանիմք
97 Cp_2 երթանք
97 Z ղապար C խաբար
97 Cp_2 տանենք
98 p Աքանչելիք սուրբ վարդապետին փխ տողի
98 C Էն փխ Առ
98 p_2 Սիրսայ

Ճըշմարիտ և ըղորդ կասեն,
Որ կուտայ հոգի մեռածին:
Բաներս Յովհաննէսն ասաց,
Յովհաննէսն այն Թուրկուրանցին.
Ով բանիս իմ ականջ դընէ՝
Աստուած իւր մեղացն առնէ թողութիւն:

99 C Ճշմարիտ ողորդ է նայ p_2 Ճշմարիտն յըղորդն ասեմ
99 Z ու ղորդն ասեմք
99 p ու՛ փխ և p_1 չիք և
100 p_2 կուտաս
100 Y հոգին մեռածին p մեռածի հոգին C հոգի մեռելին p_2Z մեռածին հոգի p_1 մեռածին հոգին
101—104 p չունի
101 C Ջբաներս
101 Yp_1 Յովանէսն C Յովանէս p_2 Յոհաննէսն
101 C ասէր
102 YCp_1 Յովանէսն (C Յովանէս) p_2 Յոհաննէս
102 Yp_1 այլ C այն p_2 ու Z այ
102 Y Թուլկուրանցին C Թուլգուրանցին Z Թուրկորանցին p_2 ու Թուլկուրանցի
103 C Ով որ ողորմին ասէ փխ տողի
103 p_1 չիք Ով
103 Z չիք իմ
103 p_2 այս բանիս փխ բանիս իմ
104 C Աստուած գիւր մեղքըն թողու և իւր ծնօղին
104 p_1 չիք Աստուած
104 Zp_2 անէ փխ առնէ

ՀԱՎԵԼՎԱԾ

Ե

ՏԱՂ ՅՈՎԱՆԷՍԻ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

Ես քո սիրուն չեմ դիմանար, հալալ արա, հանսը մեռայ,
Առ ի հետ այլ զոսկի փէտատ, ու՛եկո՛ փորէ ինծի թուրպայ։

Թող զիս երեն տառայպուլով, որ իմ սըրտիս բոցըն գոռայ,
Շատ մարդ ի յայս կըրակն ընկնի, չորն երի դալարն ի վըրայ։

Թող լըվանան ըզիս գինով, մտրուպ բերեն ինծ քահանայ,
Կանանչ տերեւըն թող պատնեն՝ տանին թաղեն ի նոր պաղչայ։

Հա՛յ հարամի ու մարդըսպան, ճալատն ի քովդ աշկերտ կու գայ,
Շատ դըրեր ես սիրու զընտան, դուռդ ու դըրունքդ է ղանարայ։

Ջսխրտս երեցիր ու սղկեցիր ու քաշեցիր յանչքըդ սուրմայ,
Դարձար զարիւնըս վաթեցիր ու՛ի ոտվընիդ դըրիր հինայ։

Քարկոծեցէք զիս խնծորով, քաղցըր լեզուով խոցոտեցայ.
Անուշ գինով զիս խեւ արիր՝ որ ի ծոցըդ զնտանեցայ։

Այս գիշեր ի յերազիս կըտըրտեցին տիքայ տիքայ,
Գազանք արիւնս կըշտացան ու թռչունք ի լաշիս վըրայ։

Վըրաս բերան է առիծու, արիւնըս զէտ ջուր կը բխայ,
Ով արիւնէս է ծարաւէր՝ թող գայ խըմէ որ լիանայ։

Կըտըրըճվորացն յոտիցն ի հող, մէկ հոգեկ մի ունիմ ֆետայ.
Իմ ճիկարըս քապապ հերիք, արիւնս թող գինի լինայ։

Գըլուխս ամպերն ի վեր իջեր ի սըրտիս լեռներուն վըրայ,
Մաղձըն սըրտիս մըշուշ կապեր, արեան արցունքս կու ցօղայ։

Կերակրեցաք ի մի սեղան, ու խըմեցաք ի մի կըթխայ,
Մէկտեղ ելաք մէկտեղ նըստաք, ան ժամանակն ո՞ւր է հիմայ,

Ո՞ւր է ղավլըդ, ո՞ւր է երդումն, որ բռնեցաք զաստուած վըկայ,
Ի զատ ընկաք օտարացաք, չարկամն եղև մեզ մահանայ։

Աստուած մեր չարկըմին չար տայ, որ իւր չարովըն լիանայ,
Բարեկամացըն տայ բարի, մեր բանն ալվայ բարի լինայ։

Աստուած ճամբայ տայ իմ սրտիս, ծառըն ծաղկի ու կանչանայ,
Կամ իմ սրտիս ծառըն բուսնի, ճագըն խօսի ու ճըվըլտայ։

Համբերելով գործք կատարի. խև Յովանէս, դու համբերէ,
Ամեն լինի գայ իւր կամաւ զինչ հեռաւոր զինք համբուրէ։

Բ

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Այսաւր էի խիստ տրլտում,
Էնկիլենտի էսկի տէրտիմ. (Նորոգվեցավ հին ցավս)
Կատարեցաւ ընծի խնդում,
Բի եարի սէյրանտէ կաւրտում։ (Որ յարին զրուցելիս տեսա)

Ունէր ունէր ունքն կամար,
Ղարատիր ղաշլարի խումար. (Սև են խումար հոնքերը)
Խև եղայ ես նորայ համար,
Իւզու կուլուստանլու ղէմէր։ (Դեմքը լուսին է պայծառ)

Անչափ սէր տվիր ընծի,
Այ ղունճա կուլլէրինկ կէնճի. (Ո՞վ կոկոն վարդերի լավը)
Ալվայ հագար նարընճի,
Էյլէտինկ պենի զարընճի։ (Ինձ դարձրիր քնահատ)

Վայրի եղներու նման,
Տուշուրտունկ կոնկլումէ կու մէն. (Սիրտս կասկած ձգեցիր)
Ակռատ մարգարիտ շարման,
Սէն էյլէ տէրտիմէ տէրման։ (Դու իմ ցավին դեղ արա)

Նման է ծոցդ ի դրախտին,
Կէլ ըքմա՛ կոնկլումունկ թահտը. (Արի սիրտս մի կոտրիր)
Աչացս լոյս և իմ հոգի,
Սուրէլում ամբումուզ վահտը։ (Թող վայելենք պահը կյանքի)

Նռան հատին ես դու նման,
Ղարանֆիլիլէ ըռահեան. (Մեխակ ես ու ռեհան)
Աղվոր ծաղկունքն ի քեզ նման,
Բիմէ պենկզեր նազլու զուգան։ (Ում է նման նազլու զուգան)

Երբ տեսանեմ զքեզ, աննմա՛ն,
Արթըք ղալմազ պէնտէ ֆերման, (Էլ չմնաց ինձ հրաման)
Աղվոր աչերտ ի ծով նման,
Սէն էյլէ տէրտիմէ տէրման։ (Դարդիս արա դու դեղ դարման)

Սուրաթտ է քո բոլոր լուսին,
Ղոյ տարտիմէ ղօնճա կուլսինկ (Կոկոն ծպտա թող իմ դարդին)
Եկ մաւտեցիր քո ծառային,
Է՜ զալմ նազիք ու շիրին։ (Ով զալում անուշ ու նրբին)

Ի յալամ աշխարհիս միջին,
Սէնսիկ շեհրի Չին ու մէչին. (Դու ես քաղաք Չին ու մաչին)
Երգողիս Յովանիսին
Ըռահմ էյլէ պաշընկ իչուն։ (Գութ ունեցիր գլխիդ համար)

Գ

ՀԱՅՐԵՆԻԿ ԱՍԱՑԵԱԼ Է ԹՈՒՐԿՈՒՐԱՆՑՈՒ Ի ՎԵՐԱՅ ՍԻՐՈՅ

Ա

Ծառայ այն ճակտին լինիմ՝ մարգարտէ քըրտինք կու ցօղայ.
Ասցի թէ պագիկ մ'առնում, նա տեղիկն է խիստ ղալաղայ։

Բ

Իմ եարն երկու գուռ ունէր՝ մէկըն գաղտ ու մէկն ալանի.
Նըստէր ի գաղտուկ գըռնակն, կու կանչէր հայերէն ղազալի։

Գ

Ով սպիտակ ծոց ունի, թող լըրջուկ շապիկ չի հագնի.
Երթանք անիծենք քաղաքն որ լեղակն ի մէջն կու բուսնի.
Պօյաճուն կարասն աւիրի, իւր սիրտըն թող հալի պատռի.
Պօյաճին այլ ինչ անէ, իր տարտերն քանց ձերն աւելի։
Երթամ աղաչեմ զաստուած, որ լեղկան ընտիկն անցանի,
Ո՛չ սպիտակ ծոց լուրջ հագնի, ո՛չ մանկան սիրտըն նըւաղի։

Դ

Կասեմ թէ՝ Աղկեկ ես դուն, նա կասէ թէ՝ Տէրն է տըւեր,
Ասցի թէ՝ պագիկ մի տուր, ինքն ասաց՝ պագըս գին ունի.
Ասցի թէ՝ պագիդ գին ի՞նչ, նա ասաց՝ պագիս գին՝ հոգիդ։
Հոգեկս ալ հոգիդ ուզէ, չէ չասեմ, հանեմ տամ ի քեզ,
Վախեմ թ'աչերըս ուզես, հապ' ինչո՞վ հայիմ դեպ ի քեզ։
Աչեր եօթն ու վեց պիտէր, եօթն ու վեց կամ քառսուն ու վեց.
Մէկովս այլ աշխարհ հայիմ, այլն ամէնն այլ դէպ ի քեզ։

Ե

Երեսդ է սերով մածուն, պագդ անուշ էր քանց ամենուն.
Բեր պագնեմ լոյս երեսըդ, որ չերթաս գանգտիս քո ներուն.
Քո ներդ ալ շատ վարձք արեր ու կապեր կարմունջ գետերուն.
Դուն ալլ այդ վարձկունք արա՛, քո մէկիկ աղբօր արեւուն:

Գ

Այբէն մինչև ի քէն գանկատ անեմ ես,
Բարև չէ՞ր չես ի տար, սուտ խռովեր ես.
Գիտես որ քո վերայ չար քաշեր եմ ես.
Դու ինձ ոնց կու նենգես, դէմ անօրէն չես:

Ես ո՞ւմ երթամ գանկտիմ, իմ ճարըս դու ես.
Ջայդ արեգակ երեսդ յինէ կու պահես.
Էրբ գաս առաւօտուն լուսոյ նըման ես.
Ընդ այս կու զարմանամ, թէ ինձ չէ՞ր կու խնայես:

Աղբյուրներ.

A = Ձեռագիր № 9271, էջ 110բ—111բ:
Y = Ձեռագիր № 8968, էջ 14ա—15բ:
p = Ձեռագիր № 7707, էջ 281ա—282ա:
x_1 = Ձեռագիր № 3081, էջ 244բ—245ա:
h = Ձեռագիր № 7714, էջ 112ա—114ա:
R = Ձեռագիր № 9597, էջ 148բ—150ա:

Խորագիր.

Ax_1h Տաղ սիրոյ Y Տաղ սիրոյ խիստ գեղեցիկ p չունի:

1 AR քենէ գանկատիմ ես փխ գանգատ անեմ ես p գանգատ ունիմ քեզ
2 hR է՞ր
2 x_1 ի տալ
2 px_1 խըռովել ես
3 YR վրա
4 A անհաւատ փխ անօրէն
5 h գանգտիմ ես
5 hR ճարըն
5 A Դուն ես
6 AR Ջայտ
6 Ax_1hR երեստ
6 A յինէ դատեր ես
7 բոլորը՝ երբ փխ էրբ
7 A է՛ ատտղ փխ էրբ գաս
8 Rh է՞ր
8 A թէ դու զիս ատեր ես

Թողի զքեզ ի բաց՝ դու զիս թողել չես.
Ժամ է ինձ ճար արա՛, թէ չէ կորալ ես.
Իմ տուն այդ չէ ճաֆայ զոր դու կու քաշես.
Լաւ քո միտքն յիմանաս որ սուտըն դու ես։

Խաւլ ու երդումդ ուր է, որ ինձ արեր ես.
Ծառր դու ի ղալլէտ, թեթեհաւատ ես.
Կապուտն է մեզ վկայ, որ կու սիրեմ զքեզ.
Հող եմ ես քո ոտիցդ յորտեղ կու կոխես։

Ձայնիկըդ լսեցի՝ ուրախացայ ես.
Ղաւլիկ հետ ինձ արիր ու մոռացեալ ես.
Ճարտի քար չեմ ւ՛ երկաթ, որ դիմանամ ես,
Միս եմ, կաշի ւ՛ ոսկոր, զիս յէ՞ր կու հալես։

Յառաջ զիս խաբեցիր, թէ կու սիրեմ զքեզ,
Նա՛յ յետոյ սուտ ելար, ղավլի եալան զքեզ.
Շատոնք են զիս խաբեր, զէմ դու մինակ չես,
Ողորմած է աստուած, զիս չառնէ անտես։

9 A թողում զքեզ ի բաց զինչ զիս թողեր ես
9 R ու զիս թողուլ չես
10 A Ժմնէ ու պէտ արէ փխ Ժամէ ինձ ճար արա
11 h այտ
11 R այնես փխ քաշես
12 R միտք իմանաս
13 x_1 խավվ h ղավլ R խավլ
13 YpR երդումտ
13 x_1R արել ես
14 x_1 ղալվէտ R ղավլէտ
14 h հոգի ես փխ հաւատ ես
16 x_1 ոտիցտ
16 hR որտեղ
18 x_1 ղալվիկ h ղավլիկ R ղաւլիկտ
18 R մոռացար զիս
18 h և փխ ու
19 h ճաւրըդ քանի քաշեմ երկաթ ու քար չեմ որ դիմանամ քեզ
19 x_1R չիք ւ՛
20 R և փխ ւ՛
20 h է՞ր
20 p հալես փխ մաշես
21 R դու փխ զիս
21 hR խափեցիր
22 Y նա՛
22 h ետոյ
22 x_1 ղալվի
23 h խաբեր R խափել

Ջարեր շատ եմ քաշեր, զոր քաջ գիտակ ես,
Պատճառըն դու եղար, անհաւատիկ զքեզ.
Ջանաս զարիւնս խըմես՝ բայց կարենալ չես.
Ռատի յէ՞ր չես կենար որ կու սիրեմ զքեզ։

Սիրամարգի նման նաշխած-փետուր ես,
Վարդի նըման գունով աթլաս հագել ես.
Տես քեզ եմ հնազանդ՝ թէ զինչ որ ասես,
Րամեալ յազգըս մարդկան սարթաճըս դու ես.

Ցընծամ ուրախանամ երբ տեսանեմ զքեզ,
Ւ՛ իւծեալ ի սէր քոյին կամ յանդիման քեզ.
Փառս տամ արարողին, որ նորոգեաց զքեզ.
Քարոզս ու շարականս ւ՛ ուսումըս դու ես։

25 p դու քաջ գիտակ ես
26 R եղար ինձ
27 h հեղուլ փխ խմես R խմել
28 h է՞ր R որ
28 R անհօատիկ զքեզ փխ որ կու սիրեմ զքեզ
28 h իգար փխ կենար
29 x_1h սիրայմարգի
29 h նաղշած
30 R աթլազ
31 h Ես փխ Տես
32 h ազգս R ազգի
32 R նման փխ մարդկան
32 x_1 սէրթաճըն դու ես h սարթաճ ես
34 R անդիման
36 R Քարոզ ու շարական ուսումն
36 x_1h չիք ւ՛

Ե

Այս ինչ կրակ էր գիս այրեց,
Կամ ինչ խաւար՝ որ գիս պատեց,
Ես վէմ անխախտ էի՝ խախտեց,
Պողպատ ամուր՝ գէտ ջուր հալեց։

Եկաւ անցաւ ու ճոխ քայլեց,
Ծոճաց ու զմէջքըն կոտրտեց,
Դարձաւ ի յետ խոշոր նայեց,
Անձըս տեսաւ ու զահընդեց։

Օրն էր շաբաթ լոյս կիրակի,
Վերի վանիցն ի վայր կուգի,
Բուրվառն ի ձեռս ու խունկն ի լի,
Սաղմոսարանն յանդս ունէի։

Հետ կու գայի, հետ կարդայի,
Թ՚ երթամ հասնիմ ճաշու ժամի.
Եկի առի հանց կրակի՝
Ո՛չ գրէի, ո՛չ կարդայի։

Մէկ մի հեծեր պօզ պէտաւի,
Եկաւ անցաւ քաջ մուհալի,
Աչեր ունէր Թաւրէզ տանի,
Ուներն զխելքըս կու տանի։

Խնծոր ձգեց, մոխկ չարի,
Մէկ մ՚ալլ ձգեց՝ ցածցայ առի.
—Սէն միւսիւրման, մոլլա ղըզի,
Պէն Յովաննէս, քեշիշ օղլի.
Խնծորդ ի յիս ի՞նչ բան ունի։

—Եօրու, եօրու, կեաւուր օղլի,
Կեօթուր պիզտէն մուհալ սօզի,
Պէն միւսիւրման, մօլլայ ղըզի,
Սէն Յովաննէս, քեշիշ օղլի
Զիրար սիրենք խօշ կու լինի։

Յովաննէսին մայրն է տղայ,
Հագեր վալայ, վրան ջուպայ,
Ջօրն ի վաներն ի ժուռ կու գայ,
Ու խունկ ու մոմ կու խոստանայ։

—Սարկաւագնի՛, ասէք «մեղա՜յ»,
Հաբեղանի՝ «տէր ողորմեա՜յ»,
Միթէ իւր խելքն ի վերան գայ,
Թ՚ իմ Յովաննէսն ի տուն դառնայ։

Մէկ մի չասաց թէ՝ «տէ՛ր, մեղա՜յ»,
Ամէնն՝ «ալլահ» ու «չէլտուլայ».
Յետոյ պայս ճուղապն ասացին.
—Այլ Յովաննէսին ճար չկայ։

—Ծօ Յովաննէ՛ս, ծօ ի՛մ տղայ,
Դարձիր ի տուն, ասա «մեղա՜յ»,
Հոն քո տերտերն կու ճորայ,
Թէ Աշան ընկեր ի հետ նորա։

—Ա՜յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Թէ իմ տերտերն գիս ճորայ,
Նայ ես զԱշան ցցնեմ նորա,
Քան գիս ու այլ խև կու լինայ։

—Ծօ Յովաննէ՛ս, ծօ ի՛մ տղայ,
Դարձիր ի տուն, ասա «մեղա՜յ»,
Դու մէկիկ ես, այլ ճար չըկայ,
Այլ լինալու ճարակ չըկայ։

—Ա՜յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Զկաթդ որ կերայ, հալալ արայ,
Զխելքս առին ու խև եղայ,
Յիմնէ ի քեզ այլ ճար չըկայ։

—Ծօ Յովաննէ՛ս, ծօ ի՛մ տղայ,
Դարձիր ի տուն, ասա «մեղա՜յ»,
Քեզի բերեմ հայու դըստրիկ,
Ըզքեզ օրհնել տամ քահանայ։

—Ծօ Յովաննէ՛ս, ծօ ի՛մ տղայ,
Դարձիր ի տունն, ասա «մեղա՜յ».
Աշան տաճիկ է անօրէն,
Այն քո հաւատուն հետ կու ջանայ։

Հայ իմ մարիկ, մի՛ տըխմարնար,
Զըկայ նըման գէմ Աշային,
Լեզուն պիւպիւլ, ձայնն դումրի,
Մէջքըն բարակ զէտ փուանկի։

Աշան նստեր փանճարային
Ու խիստ տրտում, ափն երեսին,
Թ՚ այսօր ծեծեց իմ հայր դատին—
Է՞ր կու սիրես զճայուն որդին,
Տես թէ կելնէ մէկ մի կու գա՞յ։—
Ականջըն խո՜ւլ Յովաննէսին։

Եւ Յովաննէսն երբ զայն լսեց,
Բռնեց զճանփան ի յոտվնին
Ու գլխիբաց, գոտկն յափին,
Գնաց կանգնեց յառջև խանին։

Բարև երետ Թագաւորին.
Նոքա շուտով զբարևն առին.

Բռնեց ըպօղ ձիուն ագին,
Կաֆայ ասաց ամէն ձարին։

Աշան կանգներ ի վերայ բերդին,
Մըտիկ կանէր Յովաննէսին.
Քովս է կանգներ դեղին հագնողն,
Ինքն՝ զկանանչն ու զծիրանին։

—Ծօ Յովաննէ՛ս, մտիկ արայ,
Ի վերայ բերդին ինչ կու խաղայ,
Դեղնըվո՛ր, ես քեզ ծառայ,
Կանաչվորին զանուն ասա.
Թէ չէ լինիմ շահին բազայ,
Թռչիմ նստիմ Թևիդ վերայ։

Պապուս անունն ասեն մօլլա,
Աղբօրս ասեն քաղքի շահնայ,
Եւ զիմ անունն ասեն Աշայ,
Մէկ ալ քրոջըս՝ Զուլութայ,
Զիմ մօրս անունն ասեն Ֆաթմայ,
Ու հօրս ասեն դատի մօլլայ։

Եւ Յովաննէսն է քո ծառայ,
Դու իմ խոցոյս ճար մի արայ,
Թէ չէ խևցայ լեռներն ընկայ,
Զէտ մոմ ի տեղըս հալեցայ։

—Ծօ Յովաննէ՛ս, մզկիթ մտնուլ պիտիս,
Մատնիկդ ի վեր կալնուլ պիտիս,
Հետ մօլլանուն ժուռ գալ պիտիս,
Ապա ծոցուս տէր կու լինիս։

—Աշա՛յ, սէրտ ինձ հարամ լինայ,
Թէ այդ բաներդ հանց կու լինայ.
Աշա՛յ, գտնուս յորդ ի մահուն,
Զինչ ջանացիր հետ իմ հաւատուն։

Ութը կանոն սաղմոս ուսայ,
Ջան ալ ի քո սիրուտ մոռացայ,
Օր մի չասի թէ «տէ՛ր, մեղա՜յ»
Ամէնն՝ «ալլահ» ու «շէյտուլահ»:

—Ծօ Յովաննէ՛ս, փոքր ի պօյաց,
Փոքր ի պօյաց, ծանր խելաց.
Չես ուրանար գքո աստուած,
Ու չես լսեր դու մէկ խօսաց:

Գնա շինէ եկեղեցի,
Որ գամ մտնում կոշկովս ի ներս,
Պասկ դնեն, զմեզ օրհնեն,
Թող քո սրտին կամքն լինայ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա.

«Ար՛ե՛կ, ար՛ե՛կ իմ խուպ սուրաթ»

Առաջին անգամ լրիվ հրատարակվել է «Արեգ» երկշաբաթաթերթում (1924 թ., էջ 473)։ Հրատարակիչը (Տաղասեր=Ն. Ակինյան) ունի հետևյալ ծանոթագրությունը. «Այս բանաստեղծությունը հանած ենք Մխիթարյան Մատենադարանի թիվ 343 և 344 ձեռագիրներից։ Առաջին տունը հրատարակել է Ե. Շահազիզը՝ «Պատկերներ», էջ 140։ Մնացածները մինչև այսօր անտիպ են» («Արեգ», 1924 թ., էջ 473)։

Խոսքը Վիեննայի Մատենադարանի ձեռագրերի մասին է։ № 343 ձեռագրում ունի հետևյալ խորագիրը՝ Այլ բանք Յովանիսի ասացեալ է վասն սիրոյ. սկզբ. «Արիկ արիկ իմ խուպ սուրար» (Տաշյան, Ցուցակ, էջ 793). № 344 ձեռագրում՝ Յովհաննէս Թլկուրանցւոյ ասացեալ վասն սիրոյ՝ սկզբ. «Արեկ, արեկ խուպ սուրար» (Նույն տեղում, էջ 794)։ Ամենայն հավանականությամբ, ինչպես այդ երևում է նաև առաջին տողերի համեմատությունից, Ակինյանը երկու օրինակներից կազմել է համաքական տեքստ, սակայն չի նշել տարբերությունները—այլընթերցումները։

Ե. Շահազիզը «Պատկերներում» բերել է ծանոթագրվող տաղի առաջին տունը Մռաղյան կոչված, այժմ մեր Մատենադարանի № 9271 ձեռագրից (մեր նշանակմամբ՝ A)։ Այստեղ պահպանված է տաղի միայն առաջին տունը էջ 5բ-ում, որից հետո թերթեր են թափված և շարունակությունը բացակայում է։

Մեր օգտագործած ձեռագրերից № 7712-ը (=V), որ 19-րդ դարի է, անգրագետ մի ձեռագիր է. այստեղ Թլկուրանցու սույն տաղի վերջին տան առաջին տողը փոխված է և իբրև հեղինակ հանդես է եկել «Միգիդ Նախչիվանցի»-ն, մի գրագող, որը ինչպես այս, այնպես էլ մի շարք ուրիշ տաղերում իր անունն է գրել հեղինակների անվան փոխարեն (այս մասին տե՛ս նաև՝ Ա. Մնացականյան, «Դիտողություններ հին տաղարաններում կատարված մի շարք աղավաղումների մասին», Հայկական ՍՍՌ Մատենադարանի Գիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 176)։

№ 1990 (F) ձեռագրում 5-րդ և 6-րդ տների տեղերը փոխված են։ Այս ձեռագրում գրիչը գործիական հոլովի վերջավորությունը գրում է «ով», որ չենք նշանակել այլընթերցումներում։

Բ

«Տեսայ պատկերք մի գեղեցիկ»

Առաջին անգամ, իբրև առանձին տաղ, ամբողջությամբ հրատարակվել է 1924 թ., «Արեգ»-ում (էջ 516—517)։ Հրատարակիչը (Տաղասեր) չի հայտնում, թե ինչ ձեռագրերից է քաղել։ Ամենայն հավանականությամբ, ինչպես «Ար՚ե՛կ, ար՚ե՛կ...» տաղը, սա նույնպես «Արեգ»-ում տպագրված է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 343 գրչագրում պահպանված ընդօրինակությունից (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 793)։

«Արևնըման շողշող կըտան» տաղի «Հայերգ»-ում հրատարակված տարբերակում մտել են ծանոթագրվող տաղի IV տունը («Հայերգ»-ում իբրև նշված տաղի II տուն), VI-ը (իբրև III տուն) և VII-ը (իբրև IV տուն)։ Սույն տաղի նույն տները (IV, VI և VII) կան նաև № 6159 ձեռագրի (=ո)՝ նույն՝ «Արևնըման շողշող կտան» տաղի ընդօրինակության մեջ, իսկ այդ ձեռագրում (ո) եղած ծանոթագրվող տաղի ընդօրինակության մեջ բացակայում են։

Հենց այս երեք տներն են, որոնցից (և «Հազար ուսուֆ է քեզ ծառայ» տաղի վերջին տնից) Կ. Կոստանյանցը կազմել է «Ասի՝ սիրէ զիս, ծով աչերս» սկզբնատողով տաղը (տե՛ս նաև «Արևնըման շողշող կտան» և «Հազար ուսուֆ է քեզ ծառայ» տաղերի ծանոթագրությունները)։

Այդ տների «Հայերգի» ընդօրինակության այլընթերցումները տրրված են տողատակում Н պայմանական նշանով։

Թյուրիմացություններից խուսափելու նպատակով № 6159 (ո) ձեռագրում «Արևնըման շողշող կտան» տաղի մեջ մտած հիշյալ տների այլընթերցումները չենք նշանակել տողատակում և դնում ենք այստեղ.

Տող 13 Ասի փխ Ասցի
» 15 յերեսդ ի վայր
» 16 Ցերակ փխ Ար՚եկ
» 22 խաբայն փխ խափան
» անվաղճան փխ յանկասկած։

29-րդ տողում հիշված «Միգրդ Նախչիվանցի»-ն № 7712 (v) ձեռագրի գրիչն է, որ ցանկացել է «յուրացնել» Թլկուրանցու այս տաղը (տե՛ս նաև նախորդ տաղի ծանոթագրությունը)։

Գ

«Արևնըման շողշող կըտան»

Առաջին անգամ տպագրվել է Գ. Վ. Սրվանձտյանցի կողմից 1876 թ. «Մանանայ»-ում (էջ 268—269), աղավաղված մի գրչագրից։ Այստեղ տաղը ունի 9 տուն, որոնցից այս տաղինն են 1—4, 8—9 տները (ընդամենը 6 տուն), իսկ 5—7 տները մտել են «Հազար ուսուֆ է քեզ ծառայ» սկզբնատողով տաղից՝ նրա IV—V (այստեղ՝ V—VI) և II (այստեղ VII) տները։ (Տե՛ս այդ տաղի ծանոթագրությունը)։

16—20-րդ տողերը «Մանանայի» հիմք հանդիսացած ձեռագրում, ըստ երևույթին, խանգարված ու թերի են եղել և հրատարակիչը վերակազմել է տունը՝ ավելացնելով նոր բառեր։ Ահա այդ տունը «Մանանայ»-ում.

Բացէն ասեմ, ճարակ չը կայ,
մեղաց ներքև եմ, հայիմ ի քեզ,
Հայիմ ի նա, որ ի հոգւոյ
այդքան չքնաղ ստեղծեր է զքեզ։

Տողերը վերակազմված են, ընդգծված բառերը ավելացված՝ տողում բացակայող Մահու մեղաց բառերի փոխարեն։

Ինչպես երևում է մեծատառերի գործածությունից, հրատարակիչը տաղը պատկերացրել է 16 վանկանի երկտողերով։ Այդպես է հրատարակված նաև «Արեգ»-ում։

Երկրորդ անգամ, մի այլ, դարձյալ խանգարված օրինակի հիման վրա, հրատարակել է Տևկանցը «Հայերգ»-ում (էջ 59—61), որտեղ ունի 14 տուն, ըստ որում դրանցից այս տաղինն են I, V, VI, VII, VIII և IX տները։ II տունը «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» սկզբնատողով տաղի IV տունն է, III-ը՝ նույն տաղի VI և IV-ը՝ VII տունն է (տե՛ս այդ տաղի ծանոթագրությունը)։ X տունը կազմված է «Հազար ուսուֆ է...» սկզբնատողով տաղի I տան վերջին և II տան առաջին երեք տողերից. XI-ը՝ նույն տաղի II տան և III տան տողերից աղավաղված ձևով, որ դարձել է 4 տող. XII տունը նույն տաղի IV, XIII-ը՝ V և XIV-ը՝ VI տներն են։

Կ. Կոստանյանցը Թլկուրանցու ժողովածուում այս տաղը հրատարակել է «Մանանայի» և «Հայերգի» օրինակների հիման վրա. հիմք ընդունելով «Մանանայի» օրինակը, ներքևում գրել է «Հայերգի» տարբերությունները։ Նկատելով, որ «Հայերգի» օրինակը «իսկապես երկու մասից է բաղկացած, ինչպես երևում է երգչի անվան կրկնությունից երկրորդի մեջ» («Հովհ. Թլկուրանցին և յուր տաղերը», էջ 30), Կոստանյանցը՝ «Մանանայի» օրինակի համեմատությամբ՝ ավելի տներից

կազմում է մի նոր տաղ, որով և առաջացել է Թլկուրանցու ժողովածուում գրված «Ասի՝ սիրի գլխ, ծով աչեր» սկզբնատողով տաղը, որը իրապես ոչ թե առանձին տաղ է, այլ այստեղ հավաքված են «Տեսայ պատկերք մի գեղեցիկ»-ի IV, VI, VII տները և «Հազար ուսուֆ է...»-ի վերջին տունը (Կոստանյանցին անծանոթ են եղել այդ տաղերը):

Կոստանյանցը բաց է թողել «Հայերգի» օրինակի երեք տողը, «որ կապ չունի ամբողջի հետ. այդ տողերն են՝ «Շուշան, ռահան ու մանուշակ, Ու նոնոֆար ու սիրկևիլ, Նուռն ու նարինջ-ու կարմիր վարդ» (Նույն տեղում, էջ 30): Սրանք «Հազար ուսուֆ է...»-ի III տան 3 տողերն են:

Կոստանյանցի հրատարակությունից էլ այս քառատուն՝ հրատարակչի հորինած «տաղը» մտել է հետագա հրատարակությունների մեջ (տե՛ս օրինակ, «XII—XVIII դդ. հայ աշխարհիկ գրականություն», էջ 87):

№ 6159 (n) ձեռագիրը ևս ունի տաղս 3 տնով. առաջին տնից հետո այստեղ մտել են «Տեսայ պատկերք մի գեղեցիկ»-ի IV, VI և VII տները, հենց այն տները, որոնք մտել էին նաև «Հայերգի» տարբերակում և Կոստանյանցի ձեռքով դարձել առանձին տաղ:

№ 7712 (v) ձեռագրում վերջին տան մեջ իբրև հեղինակ գրված է «Միգիդ Նախչիվանցի»-ն. սա, որ ձեռագրի գրիչն է, կեղծել է և ինչպես այս, այնպես էլ այլ տաղերի «հեղինակ» հանդես եկել (այդ մասին տե՛ս նաև նախորդ երկու ծանոթագրությունները):

Ծանոթագրվող տաղի մի օրինակը ունի Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 343 գրչագիրը, էջ 257ա, ընդամենը մեկ տուն. իսկ 257բ-ում «Տաղ սիրոյ» վերնագրով իբրև նոր տաղ գրված է սրա շարունակությունը՝ «Ես կու սիրեմ սրտովս դքեզ, Դուն ըզվիմերն խորտակես» և այլն (Տաշյան, Ցուցակ, էջ 793): Ինչպես երևում է, այստեղ ևս տաղը խանգարված է: Մի այլ օրինակ էլ ունի նույն Մատենադարանի № 344 Տաղարանը (տե՛ս նույն տեղում, էջ 794), որ կցված է «Ար'եկ ար'եկ...» տաղին:

Ն. Ակինյանը «Արեգ»-ում հրատարակած Թլկուրանցու վեց տաղերից միայն մեկի՝ առաջինի («Ար'եկ, ար'եկ...») մասին է հայտնում, թե որտեղից է քաղել (Վիեննայի Մխ. մատենադարանի №№ 343 և 344 գրչագրերից), մնացածների աղբյուրների մասին որևէ տեղեկություն չի տալիս. հավանական է, որ նա բոլոր տաղերն էլ հանել է նույն ձեռագրերից. ըստ Տաշյանի Ցուցակի բոլոր տաղերն էլ կան այդ ձեռագրերում:

№ 1990 (=F) գրչագիրը գործնական վերջավորությունը տալիս է «օվ», որ ինչպես այստեղ, այնպես էլ մյուս տաղերի այլընթերցումներում չենք նշանակել: Չենք նշանակել նաև V ձեռագրի

(№ 7712) տված՝ դիմային վերջավորությունների կամ օժանդակ բայի «էս» ձևերը, իբրև անարժեք և գրչի տգիտության արդյունք հանդիսացող այլընթերցումներ. V ձեռագիրը, որ 19-րդ դարի է, գրված է առհասարակ շատ անգրագետ, գրիչը՝ «Միգիդ Նախչիվանցի»-ն էլ ուրիշի տաղերը սեփականել է իր անունը մտցնելով տաղերի մեջ:

Դ

«Հազար ուսուֆ է քեզ ծառայ»

«Արեգ»-ում Տաղասերի (Ն. Ակինյան) կողմից հրատարակված վեց տաղերից մեկն է (1924 թ., էջ 518): Թե ինչ «ձեռագիր և տպագիր աղբյուրների համեմատությամբ և նրանց համաձայն» («Արեգ», 1924 թ., էջ 473) է «վերականգնել» հրատարակիչը տաղի բնագիրը՝ մեզ հայտնի չէ: «Ար'ե'կ, ար'ե'կ իմ խուպ սուրաթ» տաղի համար նա ծանոթագրության մեջ հայտնում է, որ հանել է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի №№ 343 և 344 ձեռագրերից: Այս տաղի համար ևս, հավանաբար, նա օգտագործել է № 343 ձեռագիրը, ուր, ըստ Տաշյանի Ցուցակի, թղթ. 258ա-ում «Այլ բանք Յովանիսի» խորագրով կա այս տաղը:

1876 թ. «Մանանայ»-ում հրատարակված «Արևնըման շողշող կտան» սկզբնատողով տաղի մեջ մտել են ծանոթագրվող տաղի երեք տները՝ 2-րդ, 4-րդ և 5-րդ. համապատասխանաբար իբրև այն տաղի 7-րդ, 5-րդ, 6-րդ տներ: «Մանանայ»-ում նշված տաղի մեջ մտած (որ գալիս է հրատարակության հիմք հանդիսացած ձեռագրից) տների այլընթերցումները դրել ենք տողատակում m պայմանական նշանով:

Նույն այդ «Արևնըման շողշող կըտան» տաղի «Հայերգի» օրինակի մեջ ևս կան սրա տներն ու տողերը: Այսպես՝ 1-ին տան վերջին և 2-րդ տան առաջին 3 տողերը կազմում են նրա 10-րդ տունը, 2-րդ տան վերջին և 3-րդ տան 1, 2 և 4 տողերը խանգարված ձևով՝ կազմում են 11-րդ տունը, 4-րդ տունը՝ 12-րդը, 5-րդը՝ 12-րդը և 6-րդը՝ վերջին՝ 16-րդ տունը: Սրանց այլընթերցումները ևս տրված են տողատակում H պայմանական նշանով: Կ. Կոստանյանցի կողմից՝ «Արևնըման շողշող կտան» տաղի «Մանանայի» և «Հայերգի» տեքստերի մեջ եղած չհամընկնող տներից կազմած «Ասի՝ սիրէ գլխ, ծով աչեր» տաղի վերջին տունը սույն տաղի 6-րդ տունն է (տե՛ս «Արևնըման շողշող կըտան» և «Տեսայ պատկերք մի գեղեցիկ» տաղերի ծանոթագրությունները):

Ծանոթագրվող տաղի 13-րդ տողը բառացի նույնն է «Ար'ե'կ, ար'ե'կ...»-ի 13-րդ տողի հետ:

«Արեգ»-ում հրատարակված է 16 վանկանի տողերով:

Ե

«Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրուք»

Այս «չոյժ ազնիւ», ինչպես վերնագրում արտահայտվում է գրիչներից մեկը, տաղը հրատարակությունների մեջ հանդես է գալիս խաթարված ու աղավաղ ձևով:

Ձեռագրերում, բացի № 7712 (=V)-ից, և 1513 թ. տպագիր Տաղարանում այն միշտ նախորդում է «Լոյս երեսացդ է...» տաղին:

Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 6159 (=n) ձեռագիրը նույնպես ունեցել է այդ տաղերը իրար ետևից, բայց ձեռագրում նրանց մեջտեղից մի թերթ պոկվել ընկել է (այն թերթը, որ իր վրա ունեցել է «Հանցկուն այլ ո՞վ...»-ի 12—20 և «Լոյս երեսացդ է...»-ի 1—4 տողերը. այդ թերթից մնացել էր մի փոքրիկ կտոր, որ ուներ «Լոյս երեսացդ է...»-ի առաջին տողի վերջին՝ փափաք բառը), և երկու տաղն էլ խաթարվել են ու խառնվել միմյանց՝ մի տաղի սկիզբը միացել է մյուսի շարունակությանը:

Եվ ահա, ամենայն հավանականությամբ, այս ձեռագրից (առավելն՝ սրա ընդօրինակությունից) Տևկանցը «Հայերգ»-ում հրատարակել է այն՝ խաթարված ու խառնված ձևով (էջ 61—62): Ձեռագրում առաջին տան 4-րդ տողի «զխելքս էառ» բառերը դժվարընթեռնելի են, Տևկանցը չի կարողացել կարդալ և բաց է թողել կետեր դնելով, իսկ «քաղեց ու» բառերը կարդացել է «քաշեցու»: 2-րդ տան վերջին երեք տողերը ձեռագրում գրեթե անընթեռնելի են, որովհետև թերթերը խոնավությունից կպած են եղել իրար, հետո պոկել են, որով եղծվել են մի շարք տողեր: Այդ տողերը, չկարողանալով կարդալ, Տևկանցը բաց է թողել, իսկ այդ տան առաջին տողը միացրել է 1-ին տանը՝ սա դարձնելով 5 տողանի: 3-րդ տան վերջին տողի Ով բառով ձեռագրում վերջանում է էջը, իսկ շարունակությունը՝ մյուս էջի վրա՝ «Լոյս երեսացդ է...»-ի 2-րդ տունն է. Տևկանցը դրել է Ով բառը կետերով, զգալով, որ դա մի տողի սկիզբն է, որի շարունակությունը բացակայում է:

«Հայերգի» էջ 45—46-ում, մի այլ ձեռագրից Տևկանցը հրատարակել է «Լոյս երեսացդ է...» սկզբնատողով տաղը. ուշադիր լինելու դեպքում կարելի էր նկատել, որ այս երկուսի մեջ ընդհանուր տներ կան, որով և կարելի էր անջատել ծանոթագրվող տաղի մասերը:

Յուրօրինակ կերպով է վարվել Կ. Կոստանյանցը. Նա ձեռքի տակ չի ունեցել այս երկու տաղերի նոր ընդօրինակություններ-ձեռագրեր և անծանոթ լինելով «Հանցկուն այլ ո՞վ...» տողով սկսվող տաղի գոյությանը, ենթադրել է, թե «Հայերգ»-ում հրատարակված 4 տուն ընդհանուր ունեցող երկու տաղերը միևնույն տաղի տարբերակներն են,

«վերականգնել» է տաղը և «Հովհ. Թլկուրանցին և յուր տաղերը» ժողովածուում հրատարակել է «Հայերգ»-ում տպված երկու տաղերը, իբրև... մի տաղ: Նա «Լոյս երեսացդ է...» տաղին միացրել է «Հանցկուն այլ ով...»-ի «Հայերգ»-ում տպված առաջին հինգ և 3-րդ տան 3 տողերը՝ դնելով «Լոյս երեսացդ է...»-ի 1-ին տնից հետո՝ ապա վերջին տաղի շարունակությունը, որ ընդհանուր է «Հայերգի» երկու (էջ 45—46 և 61—62) օրինակներում: Այսպիսով ստեղծվել է մի նոր տաղ, որ հեղինակային բնագրից շատ հեռու է: Կոստանյանցի հրատարակությունից էլ այս տաղը խանգարված ձևով մտել է հետագա հրատարակությունների մեջ (տե՛ս օրինակ՝ «XIII—XVIII դդ. հայ աշխարհիկ գրականություն», Երևան, 1938, էջ 88):

Երկու տաղերի խառնված լինելը առաջին անգամ նկատել է Ն. Շահազիզը:

Մոռոզյան Տաղարանի (այժմ մեր Մատենադարանի ձեռագիր, № 9271) մասին խոսելիս նա «Պատկերներ»-ում գրում է. «...մենք մեր Տաղարանում գտնում ենք այլ ևս մի տաղ «Հնցկուն այլով տեսեր զմրութ», որ նույնպես կարելի է նոր, չհրատարակված համարել, եթե միայն ի նկատի չառնենք դորանից առնված այն մի քանի տողը, որ մենք չենք հասկանում, թե ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով են ընկել արդեն իսկ հրատարակված «Լոյս երեսացդ է խիստ փափուկ» տաղերի մեջ: Իսկ որ «Լոյս երեսացդ է խիստ փափուկ» տաղի մեջ հիշյալ քանի տողը եկամուտ են, առնված «Հնցկուն»-ից,— այդ երևում է այն հանգամանքից, որ այդ «Լոյս երեսացդ է խիստ փափուկ» տաղը գտնվում է և մեր Տաղարանում, բայց չունի յուր մեջ այդ տողերը» (էջ 139. ապա բերում է այդ ձեռագրում եղած ընդօրինակությունը):

Թե ինչպես է եղել այդ՝ մենք վերևում բացատրեցինք:

Տե՛ս նաև հաջորդ ծանոթագրությունը:

Զ

«Լոյս երեսացդ եմ քո փափաք»

Հրատարակվել է նախ «Հայերգ»-ում 1883 թ.: Այստեղ տպագրված է երկու տարբերակով՝ էջ 45—46-ում և 61—62-ում. վերջինում կա նույն տաղի միայն 4 տունը՝ իբրև շարունակություն «Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրութ» տաղի երկու տների. բացակայում է առաջին քառատողը: Այդպես խառնված են նաև № 6159 ձեռագրում: Թե ինչպես են այս տաղերը խառնվել իրար՝ տե՛ս նախորդ ծանոթագրության մեջ:

«Հայերգ»-ում և № 6159 ձեռագրում «Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրուխտ» տաղի հետ խառնված օրինակներում պահպանված են տաղիս 5—20 տողերը. սրանց այլընթերցումները տողատակում տրված են համապատասխանաբար H_1 և n պայմանական նշանների տակ:

Կ. Կոստանյանցի հրատարակության մեջ ի մի են ձուլված «Լույս երեսացդ է...» տաղը ամբողջությամբ և «Հանցկուն այլ ո՞վ...»-ի 8 տողը (տե՛ս նախորդ ծանոթագրությունը): Այստեղից էլ այսպես աղավաղ ձևով տաղը մտել է հետագա հրատարակությունների մեջ:

Ձեռագրական տվյալների հիման վրա մենք վերականգնել ենք այս երկու տաղերը իրենց ամբողջության մեջ:

Այս տաղի մի ընդօրինակությունն էլ պահպանված է Վիեննայի Մխիթարյանների № 343 ձեռագրում (Տաշյան, Ցուցակ, էջ 713):

Տաղիս առաջին տունը անհասկանալի է. այնպես է խանգարված, որ դժվար է վերականգնել իսկականն ու հասկանալին:

Տող 1. Ձեռագրերի մեծ մասը տալիս է «Լույս երեսացդ է քո փափար», միայն երեք ձեռագիր ունեն «Լույս երեսացդ էմ քո փափաք». մենք փոխեցինք եմ, թեև հնարավոր է, որ է-ն արդեն խանգարված տողի իմաստի թելադրանքով դարձած լինեն էմ՝ ավելացնելով մ, առանց է-ն ե-ի փոխելու, ուստի և նախնականը պետք է, որ եղած լինի է: «Փափար» ձևը գերադասեցինք դնել, նկատի ունենալով, որ թերևս պապակ բառն է արևմտահայ արտասանությամբ:

Տող 7. քուստիկ բառը ամենայն հավանականությամբ «քուսխթա»-ն է՝ «կնգուղ, վեղար»: «Հայերգի» օրինակներում (HH_1) կա «կոստիկ» փխ. «քուստիկ»—ձեռագրերի հիման վրա արդյո՞ք:

Է

«Թէ մահն չէր ու կամ մեռնիլ»

Առաջին անգամ լույս է տեսել 1882 թ. «Հայերգ»-ում (էջ 62—63). Կ. Կոստանյանցը Թլկուրանցու ժողովածուում արտատպել է այն, ձեռքի տակ չունենալով այլ ձեռագիր:

A (=9271), B (=7715) և F (=1990) ձեռագրերում գրված է «Լույս երեսացդ...» սկզբնատողով տաղից հետո՝ իբրև նրա շարունակություն, առանց բաժանման նշանի. F ձեռագրում հետագայում գծիկ է դրված բաժանման համար, A-ում, որ Մոռոզյան կոչված տաղարանն է և պատկանել է Երվանդ Շահազիզին՝ վերջինս ծանոթագրվող տաղի կողքին գրել է՝ «Այլ տաղ», իսկ B-ում, որտեղ տողերը համարակալված են՝ չունի համար:

Այս երեք ձեռագրերում էլ ունի ընդամենը 4 տուն, պակասում է նախավերջին տունը, որ դուրս է ընկել, հավանաբար. այդ տան և նախորդ՝ 3-րդ տան վերջին երկու տողերի գրեթե նույնը լինելու պատճառով:

Այս տաղը «Լույս երեսացդ...» սկզբնատողով տաղի շարունակությունը չէ, տարբեր, առանձին տաղեր են, ամեն մեկը իր վերջին տնով, որտեղ կա հեղինակի անունը. միևնույն տաղի մեջ հեղինակի անունը երկու անգամ չէր կրկնվի:

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 343 ձեռագրում կա տաղիս մի օրինակը, «Այլ բանք Յովանիսին» խորագրով, սկիզբ. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ», «Ես անէի շատ բան հոգալու». վերջը՝ «Յովանէս Թուլկուրանցի», «մի դներ զքեզ պիղծ բաներու» (Տաշյան, Ցուցակ, էջ 792):

Ը

«Ահա եղև պայծառ գարուն»

Առաջին անգամ հրատարակել է Տևկանցը «Հայերգ»-ում (էջ 46): Կ. Կոստանյանցը Թլկուրանցու ժողովածուում տպագրել է համեմատական տեքստ՝ Հայերգի և «Ձեռ. Տաղարան 1695 թ.» տարբերակների համեմատությամբ: Այս վերջին ձեռագիրը այժմ գտնվում է մեր Մատենադարանում՝ 7717 համարի տակ, որ և օգտագործել ենք համեմատական տեքստը կազմելիս:

Հրատարակվել է նաև «Սիոն» ամսագրում (1955 թ., էջ 87):

Տող 2—Ձեռագրերից 4-ը ունեն Ծաղկանց ազգին, միայն 1513 թ. Տաղարանը՝ Ծաղկեաց այգին: Մենք գերադասեցինք տեքստում դնել վերջինը, թեև հասկանալի է և կարող է եղած լինել նաև՝

Ահա եղև պայծառ գարուն
Ծաղկանց ազգին ու բաղչենին (=բաղչենուն):

Տող 10-ից հետո թվում է, թե տողեր են պակաս, քանի որ նախորդ և հաջորդ տողերի միջև իմաստային կապ չկա: Բոլոր տարբերակները, սակայն, այդ կերպ են պահպանել տաղը:

Վենետիկի Մատենադարանի № 559 ձեռագրում, գրված 1469 թ., Հովհաննես Թլկուրանցու անունով երկու տաղ կա, որոնցից մեկը «Այսօր եղև պայծառ գարուն» սկզբնատողով, որ Կ. Երզնկացունն է:

Մ. Պոտուրյանը այս կապակցությամբ գրում է. «Ս. Ղազարու Մատենադարանին մէջ 559 թիվ ձեռագիրը, որ քերթվածներու հավաքում մ'է, Հովհաննես Թլկուրանցվույն անվամբ երկու քերթվածներ կը պարունակե, որոնց առաջինն է «Այսօր եղև պայծառ գարունն», ււա խորագրով՝ «Յովհաննէս Թուրգուրանցոյ ասացեալ վասն յարութեան Քրիստոսի», որ կը գտնվի ձեռագրին 12-րդ էջին և կը վերջանա յէջ 15: Սույն քերթվածը Կ. Երզնկացվույն գրչեն ելած է և գրիչներու ակամա կամ կամա խարդախությանց միակ զորավոր փաստ մ'է այս դեպքը: Ձեռագիրս օրինակողը Հովհաննես Թլկուրանցվույն ժամանակակից ըլլալով իսկ՝ ուրիշին գործը անոր կընծայե» («Կոստանդին Երզընկացի և յուր քերթվածները», Վենետիկ, 1905, էջ 39—40):

Պոտուրյանը իրավացի է, որ այդ տաղը Կոստանդին Երզնկացունն է, որովհետև նրա մի այլ տարբերակը գտնվում է 1336 թ. Ամիր Փոլինի կողմից գրված ձեռագրում:

Սակայն, մեր կարծիքով Կոստ. Երզնկացու սույն տաղի վերագրումը Հովհաննես Թլկուրանցուն որևէ «ակամա խարդախության» հետևանք չէ: Այստեղ կարող էր դեր խաղացած լինել Կոստանդինի տաղի և Թլկուրանցու ծանոթագրվող տաղի առաջին տողերի գրեթե նույնությունը՝ «Այսօր եղև պայծառ գարուն» (Երզնկացի) և «Ահա եղև պայծառ գարուն» (Թլկուրանցի):

Բայց հիմքեր կան նաև այլ ենթադրության համար: Գոյություն ունի այս տաղի նույն սկզբնատողով սկսվող մի այլ շատ փոփոխված, մշակման ենթարկված տարբերակը (տե՛ս «Կոստանդին Երզընկացի և յուր քերթվածները», էջ 179 և հտ.): Նրա վերջին տան մեջ հիշվում է «Յակոբ»-ը (Արծկեացին) իբրև տաղի երգիչ.

> «Ինձ ողորմի դուք ասացէք,
> Երգող բանիս Յակոբ անուն,
> Եւ դուք յիշիք ի Քրիստոսէ
> Յորժամ գոչէ փողըն բարուն»:

«Դեռ երբ Կ. Երզնկացվո «Այսօր եղև պայծառ գարուն»-ը ինձ անծանոթ էր,—գրում է Պոտուրյանը,—ես այս Գ օրինակինը (այս տարբերակը—Էմ. Պ.) Յակոբին կը վերագրեի. բայց հետո բաղդատելով Կ. Երզնկացվո այդ քերթվածին հետ՝ բոլորովին նույն դտա իմաստներով, իսկ արտաքին ձևով շա՜տ տարբեր. ասկից ավելի փոփոխություն չի կրնար կրել երգ մը, որ Երզնկայեն, աշուղներու բերաններեն ճամփորդելով այդ «երգող Յակոբ» աշուղին բերնեն կընդօրինակվի» (Նույն տեղում, էջ 185):

Ընդունելի է Պոտուրյանի կարծիքը, որ այս տաղը Երզնկացու տաղի՝ բանավոր ճանապարհով՝ երգիչների «բերաններեն ճամփորդելով» փոփոխման, մշակման ենթարկված տարբերակն է:

Բավական մեծ տարբերություններ կան նաև «Այսօր եղև պայծառ գարունն» սկզբնատողով տաղի 1336 թ. ձեռագրում եղած և 1469 թ. ընդօրինակված՝ Թլկուրանցու անունը կրող տարբերակների միջև (այդ տարբերակները տե՛ս նույն տեղում, 110 և հտ.): Երկրորդում որոշ տներ ու տողեր պակաս են, բաց են թողնված բառեր կամ փոխարինված են այլ բառերով, կան վերադասավորություններ ու ետևառաջություններ, որոնք խանգարում չեն ստեղծում և գրչից չէին կարող լինել: Այդ տարբերությունները, ինչպես և վերոհիշյալ երրորդ տարբերակի գոյությունը ցույց են տալիս, որ «Այսօր եղև պայծառ գարունն» տաղը շատ տարածված է եղել, երգվել է ու ենթարկվել փոփոխության—մշակման բանավոր ճանապարհով: Ուստի և հնարավոր է, որ Թլկուրանցին եղել է տաղիս մի այլ երգիչը (տե՛ս սույն աշխատության էջ 31—33) և 1469 թ. ձեռագրում կամ սրա մայր օրինակում այն ընդօրինակվել է Թլկուրանցու բերանից:

Բոլոր պարագաներում Կոստանդին Երզնկացու տաղի Հովհաննես Թլկուրանցուն վերագրվելը 1469 թ., ասում է այն մասին, որ Թլկուրանցին այդ ժամանակ արդեն ճանաչված ու հայտնի տաղերգու-երգիչ էր:

«Ես ձեզ տեսայ սիրով նստած»

Առաջին հրատարակությունը եղել է 1883 թ. «Հայերգ»-ում (էջ 47—48): Կ. Կոստանյանցը Թլկուրանցու ժողովածուում հրատարակել է «Ձեռ. տաղարան 1647 թ.» և «Հայերգի» օրինակների հիման վրա, ներքևում գնելով այլընթերցումները: Մենք Կոստանյանցի հրատարակությունը վեր ենք ածել ձեռագրին և սրա տարբերությունները զետեղել տողատակ K պայմանական նշանով:

Ձեռագրերում և տպագիր աղբյուրներում (1513 թ. տպ. Տաղարան, «Հայերգ») առաջին տողում կան և՛ զձեզ և՛ զքեզ ձևերը. սակայն այն աղբյուրներում, որոնք ունեն զձեզ ձևը՝ տեքստում հետագա տողերում ունեն ունի (տող 5, 6) եզակի ստորոգյալը (որ կարելի է մտածել, թե եղել է ունիք), բայց նույն աղբյուրներում 18-րդ տողում գտնվում է Զքեզ: Միայն Կոստանյանցի մոտ է, որ հետևողականորեն կան զձեզ, ունիք, որ թերևս հրատարակիչը ինքն է ուղղել: Այնուամենայնիվ հարմար համարեցինք հետևել K-ին, ամենուրեք պահպանելով հոգնակի ձևերը:

Աղբյուրներում շատ խառնված են տաղիս 14—16-րդ տողերը. մենք գերադասեցինք հետևել T (1513 թ. Տաղարան)-ի և մի երկու ձեռագրի տված ընթերցումներին:

Տող 2—Բոլոր ձեռագրերը, բացի O-ից, ունեն արեգակներ: Հնարավոր է, որ O ձեռագրում Ախվերդյանն է (որի ձեռագիրն է O-ն) հանգ ստեղծելու համար դարձրել արեգակունք: Այնուամենայնիվ մենք նույն նպատակով տեքստում դրինք արեգակունք:

Առհասարակ ընդօրինակություններում տաղը շատ է փոփոխված և դժվար է վերականգնել բնագիրը:

Ժ

«Աղեկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես»

Կ. Կոստանյանցի հրատարակած «Հովհաննես Թլկուրանցի և յուր տաղերը» ժողովածուի մեջ չի մտել. հավանաբար բանասերին անծանոթ է եղել տաղը: Առաջին անգամ հրատարակել է Ա. Չոպանյանը՝ «Հայ էջեր», 1912 թ., էջ 25—26: Այստեղ հրատարակությունը կատարված է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 343 ձեռագրի[1] և Էջմիածնի Մատենադարանի № 1999 (=Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 1990) ձեռագրերի համեմատությամբ: 1924 թ. «Արեգ»-ում (էջ 714—715) տպագրվում է սույն տաղի մի նոր տարբերակը:

Քանի որ ձեռքի տակ ունեինք Ա. Չոպանյանի օգտագործած երկրորդ ձեռագիրը, մենք «Հայ էջեր»-ում դրված համեմատական տեքստը վերածեցինք Վիեննայի № 343 ձեռագրի և այլընթերցումներում նշեցինք (E_1 պայմանական նշանով) այդ ձեռագրի տարբերությունները:

Բացի հրատարակվող համեմատական տեքստի տակ նշված ձեռագրերից, այս տաղի միայն 8 տողը գտնվում է նաև Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 8255 ձեռագրի 98բ էջում. այլընթերցումները նշանակելիս զանց ենք արել այդ ձեռագրի տարբերությունները, որոնք որևէ նորություն չէին տալիս:

№ 6159 (=Ո) ձեռագրի գրիչը (°) 20-րդ տողի վերջում ավելացրել է «Լօ (=լաւ) տաղ է», իսկ 32-րդ տողի վերջում՝ «Լօ (լաւ) ասացաւ», արտահայտելով իր հիացմունքը տաղի բովանդակության նկատմամբ, թերևս սիրահարված մարդու իր զգացումները:

Սույն տաղը տեքստում Թլկուրանցու անունը չունի և վերնագրերում կրում է «Այլ բանք Յովանիսին», «Տաղ սիրոյ Յովանէսին» և այլն: Ա. Չոպանյանը գրում է. «Հովհաննես Թլկուրանցիինը պետք է ըլլայ, որովհետև սույն (Վիեննայի № 343—Էմ. Պ.) ձեռագրին մեջ այս տաղին կը հաջորդե «Այլ բանք Յովհանէսին» տիտղոսով հայտնապես

[1] Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 790—793: Այս ձեռագրում կան Թլկուրանցու մի շարք տաղերը, մի քանիսը կրկնակի գրված տարբեր էջերում:

Թուլկուրանցվույնը եղող և Կոստանյանի հատորին մեջ հրատարակված «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ» տաղը («Հայ էջեր», էջ 25):

Չոպանյանի ենթադրությունը հավաստվում է նույն բնույթի նոր փաստերով: Տաղս Թլկուրանցու տաղերի շարքում է գտնվում 1513 թ. Տաղարանում՝ «Ես ձեզ տեսայ սիրով նըստած» սկզբնատողով սկսվող տաղից հետո և «Նորին Յովանիսի ասացեալ է. վասն ս͞ր Յովաննու գլխատման» խորագրով տաղից առաջ: Այստեղ Թլկուրանցու 16 տաղից և ոչ մեկը խորագրում «Թլկուրանցի» անունը չունի. Նրա այն տաղերը, որոնք Տաղարանում իրար ետևից չեն դրված՝ ունեն «Յովանիսի է ասացեալ» խորագրերը, իսկ մյուսները, որոնք իրար ետևից են դրված՝ ունեն «Այլ բանք Յովանիսի», այդ թվում և սույն տաղը:

Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագրերում ևս այն գտնվում է Թլկուրանցու՝ տեքստում հեղինակի անունը ունեցող տաղերի շարքում (№№ 7715, 9271 ձեռագրերում՝ «Ես ձեզ տեսայ սիրով նըստած» տաղից հետո, «Գենայ բահար...»-ից առաջ, №№ 6159, 2398 ձեռագրերում՝ «Ես ձեզ տեսայ...» տաղից հետո, № 1990 ձեռագրում՝ «Արինըման...» տաղից հետո, «Գենայ բահար...» տաղից առաջ և այլն): Ուրեմն՝ «Այլ բանք Յովանիսին» և նման խորագրերում խոսքը Հովհաննես Թլկուրանցու մասին է:

Եթե նկատի ունենանք նաև, որ գոյություն է ունեցել մեր հեղինակի տաղերի հավաքածու (տե՛ս սույն գրքի էջ 110—111), որ ընդգրկել է և այս տաղը՝ պետք է չտարակուսել, որ այս գեղեցիկ բանաստեղծությունը Թլկուրանցունն է:

Տաղս գտնվում է նաև Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 8908 ձեռագրում, որը 19-րդ դ. II կեսում գրված մի մեծադիր մատյան-տաղարան է՝ ընդօրինակված այլ և այլ ձեռագրերից: Այստեղ քերթվածը ունի «Այլ բանք Պետրոսի Երեցու» խորագիրը:

«Սիոն» ամսագրում (1956 թ., էջ 75—77) տպված է Թլկուրանցու տաղերի Հավելվածում, իբրև երկբայական:

Տող 32—բոլոր ձեռագրերը տալիս են «ազգըս», միայն Ո (6159) ձեռագիրը՝ «յազգս»: Իմաստի թելադրանքով դրեցինք «յազգըս»: Սակայն թերևս հեղինակը «ազգըս» գործածած լինի առանց նախդրի նախդրավոր իմաստով, բայց այս վերջին դեպքում չի հասկացվել, այդ պատճառով էլ F ձեռագիրն ունի՝ «ծառայ են գքեզ» («ծ͞այն գքեզ»):

ԺԱ

«Յանկարծակի մէկ մի տեսայ»

Համեմատական տեքստը հրատարակվում է առաջին անգամ: Եր. Շահազիզը «Պատմական պատկերներ»-ում (1911 թ., Թիֆլիս) նոր նա-

խիջևանի ձեռագրերի մասին խոսելիս, նկարագրում է նաև Մանուկ Մոբողովից ստացած Տաղարանը, հատկապես կանգ առնելով Թլկուրանցու տաղերի վրա: Այստեղ նա բերել է նաև ծանոթագրվող տաղը: Այսպիսով՝ առաջին անգամ հրատարակվել է 1911 թվականին: Անկախ ու առանց ծանոթ լինելու այս տպագրությանը, սույն տաղը 1912 թ. հրատարակել է Ա. Զոպանյանը «Հայ էջեր»-ում՝ «Էջմիածնա ձեռ. 1999»-ից: Շահազիզի Տաղարանը այժմ Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 9271 ձեռագիրն է, իսկ Զոպանյանի օգտագործածը՝ № 1990-ը: Այս երկու ձեռագրերն էլ, մեր Մատենադարանում գտնվող երրորդ՝ № 7715 ձեռագրի ընդօրինակության հետ միասին, օգտագործել ենք համեմատական տեքստը պատրաստելիս: Երկու հրատարակություններում էլ կան բնագրերից շեղումներ ու սխալներ, որ մենք, բնականաբար, զանց ենք առել ու չենք նշել այլընթերցումներում:

ԺԲ

«Աչերդ է թուխ ու պէտ»

Առաջին անգամ հրատարակվել է «Մանանայ»-ում, ապա «Հայերգ»-ում, ըստ որում հրատարակությունները կատարված են տարբեր ձեռագրերից: «Մանանայ»-ում ունի ընդամենը 32 տող. բացակայում են 22, 28—29 և 36-րդ տողերը: Տողերի պակասը գալիս է, հավանաբար, հրատարակության հիմք հանդիսացած ձեռագրից, քանի որ նույն 22 և 36-րդ տողերը բացակայում են նաև մեր օգտագործած՝ ՀՍՍՌ Մատենադարանի № 5668 (D) ձեռագրում: Այս ձեռագրի և «Մանանայի» տարբերակները այլընթերցումներում էլ հաճախ համընկնում են, բայց և ունեն տարբերություններ:

Կ. Կոստանյանը Թլկուրանցու ժողովածուում հրատարակել է ծանոթագրվող տաղի համեմատական տեքստը՝ կազմելով «Մանանայի» և «Հայերգի» տարբերակների հիման վրա. նոր ձեռագիր ձեռքի տակ չի ունեցել: Նա տաղի ներքևում նշանակել է «Հայերգի» տարբերակի այլընթերցումները, բայց, ինչպես ցույց տվեց համեմատությունը՝ ոչ բոլորը. չի նշանակել նույնիսկ «Մանանայի» տարբերակի բացակայող տողերը, որ լրացրել է «Հայերգ»-ից:

Ծանոթագրվող տաղը միայն «Հայերգի» օրինակում է, որ խորագրում կրում է Թլկուրանցու անունը՝ «Յովհաննէս Թլկուրանցին ասաց», մնացածները չունեն: № 5623 (=C) ձեռագրում տաղը գտնվում է վերջին երկու թերթերի վրա, գրված է շատ տգեղ ու վատ գրչությամբ, բոլորովին տարբեր ձեռագրի մյուս մասերի գրչությունից, բայց նման իրենից վերև գտնվող տաղի գրչությանը, որ Թլկուրանցու «Աստուա-

ծածին Մարիամ...» սկզբնատողով տաղն է: Նշանակում է՝ այս ձեռագրի վերջին երկու թերթերում արտագրել են սույն բանաստեղծությունները մի ձեռագրից, որ ունեցել է Թլկուրանցու տաղերի մի խումբ:

Այս հանգամանքները, ինչպես և վերջին տան մեջ «Յովանէս» անվան առկայությունը հաստատում են տաղի Թլկուրանցուն լինելը:

C=№ 5623 ձեռագրի մեջ հետաքրքրող մասում շատ բառեր անընթեռնելի են, և ընդհանրապես սխալաշատ մի ձեռագիր է սա. ակնհայտ ու աննշանակ սխալ—այլընթերցումները, աղավաղումները տողատակում չենք նշանակել:

Տող 14-ը ունի 13 վանկ, մինչդեռ ամբողջ տաղը հորինված է 11 վանկանի տողերով. մեր ձեռքի տակ եղած աղբյուրների տվյալներով հնարավոր չի լինում ուղղել. թողնում ենք նույնությամբ:

Վերջին տողերից՝

«Սուրբ Կարապետ շատ կու խնդրեմ ըզքեզ՝
Զասօղքս և զլսօղքս ի չարէն փրկես»

Երևում է, որ Թլկուրանցին այս տաղի հեղինակը և միաժամանակ երգիչն է, երգել է՝ «ասել է», և խնդրում է «զլըսօղքս» ի չարէն փրկել: Այդ է ցույց տալիս և «Հայերգի» վերնագիրը՝ «Յովհաննէս Թլկուրանցին ասաց»: Սրանով ևս հաստատվում է Թլկուրանցու բանաստեղծերգող (երգիչ) լինելը:

ԺԳ

«Դու ես գարնանային վարդ ու բուրաստան»

Առաջին անգամ հրատարակել է Կ. Կոստանյանը («Հովհաննես Թլկուրանցի և յուր տաղերը», էջ 33—35), 1623 թ. գրված մի ձեռագրից: 1924 թ. «Արեգ»-ում (էջ 659—661) Տաղասերը (Ն. Ակինյան) տպագրել է նույն տաղը, որ «վերականգնել» է «ձեռագիր և տպագիր աղբյուրների համեմատությամբ և նրանց համաձայն» («Արեգ», 1924, էջ 473): Նման պարագայում այլընթերցումները լիարժեք չեն, մանավանդ, որ Տաղասերը չի նշանակում, թե ինչ ձեռագրեր է օգտագործել:

Կոստանյանցի հրատարակածը ունի ընդամենը 7 տուն, պակասում են 5-րդ, 7—9-րդ և 12-րդ տները:

Երկու տպագրություններում էլ խորագրերը, հավանաբար, հրատարակիչներինն են:

«Արեգ»-ում տաղիս կրկնակը գրված է միայն առաջին տան 5-րդ տողում և մյուսներում չի կրկնված. հայտնի չէ, թե ձեռագրի հիման վրա, թե՞ հրատարակողը այն կրկնակ չի համարել ու դուրս է թողել

(այդպես կարող էր մտածել, քանի որ առաջին տան մեջ կրկնակը հանդես է գալիս իբրև 5-րդ տող, երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ տներում՝ իբրև վեցերորդ, և ապա նորից իբրև 5-րդ տող. վերջին վեց տողից կազմված տունը չունի կրկնակ)։ Կրկնակի այլընթերցումները նշել ենք միայն մեկ անգամ։

Մեր օգտագործած Z (=№ 7709) ձեռագրում ծանոթագրվող տաղը թերի է՝ ձեռագրից թերթեր թափված լինելու պատճառով. ձեռագիրը վերջանում է սույն տաղի 7-րդ տողի առաջին բառի Հր տառերով։

Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 344 ձեռագիրը ունի տաղիս մի օրինակը հետևյալ խորագրով (ըստ Տաշյանի Ցուցակի). «Երգ Թլկուրանցւոյ ասացեալ վասն սիրոյ և ուրախութեան մարդկան» (Տաշյան, Ցուցակ, էջ 794)։

Տպագրված է նաև «Հայրենիք», 1935, հունիս, էջ 34 և «Սիոն», 1955, էջ 129—132։

ԺԳ

«Գինայ բահա՛ր, այլ ւ՚ ի բահա՛ր»

Առաջին անգամ տպագրվել է 1876 թ. Գ. Սրվանձտյանի կողմից «Մանանայ»-ում (էջ 269—272)։

Կ. Կոստանյանցը Թլկուրանցու ժողովածուում հրատարակել է «Մանանայի» և 1647 թ. գրված մի ձեռագրի օրինակի հիման վրա պատրաստած տեքստը («Հովհ. Թլկուրանցին և յուր տաղերը», էջ 25—28)։ Այս տեքստից մենք հանել ենք այն ձևերը, որ հրատարակիչը ներմուծել է «Մանանայ»-ից, տեղը դնելով ձեռագրի տված այլընթերցումները, որ հրատարակիչը նշանակել է տաղի ներքևում, այդպիսով ստանալով 1647 թ. գրված ձեռագրի տեքստը, որի տարբերությունները և մեզ մոտ նշանակված են k պայմանական նշանով։

Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները բաժանվում են երկու խմբի՝ №№ 5668 (=D), 3751 (=O) ձեռագրերի և «Մանանայ»-ի ու Կոստանյանցի հրատարակած 1647 թ. ձեռագրի (=k) օրինակների խումբ, և №№ 9271 (=A), 7715 (=B), 1990 (=F), ձեռագրերի օրինակների խումբ։

Առաջին խմբի DO ձեռագրերը և Կոստանյանցի 1647 թ. k ձեռագիրը ունեն 88 տող, իսկ M-ն՝ 76 տող, պակաս է երեք տուն։ Այլընթերցումներով համընկնում են D և M, O և k։

Երկրորդ խմբի A ձեռագիրը ունի 72 տող, B-ն, որի այս տաղը պարունակող 11աբ թերթի ներքևի անկյունը պատռված է, ունի 71

տող, իսկ F-ը՝ նույնպես թերի է և ունի ընդամենը 44 տող։ Այս երկրորդ խումբը մի նոր խմբագրություն է, ուր տողերն ու տները վերադասավորված են, այլև զգալիորեն փոփոխված. այսպես, օրինակ, 15—16-րդ տողերը առաջին խմբում այսպես են (առանց այլընթերցումների).

Այդ քո մատունքն է լուսեղէն,
Այլ արեգակն լուս չի տար։

Նույնը երկրորդ խմբում՝

Հանց լուսեղէն մատներ ունիս
Արեգական պէս լույս կու տայ։

26-րդ տողում ABF ունեն՝

Դու ի մէջն ծախշ ու նիգար

փոխանակ՝

Ծըպերդ ամէն մարգարտաշար։

Երկրորդ խմբի ձեռագրերում վերջին տան առաջին տողից, ինչ-ինչ պատճառներով, հանված է հեղինակի անունը և

Թուլկուրանցին զձեզ կաղաչէ

տողը դարձված

Զձեզ աղաչեմ ով իմ եղբայրք։

Համեմատական տեքստը կազմելիս հիմնականում հենվել ենք առաջին խմբի աղբյուրների վրա, նկատի ունենալով և երկրորդ խմբի ձեռագրերի տվյալները. առանձին դեպքերում գրել ենք երկրորդ խմբի աղբյուրների տվյալները, երբ դրանք ընագրային են թվացել։

ԺԴ

«Աստուած անսկիզբն և անսահման»

1941 թ. Հայկական ՍՍՌ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի № 1-ում (էջ 178—181), Աս. Մնացականյանը տպագրել է այս տաղի № 3498 (Л) ձեռագրի տարբերակը առանձին և 1513 թ. տպագիր Տաղարանի տարբերակը առանձին՝ վերջինիս տակ դնելով № 1990 ձեռագրում եղած հատվածի այլընթերցումները։ Աս. Մնացականյանը համեմատական տեքստ չի կազմել, «որովհետև միանգամայն դժվար է ծանոթությունների միջոցով տալ համեմատական տարբերությունների

իսկական պատկերը»,— գրում է նա (նույն տեղում, էջ 179): Մնացականյանը տաղը հրատարակել է քառատողերով, միաժամանակ նկատելով, որ առաջին տարբերակի «մի քանի տներում զգացվում է որոշ տողերի պակաս և տների վերակազմում», իսկ երկրորդում՝ «բանաստեղծության տները խառնված և տեղափոխված են»: Նրա այս դիտողությունները ճիշտ են, բայց նա հրատարակել է տաղը առանց վերականգնելու տների ու տողերի դասավորությունը: Տաղիս երկու տարբերակների հիման վրա հնարավոր է լինում վերադասավորել տողերը և հիմնականում վերականգնել բնագրային դասավորությունը:

Աղբյուրներում քառատողերի բառասկզբի առաջին տառի կարմիր լինելուց զգացվում է, որ տաղը պատկերացվել է քառատող տներով. իսկապես Л ձեռագրում այն ունի 104 տող=26 տուն, իսկ T-ում, 72 տող= 18 տուն, սակայն Л-ում բաց են թողնված 17—18 տողերը (որ ունի T-ն), որով դառնում է 106 տող, որ քառատող տների չի բաժանվում. այդպես էլ՝ T-ում բաց են թողնված 43—44 տողերը (որ ունի Л-ն), որով ստացվում է 74 տող և տների չի բաժանվում: Կարելի է կարծել, որ տաղը քառատող տներով հորինված չի եղել. սակայն միաժամանակ հնարավոր է, որ բաց մնացած լինեն ևս 2 (կամ՝ 6, 10 և այլն) տողեր (ամենայն հավանականությամբ 70-րդ տողից հետո), այդ դեպքում հնարավոր կլիներ բաժանել տների:

1513 թ. տպագիր Տաղարանի (T) տարբերակը ունի ընդամենը 72 տող, հետևյալ դասավորությամբ (մեր կողմից դասավորված տողերի համեմատությամբ)՝ 1—28, 33—42, 29—32, 49—74, 45—48: № 1990 (F) ձեռագրում շատ ավելի պակասավոր է. ունի 40 տող, հիմնականում համընկնում է T-ի հետ, չունի վերջինիս 37—40, 51—71 (մեր կազմած տեքստի տողերի համարակալմամբ) տողերը: Ունի այս դասավորությունը. 1—28, 33—36, 41—42, 29—32, 49—50: № 3498 (Л) ձեռագրում տաղը ունի 104 տող, հետևյալ դասավորությամբ. 1—8, 31—32, 13—14, 11—12, 9—10, 15—16, 19—30, 33—70, 75—110: Այս ձեռագրի այն մասում, ուր տեղավորված է տաղը, խոնավությունից էջերը կպած են եղել իրար և այժմ դժվարընթեռնելի է դարձել: Աս. Մնացականյանը տաղը հրատարակելիս չի կարողացել կարդալ մի շարք բառեր և ենթադրաբար է գրել ու տպել շղատառով. այդ բոլոր բառերը ընթերցվում են և ճշտվում. այսպես՝ 49-րդ տողում նա դնում է ծառայ, այնինչ ձեռագրում պարզ ընթերցվում է ծառոց, 56-րդ տողում միանի փխ՝ հասանի և այլն: Այս տպագրության մեջ երկու տարբերակներում էլ կան նաև հրատարակողի կողմից թեականով չդրված ոչ ճիշտ վերարտադրություններ:

Մենք այն կարծիքին չենք, որ ձեռքի տակ ունեցած աղբյուրներով հնարավոր է պատրաստել համեմատական-քննական տեքստ,

որը առավել մոտ լինի Թլկուրանցու գրածին. նման տեքստ պատրաստելու համար եղած աղբյուրները անբավարար են:

Բացի մեր Մատենադարանի ձեռագրերից ու 1513 թ. Տաղարանից, ծանոթագրվող տաղը կա նաև Վիեննայի Մատենադարանի № 343 ձեռագրում՝ «Տաղ զարնան» խորագրով, սկզբ. «Աստուած անըսկիզբ և անսահման, Անստանելի և անսահման, Զգարուն արար հանց պատուական» (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 793), և № 344 ձեռագրում՝ «Տաղ գարնան» խորագրով, սկզբ. «Աստուած անըսկիզբըն և անսահման, Անստանելի և անթարգման» (նույն տեղում, էջ 796): Այս օրինակների միջոցով թերևս հնարավոր լիներ պատրաստել ավելի անաղարտ տեքստ:

T (և F)-ում բացակայում են տաղի վերջին 32 տողերը, այդ թվում այն տողերը, որտեղ տրվում է հեղինակի անունը: Այս է պատճառը, որ բանասերները այն Թլկուրանցունը չեն համարել. նույնիսկ Գ. Լևոնյանը, որ տարբերում է բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցուն կաթողիկոս Հովհաննես Թլկուրանցուց, խոսելով Տաղարանի բովանդակության մասին, այն դնում է «մի շարք այլ տաղեր»-ի շարքում (Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 49):

Այս տարբերակում տողերի ետևառաջությունն ու պակասները ցույց են տալիս, որ տաղը երկար ժամանակ «կենցաղավարել» է մինչև տպագրվելը՝ 1513 թվականը: Ուստի անհիմն է Վ. Զարդարյանի կարծիքը, թե Հովհաննես Թլկուրանցին ինքը իր գրած բանաստեղծությունները ի մի է հավաքել և անձամբ տպագրել տվել իր բարեկամ Հակոբին (տե՛ս «Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 54): Եթե այդ ճիշտ լիներ, ապա տաղը պակասավոր ու խաթարված և առանց հեղինակի անունը կրող տողերի չէր լինի, ինչպես է Տաղարանում: Ընդհակառակը՝ տաղիս այս տեսքով առկայությունը Տաղարանում ցույց է տալիս, որ այն գրված է շատ ավելի վաղ, քան 1513 թվականը մի կողմից, և մյուս կողմից՝ տպագրվել է ոչ հեղինակի կենդանության օրոք, հակառակ Լեոյի կարծիքի, որն ասում է, թե Թլկուրանցին «հանդիսանում է առաջին հայ հեղինակը, որի գրվածքները տպագրվում էին նրա կենդանության ժամանակ» (Լեո, Հայկական տպագրություն, Թիֆլիս, 1904, էջ 22):

ԺԶ

«Է՜ մահ, քանի զքեզ յիշեմ»

Միջնադարյան ձեռագրերում ամենից շատ տարածված տաղերից մեկն է. մեզ է հասել երեք տասնյակի հասնող ընդօրինակություններով:

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ում (1959 թ., էջ 375)։ Երկրորդ հրատարակությունը կատարել է Ա. Վ. Տեկանցը «Հայերգ»-ում (էջ 135—137)։ Կ. Կոստանյանցը Թլկուրանցու ժողովածուում տաղի տեքստը հրատարակել է «Ձեռ. Տաղարան 1647 թ.», «Բազմավեպի» և «Հայերգ»-ի օրինակների հիման վրա։ Տաղի ներքևում դրված են տարբերությունները, որոնք, ինչպես ցույց տվեց համեմատությունը՝ խիստ թերի են, երբեմն ոչ ճիշտ և նշված են պատահական ընտրությամբ։

Կոստանյանցի հրատարակությունը մենք վերածել ենք ձեռագրի (նրանից հանելով «Բազմավեպի» և «Հայերգի» ընդօրինակությունների տեքստում մուծվածները) և տողատակի այլընթերցումների բաժնում k պայմանական նշանով ներկայացրել ենք 1647 թ. ձեռագրի տարբերությունները։

Հ. Ղևոնդ վ. Հովհանյանը «Միջնադարյան ազգային տաղաչափություն» (Վիեննա, 1911) գրքույկում, խոսելով Հովհաննես Թլկուրանցու մասին, մեջ է բերում «Նոր քաջին Լիպարտի»-ի հետ միասին այս տաղը ևս՝ «Թրատական կոչվածներեն, որ ամենայն հանգամանոք յուր (Հովհ. Թլկուրանցու—Էմ. Պ.) ընտրելագույն չափաբերական գրվածոց մին կրնա համարվիլ» (նշվ. աշխ., էջ 31)։ Տաղի տեքստը կազմել է 4 ձեռագրի հիման վրա՝ Վիեննայի մատենադարանի №«46՝ համեմատել այլ երեք օրինակաց հետ» (Նոր համարը 263, տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 677)։

Հովհանյանի հրատարակության տարբերությունները այլընթերցումների բաժնում ներկայացված են i պայմանական նշանով։ Հասկանալի է, որ դրանք 4 ձեռագրի չեն, այլ նրանց տված ընթերցվածների մի մասն են (օգտագործված ձեռագրերի ընթերցվածները Հովհանյանը չի նշանակել)։

Բացի տեքստը պատրաստելիս մեր օգտագործած ձեռագրերից, Հայկական ՍՍՌ Մատենադարանում կան մի քանի ձեռագրեր ևս, որ պարունակում են ծանոթագրվող տաղը։ Դրանցից № 7708-ը ունի ընդամենը 16 տող (էջ 46ա—46բ), 18-րդ դարի ձեռագիր է։ № 3228 ձեռագիրը 19-րդ դարի է. չունի տաղիս վերջին տունը (էջ 13ա—13բ)։ № 9362 ձեռագիրը սխալաշատ գրչություն է, դժվարընթեռնելի, չունի արժեքավոր ընթերցումներ (էջ 41ա—42ա)։ № 9536-ը ունի միայն առաջին 4 տունը՝ 16 տող, ինչպես № 7708 ձեռագրում, դարձյալ 19-րդ դարի ձեռագիր է։ № 7508 գանձարանը բացի մեր օգտագործած ընդօրինակությունից, 379բ էջում ունի այս տաղի առաջին տունը։ № 8710 գրչագիրը 157բ—159ա էջերում պահպանել է «Է՜ մահ...»-ի առաջին երկու տունը՝ միացած «Ջայս ինչ ի խոր խոցեցայ» սկզբնատողով մահերգի հետ։

№ 2483 ձեռագրում (էջ 283բ—284բ) տաղիս առանձին տներ միահյուսվել են նույն «Ջայս ինչ ի խոր խոցեցայ» մահերգի և այլ հորինվածքների առանձին տների հետ, և ստեղծվել է նոր ողբ։ №№ 8710 և 2483 ձեռագրերում եղած այդ ողբերը հրատարակել է Ա. Մնացականյանը «Միջնադարյան ժողովրդական երգեր» ժողովածուի ծանոթագրությունների մեջ (էջ 599—602)։ Տաղին հանդիպում ենք նաև Մաշտոցների մեջ՝ նույնպիսի փոփոխությունների ենթարկված, իբրև թաղման ծեսի ժամանակ ասվող մահերգ։

Այս ձեռագրերը նոր, կարևոր ընթերցումներ ու տարբերություններ չեն տալիս, այդ պատճառով էլ չենք օգտագործում, մանավանդ չծանրաբեռնելու համար առանց այն էլ ընդարձակ այլընթերցումների բաժինը։

Չենք օգտագործել նաև № 2482 (էջ 121ա) և № 9597 (էջ 255ա—256բ) ձեռագրերում եղած օրինակները՝ նույն պատճառով։

«Հայերգ»-ում տողատումը կատարված է ոչ ճիշտ. տողերը կիսված են ոչ ըստ հանգերի, ոչ էլ ըստ վանկերի քանակի, այլ պատահականորեն. օրինակ՝ 13—14-րդ տողերը տողատված են այսպես.

Ջինչ շահ իմաստութեանն քան զոգէտ
Աղքատ մեռայ ես։

Հ. Ղևոնդ վ. Հովհանյանի ուսումնասիրության մեջ (նախօրոք տպված «Հանդես ամսօրյա»-ի 1896 թ. համարներում) տաղը ներկայացված է 15 վանկանի տ ղերով և տողատումը կատարված է ըստ հանգերի, բոլոր տողերը վերջանում են միահանգ։

Սույն տաղը Թլկուրանցու ստեղծագործության մեջ հայրենի չափով գրված քերթվածներից մեկն է։ Մենք գերադասեցինք հրատարակել 7 8 վանկանի տողերով։

ԺԷ

«Քանի դատիս ի հետ մեղաց»

Առաջին անգամ տպագրված է Սրվանձտյանի «Մանանայ»-ում (էջ 266 267)։ Այստեղից արտատպել է Կ. Կոստանյանցը «Հովհաննես Թլկուրանցին և յուր տաղերը» ժողովածուում (էջ 44—45), «Ի վերայ մահուան» վերնագրով, որտեղից էլ մտել է այլ հրատարակությունների մեջ։

Համեմատական տեքստը կազմելիս օգտագործել ենք Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագրերը և «Մանանայ»-ի տարբերակը։

Տող 2. *Միայն* M (=*«Մանանայ»)-ն ունի «կատաղած», որ մենք պահել ենք համեմատական տեքստում, իսկ մյուսները՝ «կատարած». չենք կարող ասել «կատաղած» ընթերցումը ձեռագրային է, թե Սրվանձտյանն է «կատարած» փոխել «կատաղած». համենայն դեպս «կատաղած» հասկանալի է: Թերևս եղած լինի «արարած»:*

Տող 4-*ից հետո* C (=№ *5623) ձեռագիրը ունի հետևյալ տողերը.*

Գիտեմ չլսես խրատ գրոց.
Մեղաւորաց հուրն է վառած,
Կայ արդարոց արքայութիւն,
Փառք և պատիւ, պսակ փառաց:
Ինչպես դընեն պատճառ մահու.
Զայն քաջ գիտեմ, որ կա պահած:

Սրա առաջին երկու տողը համապատասխանում է տաղի 7-րդ և 8-րդ տողերին:

Տող 12. *Թեև նախադասության ենթական պահանջում է, որ լինի «հողուն է», բայց բոլոր ձեռագրերը տալիս են հոգնակի ձևով («հողուն են»). միայն «Մանանան» ունի «Հողուն է նա», որ կամ հրատարակիչն է ուղղել և կամ գրիչը՝ «են» դարձնելով «է նա»: Տեքստում վերջին ձևը դնելիս մեկ վանկ կավելանար, քանի որ հաջորդ բառը՝ «պառկած» երեք վանկանի է, և անպայման հեղինակի գրչի տակից դուրս եկած:*

Տող 13—20. C *ձեռագրում* IV *(տողեր 13—16) և* V *(տողեր 17—20) տների տեղերը փոխված են:*

Տողեր 21—32-*ի փոխարեն* C *ձեռագիրն ունի.*

Շատ մի մանկտիք մուրւագալի
Կամ թէ լինէր մուրուքն եկած,
Տեսայ զայն ճոխ պատկերքընին,
Որ էր ի հողըն շաղաղած:
Շատ մանկտիք, շատ պարոնայք
Մուրուքն յերեսն էր յաւրինած,
Հալաւն ամէն ոսկի թելով,
Քան զարեգակըն բոլորած:
Տես որ մեռան յանկարծակի,
Յանտաշ փայտի փայտըն դրած,
Անարգ դարձան ամենեքեան
Եվ յամենի աչաց ելան:
Դեռ այտ յետին համարըն չէ,
Յետին համարն է կատարած՝
Երբ խոնարհին երկինք ու՝ երկիր,
Քրիստոս նստի յաթոռ փառաց,

Արդարոցըն տայ պսակ
Փառք և պատիւ զանազանած,
Մեղաւորացըն չարչարանք
Եվ տարտարոս գուբն ողնեած:

C *ձեռագրի այս, ինչպես վերոբերյալ հավելում-փոփոխությունը հավանաբար ձեռագրի գրչի կամ մի ուրիշի ձեռքով է կատարված:*

Ծանոթագրվող տաղը հրատարակված է նաև «Սիոն» ամսագրում (1955 թ., էջ 191): Այստեղ տպագրված է սրա մի երկրորդ փոփոխակը ևս «նկատի ունենալով անոր պարունակած բազմաթիվ և ուշագրավ տարբերությունները»: Այդ փոփոխակը նույնությամբ բերում ենք ներքևում:

Քանի զատիս ի հետ մեղաց,
Ը՞ անգգամ մարդ կատարած,
Զանչափ չարիքդ որ գործեցիր,
Չերիք արայ, դարձ ի մեղաց:

Տես ու լսէ խրատու գրոց,
Մեղաւորացն ի՛նչ կա պահած,
Արդարոցն արքայութիւն,
Փառք ու պատիւ յորդախաղաց:

Բեր ու ձրգէ զահն ի մըտիդ,
Դու էլ գիտես ինչ կա պահած,
Յաղամայ մինչև այսօր,
Շունչ կենդանի զոք չէ թողած:

Էտ որ ունէր բերդ ու քաղաք,
Դարպաս ունէր ոսկով ծեփած,
Նայ մընացեր ամէն թերմաշ,
Ինքն է իջէր գուբ մի փորած:

Էտ որ հեծնէր ձի բարձրավիզ,
Ու թուր ածէր ամէն դիմաց,
Յետոյ եղև խիստ փոշիման,
Յերկու փետի մէջ պառկած:

Էտ որ խըմէր զանուշ գինին,
Զինքն բըտէր քան զխոզ ուռած,
Նա եղև խիստ ատելի,
Զինչ անպիտան գէշ մի ձըգած:

Շատ մի կտրիճ մուրայգալի,
Կամ թէ լինէր մորուքն էկած,
Տեսայ զէն գեղեցիկ սուրաթն,
Ի հետ հողուն է շաղըղած:

Շատ ազգըներ գեղեցկածամ,
Ուրենց վարսերն օրինած,
Հագնին հանդերձ ոսկի թելով,
Զինչ զարեգակն բոլորած։

Տես թ' ինչ եղած յանկարծակի,
Անտաշ ու՝ անկոփ փայտ մի ձըգած,
Ուրենց մահուն օրն ատելի,
Ուրենքն ամէն սրտի սիրած։

Դեռ այս յետին համարն չի,
Յետին համարն է կատարած,
Յորժամ ծագի խաչն ի յերկնից,
Նստի Քրիստոս յաթոռ փառաց։

Արդարոցն տայ պսակ,
Որ ճըգնեցան կացին ի լաց
Մեղաւորաց գհուր անշէջ,
Ըզտարտարոս գուբն որդանց։

Խև Յովանէս Թլկուրանցի,
Զհոգոյ մըտաց աչերդ բաց,
Ուղիղ սրտով խոստովանիր,
Ի' ապաշխարէ և կաց ի կաց։

(«Սիոն» ամսագիր, 1955 թ., էջ 191, քաղված Երուսաղեմի Մատենադարանի № 1900 ձեռագրից։ Նույնը տե՛ս նաև «Սիոն», 1952 թ., էջ 268)։

ԺԲ

«Թէ ըսկի չըկայ սուրբ վարդապետ»

Մահվան տաղերից մեկն է, բովանդակությամբ նման «Քանի զատիս ի հետ մեղաց» տաղին և առնչվում է «Հէ՜ մահ, քանի դքեզ յիշեմ»-ին։

Հրատարակվել է Երուսաղեմի № 1900 ձեռագրից «Սիոն» ամսագրում (1955 թ., էջ 275—276), որտեղից և արտատպում ենք։

ԺԳ

«Քեզ հոգևոր խրատ մի տամ»

Առաջին տպագրությունը եղել է «Կռունկ հայոց աշխարհին» հանդեսում 1863 թ. (էջ 66—67)[1]։ Երկրորդ անգամ, այլ ձեռագրից, հրատա-

[1] «Կռունկ»-ում հրատարակված ընդօրինակության մասին՝ այն խմբագրությանը ուղարկող Տ. Ս. Չիմիշկյանը հաղորդում է, թե քաղված է «չորս հարյուր տարվա» հնության մի ձեռագրից, «որի մեջ կան մինչև երկու հարյուրից ավելի աշխարհաբառ և գրաբառ տաղեր»։

րակել է Տեկյանցը «Հայերգ»-ում։ Կ. Կոստանյանցը Թլկուրանցու ժողովածուում հրատարակել է սրա մի այլ տարբերակը 1695 թ. գրված տաղարանից ներքևում դնելով «Հայերգի» օրինակի տարբերությունները։ Կոստանյանցի օգտագործած ձեռագիրը այժմ մեր Մատենադարանի № 7717 (մեր նշանակմամբ՝ Կ) գրչագիրն է։

Ծանոթագրվող տաղը, ինչպես ցույց են տալիս մեր օգտագործած տարբերակները, բավական «կենցաղավարել» է, միջնադարում շատ «տարված» տաղերից մեկն է եղել. այդ պատճառով որոշ տարբերակներում տողերը խառնված, ետևառաջ են, ավելացված կամ դուրս թողնված։ Այսպես՝ մեր ձեռքի տակ եղած ձեռագրերից 1513 թ. Տաղարանը (սա մենք համարում ենք ձեռագրական արժեք ունեցող աղբյուր, =T), № 8968 (=Y) և № 3081 (=x_1) ձեռագրերը ունեն 40 տող, № 9271 (=A) ձեռագիրը ունի 38 տող, № 7717 (=Կ) և «Կռունկ» (=a)-ը՝ 44 տող, № 2079 (=x_2), № 3751 (=O), № 9597 (=R) ձեռագրերը և «Հայերգը» (=H) ունեն 52, բայց իրարից տարբեր և այլ դասավորությամբ, տողեր։

Մեր ներկայացրած տեքստը կազմել ենք ըստ առաջին երեք՝ T, Y և x_1 աղբյուրների՝ ընդամենը, 40 տող պահպանելով սրանց ունեցած հաջորդականությունը։

Տողերի ետևառաջությունները, ավելացումներն ու պակասները կամ բաց թողումները սկսվում են 16-րդ տողից հետո։

18-րդ տողից հետո A, Կ ձեռագրերը և a-ն ունեն.

Պեղծն (Կ Պեղծ a Պիղծ) ու մարմինը (Կ մարմինն) սերմանէ,
Զաղըն (Կ Զաղթն) ու գչարիքն աւելցնէ (Կ շատացնէ)։

20-րդ տողից հետո.

Նա հանց գիտնայ (Կa գիտէ) թէ իւր (a զիւր) կենն է,
Եկեր (Կ եկեալ) բերանն (Կ զբերանն) կու սրբէ։

O ձեռագիրը չունի 16-րդ տողը, որից հետո հետևյալ պատկերն է ներկայացնում.

Զյովհաննէս մեծ կարապետն
Բոզն ու գինին գլխատել է.
Գինին ի հետ ջրհեղեղին,
Զայլ չարիքն ով պատմել կարէ։

Ըմբէ գինին արջև հացին,
Երկու գաւաթն բաւական է.
Եթէ ըմպես քան զչափըն,
Հոգոյդ մարմնոյդ վընասակար է։

Ըզգուշ լերուք արբեցութեան,
Որպէս առաքեալն գրէ.
Պօղոս գրեաց առ աշակերտսն,
Թէ արբեցութիւն շատ չէնէ:

Շատ որ խմէ գէշ հեծկլտայ,
Դեմքն ամեն կու ծամուկէ.
Ջաչերն աճէ վախվարի (?)
Ձով կու տեսնու հետ կը վազէ:

Բարձր պատերն ի վեր հանէ,
Յարջև աչէչ դարձուցանէ.
Անկից ի վայր գլխիվարէ,
Ի յարևուն շուտ մի հանէ:

Ով կու առէ զգինին հալալ,
Ձէտ շուն ի տէրն կու հաչէ.
Ձայն տա ածել արբեցողին,
Թող թշնամոյն զայն պարգևէ:

Որ կու փնչայ զետ զարջ կատղած,
Ձկշտանալու չափն չգիտէ.
Գիրծ ըզմարմինն սերմանէ,
Ձաղըն ու չարիքն շատցունէ:

Փսխէ զերեսն ի վրան ըընէ,
Շունն գայ զբերանն լիզէ.
Նա հանց գիտէ, թէ իւր կինն է.
Մեկալն ձեռօքն պաշկուզ ընէ:

Ապա՝ վերջին քառատողը, որ նույնն է բոլոր ձեռագրերում (այստեղ, ինչպես և ներքևում չենք բերում):

X_2 ձեռագրում 28-րդ տողից հետո կա հետևյալը.

Խիստ զարշելի է արբեցութիւն,
Աւետարանըն հրամայէ.
Գինին երեր զջուր հեղեղին,
Ձայլ չարիքն ով պատմել կարէ:

իսկ 32-րդ տողից հետո՝

ԸզՅովհաննէս մեծ կարապետն
Բոզն ու գինին գլխատել է.
Գինին մարմնոյն է օգնական,
Մեզօք հոգոյն չար կու ածէ:

Քան զպարարտ երկիր փշով,
Միտքն հազար խորհուրդ կառնէ,
Ձախտն ու զչարիքն յորդորէ,
Թող թէ հոգոյն քանի չար է:

Ով զգինին արտով սիրէ,
Նայ յիրաւի որ պոռնիկ է,
Ձի գինին յետև հացին
Երկուս ու՛երեք ու՛այլն անշահ է:

Այստեղ հետաքրքիր է, որ «Թող թէ հոգոյն քանի չար է» տողը կրկնվում է, նույնն է 12-րդ տողի հետ նաև հենց նույն ձեռագրում: Սա ցույց է տալիս, որ տաղի այս մասերը եկամուտ են և Թլկուրանցու ձեռքով չեն գրված:

H և R-ը 16-րդ տողից հետո ունեն.

Սուրբ Յովհաննէս մեծ Կարապետ (R չիք սուրբ, Կարապետն)
Բոզն ու գինին գլխատել է. (R գլխատեր է)
Գինին ի ջուր ջրհեղեղին,
Ձայլ չարիքն ով պատմել կարէ:

Քան զգինին յետոյ հացին, (R Քանզի գինին)
Երկու երեքն այլն անշահ է,
Ոչ մարմնոյն օգտակար, (R Եւ ոչ)
Ձանմեղ հոգին կորուսանէ:

Ձգոյշ լերուք արբեցութեան (R Ըզգուշ)
Աւետարանն հրամայէ.
Պօղոս գրեաց առ մեզ խրատ՝
Արեցութիւն շատ զէն է:

Գտնալ ճամբուն լայնքն քալէ. (R Ընդ լայն ճանփուն լանքն..)
Գէշ խէծկլրտայ և ծռկըտէ. (R հեծկտայ)
Ձաչերն աճէ զէտ վախկոտի, (R Ձաչեր, վախվորի)
Ով կու տեսնու հետ կու վազէ:

Բարձր պատեր ի վեր հանէ. (R պատերն)
Ձառջև զկանանչ դաշտ ցուցանէ (R Ձառջևն կանանչ)
Յանկից ի վայր գլխիվարէ,
Եւ յարևուն դատարկ հանէ: (R ղերդ չափս այն է փխ
դատարկ հանէ)

Ով կու առէ գինին հալալ (R զգինին)
Ձէտ շուն ի տէրն կու հաջէ. (R իբրև զշուն նա կու հաչէ)
Ձայն տայ արբեցողին, (R տայ ածել)
Թող թշնամւոյ զայն պարգևէ: (R թշնամւոյն)

Ու փրնչայ զերգ առջ կատաղած, (R Ով կու ընչայ)
Կշտանալու չափ չի գիտէ, (R չափն)
Պիղծ զմարմինն սերմանէ,
Զպիղծ ու գչարիքն շատցնէ: (R Զաղբ փխ Զպիղծ)

Փախէ գերեսն վերայ ղընէ,
Շունն զբերանն գայ լիզէ· (R կու փխ գայ)
Նա զայն գիտէ թէ իւր կինն է, (R հանց փխ զայն)
Իկեր բերանն կու սրբէ: (R Եկեր զբերանն)

Սրան ևս հաջորդում է բոլոր ձեռագրերի համար ընդհանուր վերջին այն քառատողը, որտեղ հիշվում է հեղինակի անունը:

Այս տողերի մի մասը սկզբնական բնագրում չպետք է եղած լինեն: Այդ հաստատվում է նրանով, որ որոշ տներ բովանդակությամբ չեն բռնում նախորդ տներին. օրինակ՝ H-ում «Գինիախումն է մաղասկաթ» տողով սկսվող տանը հաջորդում է «Սուրբ Յովհաննէս մեծ կարապետ» տողով սկսվող տունը, որ բովանդակությամբ նրան չի բռնում, այնինչ այդ տան շարունակությունն է «Ու հետ փրնչայ քան զգայլ գազան» տողով սկսվող տունը: Այս նշանակում է, որ այդ երկու տների մեջ հետագայում, ուրիշի ձեռքով ավելացված են նոր տներ ու տողեր. միաժամանակ և վերակառուցված է տողերի դասավորությունը ու խառնված: Այս նկատառումներով է, որ սույն ծանոթագրության մեջ բերված՝ տաղի տեքստի համեմատությամբ ավելի տներն ու տողերը չենք մտցնում բնագրի մեջ: Բավարարվում ենք միայն այստեղ բերվածներից համապատասխան տողերի այլընթերցումները բուն տեքստի տողատակում նշանակելով, առանց ցույց տալու տողերի դիրքը այդ (O, x_2, H) ձեռագրերում: A ձեռագրի պակաս տողերի մասին նշված է տեքստի տողատակում:

Ծանոթագրվող տաղի՝ ձեռագրերի տված խորագրերը բոլորը տարբեր են և ոչ հեղինակինը: Ո՛չ խորագրերում և ո՛չ էլ տեքստում չի նշված հեղինակի «Թլկուրանցի» մականունը. բայց տաղը հաստատապես նրանն է: Այդ հաստատվում է նրա՝ ձեռագրերում Թլկուրանցու տաղերի շարքում լինելով ապա՝ x_2 ձեռագրում, որտեղ ունի «Նորին Յովանիսի վասն գինարբուաց» խորագիրը, այն գտնվում է «Ես Յովհաննէս նուաստ ոգի» սկզբնատողով Արարածոց մեկնությունից հետո, որը ունի Թլկուրանցու անունով հիշատակարան, այսինքն՝ ձեռագրում տաղի խորագրի «Նորին»-ի տակ պետք է հասկանալ Հովհաննես Թլկուրանցուն:

Հարբեցողության դեմ ուղղված այս տաղի բովանդակությունը համեմատելի է միջնադարյան քարոզներից մեկի հետևյալ հատվածի հետ:

«...Այլ երբ արբենա |անհն| ի սրտէն գնա, ամօթն յերեսէն բանականութիւն և իմաստութիւն խափանի և լինի որպէս գէշ և զանբան անասուն, յիմար և անմիտ, մոռանայ զմահն և զահեղ դատաստանն

աստուծոյ, ոչ բարեկամն ճանաչէ, ոչ զթշնամին, ոչ մեղքն և ոչ արդարութիւն, և թէ զսիրտն ծանրանա շուայտութեամբ և արբեցութեամբ և փսխէ շանն նման և շունն գայ զբերանն լիզէ, գիտէ թէ մայրն է կամ սանամերն՝ կիպրացի դաստառակաւ զբերանն կու սրբէ...» (Ձեռ. № 691, էջ 92աբ):

Հմմտ. հատկապես տաղի 19—20 տողերը ընդգծված մասի հետ:

Ի

«Օրհնեալ անուն անմահ բանին»

Առաջին տպագրությունը եղել է 1896 թ. Կարապետ Կոստանյանցի «Նոր ժողովածու, միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ»-ի Գ պրակում (էջ 32—34):

1954 թ. «Բազմավեպի» 1—2 միացյալ համարում Արամ Երեմյանը տպագրել է «Ի վերայ անզգամ կանանց» տաղի մի հին տարբերակը: Ընդօրինակությունը կատարված է 1470 թ. գրված մի ձեռագրից (Նկարագրությունը տե՛ս «Բազմավեպ», 1954 թ., էջ 30): Հրատարակիչը գրում է. «1470 թվականի ձեռագրում գրված տաղն ուշադրության արժանի է համեմատության և տաղի իսկական ու հարազատ օրինակը վերականգնելու տեսակետից» (Նույն տեղում): Ապա նաև՝ «Այս արժեքավոր տաղը Սրբատակես վրդ. Տևկանցի և Կարապետ Կոստանյանցի տպագրած նույն տաղի հետ համեմատելով՝ գտանք էական տարբերություններ»: Տաղի վերջում բերված են տարբերությունները:

Մեզ համար, սակայն, պարզ չէ, թե հրատարակությունը ձեռագրի անաղարտ ընդօրինակությունն է, թե ոչ: Բանն այն է, որ դրված հարցի տեսակետից Ա. Երեմյանի հրատարակությունը անվստահություն է ներշնչում մեկ կողմից, մյուս կողմից էլ նա իր տեղեկությունները, թվում է, թե քաղում է ի լրո: Այսպես՝ ծանոթագրվող տաղը Տևկանցի կողմից չի հրատարակվել, այնինչ Ա. Երեմյանը գրում է, թե նրա և Կոստանյանցի հրատարակածի հետ ունեցած՝ իր ձեռագրի ընդօրինակության տարբերությունները դնում է տաղի ներքևում: Ինչպես ցույց է տալիս համեմատությունը, այդ տարբերությունները (որ դրված են առանց պայմանական նշանների) միայն Կոստանյանցի հրատարակության են, Տևկանցի հրատարակությանը չէին կարող լինել, որովհետև այդպիսին չկա:

Ա. Երեմյանը այլ տեղեկություններ էլ է քաղում ուրիշներից, առանց ստուգելու դրանք: Նա գրում է. «Դրանց (իմա Հով. Թլկուրանցու տաղերի—Էմ. Պ.) պատկերն այսօր տեսնում ենք 1513 թվին Վենետիկում տպագրված առաջին հայերեն գրքերից մի «Տաղարան»-ում, ուր կարդում ենք միայն հինգ տաղեր» (Նույն տեղում, էջ 30):

Ինչպես մեզ արդեն հայտնի է, 1513 թ. տպագրված տաղարանում

կան Թլկուրանցու 16 տաղերը, և Ա. Երեմյանը այնտեղ կարող էր կարդալ Թլկուրանցուց 16 տաղ, եթե ձեռքի տակ ունենար այդ տաղարանը: Նա իր տեղեկությունը քաղում է 1924 թ. «Արեգ»-ում տպված Ն. Ակինյանի հոդվածից, որտեղ հեղինակը թյուրիմացաբար գրում է, թե նշված «Տաղարան»-ում տպագրված են Թլկուրանցու հինգ տաղերը: Ըստ երևույթին Ն. Ակինյանը ևս ի լրո է գրել, քանի որ նույն «Արեգ»-ում Թլկուրանցու տաղերը հրատարակելիս չի օգտագործել «Տաղարանը»:

Ինչպես Կոստանյանցի հրատարակությունը, որ կատարված է «1682 թվին գրված տաղարանից», այնպես էլ «Բազմավեպ»-ում տպագրված և մեր Մատենադարանի №№ 8605 (=S_2) և 2394 (=p_1) ձեռագրերի ընդօրինակությունները—տարբերակները ունեն 14 տուն (56 տող): Կ. Կոստանյանցին հայտնի մի այլ «1617 թվի ձեռագիր տաղարանում» տաղը ունեցել է ընդամենը 10 տուն (40 տող): Տասը տուն ունեն նաև մեր Մատենադարանի №№ 7707, 33 և 3081 ձեռագրերը: Սրանցից երրորդը գրված է 1617 թվականին և, հավանաբար, Կոստանյանցին հայտնի ձեռագիրն է: №№ 7707, 33 և 3081 (p, S_1 և x_1) ձեռագրերը ունեն 1- 5, 7, և 11—14 տները, ըստ որում S_1 ձեռագրում II և III տների տեղերը փոխված են (ետ ու առաջ են). չունեն՝ 6-րդ և 8—10-րդ տները:

№ 7709 (=z) ձեռագիրը ունի 9 տուն. պակաս են (բաց են թողնված) 3-րդ, 6-րդ և 8—10-րդ տները:

Մի այլ խումբ են կազմում №№ 9271 և 3751 ձեռագրերի ընդօրինակությունները: Այդ վերջինս (=O) համընկնում է № 9271 (=A) ձեռագրի ընդօրինակության հետ, միայն թե մնում է կիսատ՝ ունի ընդամենը 6 տուն:

A ձեռագիրը ունի 15 տուն, որոնցից 1—3 տները համընկնում են մեր պատրաստած տեքստի 1—3 տներին, վերջինիս 4-րդ և 6-րդ տները բացակայում են A ձեռագրում, 5-րդ տունը համընկնում է, իսկ 7-րդ տնից սկսած խիստ տարբեր է և ներկայացնում է հետևյալ պատկերը.

Կինն կմանուկն ի փորն անցնէ,
Զմեծն սրով սպաննել կարէ.
Զայրն գեղէ, գերդ գէշ զուգէ,
Աստուած փրկէ կնկան չառէ:

Կինն ուրանայ զիւր հայրն ու մայրն,
Ու զանդրանիկ որդին ձգէ.
Լուծէ զօրէնքը ու մեղքն ուզէ,
Աստուած փրկէ կնկան չառէ:

Կինն սատանի կերպ մտանէ,
Զգիւականքն ի մօտ ժողվէ,
Քան զսատանայ ու այլ պեղծ է,
Աստուած փրկէ կնկան չառէ:

Կինն սիրէ, «եղբայր» ձենէ,
Ու այլ մեծ այլ մեղքեր գործէ,
Սուտ երդնու, թէ ինձ եղբայր է,
Աստուած փրկէ կնկան չառէ:

*Կինն ոչ պշգայ արևորդոյ,
Ոչ ի թուրքէ, ոչ ի ջհտէ,
Զով որ սիրէ՝ հաւատքն այն է,
Աստուած փրկէ կնկան չառէ:

Թէ գայ կանգնի կինն ի դիմացդ
Զպըռկերն շարժմժէ,
Այն ամէն մանկան չար է,
Աստուած փրկէ կնկան չառէ:

Թէ երդնու կինն ի դիմացդ,
Թէ՝ «Քեզ համար ինձ մահ տիրէ»,
Մի հաւատար, թէ հոգն էած,
Աստուած փրկէ կնկան չառէ:

Կինն զմանկան արիւն ծծէ,
Զմիսն ու զոսկորն կրճտէ,
Քան զշուն զամէն մարդ խածանէ,
Աստուած փրկէ կնկան չառէ:

Կինն տաճար է աստուծոյ,
Աստուածութիւն ինքն կրէ,
Մարմին առնու ի սուրբ կուսէն,
Ու սուրբ ծնանի ի կնոջէն:
Աստուած փրկէ կնկան չառէ (հետո ավելացված).

*Կինն ողորմած է և գթած,
Կասեն ի սուրբ կուսանք նմանէ,
Ապա թէ չար է ու չարեր գործէ,
Նա՛ աստուած փրկէ կնկան չառէ:

Տէր Յովանէս ի կնկանէ,
Շատ է խըմեր զտօստուքան,
Երթայ հոգին ի հուրն այրի,
Այլ փախչելու ճարակ չկայ:

Ինչպես պարզ երևում է, A ձեռագրի ընդօրինակությունը ներկայացնում է հետագայում մշակված ու փոփոխված մի տարբերակ, որ շատ հեռացած է հեղինակային բնագրից: Այստեղ հետևողականորեն չեն պահպանված նույնիսկ հանգերը:

Բ երված հատվածի *ունեցող տները համեմատաբար քիչ են փոփոխված, բայց դրանց տարբերությունները ևս չենք գրել տողատակ:

№ 3751 (=O) ձեռագիրը, ինչպես ասացինք, պահպանել է վեց տուն, որոնցից 1—3 տները համընկնում են տաղիս 1—3 և 5-րդ տների հետ, 4 և 6-րդ տները O-ն չունի, 5-րդ տունը համըկնում է, այսինքն ճիշտ այնպես, ինչպես A ձեռագրի ընդօրինակությունը: Մնացած երկու տունը այստեղ էլ խիստ տարբեր է տաղի բնագրից, բայց նման A ձեռագրին, թեև ոչ տառացի: Ահա այդ տները.

Կին զողայն ի փորն անցընէ,
Զմեծ որով սպանանէ,
Զայրն դեղէ, զերդ էշ չուգէ,
Աստուած փրկէ կնկան շառէ:

Կին ուրանայ զհայրն ու մայրն,
Եւ զանդրանիկ զորդին ձըգէ,
Լուծէ զօրէնքն ու զմեղքն ուզէ,
Աստուած փրկէ կնկան շառէ:

Տաղի բնագիրը պատրաստելիս մենք հետևել ենք 14 տուն ունեցող խմբի աղբյուրների օրինակին՝ մյուսների տվյալների հաշվառումով: Այդ խմբի աղբյուրներից Կոստանյանցի հրատարակության հիմք հանդիսացող 1682 թ. ձեռագիրը հավանական է, որ լինի Հայկական ՍՍՌ Մատենադարանի՝ մեր օգտագործած № 2394 (=Բ$_1$) ձեռագիրը: Այդ երկուսը թե՛ խորագրով և թե՛ տեքստի այլընթերցումներով համընկնում են, բացի մի երկու բառից. օրինակ՝ Կ$_2$ ունի «չընէ», Բ$_1$ չըդըն (է) (տող 35) և այլն: Այս փոքր տարբերության վրա ուշադրություն չէինք դարձնի, եթե երկու այլընթերցումն էլ ուրիշ ձեռագրերում չլինեին: Այս հանգամանքը խանգարում է մեզ հավաստի ասելու, որ Կոստանյանցի օգտագործած ձեռագիրը № 2394-ն է: Ուստի այդ երկու աղբյուրները ներկայացված են ջոկ-ջոկ, իբրև առանձին աղբյուրներ:

«Բազմավեպ»-ում հրատարակված օրինակը, որ մեր ունեցած աղբյուրներից ամենահինն է, մի քանի տեղ զգալիորեն տարբերվում է մնացած բոլորի տվյալներից: Սակայն, ինչպես ասացինք, համոզված չլինելով, որ այնտեղ պահպանված է 1470 թ. գրված ձեռագրի ընդօրինակության անաղարտությունը՝ այն չենք դարձրել հիմք համեմատական տեքստը պատրաստելիս (կասկած են հարուցում, օրինակ, Բ-ի 45-րդ և այլ տողերի տվյալները—արդյո՞ք հրատարակիչը փոփոխություն չի մտցրել դրանց մեջ):

ԻԱ

«Իմ սիրտ լսէ ու՝ ականջ արա»

Հրատարակել է Կ. Կոստանյանցը («Հով. Թլկուրանցին և յուր տաղերը», էջ 42—44), «Ձեռ. Տաղարան, 1695 թ.»-ից: Այս ձեռագիրը այժմ գտնվում է Հայկական ՍՍՌ Մատենադարանում, № 7717-ի տակ: Ուրիշ օրինակ Մատենադարանի ձեռագրերում մեզ հայտնի չէ: Հրատարակությունը կատարում ենք № 7717, նախկինում Կ. Կոստանյանցին պատկանող ձեռագրից առանց որևէ փոփոխության (առաջին՝ Կոստանյանցի հրատարակության և ձեռագրի միջև որոշ տարբերություններ կան):

1955 թ. հրատարակվել է «Սիոն» ամսագրում (էջ 193)՝ Կոստանյանցի հրատարակության և Երուսաղեմի ս. Հակոբա Մատենադարանի № 1900 ձեռագրում (էջ 138) եղած ընդօրինակության հիման վրա, որը մի երկու մասնակի տարբերություններ ունի մեր օգտագործած ձեռագրի համեմատությամբ.

տող 12 Ապա թէ դքո խորհուրդն ասայ
« 14 բոց փխ հուր
« 19 կարիք փխ կարի
« 20 զնայ փխ ու՝ երերայ
« 21 չար փխ սուտ
« 23 հէնց փխ հանց:

ԻԲ

«Հիմիկ ճարտար բշժկեա»

Հրատարակվում է առաջին անգամ:

Պահպանվել է միայն մեկ ձեռագրում (Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 2676): Մի քանի տողերում տառերը եղծված ու անընթեռնելի են. հնարավոր չի լինում վերականգնել կամ լրացնել:

ԻԳ

ՏԱՂ ՔԱՋԻ ԼԻՊԱՐՏԻՆ

Գատմական բովանդակություն ունեցող միջնադարյան այս վիպական տաղը շատ ձեռագրերով չի հասել մեզ: Հրատարակել է Ղ. Ալիշանը «Հուշիկք հայրենյաց հայոց»-ում (հատ. Բ., 1870 թ., էջ 510—512)[1],

[1] Ալիշանը նույնը նախօրոք տպագրել է 1862 թ. «Բազմավեպ»-ում:

«Սիսուան»-ում (1885 թ., էջ 226) և «Հայապատում»-ում (1901 թ., էջ 539—541): Ալիշանը չի հայտնում, թե ինչ ձեռագրից կամ ձեռագրերից է հրատարակել դրանք: Ա. Չոպանյանը «Միջնադարյան ազգային տաղաչափություն» գրքում, Հովհ. Թլկուրանցու մասին խոսելիս, բերում է և Լիպարիտի տաղը «Սիսուան»-ից քաղելով, հետևյալ ծանոթագրությամբ. «Այս տաղս այն պատճառով ալ ուզեցինք ծանոթացնել, վասն զի յուր ներքին առավելություններեն զատ, մինչև ցայսօր հազիվ միակ ձեռագրին մեջ կը գտնվի, այնպես որ հրատարակված թե՛ ամբողջ, թե՛ մասնական օրինակներն այն միակ ձեռագրեն առնված կերևան» (Նշվ. աշխ., 1911 թ., էջ 29):

«Սիսուան»-ում և «Հայապատում»-ում եղած տեքստերի տարբերությունները ցույց են տալիս, որ, հակառակ Չոպանյանի պնդման, Ալիշանը իր ձեռքի տակ ունեցել է մեկից ավելի ձեռագրեր: Այդ է հաստատում «Հայապատում»-ում տաղիս 145—146 տողերի (մեր կազմած տեքստի տողերի համարակալմամբ) համար Ալիշանի տված հետևյալ ծանոթությունը. «Ուրիշ օրինակ մի գրած է.

Քաջ Լիպարիտ՝ ուսիր Յոհան
Քրիստոնէից համար մեռան»:

«Տաղ քաջի Լիպարիտին»-ը Ալիշանի մոտ հրատարակված է իբրև երկու տաղ. «Հուշիկք»-ում հրատարակված է միայն 1—56 և 61—64 տողերը իբրև մի, առանձին տաղ. նույնը նաև «Հայապատում»-ում, ուր բացի դրանից բերված է նաև ծանոթագրվող տաղի 49—154 տողերը ընդգրկող մասը («Յաստուծոյ անունն օրհնեալ» սկսվածքով) որպես առանձին՝ Հովհ. Թլկուրանցու տաղը, որին հետևում է առաջին մասը (1—56, 61—64 տողերը)՝ որպես «անծանոթ և ռամկաբան քերդողի» տաղ: «Հայապատում»-ում հրատարակված այս երկու տաղերը համեմատելիս, նկատելի է, որ երկրորդը ունի առաջինի սկզբի երեք տները (մեր կազմած տեքստի 49—56 և 61—64 տողերը): Այստեղից հենց կարելի է եզրակացնել, որ դրանք, իսկապես, առանձին տաղեր չեն, այլ մեկ տաղ, որի մի մասը գտնվել է մի ձեռագրում, իսկ մի այլ (կամ մի քանի) ձեռագրում պահպանվել է շարունակությունը՝ առաջինի վերջին տներից սկսած: Որ ծանոթագրվող տաղը ձեռագրերում անդամահատված է եղել, երևում է և հետևյալից. «Սիսուան»-ում ևս հրատարակված է նախ երկրորդ մասը՝ 49-րդ տողից մինչև վերջ, ապա առաջին մասը, բայց այստեղ այն ունի միայն 1—8, 17—20, 25—48 տողերը, այսինքն՝ պակաս տներ ունի «Հուշիկք»-ում և «Հայապատում»-ում իբրև առանձին տաղ դրված մասից: Այսպես է եղել, անշուշտ, այն ձեռագրում, որից քաղել է Ալիշանը: Այսպիսով՝ Լիպարիտի այս ընդարձակ վիպական տաղը ձեռագրում ինչ-ինչ պատճառներով մասնատվել է և բաժանվել առանձին մասերի: Ալիշանի ձեռքն է անցել նախ տաղիս առաջին մասը, որ և

հրատարակել է «Հուշիկք»-ում: Այնտեղ նա ունի այսպիսի ծանոթագրություն. «Երգույս հեղինակն է աշխույժ երգիչն Հովհաննես Թլկուրանցի, որ Սսոյ կաթողիկոս եղավ ԺԵ դարուն վերջերը» (էջ 510): Բայց հետագայում, երբ Ալիշանը հայտնաբերել է երկրորդ մասը, որտեղ և վերջում տրվում է հեղինակի՝ Թլկուրանցու անունը, նա կարծել է, որ այս վերջին ընդարձակ մասն է Թլկուրանցունը, իսկ առաջինը այլ տաղ է, որի հեղինակը հայտնի չէ, մանավանդ, որ այս մասի նոր օրինակը, որ հրատարակված է «Սիսուան»-ում, չուներ ընդհանուր երեք տները: Այսպես Լիպարիտի տաղի երկու մասերը բաժանվել են և բանասիրության մեջ համարվել երկու հեղինակների գործեր՝ «անծանոթ ռամկաբան քերդողի» և Հովհաննես Թլկուրանցու:

«Հուշիկք»-ում Հովհ. Թլկուրանցուն համարած, իսկ հետագայում՝ «Սիսուան»-ում «անծանոթ և ռամկաբան քերդողի» հեղինակություն համարած մասի վերաբերյալ հենց ինքը՝ Ալիշանը նկատում է. «Կերևի թե երգիչն դեռ կու շարունակեր. մենք այսչափս գտանք». («Հուշիկք», էջ 512, ծանոթ.): Միանգամայն ճիշտ է դիտել Ալիշանը. շարունակությունն էլ հենց իր կողմից հետագայում հայտնաբերված մասն է, բանասիրության մեջ Թլկուրանցու անունով հայտնի մասը: Ալիշանը, սակայն, չի միացրել այդ երկու մասերը, որովհետև նրանց մեջ նկատել է «շենքի կամ ոճի» տարբերություն: Այդպիսի տարբերություն մասամբ, իհարկե, կա: Մեր կարծիքով այդ տարբերությունը պայմանավորված է ամբողջ տաղի երկու մասից կազմված լինելով՝ առաջինը (1—48 տողերը) նախերգանքն է, քնարական գովքը իսկ երկրորդը (49-ից մինչև վերջ)՝ պատմությունը. առաջինը ունի կրկնակ տող (յուրաքանչյուր քառատողի 4-րդը), երկրորդը՝ ոչ: Նույն հեղինակի նույն ստեղծագործության նման կառուցվածքի պարագայում երկու մասերի «շենքի կամ ոճի» տարբերություն չէր էլ կարող չլինել: Ուշադիր ընթերցողը կարդալով երկրորդ մասը կնկատի էլ, որ նա սկզբից թերի է:

Կ. Կոստանյանը Թլկուրանցու ժողովածուում հրատարակել է իբրև մեր հեղինակի ստեղծագործություն միայն երկրորդ մասը՝ քաղելով «Սիսուանից». առաջին, երկրորդ և չորրորդ տների համար կազմել է համեմատական տեքստ՝ «Սիսուանի» օրինակի և «Հուշիկք»-ում եղած երեք ընդհանուր եղող տների տեքստի հիման վրա: Իսկ վերջում նա բերում է առաջին մասը հետևյալ ծանոթությամբ. «Սիսուանում» հիշված չէ, թե որ թվականի ձեռագրից է հանած այդ երգը. միևնույն ժամանակ այնտեղ եր. 227 մեջ է բերված և մի այլ երգ Լիպարիտի վերա, որի մասին Հ. Ղևոնդ Ալիշանյան նույնպես ստույգ ոչինչ չգիտե և նորա հեղինակին ծանոթ չլինելով, անվանում է «Ռամկաբան քերդող». այդ երգն այստեղ դնենք համեմատության համար» («Հովհ. Թլկուրանցի և յուր տաղերը», էջ 56—57): Այստեղ Կոստանյանը դրել է «Ռամկաբան

քերթողի» տաղը ըստ «Միսուանի» և ապա մեջ է բերել նաև «Հուշիկք»-ում ավելի եղած երեք տները:

Կ. Կոստանյանցը ոչ միայն չի նկատել այդ երկուսի միևնույն տաղի երկու մասերը միմյանց շարունակությունը լինելը, այլև փորձել է որոշել «ռամկաբան քերթողի» անունը: Նա

«Հիւսիսային հողմն հիմիկ
Սարգիս յիշող եղև քեզիկ»

տողերի վերաբերյալ գրում է. «Եթե «հիմիկ» մականուն չէ, վերջին տան խոսքերից (բերված երկու տողից—Էմ. Պ.) հետևում է, որ քաջ Լիպարիտին այժմ հիշող եղավ Սարգիսը, որ իրեն հյուսիսային հողմ է համարում» (Նույն տեղում, էջ 59):

Այս բացատրությունը ընդունելի չէ. բերված տողերից այդպիսի եզրակացության չի կարելի հանգել: Մեր կարծիքով ճիշտ է Ալիշանի բացատրությունը. «Կու հիշե ս. Սարգսի համար շարականին բասծն. «Աւետաւոր հայոց մեծաց՝ դիմեալ ի մեջ երկրի ի հիւսիսոյ, հողմն հարաւոյ»» («Հուշիկք հայրենյաց հայոց», էջ 511):

Կ. Կոստանյանցին հետևելով, վիպերգի առաջին մասը «Սարգիս անուն երգչին» է համարում Հ. Աճառյանը (Անձնանունների բառարան, հտ. Բ., էջ 431):

Ն. Ակինյանը «Սարգիս վարդապետ Կաֆացի» հոդվածում («Հանդէս ամսօրյա», 1935, էջ 33—34) ընդունում է Կոստանյանցի բացատրությունը և «հրապարակին վրա անանուն շրջող» տաղը ջանում է վերագրել Սարգիս Կաֆացուն: «Սարգիս վարդապետի գրական գործունեութենեն նշմարներ չեն հասած մեզի,— գրում է նա:—Երգ մը, որուն հեղինակը Սարգիս ինքը զինքը «հյուսիսային հողմ կանվանե, կներշնչե մեզի հավատք, թե Սարգիս վարդապետ ըլլա անոր հեղինակը»: Նրա կարծիքով՝ «հավանորեն երգած է 1438-ին և իբրև նվեր ուղարկած Կոստանդին կաթողիկոսին»:

Մերժելով Կ. Կոստանյանցի բացատրությունը, մերժում ենք և Ակինյանի ենթադրությունը: Վիպերգի այս մասը իր բնույթով այնպիսին է, որ պետք է երգված լինի դեպքի համեմատաբար թարմ տպավորության տակ, իսկ 170 տարին բավական երկար ժամանակ էր թարմությունը խունացնելու համար:

Տաղի մեջ, Ակինյանի բառերով ասած՝ «Լիպարիտի հիշատակը դեռ թարմ է, անոր արյան «կարմիր գույնը» դեռ կենդանի, քաջությունները անմոռաց, բնավորության բարությունը և խոսքին քաղցրությունը տպավորված հիշողությունների մեջ»: Այսպիսի պարագաներում շատ ավելի հավանական է ստեղծագործության հեղինակ համարել եղելության ժամանակով ավելի մոտ ապրած մարդուն՝ Թլկուրանցուն, քան Կաֆացուն:

Այն, ինչ որ Ակինյանը մի այլ տեղ գիտում է վիպերգի երկրորդ մասի վերաբերյալ՝ ժամանակակցի կողմից գրված լինելու մասին ավելի ճիշտ է առաջին մասի նկատմամբ: Իսկապես, այստեղ Լիպարիտին դիմելու ձևը, հետևյալ տողերը.

Ձայն չարաչար մահն որ տեսար,
Կսկիծ է մօրն որ դուն ծնար:

կամ

Կաթողիկոս և վարդապետ,
Սուրբ քահանայք ամենն ի հետ՝
Շատ արտասուօք արտերն երեր:

ցույց են տալիս, որ Լիպարիտի այս գովքը գրվել է դեպքի համեմատաբար թարմ տպավորության տակ և ոչ թե 170 տարի հետո: Եվ, վերջապես, կրկնում ենք՝ վիպերգի առաջին մասը հրատարակելիս, Ալիշանը այն համարել է Թլկուրանցունը անշուշտ ձեռագրական տվյալի հիման վրա:

Ծանոթագրվող տաղի համեմատական տեքստը կազմել ենք «Հուշիկք»-ի, «Միսուանի»-ի և «Հայապատում»-ի օրինակների հիման վրա որոնք, ինչպես ասվեց, միևնույն ձեռագրից չեն քաղված:

«Միսուանը» ունի 1—8, 17—20 և 25—48 տողերը՝ գրված իբրև «անանուն քերթողի» տաղ, և 49-ից մինչև վերջ՝ իբրև Թլկուրանցու տաղ: «Հայապատումը» ունի 1—56 և 61—64 տողերը՝ իբրև «անանուն քերթողի» տաղ, և 49-ից մինչև վերջ՝ իբրև Թլկուրանցու տաղ: Այստեղ երկու մասերի մեջ եղած երեք ընդհանուր տների (49—56 և 61—64 տողերի) առաջին մասի համար գործածել ենք Հայ$_{2}$ համառոտագրությունը: «Հուշիկք»-ը ունի 1—56 և 61—64 տողերը:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարանի) № 515 գրչագրում պահպանված է Լիպարիտի տաղի մի հատվածը ևս, որ ունի 111—146 տողերը, առանց վերնագրի և առանց հեղինակի անվան նշման. որևէ նշանով չի բաժանված նաև նախորդ և հաջորդ նյութերից: Այս ձեռագրի օրինակը քիչ տարբերություններ ունի մյուսներից, այնուամենայնիվ տալիս է մի քանի ավելի ճիշտ ու ընտիր ընթերցվածներ, որ մենք մուծել ենք տեքստի մեջ: Գրչագրիս այլընթերցումները տողատակում նշանակված են Ձ պայմանական նշանով:

Ալիշանը, որոշ նկատառումներով, իր հրատարակությունների մեջ մի քանի բառեր փոխել է. այսպես. 89-րդ տողում՝ Սիս. Թուլսանայ փխ Սուլթանայ, 123-րդ տողում՝ Սիս. օտրանց փխ Թուրքաց, 7-րդ տողում՝ Սիս. Ուրթքն փխ Թուրքն և այլն: Մեզ հայտնի չէ, թե մյուս տեղերում օտրանց (տող 59), Օտարաստան (տող 60), օտարական (տող 80)

բառերը ա՞յսպես են եղել բնագրում, թե՞ «Հայապատումի» օրինակում գրված (եգիպտական). Տանկեստան, այլանըրման ձևերն են ունեցել ձեռագրում։ «Հայապատում»-ում այդ բառերի փակագծում գրված կամ ընդգծված լինելը ցույց է տալիս, որ հրատարակիչն է փոփոխություն կատարել, բայց թե ինչպես են եղել բնագրում՝ մնում է անհայտ։

Այս փոփոխությունները որոշ թյուրիմացությունների տեղիք են տվել։ Այսպես. մեծավաստակ գիտնական Հ. Աճառյանը, որ Անձնանունների բառարանի Բ հատորում Լիպարիտ անվան տակ բերում է տաղի երկու մասերն էլ (որոշ տների բացթողումով), ըստ «Միասունն»-ի, «Ուրթքն» բառը տողատակում բացատրում է իբրև «յուռութքն», չնկատելով, որ սա «Թուրքն» բառն է ր և ր տառերի ետևառաջությամբ։ «Հայապատումի» օրինակը նկատի ունենալով, կարելի էր թյուրիմացությունից խուսափել, որովհետև այնտեղ այդ բառը գրված է «Թո...ն» կրճատ ձևով։

Լիպարիտի տաղը հրատարակել է նաև Ն. Ակինյանը «Հանդես ամսօրյա»-ի 1933 թ. համարներից մեկում տպագրած «Քաջն Լիպարիտ պատմության, տաղերու և զրույցներու մեջ» հոդվածում (էջ 129—138)։ Ակինյանը տեքստը պատրաստել է Ալիշանի հրատարակածների և մեր Մատենադարանի № 515 ձեռագրում եղած հատվածի հիման վրա։ «Հենված այս օրինակներու վրա, կփորձենք վերականգնել բնագիրը, իսկ 9—12 (մեր հրատարակության 57—60—Էմ. Պ.), 17—60 (մեր հրատարակության 67—110—Էմ. Պ.) տողերու մեջ Հ. Ալիշանե մուծված կամավ այլայլությունները կուղղենք ենթադրաբար»—ծանոթագրում է նա։

Խոսքը վերաբերում է վերոնշյալ բառերին, որ Ակինյանը դարձնում է «սուլթանայ», «Թուրքմանստան», «Թուրքմանն» և այլն։ 88—90 տողերը Ակինյանը այսպես է ներկայացրել.

«Ու զՄանչակին գոված տղան,
Առիր ըղթախտըն սուլթանայ,
Բերիր ձիան և շատ Թուրքման»։

Բնագրում իսկապես տողերը խառնված են, 88-րդ տողում ոտքը խախտված է, իսկ 90-րդի վերջին բառը հայտնի չէ, թե ինչ է եղել։ Սակայն դժվար է ընդունել Ակինյանի «ենթադրաբար» ուղղումը, ուստի և գերադասեցինք թողնել այնպես, ինչպես բնագրում է։

Ինչպես ասել ենք Ուսումնասիրության մեջ, Լիպարիտի կյանքն ու գործը դարձել է ժողովրդական զրույցների ու պատմությունների նյութ։ Այս ծանոթագրության վերջում անհրաժեշտ ենք համարում բերել Հայկական ՍՍՀ Մատենադարանի ձեռագրերում հայտնաբերված երկու զրույցները Լիպարիտի մասին։

Դրանցից առաջինը պահպանված է երկու ընդօրինակությամբ՝ №№ 3569 և 6951 ձեռագրերում։ Վերջինիս մեջ գտնվող բնագիրը հրատարակել է Ն. Ակինյանը «Հանդես ամսօրյա»-ում (1933 թ., էջ 129—134)։ Իբրև բնագիր դնում ենք № 3569 ձեռագրում եղած ընդօրինակությունը՝ տողատակի լուսանցքներում նշելով № 6951 ձեռագրի տարբերությունները (էջ 129բ—134ա)։

Սույն արձակ զրույցի միջոցով պարզվում են Թլկուրանցու՝ Լիպարիտի տաղի մի քանի դժվարահասկանալի տեղեր։ Օրինակ՝ «Լաշկ արաւ դիզան դիզան» և կամ Ձ-ի (ձեռագրի) տված ուղղման համաձայն՝ «Լաշկարն արաւ դիզան դիզան» արտահայտությունը կա նաև զրույցում՝ «դիզեր գլաշն որպէս բլուր բլուր», իսկ մի այլ տեղ՝ «կոտեց գլաշն դիզան դիզան», որտեղից վերջնականապես հայտնի է դառնում, որ խոսքը դիակների մասին է։

Տաղից պարզ չէ, թե ով է Մանանան. Ալիշանը ծանոթության մեջ գրում է, թե «Անշուշտ իւր (Լիպարիտի—Էմ. Պ.) կինն է» (Հայապատում)։ Զրույցը հաստատում է Ալիշանի կարծիքը, միայն թե այստեղ կնոջ անունը Աննա է։

Երկրորդ զրույցը քաղել ենք № 515 ձեռագրից. այն առնչվում է առաջին զրույցի երկրորդ մասի հետ, ուր պատմվում է Լիպարիտի քրոջ մասին, և ըստ էության նրա մի տարբերակն է։

Զրույցները ներկայացնում ենք անփոփոխ ու առանց շտկումների, այնպես՝ ինչպես կան գրչագրերում։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՋ ԼԻՊԱՐԻՏԻՆ[1]

(Ք)աջ Լիպարիտ[2] էր ի Սասնոյ գաւառէն, որ եկեալ բնակէր ի Կիլիկէ ի ժամանակս վերջին[3] թագաւորացն հայոց, որ ի յազգէն[5] Ռուբին(ե)անց Հեթմոյ և Թորոսի և ի նոցին թոռանցն։ Եւ էր նա քաջ նըման Տրդատայ, նման Մուշեղայ։ Զոր գայլին տաճկաց ազգն ի Մսրայ բազում զօրօք ի վերայ Տարսոնի և Կիլիկեա գաւառին։ Եւ ինքն քաջ Լիպարիտն

Իբրև բնագիր դրված № 3569 ձեռագրի ընդօրինակության մեջ եղած մի երկու խանգարված տեղերը ուղղում ենք № 6951 ձեռագրի օրինակի հիման վրա՝ առաջին ձեռագրի սխալ ընթերցումները այստեղ նշելով Ա. պայմանական նշանով։

[1] Պատմութիւն քաջ Լիպարտին ։է ասացեալ[2] Լիպարիտն[3] Ա. վերջին[4] չիք[5] յազգէ

միայն ելանէր ի դէմ և կոտորէր զամենեսին և դիզէր զլաշն որպէս բլուր բլուր: Եւ կայր[6] յեզր կարմիջին առ զօրսն թագաւորին, և նստեալ հանգչէին ինքն և ձին, և կրկին մտանէր ի պատերազմ[7] և կոտորէր զնոսա և փախուցանէր: Եւ բազում ժամանակս անսասան և անվրէպ պահեաց զթագաւորութիւնս հայոց. զօրսն զթագաւորն ձերբակալ առնէր և զզօրսն կոտորէր և զօրսն փախուցանէր և հալածէր: Եւ ի յահէ նորա ոչ իշխէր գալ հեծել՝ ապստամբել զՀայս:

Եւ թագաւորն հայոց երկեաւ ի քաջ Լիպարիտէն, զի մի գուցցէ և զինքն ըսպանանէ և թագաւորէ: Այլ քաջն հոգով և մարմնով Լիպարիտ[8] ոչ ունէր այնպէս վատ խորհուրդ, այլ միամիտ ի սէրն Քրիստոսի և սուրբ հաւատոյ Լուսաւորչին և սուրբ եկեղեցեացն, քաջութեամբ կայր այրիաբար[9] ընդդէմ զօրացն տաճկաց: Բայց հետո Մաճակ[10] անուն ոմն ի Մսրա հեծելազօր[11] հսկա(յ)աց[12] ձև և քաջ, եկաւ խնդրել ի սուլթանէն զի եկեալ սպանցէ զքաջ Լիպարիտն: Եւ եկեալ ԾՌ[13] (50.000) հեծելով և բանակ էարկ ի դէմ Սըսու: Եւ թագաւորն հայոց յայնմ ժամանակին ձենեց զքաջ Լիպարիտն և ասէ. Քեզի համար եկեր է հեծերս[14]: Եւ նա իլաց[15] և ասէ. Իմ ջանըս վասն եկեղեցեաց է և քրիստոնէից[16], և ոչ վասն թագաւորութեան. է՞ր պատճառես զիս որ զքո թշնամիքն յաղթել և խորտակել եմ[17]: Բայց յուսամ ի Քրիստոս[18] որ նոյն ինքն տայ կարողութիւն ծառային իւրոյ ո՛րպէս ընդդէմ կալ[19] և վանել զթշնամին խաչի նորա: Եվ նոյն ժամայն եմուտ յեկեղեցին և լալով համբուրեաց զսուրբ խորանն[20]. և ասէ. Բարով կացէք, զի թշնամեաց ոչ վախենամ. այլ յիմոցս թշնամութեամբ խորհուրդ խորհէին ինձ, բայց ես միամտութեամբ[21] դնեմ զանձն իմ ի վերայ քրիստոնէից: Եւ համբուրեց զեղ-

[6] Ա. գայր [7] պատերազմն [8] Այլ քաջ Լիպարիտն հոգով և մարմնով [9] արիաբար [10] Մաճաք [11] Ա. հելազօր [12] հսկայաձև [13] ծառայ փխ ԾՌ [14] եկեալ են հեծեալս [15] ելաց [16] Քրիստոնեայ եղբարց [17] սատակեցուցեր եմ և հալածական արեր եմ կամաւն Քրիստոսի մերոյ փխ հալածել և խորտակել եմ [18] դարձեալ կրկին յուսամ ամենափրկիչն Քրիստոս փխ Բայց յուսամ ի Քրիստոս [19] գալ [20] սեղանն [21] Ա. միամիտութեամբ:

քայրն իւր զՎասիլ և զորդին իւր զՅոհաննէս և զկինն իւր զԱննայ, և բազում ողբով գովեց[22] և ասէ. Ոչ գիտացին զջանս[23] իմ և զքաջութիւնս[24], այլ որժամ հեռանայ ոտս ի դրանէ արքունի, պատին[25] գազանք վայրենիք և արեան ծարաւիք և աւէրք առնեն եկեղեցեաց և դարպասաց, և անչափ արիւնս հեղուն անպարտ քրիստոնէից: Եւ եբեր զձին թամբեց և հեծաւ քաջն Լիպարիտ[26] և ըռումբն ի ձեռինն խաղայր առաջին զօրացն հայոց թագաւորին և օրհնէր զաստուած: Եւ ի ձայնէ գոչմանէ նորա[27] ահաբեկ լինէին թշնամիք[28] և սըրտակոտոր, որպէս զգոչիւն[29] առիւծոյ: Եւ սովորութիւն էր նմա Բ. Գ. (երկու-երեք) քաջ ձի թամբօք պահէին զհետ նորա. և յորժամ հոգնէր ձին ի վազելու[30] և ի գնացմանէ, դառնայր առ հեծելն և իջնոյր ի ձիուն և հեծ(ն)ոյր ի միւսն և դառնայր ի պատերազմն: Եւ բազում անգամ ի մէջ պատերազմին անկաւ[31] ձին. և ինքն հետևակ կռուելով ի հետ ձիաւոր և ըռումբաւոր և զրեհաւորացն, և կոտորելով ելանէր ի միջոյ ամբոխին և երթայր առ զօրսն և հեծնոյր զմիւս ձին և դառնայր գոչելով որպէս զառիւծ. և մնամ թէ շատք ի յահէ նորայ մեռանէին ի վերայ ձիոց. և նայ ըզկռուողսն[32] կոտորէր՝ որպէս զհուր յեղեգն[33]. եւ որք հարկանէին զնայ սրով և նիզակաւ և նետով, ոչ նայէր յետս, զի ոչինչ համարէր զնոսա և զհարուածս նոցա, այնպէս թուէր[34], թէ տաճկին ոկով հարկանէին զինք: Այլև բազում անգամ հետևակ մտնէր ի կռիւ ի մէջ ձիաւորաց[35], և միայն քարաձգութեամբ դարձուցանէր զթշնամիսն. և ինքն դառնայր ուրախութեամբ օրհնելով զաստուածն: Եւ մի ոմն[36] քաջ Մանճակ[37] անուն, որ եկեալ էր ի կռիւ ԾՌ (50.000)-ով[38]. և ել քաջն Լիպարիտ գոչելով և օրհնելով զահեղ անունն աստուծոյ, և գնայր խաղալով ի դէմ զօրացն. և նոքա սասանեցան, երբ տեսին զյաղթող վկայն[39]:

[22] Գովեաց [23] Ա. զզանս [24] զքաջութիւնս իմ [25] շուրջ պատեն [26] քաջ Լիպարիտն [27] գոչմանէն փխ գոչմանէ նորա [28] թշնամիք իւր [29] գոչիւն [30] վազելոյ [31] Ա. և կաւ փխ անկաւ [32] նա զկռվողսն [33] եղեգն [34] թվէր [35] Ա. ձիանց փխ ձիաւորաց [36] միում փխ ոմն [37] Մանճաք [38] ԾՌ զօրօք [39] վկայն Քրիստոսի:

98—18

Եւ մտեալ ի կռիւ և հարեալ վանեց և կոտորեց զնոսա, և սպան
զՄանճաքն[40], և դարձաւ յետս և կո(ւ)տեց[41] զլաշն դիզան դի-
զան[42] և ի խոնճիլ երիվարին[43] դարձաւ յետսն առ զօրսն հայոց։
Յայնժամ Թագաւորն չարացաւ, էառ զհայոց հեծելս և յետս
դարձաւ, էանց զկարմունճն և փլոյց[44] զնա կապանաւն։ Եւ
եկեալ քաջն Լիպարիտ[45] և ետես զչարութիւն որ վասն իւր։ Եւ
ինքն զմահն յանձն էառ վասն Քրիստոսի, և դարձաւ յետս
և էջ յերիվարէն և ընկէց զսուրն իւր ի բաց և նստաւ ի մէջ
ասպարիզին։ Յայնժամ բոլորեցին զնայ, և ոչ ոք իշխէր որ
մերձենայր առ նայ. և այնչափ նետեցին ի հեռաստանէ
ըռամպ[46] և նիզակս և գեղարդս ի վերայ նորա, մինչև թաղե-
ցաւ[47] և ապայ սուր հանեալ և խոցոտեցին զնայ և սպանին։
Եւ սկսան կոտորել զաշխարհն և քակել զեկեղեցիքն[48] և սպա-
նին զԹագաւորն, և գերելոցն[49] և ըսպաննելոցն արանց և ի
կանանց՝ որ զթիւն միայն աստուած գիտէ։ Եւ զգլուխն քաջ
նահատակին տարան ի Մըսըր։ Եւ սուլտանն յոյժ ապաշաւե-
ցաւ[50], եթէ ընդ է՞ր ոչ բերիք զնա կենդանի առ իս, զի կին
տայի[51] նմայ, որ աճէր[52] և Թագաւոր անէի, ընդդէմ Թշնա-
մեաց իմոց կացուցանէի[53] զնա որպէս պարիսպ։ Եւ այնպէս
նահատակեցին զքաջն Լիպարիտ և աւերեցին զքրիստոնեայք[54]
զաշխարհն հայոց[55] և տիրեցին ազգն տաճկաց և Թագաւո-
րեցին։

Եւ կայր քոր մի Լիպարիտին[56], փախուցեալ ի գիւղ մի,
առնայկին, եկեալ իբրև Ծ(50) ամաց, և յայն ժամանակին ել-
եալ Փէլէճվաճ[57] մի խամայէլացի և ասէր պարոնին Սըսայ[58],
թէ բեր ի գաւառէ քումմէ կամ ի զօրաց քոց ինձ[59] նման,
զի զօտէմարտիցուք. թէ ոչ՝ տուր ինձ Ճ (100) դեկան կար-
միր ի յաշխարհաց քոց։ Եւ նա ոչ եգիտ այր[60] բռնամարտիկ,
որ զգօտին բռներ[61] էր տաճկին։ Եւ[62] եկն քոյրն քաջ[63] Լի-

[40] Մանճակն [41] կոտից [42] որպէս զբլուր փխ դիզան դիզան [43] ի
խօսն ճել փխ ի խոնճիլ [44] բլոյց [45] քաջ Լիպարիտն [46] ըռամպ [47] Ա.
Թաղեցօր [48] զեկեղեցիսն [49] գերեցին [50] ապաշաւեաց [51] Ա. տային
[52] արժէր [53] կեցուցանէի [54] չիք [55] չիք [56] Եւ քաջն Լիպարիտ ունէր
քոյր մի [57] այստեղ և հետո՝ փահլուան [58] Ա. ո ըստ փխ պարոնին Սըսայ
[59] ինձի [60] այլ [61] բռնեալ էր [62] չիք [63] քաջն։

պարիտին և ասէ. Ի՞նչ տայք ինձ, որ[64] ես կռխեմ զՓաճլա-
ւաճճ։ Եւ ասէ պարոնն[65]. զինչ խնդիրք ունիս նէ[66] տամ, եթէ
կոխես զնա։ Ասէ կինն. Որչափ բամբակ[67] որ շալկեմ՝ այն իմ
լիցի։ Եւ առին յանձն։ Եւ եկեալ Փաճլաւաճճ և ետես զկինն
հսկայձև[68] և երկեաւ, բայց վասն կին լինալոյն[69] արհամար-
հեաց զնայ. և մերկացաւ փահլաւանն և զգեցաւ[70] զգեստն[71]
իւր, և սկսաւ խաղալ, իբր թէ այպ առնէր և խնդրէր այր
մարդ՝ զի մարտիցէ[72] ընդ նայ։ Եւ եկն յառաջ կինն իւր կա-
նացի զգեստիւն, և բռնեալ[73] զԲ (երկու) լծակացն փահլաւա-
նին Բ (երկու) բռամբն և վերուցեալ[74] զնայ և տարաւ առա-
ջի[75] պարոնին իդիր՝ զերեսս փահ(լ)աւանին ի գետինն, և
զմէկ ականջն քարշեալ ի բաց նետեց։ Եւ ամենեքեան զահի
հարեալ[76] հարցանէին[77], թէ ուստի՞ է սա կամ յո՞ր[78] ազգէ։

Եւ հրամայեաց Թագաւորն տալ նմա բամպակ[79] որպէս
ոչ կարէ շալկել[80]. և բարձան զկինն այնչափ մինչև Ճ (100)
լիտր, և նա առեալ ուրախութեամբ և գնաց ի տուն իւր։ Եւ
իբր եբաց[81] զբամպակն, նայ ետես որ եղեալ էր ի մէջ բամ-
պակին քայր[82] որ կայր Խ (40) լիտր։ Եւ ամենեքեան ապուշ
մնացին զօժանդակութիւն ցնայ կնոջն[83]։

(Ձեռ. № 3569, էջ 25ա—28բ)

Սուլթանն Եգիպտոսի յղեաց զօրս բազումս ի վերայ Կի-
լիկ(ի)ոյ Սըսոյ. և լուեալ Թագաւորն՝ նստաւ ի ձի և գնաց
առ քաղքն իւր։ Էին Է (եօթն) եղբայրք Էին հսկայք, նոքա
կային ի բերդն մի, Փէրի Ղալասի ասի և անուն տեղոյն Տէվ-
րէնտ ասվի։ Եւ նոցա լուեալ զգալ Թագաւորին՝ ելեալք ընդ-
առաջքն, զի նստէին եղբարքն ի սեղան և ուրախանային գի-
նով։ Եւ պատմեաց Թագաւորն զիրն, և նոքա ասեն. Արքայ,
յաւիտեան կաց և մի հոգար զայդ, եկ ուրախասցուք այս գիշեր

[64] և փխ որ [65] պարօնն [66] նա [67] բամպակ [68] հսկայաձև [69] լի-
նելոյն [70] զսկեցաւ [71] զզգեստն [72] Ա. մարդիցէ [73] բռնեալ [74] Ա. երա-
ցուցեալ [75] յառաջի [76] հարան [77] չիք [78] ո՞ր [79] բամբակ [80] շալկել
[81] իբրև էբաց [82] քարս[83] Ա. կնոջն։

ի սեղանս և լղեսցուք տեսցուք, թէ ընդունք է, թէ ոչ։ Եւ կոչեցին զփոքր եղբայրն, լղեցին սակաւ զօրք ի տեսանել զիրն՝ զի տեսցէ և իմացուսցէ և ի միասին երթիցեն զօրօք բազմօք ի վերայ նոցա։ Եւ գնաց կրսեր եղբայր, ետես եկեալ բ(ա)նակեալ էին առ ափն Ջիհան գետոյն։ Եւ ոչ կարաց հանդուրժել քաջն. սակաւ արամբք մարտեաւ նոցա, զոմանս ջրահեղձ արար, զոմանս փախստական և բազումս սուր սուսեր մաշեաց, և առաւ զբանակ նոցա, զառ և զաւար։ Եւ վասն զիրսն ճշմարտեցուցանէ, ետ կոտորել զքիթն և զականջսն և երեր, մինչ որ լուսացաւ։ Եւ թագաւորն և եղբայրքն ուրախանային ամենայն գիշերն և մնային գալստեան նորա։ Եւ տեսին զի գայր օարօ (աւարաւ) և կառօք և լուան և ակ սնջօք, տեսին զքիթսն և զականջսն զի բարձեալ էր կառաց, և զգործ քաջութեան նորա զարմացան։

Եւ մեծարեալ թագաւորն զեօթանեքին եղբայրքն միաբան և բերեալ ի պաղատն իւր և պատուեաց զնոսա Խ (40) օր ուտելօք և ըմպելօք և պէս պէս հարկիւ։ Եւ ի լրման Խ (40) օուրն (աւուրն) կամեցաւ խլայաթիւ ուղարկեսցէ և շնորհակալութիւն եցոյց նոցա։

Նախանձեալ իշխանացն արքային, ասեն ցթագաւորն. Այտունց փոքր եղբայրն այտպէս քաջ է, և մեծամեծքն զինչ լինիցի(ն)։ Սպանանէ՛ զնոսա, և թէ ոչ՝ զթագաւորութիւնդ ափշտակեն։ Եւ գողացան զմիտ թագաւորին՝ զի՞նչ արարից, ոչ կարեմք զդէմ ունել դոցա։ Ասեն ցթագաւորն. Դու մի հոգար, մենք գիտեմք զինչ արարից։

Եւ ետ Խ (40) օուրն (աւուրն) պատուեալ խլայեթեց թագաւորն զնոսա և գրեց ի հանդերձիցն գիրս ԺԲ-ն (երկոտասան), և ուղաւորեցին զնոսա, և նոքա ոչ գայն գիտացան։ Գնացեալ իջան աղբիւր քանզի ծարաւ էին։ Եւ ընդ խմել նոցա՝ Է (եօթն) այլ մեռան։ Եւ լուեալ մայր նոցա, փետեաց զհերս իւր և ճիճ բարձեալ եկ անիծելով զթագաւորն։ Եւ ասեն ցկինն. Ոչ մեղք ունի թագաւորն և ոչ մեղաւորն, այլ սոքա Է (եօթն) յորդիքդ այս տեղս եկան նստան և ջուր խմեցին և մեռան։

Եւ անէծ մայրն զաղբիւրն՝ Սև ակ լիցիս։ Մինչև ցայսօր տաճիկ ասեն Ղարա պուղալ։ Մայրն և նա՛յ ի նմին ժամու մեռաւ։ Եւ թաղեցին զնոսա և շինեաց թագաւորն ի վերայ նոցա եկեղեցի մօտ ի Սևակն։

Եօթեանքս եղբարք էին, բնակէին իւրեանց բերդին. կրսերն ջարդեաց զօր սուլթանին, որ ի վերայ Սըսոյ գայրին։ Եւ երբ որ լսեց սուլթանն Մսրայ զիրն և զմահն քաջ նոցա ամենեցուն, յղեաց առ թագաւորն փորձելով՝ Խ (40) ըմպիշ, տեսանեն, թէ իցեն այլ քաջք ի Սիս քաղաքի, քանզի խորհէր ի սրտի զի գայցէ ի վերայ Սըսոյ։ Եւ եկեալ ըմպիշքն առ թագաւորն և ասեն. Սուլթանն Եգիպտոսի առաքեաց զմեզ առ քեզ, զի զօտէմարտեսցուք հետ քո քաջացդ։ Եւ ասէ թագաւորն՝ Թող լինի։ Եւ ետ քարոզ կարդալ ընդ ամենայն տիեզերս իշխանութեան իւրում, և ոչ գտանէին քաջունք, քանզի ոչ կային. և յիշեաց ի մտի իւրում զէ (եօթն) եղբարքն զոր անմեղ մեռան։ Եւ ետոյ ետ մեռանելոյ Է (եօթն) եղբարցն, էր քոյր մի նոցա, քանզի մնաց մէն, փախաւ վասն ահուն և գնաց ի ջաղարցքն, քանզի դրանձինք օղեցին (?), և բարձեալ ի վերայ գլխոյ քէլ մի գարի։ Եւ ոչ էր ջաղացիպանըն ի ջրաղացքն. ելից զի աղեսցի։ Եւ եկաւ երիտասարդ մի, տեսաւ և ցանկացաւ աղջկանն. և առեալ աղջիկ զտուտ հանդերձի նորա, կալոյց մէկ ձեռօքն զերդիք տանն եդին ի ներքևն զտուտ հանդերձին և եթող ի բաց, որ կախեցաւ գլուխ ի վայր ի հանդերձէն մինչ որ աղաց զայնքան ալուրն։ Եւ նա մեղայ կոչէր և աղաղակէր, և եթող ի վայր և պատուիրեաց. թէ այտ քեզ խրատ թող լինի։

Եւ այնժամ որ քաջք խնդրէին ընդ ամենայն տեղիս և ի հրապարակս քարոզ կարդային, այսինքն՝ օժիտ այնմ որ քաջ գիտիցէ, և երիտասարդն հարցանէ ցծեր մի և ասէ, թէ ով գիտիցէ, և ասէ, թէ մեղք ունիցի թողցէ՞ թագաւորն։ Ասէ ցծերն՝ ոչ թէ միայն զմեղքն, այլ շատ պարգև ես տացէ։ Ասէ երիտասարդն զիրն ջրաղացին և զքաջութիւն աղջկանն։ Եւ առեալ ծերուն զկտրիճն գնաց առ թագաւորն և աւետեցին. և ետ նոցա պարգևս բազումս արքայն։ Եւ գտան

զաղչիկն և բերին: Եկին Խ (40) ըմպիշքն և գոտեմարտեցաւ ընդ նոսա աղչիկն: Եւ նախ քան զգոտեմարտիլն ասէ աղչիկն ցմեծապետ ըմպիշն. Ես կին եմ և դու այր, ոչ է պարտ գոտեմարտիլ, այլ Գ (երեք) հեղ դու եկ ուժով ի վերաս, ու Գ (երեք) հեղ ես գամ: Ասաց աղչիկն. Նախ դու եկ զի այր ես: Եւ եկ մեծ ըմպիշն, եկ ի վերայ աղչկանն Գ (երեք) հեղ և ոչ կարաց յաղթել: Յետոյ գնաց աղչիկն ի վերայ մեծ ըմպիշ պետին և վերացոյց մէկ ձեռօք և յաղթեաց, և յղրկեաց մարդ առ թագաւորն՝ թէ սպանանե՞մ, թէ ի վայր կոխեմ: Եւ պատասխան արար թագաւորն. Թէ կանայ նէ զհոգին թող հանէ: Եւ մինչ գնաց ու եկաւ պատգամն, և ըմբիշն ի վերայ բազկին էր աղչկան, և լուեալ զպատասխան թագաւորին՝ եզարկ ի գետին և սպանեաց զնա: Եւ զարմացան ամենեքեան, և այլ ըմբիշք ոչ եկին ԼԹ-իքն (երեսունինքն), քանզի վախեցան: Եւ ամօթով դարձան առ սուլթանն և պատմեցին զեղեալսն:

Եւ թագաւորքն և իշխանքն եառուն պարգևս մեծամեծս աղչկան:

Այսպէս քաջ կային ի Սիս քաղաքի և ի աշխարհս Կիլիկեցոց, հիմի ունայն եմք թէ թագաւորէ և թէ իշխանաց: Այս եղև թվին ՊԼԶ (836+551=1387):

(Ձեռ. № 515, էջ 26բ—28բ):

ԽԴ

«Գեղ մի կայր Նարեկ ասեն»

Քննական բնագիրը հրատարակվում է առաջին անգամ:

Տաղս պարունակող ձեռագրերից ամենահինը № 8968-ն է (գրված 1566 թ.), սակայն չի կարելի ասել, թե այն անաղարտ է պահպանել բնագիրը. այստեղ, ինչպես և մյուս ձեռագրերում կան բազմաթիվ խաթարումներ և «խմբագրական» բնույթի փոփոխություններ, որոնք ուղղվում են բոլոր ընդօրինակությունների տվյալների հաշվառումով: Այսպես. տաղը գրված է հայերենի չափով և բոլոր զույգ տողերը վերջանում են ին հանգով, բայց ոչ մի ընդօրինակության մեջ հետևողականորեն մինչև վերջ չի պահպանված հանգը. գրիչները երբեմն փոխել են բառերի թեքման ձևերը, ըստ երևույթին, հեղինակային բնագրի ձևը

համարելով լեզվական տեսակետից ոչ ճիշտ, որով և տեղ-տեղ խախտվել է հանգը: Օրինակ. 28-րդ տողի վերջին բառը՝ բոլոր ձեռագրերը, բացի № 7707 (=p)-ից, տալիս են անցրնէր կամ անցանէր ձևով փխ անցանէին, որ ճիշտն է և մուծում ենք բնագրում: 72-րդ տողի վերջին բառը բացի № 5623 (=C) ձեռագրից, մյուսները տալիս են ճիւրերուն կամ ճուրերուն՝ ուն հանգով՝ փոխանակ ճիւրերին՝ ին հանգով ձևի. 74-րդ տողի հանգավորող բառը՝ 72-րդ տողի հանգին համապատասխանեցնելու համար դարձված է սեղանոյն № 8968 (=Y) ձեռագրում, իսկ zp_1p_2 ձեռագրերում՝ սեղանոյս. ընտրում ենք p և C ձեռագրերի տարընթերցվածը՝ սեղանին, որ ճիշտն է:

Ուստի՝ թեև զգալի «խմբագրական» փոփոխությունների են ենթարկված p և C ձեռագրերում եղած ընդօրինակությունները, այնուամենայնիվ շատ դեպքերում պահպանել են ճիշտ ձևերը. այդ պատճառով էլ բնագրի մեջ հաճախ դրել ենք այնպիսի ձևեր, երբեմն էլ տողեր, որ գտնում ենք միայն p կամ միայն C ձեռագրերում (տես, օրինակ, տող 7—10):

Գ. Հովսեփյանը «Արարատ»-ում հրատարակած «Ժողովրդական բանահյուսության հետքեր միջնադարյան տաղարաններում» հոդվածում տպագրել է այս վիպական տաղը «Մ. աթոռի № 283 (Գ. կաթ.)» ձեռագրից, որ մեր օգտագործած p_1 ձեռագիրն է:

Ինչպես երևում է միջնադարում Գրիգոր Նարեկացու մասին հորինվել են մի շարք զրույցներ, որոնցից մեկը մշակել է Հովհաննես Թլկուրանցին:

Նարեկացու մասին զրույցներն ու լեգենդները ժողովրդի մեջ պահպանվել են երկար ժամանակ և դրանցից երկուսը գրի են առնվել 19-րդ դարի վերջերին: Առաջինը, որ տպագրված է «Լումա»-ի 1899 թ. Բ գրքում (էջ 325—328) «Ժողովրդի խոսք Նարեկացու մասին» վերտառությամբ, բովանդակությամբ համընկնում է Թլկուրանցու վիպական տաղի հետ՝ տեղ-տեղ գրեթե բառացի, իսկ երկրորդը, գրի առնված և տպագրված Գ. Հովսեփյանի կողմից «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» գրքույկում (1892 թ., էջ 16—19), ներառել է և միահյուսել սյուժեի այլ դրվագներ ևս:

Ներքևում դնում ենք երկու զրույցներն էլ կետադրության մասնակի շտկումներով:

ԺՈՂՈՎՐԴԻ ԽՈՍՔ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ

Նարեկացի սուրբ վարդապետ,
Հոգին սուրբ էր պեմունաթ,

Ոչ մէջ սրտին խեռ կրռներ,
Ոչ մեկ մարդուց կառներ նիաթ.
Ծառայ կելնեմ Նարեկացուն։
Տարին թամամ տասն մեկ էր,
Հաց տարավ մշակներաց.
Մշակներ օրոխկեցին՝ ջուրն գնաց։
Մշակներ հացն առեն կերան,
Մեզար լիք քյակավ արին՝
Նարեկացուն ծաղր անեին.
Ծառա կելնեմ Նարեկացուն։
Մեզար ուր առջև քաշեց,
Զորս գլեօխ խաչակնքեց,
Դարձուց և զհացն Նարեկացին.
Մշակներ զարմանք մնացին,
Ինկան ձեռք ոտք Նարեկացուն.
Ծառայ կելնեմ Նարեկացուն։
Վանք մ՚ի շինե վերև գեղին,
Վեզար գլխուն, փիլոն թևին,
Գիշեր ցորեկ ժամատեղին,
Լեոս էր սիվռաթ մարթ չէր տեսնա։
Մեկ ռես Գորգ մը կեր մեջ էն գեղին,
Ամենևին ժամ չէր իջե.
Նարեկացին խոսեց ռես Գորգին՝
Հե՞ր չես ի գալ ժամ աղոթքին։
—Ես շատ ունիմ տամ տեոլվաթ,
Ի՞նչ անեմ ժամու խերիաթ,
Ի՞նչխ թողնեմ իմ բան գամ ժամ։
Օրն էկավ տարին թմմավ,
Վաղջանին եկավ ռես Գորգին,
Խող տեղ չէր ի տա փարաղաթ.
Յոթ տեղով տապան բացին,
Փետատ կանչեց տաթ իաման,
Խող տեղ չէր ի տա փարաղաթ։
Ինկան ձեռք ոտք Նարեկացուն,

Ծառա կելնեմ Նարեկացուն,
Խաչակնքեց ռես Գորգին,
Ռես Գորգն էր որ հարըցուց,
Որ հարըցուց խոստովանցուց՝
Նոր հող տեղ իտու փարաղաթ։
Երկու վարդապետ կին (գային) կեռ Սիս,
Ուրենք բարձրին բունե քյանց Մասիս.
Ելան չափլուկ ջուր լցուցին,
Աստուծոյ շնորհքով դադրցուցին.
Նարեկացուն օրողկեցին,
Մենք էլ տեսանք ուր քեարամաթ.
Ծառա կելնեմ Նարեկացուն։
Ինոնց օրողկած չափկի ջուր փոխեց,
Գզած բամբակ ուր ձեռք բռնեց,
Վառվավ կրակ մեջ փաթութեց,
Ջապկի ջրի մեջն էլ դրեց,
Վարդապետացն էլ օրողկեց։
Վարդապետներ որ էն տեսան,
Ինոնք էն տեղ շատ զարմացան՝
Երթանք տեսնենք Նարեկացին։
Էկան խասան Նարեկ սարին.
Հրեշտակ խապար տվավ Նարեկացուն՝
Քյո վարդապետք եկան քե խուր.
Ծառա կելնեմ Նարեկացուն։
Վեզար գլխեն էլ վեր իտիր,
Խովուվու քյապանակ առից թևին,
Գնաց խասավ մեջ ուր սարին,
Էկավ դիմաց ջուխտ վարդապետին,
Աջն առեց ջուխտ վարդապետին։
Վարդապետներ ջուր ուզեցին—
Ծառա կելնիմ էն խովուվուն—
Խաչակնքեց վեր էն սարին,
Գավազար իզար վեր չոր քարին,
Ջուր բղխեցուց քարի մեջեն,

Առավ խմցուց վարդապետաց,
Ծեր սիպտակ մուրուսնին ճահելացավ.
Ինոնք էնտեղ շատ զարմացան,
Ինոնք էնտեղ անմահացան.
Ծառա կելնեմ Նարեկացուն։
Ճամբախ նշանց խուր վարդապետաց,
Խաչակնքեց վերա սարին՝
Էրկու գել եկան առջև ոչխրին.
Գելերն արաց հովիվ ուր ոչխրին.
Գնաց հասավ մեջ ուր վանքին,
Հանդերձ հագավ վարդապետի,
Էկավ դիմաց վարդապետաց,
Աչերն առեց վարդապետաց։
Օրն էր ուրբաթ մեջ շաբաթին,
Էրկու եղունիկ էլ բռնեց,
Խրավեց ու ան գեախն էլ իփեց,
Վարդապետներ պատիվ կանչեց,
Խնդում արին Նարեկացուն։
Նարեկացին ծուռ ի ուր օրինաց,
Ուրբաթ շաբաթն էլ չի գիտե,
Ծառա կելնիմ Նարեկացուն.
Սեղան ուր առջևն էլ քաշեց,
Զորս գլեոխ խաչակնքեց,
Փետուր եկավ ուրինք ծածկեց,
Թռան գնացին խետ էրամին.
Վարդապետներ մաթ մնացին։
Ինոնք էնտեղ շատ զարմացան,
Լալով ինկան ձեռք ոտք Նարեկացուն.
Քե տվե աստվածութին,
Մարմնով կանես ուրախութին,
Հոգով կերթաս արքայութին։

(«Լումա», 1899 թ., Բ. գիրք, էջ 325—328)։

Նարեկծին խաց կ՛տաներ.
Մշակտիր պիրին չլուրի խրկեցին,
Նստան զխաց ճաշակեցին,
Մեզար ճիլին քակուռ արին,
ԶՆարեկծին չարբեցին։
Նարեկծին էկավ, կանչից մշակտիրուն.
«Էկեք ձի խաց ճաշակեցեք»։
Մշակտիր ասին.— Կինա վեար խացին, մենք կ՛կյանք։
Նարեկծին զմեզար էպաց,
Տեսավ լիք քակուռ էրած.
Նարեկծին քոչիր էզար գետըն,
Զմեզար խաչակնքից.
Մշակտիր էկան տեսան
Քակուռ խացնի դարցի.
Մշակտիր զարմանք մնացին։
Նարեկծին թորկից կինաց Ղարղիդու կապան.
Տեսավ խովիվ մեռի,
Ոխչար մշմուր ի մնացի.
Էլավ, ճանտեղ յոթ տարի խովիվութին էրավ,
Ջհախն առից, խուռ, հեթմքիր շախից,
—Հեթմ շախող Նարեկծի։
Գյառ, կել խըտրաց կերըծին,
Էկին, տեսան, զարմանք մնացին։
Նարեկծին թորկից, կինաց Մշու էրկիր,
Կինաց մեկ մարատ նոքարութին.
Մարտն էլ շատ անախում պարտքնտեր էր.
Էլավ, գլուր կալ էրավ.
Պարտքնտերքիր էկան, ժողվան, էկին ճանդեղ.
Էլավ, թորկից, մտավ ուր տուն, էլաց։
Նարեկծին կանչից էն մարտիրուն.
—Խաց կ՛տանե՞ք ձի փարըր տեղ։
Էսաց.— Որ ալու խաց տաս, մենք շատ ալվար ինք.
Նարեկծին քոչն էզար գետըն,
Շեղքն էլ խաչակնքից,

Էլավ, բիրադի փարը տեղը խաց եստու,
Բիրադի կալիլ էլան, թորկին, կլացին:
Նարեկեծին էկավ, կանչից.
—Աղա՛, խուր ո՞րսեղնի, մինք զխաց խուրինք:
Ըսաց.— Դէ, կինա դէն, տյու էկիր իս վյուր իմ սրտին
մանանեղ կ՚ցանիս:
Ըսաց.— Տյու իլի, տիսի, բիրադի կալիլ էլած, կլացած:
Կնիկ էլաւ, տեսաւ շեղք ավել շեղքնի.
Էկավ, կանչից.— Մարտ իլի, զաղուն կրի տուն:
Էլավ, կանգնաւ. զաղուն կրիցին,
Ջխուրիր բիրադի լցին,
Տալ զտուն էլ աղուն լցին:
—Պարտքնտեր պարտքից ազատող Նարեկեծին,
Վյար Նարեկեծուն զարմանք մնացին:
Էլավ, թորկից, էկավ մյաչ մեկ գեղի:
Կնաց տեսավ Նուրափեսեն մեռիր վյար աթոռին,
Խեր, մեր նստած դառնիկն կըլան:
Նարեկեծին քյոչն էզար գետըն,
Դեոզայ էրավ մի ստեղծողին,—
Նուրափեսան հարավ վյար ուր աթոռին.
Խեր, մեր շատ ուրախացան վյար ստտանվուրին:
Թորկից էկավ, խսսավ Նարեկ.—
Մեռել հարուցող սուփ Նարեկեծին:
Սիսայ վարդապետնիր լսան, զարմանք մնացին.
Պիրին, զՆարեկեծին ջարբիցին.
Զչափուկ լիք ջյուր արին,
Նարեկեծուն հադեա հրեողկեցին:
Նարեկեծին էրկու էղվընիկ մուրթից,
Վարդապտիրուն կանչից.
—Էկեք, ձի խաց ճաշակեցեք:
—Նյա տյու ի՞նչ էրիր:
—Իս չիր գիտի թ՚օրն էր ուրպաթ,
Հրաման էրեք՝ թըխ էրթան:
—Մինք կարողութին չունինք,

Տյու էրիր իս, տյու հրաման էրա՝ թըխ էրթան:
Նարեկեծին քյուչիր էզար գետըն,
Ջեղվըննեն խաչակնքից.
Էրկուս թռան, կինացին.
Վարդապիտքիր տեսան, զարմանք մնացին:
Էլավ զչափուկ ջյուր էլից,
Վերայ կրակ էտի,
Վյար կրակըն բյամբակն էտի,
Ասաց.— Առեք, ձի առաջնոթըն հանդիա տարեք:
Էլան, առան, կլացին.
Առաջնուրթ էլավ, տեսավ՝
Նյա ջյուր զկրակն էր ընցուցիր,
Նյա կրակ զբյամբակն էր ընցուցիր.
Շատ անախուն զարմանք մնացին:
—Սըրփ զանեզան, սըրփ Նարեկեծին:

(Գ. Հովսեփյան, Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 16—19):

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա.

ՏԱՂ ՅՈՎԱՆԷՍԻ ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

(«Ես քո սիրուն չեմ դիմանար...»)

Միջնադարյան քնարերգության զարդերից մեկն է այս տաղը, որի մասին Ա. Չոպանյանը իրավամբ գրում է. «...Սիրերգ մըն է՝ զգացման և ձևի հազվագյուտ ինքնատիպությամբ. զայն հորինելու համար կարծես արևելցի Պոտլեր մը և Վերլեն մը իրենց տաղանդները միացուցած ըլլան» («Հայ էջեր», էջ ԼԵ):

Այս իսկապես որ զմայլելի տաղը ստեղծագործողի ով լինելը պարզ հայտնի չէ: Վերջին երկտողում իբրև հեղինակ հիշվում է «Խև Յովանէս»: Միջնադարյան տաղերգուների մեջ Յովհաննէս անունով շատ երգիչներ կան. ո՞րն է դրանցից տաղիս հեղինակը: Դժվարանում ենք հաստատ ասել, թե Թլկուրանցին է: Թլկուրանցին իր տաղերի մեծագույն մասի վերջում իրեն կոչում է «Խև Յովհաննէս». այստեղ էլ այդպես է անվանված հեղինակը: Ա. Չոպանյանն էլ հակված է կարծելու, որ այն

Թլկուրանցունը կարող է լինել. «եթե ապացուցվի, որ սիրերգին հեղինակը Հովհաննես Թուլկուրանցին է,— գրում է նա,— այդ արդեն իսկ զմայլման արժանի քերթողը ավելի ևս պիտի մեծանայ մեր աչքին,— որովհետև այս կտորը ավելի խոր է և ուժեղ, քան Թուլկուրանցիի մյուս մեզի ծանոթ սիրերգները» («Հայ էջեր», էջ ԼԶ)։

Բ. Կյուլեսերյանը Հովհ. Թլկուրանցու հրատարակված տաղերի ցուցակում գրում է. «Այս տաղը «Թև Յովաննէս»-ին (=Թլկուրանցվույն) է, թեև Չոպանյան վարաներ է դնել ասիկա Թլկուրանցվույն տաղերու շարքը»։

Այն հաստատապես Թլկուրանցունն է համարում Մ. Աբեղյանը. «Այդ տաղն անպայման Թլկուրանցունն է, ոչ միայն «Թև Յովաննէս» անվան համար, այլ մանավանդ իր ոգով և տրամադրությամբ ու բովանդակությամբ» («Հայոց հին գրակ. պատմ.», հտ. II, էջ 40)։

Վենետիկի Մատենադարանի № 566 ձեռագրից քաղելով հրատարակել է Ա. Չոպանյանը՝ նախ «Անահիտ»-ում, ապա «Հայ էջեր»-ում (էջ 74—75)։ Արտատպում ենք «Հայ էջեր»-ից։

Բ

«Այսօր էի խիստ տրտում»

Հայերեն և տաճկերեն այս տաղը պահպանված է Հայկական ՍՍՌ Մատենադարանի №№ 7714 (էջ 90բ—91բ) և 5668 (էջ 73ա) ձեռագրերում։ Երկու ձեռագրերի ընդօրինակությունները ներկայացնում են երկու փոփոխակ։ Առաջինում ունի 36 տող, երկրորդում՝ 38 տող (եթե չհաշվենք բաց թողնված երկու տողերը)։ Երկրորդը չունի 5, 7 և 9-րդ տները. դրա փոխարեն այստեղ ավելի է հետևյալ 4 տունը.

Արեկ երթանք ես դուն այգին,
Դաւշուր ալում ալմա չիրին, (Բաղեմ քաղցր խնձոր)
Վարդն է ի քուն մէջ կոկոնին,
Բլբուլ աղլար խաթար գուլին։ (Սոխակ կուլա կուզե վարդին)

Որոնեալ այսր և անդր գնայր.
Բանում գուլում օղըրլայգիլար, (Իմ վարդին գողացան)
Միթէ տեսեալ էք, տո՛ւք խաբար,
Աւխաա բանում ջանում չխար։ (Թէ չէ հոգիս դուրս կգա)

Սիրտս լափեր է քո սիրուն,
Զաւխ դարդում վար դօգուն դօգուն, (Շատ ցաւ ունեմ գունդ գունդ)
Դու արեկ առ գխս ծոցդ ի քուն,
Բէլի ինջայ բաւի ուզուն։ (Մեջքը բարակ բարձրահասակ)

Այնչափ ելի խետ քեզ զատա,
Ղուլուան բիր նազար էյլայ, (Գերուդ վրա հայացք ձգիր)
Ջուապ մ՚ ունիս, դու պարզ ասայ,
Գաւզլարում բանի ուն ութմայ։ (Աչքիս լույս, ինձ մի մոռնա)

Երկրորդը չունի նաև 7-րդ և 21-րդ տողերը։

Համընկնող տողերում ևս բավական տարբերություններ կան։ Տեքստը տալիս ենք ըստ 7714 ձեռագրի. չենք նշանակում № 5668 ձեռագրի ընդօրինակության տարբերությունները։ Մի երկու տողում, առանց նշման, ավելացրել ենք բաց թողնված բառերը՝ վերցնելով երկրորդ փոփոխակից։

Առաջին տարբերակը ունի «Տաղ սիրոյ» խորագիրը, երկրորդը՝ «Այլ տաղ գեղեցիկ և լաւ»։

Երկլեզվյան այս տաղի մի այլ ընդօրինակություն հրատարակել է Կ. Կոստանյանցը «Ձեռ. տաղարան 1695 Թ.»-ից («Նոր ժողովածու», Դ պրակ, Վաղարշապատ, 1903, էջ 16—17), «Տաղ վասն սիրելութեան» խորագրով։ Այստեղ ևս 9 տուն է, որոնցից III և IV, V և VI տների տեղերը փոխարինված են. որոշ տողեր տարբեր են և այլն։

Միայն մի հատված գտնվում է նաև № 9597 ձեռագրում (152ա—152բ), խորագիրը՝ «Տաղ սիրոյ», ընդամենը 15 տող. բավական տարբեր է երկու փոփոխակներից էլ. տարբեր է նաև տողերի դասավորությունը։

Տաճկերեն տողերի թարգմանությունը, որ մեր խնդրանքով կատարել է Հայկական ՍՍՌ Մատենադարանի գիտ. աշխատակից ընկ. Օ. Եգանյանը, դրել ենք յուրաքանչյուր տողի կողքին։

Դժվար է հաստատապես ասել, թե այս տաղը Թլկուրանցունն է, թե ոչ։ Գրելաձևը, պատկերները մեր հեղինակի մոտ առկա են. նա երկլեզվյան և եռեքլեզվյան տաղեր ունի. բայց ձեռագրական որևէ տվյալ չունենք, որի հիման վրա հավաստի համարենք Թլկուրանցուն լինելը։

Գ

ՀԱՅՐԵՆԻԿ ԹՈՒՐԿՈՒՐԱՆՑՈՒ Ի ՎԵՐԱՅ ՍԻՐՈՅ

Միջնադարյան հայ քնարերգության գոհարները կազմող հայրենները անշող մեծամասնությամբ ձեռագրերում դրված են իբրև անանուն ստեղծագործություններ՝ մեծ ու փոքր տաղաշարքերով։ Որոշ Տաղաշարքեր էլ ձեռագրերում հանդես են գալիս անհատ հեղինակների անունով՝ Հովհաննես Երզնկացու, Ֆրիկի, Գր. Աղթամարցու և այլն։

Հալեպի՝ մասնավոր մարդու պատկանող մի ձեռագրում եղած հայրենների շարքն էլ պահպանվել է Հովհաննես Թլկուրանցու անու-

նով[1]: Այս շարքից հինգ տաղիկներ հրատարակել է Ա. Զոպանյանը «Հայրեններու բուրաստանը» ժողովածուում, որտեղից և մենք արտատպում ենք:

Բերում ենք հրատարակչի ծանոթության մեջ հետաքրքրող մասը.

«Այս հինգ տաղիկները քաղված են Հալեպի մեջ մասնավորի մը պատկանող ձեռագրի մը տաղաշարքեն, որուն օրինակությունը հաճեցավ ինձի ղրկել Արտավազդ արքեպ. Սյուրմեյան...

Ձեռագրին մեջ օրինակողը այս տաղաշարքին տված է հետևյալ խորագիրը՝ «Հայրենիկ (հայրենիք, հայրեններ) ասացեալ է Թուրկուրանցու ի վերայ սիրոյ»: Բայց տաղիկները Հովհաննես Թուլկուրանցիի իսկական բանաստեղծություններեն տարբեր են և ապահովապես կը պատկանին քուչակյան շարքին» (էջ 323):

Անիմաստ ու անհեթեթ համարելով հայրենները Նահապետ Քուչակին համարելը, նկատենք, որ ճիշտ է դիտում Զոպանյանը, թե դրանք Թլկուրանցու քերթվածներից տարբեր են: Սակայն այդ հանգամանքը չի բացառում այն, որ Թլկուրանցին եղած լինի հայրենների երգիչ, երգող ու հավաքող, ու նրա երգած հայրենները կապվեին իր անվան հետ:

Չպետք է մոռանալ նաև, որ ո՛չ բոլոր հայրեններն են ժողովրդական. դրանց մի մասը անհատ հեղինակների ստեղծագործություններ են անպայման: Ձեռագրական տվյալները, սակայն, առայժմ անբավարար են հայրենները դասդասելու, խմբավորելու և անհատական ու ժողովրդական ստեղծագործությունները անջատելու՝ մեկ կողմից, մյուս կողմից անհատական ստեղծագործություններ հանդիսացող հայրենների հեղինակները որոշելու համար:

Դ

«Այբէն մինչև ի քէն գանկատ անեմ ես»

Տողերի սկզբնատառերը այբուբենը ներկայացնող չորս տաղ է հրատարակել Ա. Զոպանյանը «Հայ էջեր»-ում: Դրանցից առաջինը Թլկուրանցու «Աղէկ պատկեր բոլոր և գեղեցիկ ես» տաղն է, մյուս երեքից մեկի մեջ հիշվում է իբրև հեղինակ «Գրիգոր մեծ րաբունի», իսկ երկուսի հեղինակները անհայտ են: Զոպանյանի կարծիքով «Հավանական է, որ վերջին երեքը հետևողություն ըլլան Թուլկուրանցվո տաղին, հետևողություն՝ տաղաչափության ձևին, նյութին, ընդհանուր ըմբռնումին համար» («Հայ էջեր», էջ ԺԹ): Այդ երեքից «Այբէն մինչև ի քէն գանկատ անեմ ես» սկսվածքով տաղի պատկերները, համեմատությունները, արտահայտությունները և մանավանդ՝ տրամադրությունը իսկապես Թլկուրանցու ստեղծագործությանը այնքան բնորոշ են, որ կարելի է կարծել, թե նշված տաղը գրել է հենց ինքը՝ Թլկուրանցին: Ուստի և անտեղի չենք համարում այն դնել սույն ժողովածուի Հավելվածում, ուր զետեղված են այն ստեղծագործությունները, որոնց Թլկուրանցուն լինելը առայժմ երկբայելի է:

[1] Տե՛ս Արտավազդ արքեպ. Սյուրմեյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի, Երուսաղեմ, .935, էջ 386:

Ա. Զոպանյանը ծանոթագրվող տաղը «Էջմիածնա թ. 28 (=Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագիր № 3081, մեր նշանակմամբ՝ X_1), Ս. Ղազարու թ. 730, 1371 և 529» ձեռագրերի հիման վրա: Վենետիկի № 529ը ձեռագրի (գրված է 1559 թվականին) ընդօրինակությունը 19-րդ տողից սկսած շատ տարբեր է մյուսներից: Տաղն, այսպիսով, մեզ է հասել երկու խմբագրությամբ:

Տաղի ներկայացվող համեմատական բնագիրը կազմել ենք Հայկական ՍՍՌ Մատենադարանի 6 ձեռագրերում եղած ընդօրինակությունների հիման վրա. որանցից Ypx_1 hR ձեռագրերը ներկայացնում են մի խմբագրություն, A ձեռագիրը՝ մի այլ խմբագրություն, որ համընկնում է Վենետիկի № 529 ձեռագրում եղած ընդօրինակության հետ: Մեծ տարբերությունները սկսվում են 13-րդ տողից: Երկրորդ խմբագրությանը պատկանող մի այլ ընդօրինակություն պահպանված է Հայկական ՍՍՌ Մատենադարանի № 7715 (=B) ձեռագրում, (էջ 2ա—2բ) առանց առաջին 14 տողերի, որ բացակայում են ձեռագրից թերթեր ընկած լինելու պատճառով:

Այստեղ բերում ենք A ձեռագրի ընդօրինակության 13—36-րդ տողերը, ներքևի լուսանցքում նշելով B ձեռագրում եղած թերի ընդօրինակության տարբերությունները (երկու ձեռագրերի նշված տողերի տարբերությունները չեն գրված համեմատական բնագրի այլընթերցումների մեջ):

Ղաւլէ չունիս երդումն ոչ դու կնքած ես.
Ծուար քո ի ղավլէտ խիստ անհաւատ ես.
Կապուտն ի վեր վկա արարողն յերկինս.
Հոգիկտ որ դու[1] կոխես՝ հոգիս է առ քեզ.
Զրի հետ քեզ դատիմ, երեսըս դու ես.
Ղամս է իմ դուսայ, մէկ մ՚ այլ[2] կու տիրես,
Ճատու[3] չեմ երկաթ, որ ես դիմանամ քեզ[4],
Միս է ու հում կաշի, ղոսկերս կու հալես.
Յարի ի դուրս արեկ[5], որ տեսանեմ զքեզ.
Նորու ի տուն մտնես զհոգիս կու հանես.

[1] Հոգիկդ որ կու [2] այլ փխ մ՚ այլ [3] ճարտու [4] չիք քեզ [5] արի

Շուտով ի յետ դառնաս ի դուռն ելանես.
Ուրախանամ յոյժ, երբ տեսանեմ զքեզ.
Չեմ իմնար[6] ի քէն թէ դու զիս ատես.
Պարտ է քեզ առ իս գալ, թէ զիս կու սիրես.
Ջանայ ու շուտ արեկ, որ տեսանեմ զքեզ.
Ոստ է քո պատկերդ[7], կարմիր զերթ[8] վարդ ես.
Սուտ է զինչ որ կասեն, չի լինի թէ[9] վախես.
Վարեն գնա ի[10] քաղքէս՝ որ վատ ասէ մեզ[11].
Տուր ինձ մէկ պաքիկ մը[12], թէ չէ մեռայ ես.
Ըմպըլով զիս հարեցին, իմ դեղըն դու ես.
Ցանկամ ես քո ծոցուտ[13], ճերմակ բղխ բուճ ես.
Իխոյ[14] նըման փայլես, զերդ[15] լոյս աղեղ ես.
Փառք տամ ես Քրիստոսի՝ աղուոր ստեղծեր զքեզ.
Քեզ ինչ պատճառ գնեմ, երբ աննման ես:

Ե

«Այս ինչ կրակ էր զիս այրեց»

Սույն տաղ-պոեմի համեմատական տեքստը Հայկական ՍՍՌ Մատենադարանի 4 ձեռագրերի հիման վրա պատրաստել և հրատարակել են Աս. Մնացականյանը («Միջնադարյան ժողովրդական երգեր», էջ 183—190) և Ա. Սրապյանը («Հովհաննես Երզնկացի», էջ 163—171): Ձեռագրերում եղած ընդօրինակությունները մեծ չափով տարբերվում են իրարից: Նշված երկու համեմատական տեքստերը պատրաստված են ձեռագիր բնագրերի ու տվյալների նկատմամբ, բնականաբար, տարբեր մոտեցմամբ, ուստի և զգալիորեն տարբեր են միմյանցից (դժբախտաբար այդ երկու հրատարակությունների մեջ այլընթերցումների բաժնում միևնույն ձեռագրի համար միևնույն տողի ու բառի տարբեր ընթերցվածներ են նշված): I տեքստում զրված է 117 տող, II-ում՝ 124:

Այստեղ տեքստը ներկայացնում ենք որոշ վերակազմություն ու փոփոխություններ մտցնելով նրա մեջ՝ այդ համեմատական տեքստերի տողատակի այլընթերցումների հիման վրա:

---

[6] մնար փխ իմնար [7] պատկերտ [8] զէտ [9] չիք թէ [10] այս փխ ի [11] քեզ [12] մի [13] ծոցուտ [14] խոյ [15] զերթ:

ՑՈՒՑԱԿ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ

A=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 9271, ժամանակ՝ ԺԷ դ.
A_1=Նույն ձեռագրում միևնույն տաղի մի այլ ընդօրինակություն
a=«Կռունկ հայոց աշխարհին», 1863 թ.
B=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7715, ժամանակ՝ 1688 թ.
Բ=«Բազմավեպ»
C=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 5623, ժամանակ՝ 1663 թ.
D=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 5668, ժամանակ՝ 1613 թ.
d=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7508, ժամանակ՝ 1670 թ.
E=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2566, ժամանակ՝ ԺԷ դ.
E_1=Ա. Չոպանյան, «Հայ էջեր»
E_2=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2672, ժամանակ՝ 1607 թ.
F—Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 1990, ժամանակ՝ԺԸ դ.
h=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7714, ժամանակ՝ 1714 թ.
h_1=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7708, ժամանակ՝ ԺԸ դ.
H=Ա. Վ. Տևկանց, «Հայերգ»
H_1=Նույնը՝ միևնույն տաղի մի այլ ընդօրինակության համար
i=Ղ. Փ. Հովհանյան, «Միջնադարյան ազգային տաղաչափություն»
k=Կ. Կոստանյանց, «Հովհ. Թլկուրանցին և յուր տաղերը»
Կ=Հայկական ՍՍՌ Մատենադարանի ձեռագիր, № 7717, ժամանակ՝ 1695 թ.

$Կ_2$=Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», պրակ Գ.

Л=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 3498, ժամանակ՝ 1624 թ.

M=Գ. վ. Սրվանձտյան, «Մանանայ»

m=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2398, ժամանակ՝ 1613 թ.

n=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 6159, ժամանակ՝ ԺԷ դ.

O=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 3751, ժամանակ՝ ԺԹ դ.

O_1=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7057, ժամանակ՝ ԺԸ դ.

p=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7707, ժամանակ՝ 1611 թ.

p_1=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2394, ժամանակ՝ ԺԷ դ.

p_2=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2270, ժամանակ՝ ԺԷ դ.

R=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 9597, ժամանակ՝ ԺԸ դարի սկիզբ

S=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 6099, ժամանակ՝ ԺԷ դ.

S_1=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 33, ժամանակ՝ ԺԷ դ.

S_2=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 8605, ժամանակ՝ 1676 թ.

T=Տպագիր Տաղարան 1513 թվականի

t=«Արեգ» երկշաբաթաթերթ, 1924 թ.

v=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7712, ժամանակ՝ ԺԹ դ.

v_1=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2236, ժամանակ՝ ԺԷ դ.

w=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7273, ժամանակ՝ ԺԷ դ.

w_1=Նույն ձեռագրում միևնույն տաղի մի այլ ընդօրինակություն

x=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 8100, ժամանակ՝ 1784 թ.

x_1=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 3081, ժամանակ՝ 1617 թ.

x_2=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2079, ժամանակ՝ ԺԷ դ.

Y=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 8968, ժամանակ՝ 1556 թ.

Z=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 7909, ժամանակ՝ 1620 թ.

Z_1=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 2676, ժամանակ՝ ԺԸ դ.

Ձ=Ձեռագիր Հայկական ՍՍՌ Մատենադարանի, № 515, ժամանակ՝ ԺԷ դ.

Յուշ.=Ղ. Ալիշան, «Յուշիկք», հտ. Բ, Վենետիկ, 1870 թ.

Սիս. » «Սիսուան»

Հայ. » «Հայապատում»

ԲԱՌԱՐԱՆ

Ալամ — դրոշ, դրոշակ

Ալվար*—համաձայն, բավարար, գոհ

Աճռել—տրորել, ճզմել

Ամպար—ամպար ծաղիկը

Այլ ու՛ ի, այլվա—դարձյալ, նորից, էլի

Անախում*, անախուն*—անհաշիվ

Անդրաւական—անվերջ

Աշխարհիանցում—աշխարհ հիացնո՞ղ

Ապիկի—ապակի, ապակյա

Ապրաւ—ամբաւ—արմավ

Ար՛եկ—արի՛ եկ, վերկաց ե՛կ

Բահար—գարուն

Բգրի (լուսին)—լիա(լուսին)

Գաւ—պատերազմական շեփոր

Գեախ*—ժամանակ

Գեղել—շպարվել գեղեցկացնել. «գեղեն»—շպարվեն, գեղեցկացնեն

Գէնայ—դարձյալ, նորից

Դյոգա*—խնդիրք, պաղատանք

Եազտան—Պարսկաստանի քաղաքներից, որ միջին դարերում հայտնի էր արհեստագործությամբ ու մետաքսի արտահանությամբ

Ելուկ—ծառի նոր բողբոջ կամ արմատի մոտ բուսած ճյուղ: «Տարէն ելուկ»—մեկ տարվա

Երևան, յերևան—երևացող, նըկատելի

Երակ—միշտ, ամբողջ ժամանակ

Երերմանի—երերուն

Երրեակ—երեքություն պարունակող, երեք միավորից բաղկացած

Զանեզան—բազմաշնորհ

Զաքաթ—ողորմություն (հոգու համար)

Զէրայ—որովհետև

Զօհրա—Արուսյակ աստղը

Թալկտալ—նվաղել. «Թալցայ»—նվաղեցի

Թախտան—ավար

Թանց—տե՛ս հանց

Թապտիր — պատրաստություն, կարգադրություն

Թիթեխ, թիթեղ—թիթեռ

Բառարանի մեջ մտել են միայն դժվար հասկանալի բառերն ու բառաձևերը: Բացատրությունների մեջ տրված են սոսկ այն իմաստները, որ ունեն բառերը բնագրերի մեջ: Աստղանիշ (*) կրող բառերը առնված են «Մանոթագրություններ և բանասիրական դիտողություններ» բաժնում գրված տեքստերից:

Թուրինջ—նարինջի մի տեսակը
Թուրպայ—դամբան, գերեզման

Ժմնել—ժամանել, հասնել
Ժողովք առնել—հավաքվել
Ժում— ժամանակ. «Ժըմով» — ժամանակով

Ի ծար ելնել—սկսել, սկզբնավորել
Ի շուռ գալ («Ի շուռ կուգայ») — թափառել
Ի վայր մնալ—զարմանալ

Լաշկար—լեշ, դիակ
Լեղակ—լեղակի բույսը
Լութֆ—շնորհ. «լութֆ ու քարամ»—շնորհ ու ողորմություն
Լրջուկ—բաց կապույտ

Խաթա—Արևելյան Թուրքեստանի նշանավոր քաղաք՝ հայտնի իր գեղեցիկ կանանցով
Խատիչ—հոտեղ, հոտավետ
Խեռ*—ոխ, քեն
Խերիաթ*—բարիք, բարեգործություն
Խըտրաց*—իրար հետ
Խիկար—իմաստուն
Խիլայ—պարգև, իշխանավորի պարգևատրած պատվո հագուստ
Խոխ—դեղձ, խոշոր կլոր սալոր
Խորդել—փետրահան անել, մաքրել
Խութան—տե՛ս Խաթա
Խումար — անուշ հայացքով, մեղմակն
Խուպ—լավ, գեղեցիկ

Ծար ելնել—տե՛ս Ի ծար ելնել
Ծիրանի—ծիրանագույն դգեստ

Կաստանա—շագանակ
Կարկեհան — թանկագին քար, նռնաքար
Կթխայ- գավաթ, բաժակ
Կլափ—ծնոտ
Կողեռ—մանկահասակ
Կուլ—վարդ. «կուլի տաստան»—վարդի փունջ
Կուշ—կորնթարդ. «աղեղան կուշ»

Հալեայ—անորոշ բույս
Հանդիա*—նվեր, ընծա
Հանել արևից—մեռցնել. «հանէ յարեէն»—մեռցնի
Հանսը—ահավասիկ
Հանց—հենց, այնպես, այդպես, այնպիսի, հենց որ, երբ որ
Հանցեղ—այնպիսի, այնտեսակ
Հանցկուն—այնպես, այնպիսի
Հապաշ—Հաբեշստան
Հարամի—ավազակ
Հարուցող*— հարուցող, կենդանացնող
Հեծել—հեծելազոր
Հուսկ—վերջը, ամենավերջը

Ձի*—ձեր

Ղալապայ—բազմություն, երաբանցում
Ղազալի—Ղազել
Ղալատ—թերություն, պակասություն
Ղամար—լուսին
Ղանարա—սպանդանոց
Ղատար—չափ. «ինչ ղատար»—որչափ, ինչքան
Ղարար—հանգստություն

Ղարղ անել—ընկղմել
Ղալ—ուխտ, երդում, տված խոսք
Ղումաշ—մետաքս, կերպաս (փոխար.՝ նուրբ, բարակ)
Ղումրի—տատրակ

Ճալատ—դահիճ
Ճաղ—շյուղ
Ճապուկ—աշխույժ, ժիր
Ճարակ—ճար, հնար
Ճէլլատ—տես Ճալատ
Ճոխագնաց—սիգաճեմ
Ճոխանալ—զարդարվել
Ճոհար—գոհար
Ճուհար—տե՛ս ճոհար
Ճոճան—ճկուն, դյուրաթեք
Ճոճել, ճոճալ—նազանքով քայլել, շորորալ
Ճոճկտալ—տես ճոճել
Ճօշան—կրծքապրահ, լանջապանակ

Մալամաթ—խայտառակ
Մաղասկաթ—մաղասկոտ, մաղձոտ. տրտում, լուսնոտ, ընկնավոր
Մարախ—կարմրագույն կամ ծիրանագույն ծաղիկներով բույս
Մեզար*—բրդյա հաստ սփռոց
Մէստան—արբած, գինովի
Միթէ—թերևս, գուցէ թե
Միշմիշ—մանր համեղ ծիրան
Մշմուր*—անտեր, անտիրական
Մոծիր — կրակախառն մոխիր, մոխրացող կրակ
Մուշկ (մուշք) — անուշահոտ բույս
Մուրտ — սպիտակ ծաղիկներով մշտադալար բույս
Մտրուպ—երգիչ, երաժիշտ

Յերակ—տե՛ս Երակ
Յորդոր (կաց)—պատրաստակամ, փութաջան (եղիր)

Նախշ ու նիգար—նկարակերտ, նկարազարդ
Նաղար, նատար—ուրախ, անցավ
Նաֆիր—պատերազմական փող, շեփոր
Նղրիկ—թռչող միջատ

Շահրի—քաղաք
Շամս—արեգակ
Շեղք*—շեղջ, կույտ
Շնօրօր—սագի նման թռչուն
Շողկտան—փայլփլող, ցոլացող, շողշողուն
Շուռ գալ—տե՛ս Ի շուռ գալ

Ուղիղ—ուղեղ
Ուսուֆ—արա՞բ
Ուրակ—ճերմակ, սպիտակ
Ուրուկ—ուրկոտ, բորոտ

Չարխ—ճախարակ. «Չարխի դեղած նետով սիրտս խոցեր ես»
Չափուկ—ջրաման
Չին—չէին
Չին, Չին ու մաչին—Չինաստան

Պեմունաթ*—չպարտավորված
Պէտ—մեծ, խոշոր
Պուկ—եղեգնից շինած նեղ պատերազմական փող
Պօյաճի—ներկարար

Ջարբել*—փորձել
Ջիհան—Կիլիկիայի գլխավոր գետը
Ջոհար—տե՛ս Ճոհար

Ռասմել—նկարել
Ռաստ—մեծ, գլխավոր, առատ
Ռումբ (ճօճան)—Նիզակի նման զե՞նք

Սասնցուցեր—սասանեցրել
Սարդեհոն — թանկագին քար, սարդոնիկս
Սիասաթ—իշխանություն, ուժ
Սիֆաթ—դեմք, կերպարանք
Սուրաթ—դեմք, երես

Վայր մեալ—տե՛ս Ի վայր մնալ
Վանց—համար, վասն

Տառապուլ—ինչ-որ այրող նյութ
Տաստան—փունջ
Տեղտ—երփներանգ ծաղիկներով վարդանման բույս
Տպազիոն—թանկագին քար
Տիլու—Դելի քաղաքը
Տփունք—թանկագին իրերի աման, խունկ ծխելու անոթ

Ցոստոքանէ—մեծ գավաթ

Րամեալ—հավաքված, ժողոված, այստեղ՝ ամբողջ

Փետատ—քլունգ, բրիչ

Քաջ—քաջք, ոգի
Քարամ—ազնվություն, վեհանձնություն
Քաւէլ—բայց եթե
Քաֆուր—կապույտին տվող սպիտակագույն (ասվում է սովորաբար վարդի մասին)
Քեարամաթ*—շնորհ. հրաշագործություն. վեհանձնություն
Քյապանակ*—գարանակ, հովիվների թաղիքե երկար վերարկու
Քոչիր—չոքեր, ծնկներ

Ֆարաղաթ—անզոր, հանգիստ
Ֆետայ—զոհ, մատաղ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Թլկուրանցու ժամանակը և կյանքը 7
Ստեղծագործությունը 34
Հովհաննես Թլկուրանցու գրական ժառանգությունը. տպագիրներն ու ձեռագիրները. բնագիրը կազմելու հանգամանքները 79

ԲՆԱԳՐԵՐ

Սիրո և բնության տաղեր 117
Խրատական—բարոյախոսական տաղեր 171
Վիպական տաղեր 195

Հավելված 215

Ծանոթագրություններ և բանասիրական դիտողություններ . . . 231

Ցուցակ պայմանական նշանների 291
Բառարան 295

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

ԷՄԱՆՈՒԵԼ ԱՐԶՈՒՄԱՆԻ ՊԻՎԱԶՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ. ՏԱՂԵՐ

Հրատ. խմբագիր՝ Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Տեխն. խմբագիր՝ Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ
Վերստուգող սրբագրիչներ՝ Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Ա. Հ. ԱԼԱՆՅԱՆ

ՎՖ 04553 ԽՀԽ 612 Հրատ. 1833 Պատվեր 98

Հանձնված է արտադրության 16/V 1960 թ.,
ստորագրված է տպագրության 28/IX 1960 թ.,
թուղթ 60 × 92 1/8, տպագր. 18.75 մամուլ,
» հրատ. 12,5 մամուլ, տիրաժ 2000:
Գինը՝ կազմով 7 ռ., 1/1 1961 թ. 70 կ.:

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան,
Երևան, Բարեկամության 24:

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
59	8 ն.	գլգան-գլգան	դլդան-դլդան
74	18 վ.	գործելով	գործածելով
76	11 ն.	ամպումք	ամպունք
100	13 վ.	15-րդ	15-րդ դարի